# ԱԶԴԱԳԻՐ

**«ԹԵԼ-ՍԵԼ»**
**բաց բաժնետիրական ընկերություն**
թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը
ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հեռ՝ +374 60 272222
Էլ.-փոստ՝ info@telcell.am
Կայք՝ www.telcell.am

**«Արմբրոկ»**
**բաց բաժնետիրական ընկերություն**
գլխավոր տեղաբաշխողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 39
Հեռ՝ +374 11 590000
Էլ.-փոստ՝ armbrok@armbrok.am
Կայք՝ https://www.armbrok.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ**

| | |
|---|---|
| **Արժեթղթերի տեսակը՝** | Սովորական բաժնետոմս |
| **Արժեթղթերի ձևը՝** | Ոչ փաստաթղթային |
| **Արժեթղթերի քանակը՝** | 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ |
| **Արժեթղթերի տեղաբաշխման արժեքը՝** | 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ |
| **Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը՝** | 1,540,000,000 (մեկ միլիարդ հինգհարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ..... 5

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ ..... 5

1.2. Թողարկողին և բաժնետոմսերին առնչվող ռիսկերը ..... 11

1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները ..... 18

1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ ..... 18

1.5. Թողարկողի կառավարումը և բաժնետերերը ..... 19

1.6. Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները ..... 20

1.7. Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը ..... 21

1.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ ..... 22

2. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 26

2.1. Ռիսկային գործոններ ..... 26

2.2. Հիմնական տեղեկատվություն ..... 28

2.3. Տեղեկատվություն, կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ ..... 29

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները ..... 36

2.5. Առևտրին թուլտվությունը և առևտրի կազմակերպումը ..... 45

2.6. Վաճառող բաժնետերերը ..... 46

2.7. Թողարկման և առաջարկի ծախսերը ..... 46

2.8. Լրացուցիչ տեղեկատվություն ..... 46

3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 47

3.1. Անկախ աուդիտորները և խորհրդատուները ..... 47

3.2. Ռիսկային գործոններ ..... 47

3.3. Տեղեկություն թողարկողի մասին ..... 53

3.4. Բիզնեսի նկարագիրը ..... 58

3.5. Թողարկողի խմբի կառուցվածքը ..... 62

3.6. Թողարկողի հիմնական միջոցները ..... 62

3.7. Թողարկողի կապիտալ ռեսուրսները ..... 63

3.8. Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները ..... 64

3.9. Արտոնագրերը և լիցենզիաները ..... 65

3.10. Զարգացման վերջին միտումները ..... 65
3.11. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները ..... 66
3.12. Վարձատրությունները և պարգևավճարները ..... 76
3.13. Կառավարման մարմինների գործունեությունը ..... 77
3.14. Աշխատակիցները ..... 77
3.15. Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք ..... 78
3.16. Փոխկապակցված անձանց հետ գործարքները ..... 78
3.17. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին ..... 79
3.18. Լրացուցիչ տեղեկատվություն ..... 80
3.19. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը . 84
3.20. Այլ տեղեկատվություն ..... 84
3.21. Մասնակցություն այլ անձանց կապիտալում ..... 85
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձանց համար) ..... 86
ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար) ..... 89
ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ..... 92
ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ..... 93
ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ ..... 94

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք Ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել Ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

| **Անուն, ազգանուն** | **Պաշտոն** | **Ստորագրություն** | **Ամսաթիվ** |
|---|---|---|---|
| Արտաշես Ավետիսյան | Տնօրենների Խորհրդի նախագահ | | 15.07.2024 |
| Ռամի Տրեյստեր | Տնօրենների Խորհրդի անդամ | | 15.07.24 |
| Վաչե Գաբրիելյան | Տնօրենների Խորհրդի անդամ | | 15.07.24 |
| Արտյոմ Ղազարյան | Գլխավոր տնօրեն | | 15.07.24 |
| Թամարա Սարգսյան | Ֆինանսական տնօրեն | | 15.07.24 |
| Արթուր Թորոսյան | Գլխավոր հաշվապահ | | 15.07.24 |
| Արամ Կայֆաջյան | Գլխավոր տեղաբաշխող | | 15.07.24 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| Արտյոմ Ղազարյան | Գլխավոր տնօրեն | | 15.07.24 |

# 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՇԱՆՈՒԹՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ**

*Ամփոփաթերթը պետք է դիտվի՝ որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել սույն Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով https://thogharkogh.cba.am/, www.telcell.am, և www.armbrok.am կայքերից:*

## 1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

### 1.1.1. Թողարկողի համառոտ տվյալները և կապի միջոցները

Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևն է՝

| **Լեզու** | **Լրիվ ֆիրմային անվանումը** | **Կրճատ անվանումը** |
|---|---|---|
| հայերեն՝ | «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն | «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ |
| ռուսերեն՝ | «ТЕЛ-СЕЛЛ» Открытое Акционерное Общество | «ТЕЛ-СЕЛЛ» ОАО |
| անգլերեն՝ | «TEL-CELL» Open Joint-Stock Company | «TEL-CELL» OJSC |

Թողարկողի պետական գրանցումն ու գործունեության վայրն է՝

| | |
|---|---|
| Թողարկողի հիմնադրման երկիր | Հայաստանի Հանրապետություն |
| Թողարկողի պետական գրանցման վայր | ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փողոց 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա 3-րդ հարկ |
| Թողարկողի պետական գրանցման համար | 264.130.1368627 |
| «Թել-Սել» ՓԲԸ -ի պետական գրանցման ամսաթիվ | 29.05.2007թ. |
| «Թել-Սել» ԲԲԸ -ի պետական գրանցման ամսաթիվ («Թել-Սել» ՓԲԸ -ի իրավահաջորդ) | 06.02.2024թ. |

| | |
|---|---|
| Թողարկողի գործունեության վայր | ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փողոց 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա 3-րդ հարկ |
| Կապի միջոցներ | Հեռ.՝ +374 60 272222,<br>Էլ. փոստ info@telcell.am |

Բաժնետոմսերին առնչվող հարցերի դեպքում ներդրողները կարող են դիմել «Թել-Սել» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկողին կամ Ընկերություն) Արսեն Ավետիսյանին, նոր նախագծերի գնահատման և մշտադիտարկման բաժնի ղեկավարին ՝+374 60 272222 հեռախոսահամարով:

## 1.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

### 1.1.2.1. Թողարկողի համառոտ պատմությունը

Թողարկողի պատմությունը մանրամասն ներկայացված է Ազդագրի 3.3.1. ենթակետում:

“ԹԵԼ-ՍԵԼ” բաց բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է “ԹԵԼ-ՍԵԼ” փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է “ԹԵԼ-ՍԵԼ” փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2007թ. մայիսի 29-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

- 2007թ. հուլիսի 24-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ «Թել-Սել» ՓԲԸ-ին տրամադրվեց դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնելու լիցենզիա: Տարեվերջին հնարավոր դարձավ Telcell համակարգով համալրել այլ էլեկտրոնային դրամապանակներ:
- 2008թ. Ընկերությունն իր հաճախորդներին ներկայացավ նոր ֆունկցիոնալ հնարավորություններով՝ ինտերնետային ծառայությունների վճարում, վարկերի մարում գործընկեր վարկային կազմակերպությունների հաճախորդների համար, Telcell պրոցեսինգային կենտրոնին գործընկեր բանկերի հաշվիչ դրամարկղային հանգույցների ինտեգրացիաներ, տերմինալների ինտերֆեյսի ամբողջովին թարմացում, օպերատորների խմբավորում: Նույն տարվա ընթացքում Telcell համակարգին միացավ առաջին առևտրային գործընկեր կազմակերպությունը, որի շնորհիվ բազմահազար հաճախորդներ կարողացան պատվերները վճարել Ընկերության միջոցով:
- Ծառայությունների շրջանակը զարգացնելու հետ մեկտեղ, Ընկերությունն էականորեն բարելավեց տեխնոլոգիական հագեցվածությունը: 2012թ. Ընկերությունը և «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ն մեկ միասնական ծրագրային հարթակ տեղափոխեցին իրենց վճարային տերմինալները՝ Telcell պրոցեսինգային բազայի վրա:
- 2016թ. Փետրվարի 22-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ Ընկերությանը տրամադրվեց էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն: Արդեն հաջորդ տարի

գործարկվեց MyTelcell հավելվածը (ներկայում՝ Telcell Wallet), որը հնարավորություն է տալիս Telcell համակարգով բոլոր գործառնությունները կատարել էլեկտրոնային դրամապանակով:

- Վերջին տարիներին ևս Ընկերությունը ընդլայնել է առաջարկվող ծառայությունների շրջանակը, մեծ կարևորություն տալով թվային լուծումներին, հարմարավետությանը և հասանելիությանը: 2019թ. մշակվել և ներդրվել է Telcell Business հավելվածը, որի օգնությամբ բիզնես գործունեությամբ զբաղվող անձինք կարող են վճարումներ ընդունել հաճախորդներից:
- 2021թ. գործարկվել է «Վարկային պորտալ» ծառայությունը, որը հնարարավորություն է տալիս ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին 24/7 ռեժիմով իրականացնել վարկավորում էլեկտրոնային դրամապանակի օգտատերերին անմիջապես Telcell Wallet հավելվածի ինտերֆեյսի միջոցով:
- 2022 թվականի վերջում Ընկերությունը շահել է Երևան քաղաքի հասարակական տրանսպորտում միասնական տոմսային համակարգի ներդրման մրցույթը՝ դառնալով այդ նախագծի կատարողը: Նախագծի շրջանակում ընկերությունը կատարեց ներդրում, տեղադրելով վալիդատորներ, ինտեգրելով ուղետոմսերի վճարման համակարգը և այլն:
- 2021 թվականից ընկերությունը սկսեց իրագործել ռեբրենդավորման ընթացքը, որի նպատակն էր կառուցել էկոհամակարգ և թարմացնել ընկերության հեղինակային ոճը: Ընկերությունը իրականացրեց մեծ ռեբրենդավորման միջոցառում 2023 թվականի հունիսի վերջին, որտեղ հայտարարվեց ընկերության նոր տեսլականը և ներկայացվեցին առաջիկա տարվա ընթացքում սպասվող նախագծերը ու պրոյեկտները:
- Ռեբրենդավորումից հետո նույն տարվա ընթացքում ընկերությունը Հայէկոնոմբանկի հետ միասին թողարկեցին Visa թվային քարտերը, օգտատերերին հնարավորություն տալով ստեղծել հավելվածում բանկային քարտ առանց բանկ այցելելու ու համալրել այդ քարտերը Հայաստանի տարածքում տեղադրված Ընկերության 4500+ տերմինալներից 0% միջնորդավճարով: Ընկերության նպատակն է համագործակցել առավել շատ բանկերի հետ՝ առաջարկելով քարտերի բացում բանկերի հավելվածներից դուրս:
- 2023 թվականի սեպտեմբերին Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ միասին թողարկվեց «Գնիր հիմա, վճարիր հետո» (BNPL) ծառայությունը, որը առավել հարմարավետ պայմաններ է ստեղծում օգտատերերի համար՝ թույլ տալով նրանց վճարել գնումներն անելուց որոշ ժամանակ անց: BNPL ծառայության հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս վճարումները մասնատել ավելի փոքր՝ կառավարելի գումարների: Մեծ գնումներ կատարելիս այլևս պետք չէ մտածել գումարային սահմանափակման մասին:

#### 1.1.2.2. Թողարկողի ռազմավարությունը

**Ընկերության առաքելությունն է** դիրքավորել էկոհամակարգը ու ստեղծել պրոդուկտները ու ծառայությունները, հիմնված ազգային արժեքների հիման վրա՝ ստեղծել այն, ինչի կարիքը ունի Հայաստանում յուրաքանչյուր մարդը:

**Մեր տեսլականն է** ստեղծել ագրեգատ ու ապահովել open-banking համակարգը, որը թույլ կտա մեր օգտատերերին տեսնել պրոդուկտների ամբողջ սպեկտրը (բոլոր բանկերի ծառայություններ և պրոդուկտները, միջոցառումները և այլ գործընկերների ծառայությունները) միասնական համակարգում՝ ընկերության պրոդուկտներում:

Ընկերության կայուն զարգացման, շահառուների կարիքներն ու սպասելիքները առավելագույնս բավարարելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ներքին բացասական գործոնները և ռիսկերը նվազեցնելու նպատակով Ընկերությունը իր առջև դրել է հետևյալ հիմնական ռազմավարական խնդիրները.

- թվայնացնել և ավտոմատացնել վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը,
- ընդունել վճարումներ նոր տեխնոլոգիաների միջոցով,
- ընդլայնել վճարումների ընդունման տերմինալների ցանցը,
- զարգացնել Telcell Wallet և Telcell Business հավելվածները,
- ընդլայնել մասնաճյուղերի ցանցը,
- զարգացնել էլեկտրոնային և թվային կոմերցիան,
- ավելացնել գործընկեր ծառայություն մատուցող կազմակերպությունների քանակը, այդ թվում ներգրավելով միջազգային գործընկերների,
- մատուցել ծառայությունների ավելի լայն շրջանակ,
- զարգացոնել և կատարելագործել կառավարման համակարգը ,
- Նախաձեռնել օրենսդրական ռեֆորմներ,
- Հետևողականորեն կիրառել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականություն ,
- Շարունակաբար իրականացնել բարեգործական ծրագրեր:

### 1.1.3. Թողարկողի կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալն Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ կազմել է 1,078,000,000 (մեկ միլիարդ յոթանասունութ միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 30,800,000 (երեսուն միլիոն ութ հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) տեղաբաշխված բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 35 (երեսունհինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերության մեկ բաժնետիրոջը պատկանող Թողարկողի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն քանակ չի սահմանվում:

Ընկերության նշանակալից բաժնետերերն են՝ «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» – 56,28%: Ընկերությունը հայտարարել է նոր 4,200,000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, որից սույն Ազդագրի ներքո նախատեսվում է տեղաբաշխել 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ բաժնետոմս: Միևնույն ժամանակ Ընկերությունը նախատեսում է ցուցակման թույլտվությունը ստանալուց հետո երեք ամիսների ընթացքում լրացուցիչ որոշմամբ հաստատել համապատասխան կարգը՝ 350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ բաժնետոմսը աշխատակիցներին առաջարկելու և/կամ բաժնետիրացման ծրագրի շրջանակներում վերջիններիս տրամադրելու վերաբերյալ: 4,200,000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսը ամբողջությամբ

տեղաբաշխելուց՝ «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» – ի մասնաբաժինը կկազմի համապատասխանաբար 49.53%:

Թողարկողի բաժնետիրական կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի 3.5.1 ենթագլխում:

### 1.1.4. Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 4-ում:

### 1.1.5. Թողարկողի խմբի կառուցվածքը

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն խմբի մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ և դրա դուստր կազմակերպություններից, որոնցից յուրաքանչյուրում Թողարկողի մասնակցությունը 100% է: Թողարկողի դուստր կազմակերպություններն են՝ «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ն և «ԹԵԼ-ՍԵԼ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ-ն:

«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ հիմնական գործունեությունը գովազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումը:

«ԹԵԼ-ՍԵԼ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը նախատեսվում է առաջիկայում բեռնափոխադրման ծառայությունների մատուցում:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն նաև ունի 50% մասնակցություն «Մեգա Պանտերա» ՍՊԸ -ում, որի գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից:




### 1.1.6. Թողարկողի բիզնես նկարագիրը

«Թել-Սել» ԲԲ ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային և հարակից ծառայություններ մատուցող առաջատար ընկերություններից մեկը: Ընկերությունը ներկայումս մատուցում է ծառայությունների հետևյալ տեսակները՝

1. Վճարումների ընդունման ծառայություն՝ տերմինալների միջոցով վճարումների ընդունում՝ պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ:
2. Ընկերության մասնաճյուղերի միջոցով վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, այդ թվում նաև՝ դրամական (փողային) փոխանցումների իրականացում,

վճարումների ընդունում, կանխիկ դրամական միջոցների տրամադրում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ:

3. Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով՝ էլեկտրոնային փողերի թողարկում և սպասարկում, պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ, այդ թվում նաև՝
   - QR տեխնոլոգիայի վրա հիմնված Scan and Pay ապրանքանիշի ներքո էլեկտրոնային փողով տնտեսվարողների օգտին վճարումների ընդունում,
   - Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հաճախորդներին վարկային միջոցների տրամադրում հաճախորդի էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվին:

   Այսօր Telcell Wallet հավելվածն ունի ավելի քան 1,900,000 ներբեռնում: Telcell Wallet դրամապանակը հնարավորություն է տալիս օգտվել 450+ ծառայություններից մեկ հավելվածում: ՈՒնենալով ծառայությունների տեսականու լայն սանդղակ, Telcell Wallet-ի օգտատերերը կատարում են ամենօրյա գործարքները մեկ հավելվածում՝ ստանալով թարմացումներ և այլ ծառայությունների ավելացումներ:
4. ՀՀ առևտրային բանկերին WEB/API հասանելիություն տրամադրելով՝ Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների օգտին վճարումներ ընդունելու հնարավորության ստեղծում:
5. Պրոցեսինգի իրականացում:
6. Քլիրինգի իրականացում:

#### 1.1.6.1.Հիմնական շուկաները և մրցակցային դիրքը

«Թել-Սել» ԲԲԸ ծառայությունների համար շուկա է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքը: Ընկերությունը հանդես է գալիս իր տերմինալների ցանցով, որը տարածվում է երկրի ողջ բնակելի տարածքով: ՀՀ ողջ բնակչությանը հասանելի են նաև վճարումների ընդունման ծառայություններ կատարելու հնարավորությունները և Telcell Wallet հավելվածը: Ընկերությունը չի մատուցում ծառայություններ արտերկրում:

Ընկերության էկոհամակարգի պրոդուկտների հետ օրական միջինում 220 հազար հպումներ են իրականացվում, ինչը վկայում է Ընկերության՝ շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնելու մասին: Տերմինալների միջոցով վճարումներ ընդունելու գործունեության ոլորտում Թողարկողն առաջատար դիրքում է և հմտորեն օգտագործում է իր բազում տարիների ստեղծած համբավը և հավատարիմ հաճախորդների մեծ բազան իր առաջատար դիրքը տարեցտարի ամրապնդելու, այդ ոլորտում մեծ քայլերով զարգանալու և ընդլայնվելու համար: Telcell Wallet հավելվածով վճարումներ ընդունելու մասով ընկերությունը շուկայում երկու առաջատարներից մեկն է՝ և օգտատերերի քանակով և ամսեկան գործարքների քանակով: Նշված ցուցանիշներով Telcell Wallet հավելվածի մրցակիցն է Idram հավելվածը:

Ունենալով շուկայում մրցակցային կառավարչական արխետիպ (անգլ. Archetype of Ruler), Telcell ընկերության պրոդուկտները ներառյալ Telcell Terminal-ը ճանաչելի են ՀՀ բնակչության զգալի տոկոսի համար:

Թողարկողի բիզնես նկարագիրը ներկայացված է սույն Ազդագրի 3.4 ենթագլխում:

### 1.1.7. Ակտիվների որակը

2023թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության ակտիվների մեծությունը կազմել է 18.8 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2022թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության ակտիվների մեծությունը կազմել է 15.7 մլրդ ՀՀ: 2023թ-ի աուդիտ անցած և 2022թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն է ընդհանուր ակտիվներին) կազմել է 20% և 28% համապատասխանաբար:
2023թ-ի աուդիտ անցած և 2022թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության ակտիվների զգալի մաս է կազմում դրամական միջոցները և դրանց համարժեքը՝ 74% և 71% համապատասխանաբար:

## 1.2. Թողարկողին և բաժնետոմսերին առնչվող ռիսկերը

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն Թողարկողի հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված է հնարավոր ռիսկերի ոչ ամբողջական ցանկը: Հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու սպասումներով:

Ստորև ներկայացված է Թողարկողին և բաժնետոմսերին վերաբերող ռիսկերի մանրամասն նկարագրությունը, սակայն ներդրողը պետք է հաշվի առնի, որ Թողարկողի գործունեության ընթացքում կարող են առաջանալ նաև այլ էական ռիսկեր:

### 1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերը

Թողարկողին առնչվող ռիսկերը մանրամասն նկարագրված են Ազդագրի 3.2. ենթագլխում:

#### 1.2.1.1. Գործառնական ռիսկը

Սա Թողարկողի ներքին համակարգերի խափանման, անձնակազմի կողմից կատարվող գործառնություններում սխալների կամ չարաշահումների, ինչպես նաև անարդյունավետ գործընթացների հետևանքով Թողարկողի կողմից վնասներ կրելու հավանականությունն է: Այսպիսի իրավիճակները կարող են ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի և հեղինակության վրա:
Թողարկողի գործունեության ոլորտին հատուկ է գործառնական ռիսկի բարձր մակարդակը, որը առկա է նաև Թողարկողի մոտ:

Թողարկողը՝ հիմնվելով լավագույն միջազգային փորձի վրա, նշված ռիսկերի պատշաճ կառավարման համար մշտապես կատարելագործում է իր ներքին հսկողական համակարգը զսպող և հակակշիռ հանդիսացող մեխանիզմները: Թողարկողին հատուկ՝ աշխատակիցների պատասխանատվության շրջանակով և հասանելիություններով պայմանավորված շահերի բախման ռիկի զսպման նպատակով Թողարկողը փոփոխել է կազմակերպչական կառուցվածքը և ներդրել ներքին ընթացակարգեր՝ հստակ տարանջատելով աշխատակիցների իրավասությունները:

Այս ռիսկերի կառավարման հարցում Թողարկողը կարևորում է աշխատակիցների մասնագիտական որակավորումը: Թողարկողը մշակել և ներդրել է որակավորման բարձրացման ամենամյա ծրագիր, ինչպես նաև ձեռնարկում է բավարար և խելամիտ միջոցներ բարձր որակավորմամբ մասնագետների ներգրավման համար:

#### 1.2.1.2. Ֆիզիկական անվտանգության ռիսկ

Թողարկողի անձնակազմի առողջության և կյանքի, նյութական արժեքների, կրիտիկական ենթակառուցվածքի վնասի կամ կողոպուտի ռիսկն է:
Այս դասի ռիսկերի թվին է պատկանում ինչպես դրամական միջոցների, այնպես էլ այլ ակտիվների գողությունը: Թողարկողի կողմից մշտապես ջանքեր են գործադրվում գողության կանխարգելման միջոցների բարելավման ուղղությամբ՝ ՀՀ Օրենսդրությանը, այդ թվում՝ ՀՀ ԿԲ պահանջներին համահունչ: Տվյալ ռիսկի կառավարման նպատակով, մասնավորապես, իրականացվում է ոստիկանության և մասնավոր մասնագիտացված լիցենզավորված ընկերությունների կողմից պահպանության կազմակերպում, ինկասացիոն զրահապատ ավտոմեքենաների օգտագործում և այլ միջոցառումներ:

#### 1.2.1.3. Տեղեկատվական անվտանգության ռիսկ

Թողարկողի կողմից տնօրինվող տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության խախտման ռիսկն է:

Տեղեկատվությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները Թողարկողի գործունեության հիմքն են: Լինելով մեծածավալ անձնական տվյալների, առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության տիրապետող և մշակող՝ Թողարկողը միջազգային լավագույն փորձն է կիրառում պաշտպանելու տեղեկատվությունը չարտոնված մուտքերից և փոփոխումից, արտահոսքից և կորստից: Տեղեկատվության գաղտնիության ապահովման համար, ըստ անհրաժեշտության, կիրառվում են ռիսկերի նվազեցման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են տվյալների ծածկագրումը, մուտքի կառավարումը, տեղեկատվության պահուստավորումը և արխիվացումը: Տեղեկատվությանը մուտք ստանալ հնարավոր է միայն սահմանված ընթացակարգ անցնելու դեպքում: Բոլոր տվյալները սահմանված պարբերականությամբ պահուստավորվում են, մուտքը տվյալին խստորեն մշտադիտարկվում է առանձնացված անձնակազմի կողմից: Ցանկացած միջադեպ հետաքննվում է՝ պատճառները բացահայտելու և դրա կրկնությունը բացառելու նպատակով:

Տեղեկատվության և տվյալների ամբողջականությունն ապահովվում է հսկողության մեխանիզմների կիրառմամբ, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով՝ մուտքի կառավարմամբ, երկու անձի սկզբունքի պահպանմամբ, կրիտիկական տվյալների և ֆայլերի նկատմամբ հատուկ պաշտպանության ապահովմամբ: Տեղեկատվության հասանելիության ապահովումը օգտագործողներին, ինչպես օրինակ՝ հաճախորդներին կամ անձնակազմին, ապահովված է տեղեկատվական տեխնոլոգիաների բաղադրիչների կրկնօրինակմամբ, որը տեխնոգեն խափանումների պարագայում երաշխավորում է սահմանված ընդունելի ժամկետում տվյալների վերականգնումը և համակարգերի վերագործարկումը:

Միևնույն ժամանակ Թողարկողը գիտակցում է, որ այս ոլորտում անընդհատ առաջանում են նոր ռիսկեր, որոնց մեղմելու համար պետք է ներդրվեն նոր լուծումներ: Պայմանավորված ներդրված տեղեկատվական համակարգերի մեծաքանակությամբ և տեղեկատվական անվտանգության ոլորտի արագ զարգացմամբ, Թողարկողը իր մոտ որպես կարևոր ռիսկ առանձնացրել է հին օպերացիոն համակարգերի օգտագործումից ծագող ռիսկերը, որոնց արդիականացման գործընթացը առաջնահերթություն է:

Տեղեկատվական անվտանգության ռիսկերի զսպման նպատակով, Թողարկողը 31.05.2024թ. թվականի ստացել է PCI DSS 4.0 հավաստագիր: Ինչպես նաև Թողարկողը ներկա պահին գտնվում է ISO/IEC27001:2022 հավաստագրման գործընթացում, որն իրականացվում է ավստրիական TÜV AUSTRIA Standards and Compliance LLC կողմից: Միաժամանակ տեղեկատվական անվտանգության ռիսկերի զսպման նպատակով, Թողարկողը տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի (ՏԱԿՀ) պարտադիր պահանջներին համապատասխան արդիականացրել է իր ներքին գործընթացները:

#### 1.2.1.4. Անընդհատության ռիսկ

Սա Թողարկողի կրիտիկական կարևորագույն գործընթացների խափանման, ծառայությունների մերժման կամ վճարումների կատարման կանգառի հետևանքով վնասներ կրելու հավանականությունն է:

Նշված ռիսկը կառավարելու նպատակով Թողարկողը մանրակրկիտ մշտադիտարկում է Ընկերության գործունեության անընդհատության վրա բացասական ազդող հնարավոր գործոնները և խնդիրների առաջացման դեպքում հնարավորինս արագ և արդյունավետ արձագանքում է դրանց՝ տալով համապատասխան լուծումներ: Ավելին, ապահովված է սարքավորումների, համակարգերի և կոմունիկացիաների կրկնօրինակումը՝ խաթարված գործընթացները հնարավորինս արագ վերականգնելու նպատակով: Մշակված են համապատասխան ներքին նորմատիվ ակտեր, ինչպիսիք են՝ գործունեության անընդհատության քաղաքականությունը:

#### 1.2.1.5. Աճող մրցակցության ռիսկ

Սա շուկայում համանման ծառայությունների մատուցման ոլորտում մրցակցության ուժեղացման ռիսկն է, որի արդյունքում կարող են նվազել Թողարկողի կողմից մատուցվող ծառայությունների ծավալը, գինը՝ վերջիվերջո հանգեցնելով շահույթի նվազման:

Ներկայումս ՀՀ-ում վճարահաշվարկային ծառայությունների ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը՝ հաշվի առնելով, որ նմանատիպ ծառայություններ մատուցում են ինչպես բանկերը, այնպես էլ գործող և նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպությունները: Մրցակցության զգալի աճը և/կամ մրցակիցների ագրեսիվ քաղաքականությունը կարող են հանգեցնել հաճախորդների մի մասի արտահոսքի, ուստի և եկամուտների նվազման: Այս ռիսկի զսպման համար Թողարկողն անընդհատ ակտիվորեն զարգացնում է նոր ուղղություններ, մշակում է նոր ծառայություններ և շարունակաբար կատարելագործում է գործող ծառայությունները՝ շուկայում իր դիրքը ոչ միայն չկորցնելու, այլ նաև իր մասնաբաժինը մեծացնելու նպատակով:

Մրցակցության ակտիվացումը կարող է հանգեցնել նաև գործընկերների կողմից սակագների վերանայման պահանջի, ինչն ուղղակի ազդեցություն կունենա Թողարկողի շահույթի վրա:

#### 1.2.1.6. Իրացվելիության ռիսկ

Այս ռիսկի էությունն այն է, որ Թողարկողը որոշակի պահի դրությամբ կարող է չունենալ բավարար իրացվելի ակտիվներ իր պարտավորություններն ամբողջությամբ և ժամանակին կատարելու համար: Իրացվելիության ռիսկն առաջանում է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Թողարկողն իրացվելիության կառավարման նպատակով կիրառում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության համապատասխանեցման և/կամ վերահսկվող անհամապատասխանության մեթոդները: Բացի այդ, որպես վճարահաշվարկային կազմակերպություն, Թողարկողի համար օրենսդրությամբ սահմանված է իրացվելիության տնտեսական նորմատիվ: Այն իրենից ներկայացնում է բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցություն: Նշված սահմանային հարաբերակցության ապահովումը մշտապես գտնվում է Թողարկողի ուշադրության կենտրոնում:

Թողարկողը նաև ձգտում է կանխիկ դրամական միջոցների շրջանառելիության արագացման միջոցով նվազեցնել իրացվելիության ռիսկը, մասնավորապես տերմինալների ինկասացիոն ցիկլի հնարավոր կրճատման միջոցով:
Ի լրումն, իրացվելիության ռիսկի նվազեցման և հնարավորինս բացառման նպատակով Թողարկողը համապատասխան պայմանագրեր է կնքել նաև ապահովագրական ընկերությունների հետ:
Ինչպես նաև Թողարկողը կիրառել է լրացուցիչ միջոց՝ ապահովագրելով որպես միջնորդ իր պարտավորությունը շահառուների նկատմամբ:

#### 1.2.1.7. Օրենսդրական և նորմատիվ դաշտի փոփոխության ռիսկ

Ռիսկի առաջացման պատճառ են հանդիսանում նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները, մասնավերապես՝ ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխությունները, ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխությունները և ՀՀ ԿԲ որոշումները, ինչպես նաև Միջազգային օրենսդրական ոլորտային փոփոխությունները, որոնք կարող են նաև հանգեցնել գործընկերային

հարաբերությունների վերանայումների ու փոփոխությունների: Վերոգրյալ փոփոխությունները կարող են անդրադառնալ Թողարկողի բնականոն գործունեության և շուկայում տիրող իրավիճակի վրա:

Թողարկողի կողմից կիրառվում են ռիսկի նվազեցման արդյունավետ մեխանիզմներ, մասնավորապես Ընկերության ղեկավարությունն արագ արձագանքում է օրենսդրական էական փոփոխություններին և հնարավորինս զսպում է դրանց բացասական հետևանքները: Այնուամենայնիվ, կարևոր ենք համարում ներդրողների ուշադրությունը հրավիրել հնարավոր ռիսկին, քանի որ փոփոխությունները կարող են էապես ազդել Ընկերության գործունեության վրա և հանգեցնել Ընկերության ֆինանսական ցուցանիշների անկման:

#### 1.2.1.8. Երկրի ռիսկ

ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը, մասնավորապես տնտեսական աճի նվազումը, քաղաքական իրադարձությունները կարող են հանգեցնել բնակչության եկամուտների նվազման, որն էլ իր հերթին կարող է բացասական ազդել Թողարկողի շրջանառության ծավալների վրա, հետևաբար նաև շահույթի վրա: Այս ամենը հաշվի առնելով՝ Թողարկողը մշտապես թարմացնում և ադապտացնում է իր ծառայությունների ցանկը՝ համապատասխանեցնելով գործող տնտեսական իրավիճակին, ինչով էլ նվազեցնում է նշված ռիսկի ազդեցությունը:

#### 1.2.1.9. Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ

Ռիսկն առաջանում է ՀՀ օրենսդրական պահանջների, միջազգային նորմերի և ստանդարտների, Ընկերության ներքին իրավական ակտերի, պայմանագրերի, համաձայնագրերի, ինչպես նաև էթիկայի կանոնների չպահպանման հետևանքով: Թողարկողի հանդեպ կարող են կիրառվել իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցներ, որոնք կարող են հանգեցնել էական ֆինանսական կորուստների: Ռիսկի զսպման համար Թողարկողը աչալրջորեն հետևում է ՀՀ օրենսդրական և ԿԲ կողմից արդեն իսկ ներդրված նորմատիվների և սահմանված պահանջների կատարմանը, ինչպես նաև արագ և բարձր պրոֆեսիոնալիզմով է արձագանքում բոլոր փոփոխություններին:

#### 1.2.1.10. Համբավի ռիսկ

Թողարկողի վերաբերյալ որոշակի հանգամանքներում հանրության լայն շրջաններում կարող է ձևավորվել բացասական կարծիք: Դա կարող է հանգեցնել հաճախորդների թվաքանակի նվազմանը, որն էլ իր հերթին կարող է բերել կազմակերպության եկամուտների և շահույթի նվազմանը: Թողարկողը, գիտակցելով բարի համբավի կարևորությունը, անմիջապես արձագանքում է իր համբավին սպառնացող ցանկացած հանգամանքի ի հայտ գալու պարագայում և հետևողականորեն աշխատում է հանրության հետ՝ իր բարի համբավը պահպանելու ուղղությամբ:

#### 1.2.1.11. Անձնակազմի հոսունության ռիսկ

Սա իրենից ներկայացնում է Ընկերության կառավարման մեջ ակտիվորեն ներգրավված աշխատակիցների և/կամ մեծ թվով բարձր որակավորում ունեցող մասնագետների միաժամանակ աշխատանքից ազատվելու դեպքում Թողարկողի վնասներ կրելու ռիսկը:

Բարձրորակ կադրերի առկայությունը չափազանց կարևոր է մրցունակ լինելու և կազմակերպության առջև դրված խնդիրներին հասնելու համար: Ներկայումս շուկայում ձևավորվել է այնպիսի իրավիճակ, որ բարձր որակավորում ունեցող աշխատակիցների նկատմամբ պահանջարկը մեծացել է, և մրցակիցներն ավելի լավ պայմաններ առաջարկելու միջոցով ջանքեր են գործադրում լավագույն կադրերին ներգրավելու ուղղությամբ: Տվյալ ռիսկը հնարավորինս զսպելու համար Թողարկողը կիրառում է ոչ միայն ֆինանսական խրախուսման մեթոդներ, այլ նաև ջանքեր է գործադրում աշխատակիցների սոցիալական ապահովագրության բարելավման և վերապատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ:

#### 1.2.1.12. Խարդախության ռիսկ

Ընկերության հանդեպ կամ նրա հաճախորդների հանդեպ կարող են իրականացվել խարդախություններ: Դա կարող է հանգեցնել ինչպես ֆինանսական կորուստների, այնպես էլ Թողարկողի հեղինակության կորստի:

Այս ռիսկը զսպելու նպատակով Ընկերությունը մշտապես իրականացնում է խարդախության հնարավոր սխեմաների բացահայտման և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակում: Բացի այդ, Թողարկողը պարբերաբար տարբեր միջոցներով իրականացնում է տեղեկատվության տրամադրում հաճախորդներին՝ հավանական խարդախությունների և դրանցից խուսափելու հնարավորությունների մասին:

### 1.2.2. Բաժնետոմսերին առնչվող ռիսկերը

Բաժնետոմսերին առնչվող ռիսկերը մանրամասն նկարագրված են Ազդագրի 2.1. ենթագլխում:

#### 1.2.2.1. Շուկայական ռիսկ

Երկրորդային շուկայում Թողարկողի բաժնետոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

#### 1.2.2.2. Բիզնես ռիսկը

Այս ռիսկը ընդհանուր տնտեսական վիճակի, ոլորտի կամ Ընկերության մրցակցային դիրքի կամ ֆինանսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների անբարենպաստ հետևանքն է, որի արդյունքում կարող է նվազել շահույթը՝ հանգեցնելով երկրորդային շուկայում բաժնետոմսերի գնի անկման , ինչպես նաև հնարավոր շահաբաժինների նվազման:

#### 1.2.2.3. Տոկոսադրույքի ռիսկը

Տոկոսադրույքների փոփոխությունը կարող է անուղղակիորեն ազդել բաժնետոմսերի գնի վրա՝ որպես այլընտրանքային ներդրման ուղղություն: Մասնավորապես, տոկոսադրույքների բարձրացման պարագայում այլ հավասար պայմաններում հավանական է Թողարկողի բաժնետոմսերի գնի նվազում:

#### 1.2.2.4. Արտարժութային ռիսկ

Այն կարող է առաջանալ ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքների տատանման արդյունքում: Թողարկվող բաժնետոմսերն արտահայտված են ՀՀ դրամով, ուստի ներդրումները, բաժնետոմսերի առուվաճառքը և շահաբաժինների վճարումն իրականացվելու են բացառապես ՀՀ դրամով: Հետևաբար, արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների համար, ում ֆինանսական հոսքերը հիմնականում իրականացվում են արտարժույթով:

#### 1.2.2.5. Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկ

Թողարկողը երկրորդային շուկայում իրացվելիությունն ապահովելու համար ներգավելու է շուկա ստեղծող(ներ): Այնուամենայնիվ, վերջինս չի կարող երաշխավորել, որ կարգավորվող շուկայում բաժնետոմսերի շրջանառության ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել բաժնետոմսերը իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

#### 1.2.2.6. Գնաճի կամ գնողունակության ռիսկ

ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական եկամտաբերությունից ցածր (գնաճի չափով): Ընդ որում, ռիսկը վերաբերվում է և՛ բաժնետոմսերի գնի աճից գոյացած եկամտաբերությանը, և՛ շահութաբաժինների հնարավոր վճարման արդյունքում ստացված մուտքերից եկամտաբերությանը:

#### 1.2.2.7. Վարկային/դեֆոլտի ռիսկ

Ներդրողները ցանկացած թողարկողի բաժնետոմսերը ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

#### 1.2.2.8. Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ

Ռիսկի առաջացման պատճառ են հանդիսանում նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները, մասնավերապես՝ ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխությունները, ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխությունները և ՀՀ ԿԲ որոշումները, ինչպես նաև Միջազգային օրենսդրական ոլորտային փոփոխությունները, որոնք կարող են նաև հանգեցնել գործընկերային հարաբերությունների վերանայումների ու փոփոխությունների: Վերոգրյալ փոփոխությունները կարող են անդրադառնալ Թողարկողի բնականոն գործունեության և շուկայում տիրող իրավիճակի վրա:

## 1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերությունը 2022 թ.-ի ունեցել է ռեկորդային հասույթ, որը կազմել է 12.7 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ աճել էր 25%, նույն ժամանակահատվածում զուտ շահույթը աճել էր 47%: Այս կտրուկ աճը պայմանավորված էր 3.4.2.2. ենթակետում նշված բացառիկ գործոններով:

Ընկերությունը 2023 թ.-ի տվյալներով հասույթը կրճատվել է 23% - ով համեմատած 2022 թ -ի հետ, իսկ զուտ շահույթը 45% - ով: Սա հիմնականում պայմանավորված է 3.4.2.2. ենթակետում նշված բացառիկ գործոնների ազդեցության նվազմամբ:

Թողարկողի մարտավարությունը թվային պրոդուկտների զարգացմանն է միտված, դրանով իսկ նպաստելով համախառն մարժայի աճին և եկամտաբերության աճին:

Թողարկողը մասնակցել է Երևանի Քաղաքապետարանի կողմից անցկացված միասնական տոմսային օպերատորի բաց մրցույթի և հաղթող է ճանաչվել:

2022թ.-ի հուլիսին Թողարկողը ստորագրել է համաձայնագիր միջազգային VISA վճարահաշվարկային կազմակերպության հետ: Այդ համաձայնագիրը հնարավորություն կտա Թողարկողին ստեղծել անհատական VISA քարտեր իր հաճախորդների համար: Եկամուտ է ակնկալվում անմիջապես հիմնական վճարահաշվարկային գործունեությունից, ինչպես նաև Apple Pay պրոդուկտից:

Ընկերության արտոնագրերը և լիցենզիաները ներկայացված են Ազդագրի 3.9 կետում:

## 1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

### 1.4.1. Անկախ աուդիտորները

Թողարկողի 2021 և 2022թթ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է **«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**, կայք՝ http://www.kpmg.am:

Թողարկողի 2023թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնում է **«Գրանթ Թորոնթոն» փակ բաժնետիրական ընկերությունը,** կայք՝ https://www.grantthornton.am/

### 1.4.2. Խորհրդատուները

Թողարկման գլխավոր տեղաբաշխողն է՝ **«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն,** կայք՝ www.armbrok.am:

Ազդագրի կազմման գործընթացում, որպես խորհրդատու Ընկերությունն օգտվել է **«Էմ Բի Քնսալթինգ» ՓԲԸ** - ի ծառայություններից, կայք՝ www.mbconsulting.am:

## 1.5. Թողարկողի կառավարումը և բաժնետերերը

Ըստ կանոնադրության, Ընկերության կառավարման հիմնական մարմիններն են.

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Ընկերության տնօրենների խորհուրդը,
- Ընկերության գլխավոր տնօրենը:

### 1.5.1. Թողարկողի բաժնետերեր

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերության նշանակալի իրավաբանական անձ բաժնետերն է «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի»-ն, որի մասնակցությունը Թողարկողի կապիտալում կազմում է 56.28%: «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» ընկերության վերջնական վերահսկող անձն է Ռամի Տրեյստերը:

| Բաժնետերերը | Բաժնետոմսերի քանակը | Թողարկողի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի տոկոսը* |
|---|---|---|
| «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» | 17,334,240 հատ սովորական բաժնետոմս | 56.28% |
| Տիգրան Սարգսյան | 5,544,000 հատ սովորական բաժնետոմս | 18% |
| Արամայիս Բադալյան | 4,620,000 հատ սովորական բաժնետոմս | 15% |
| Տաթևիկ Ավետիսյան | 1,789,480 հատ սովորական բաժնետոմս | 5.81% |
| Արամ Սարգսյան | 1,512,280 հատ սովորական բաժնետոմս | 4.91% |

### 1.5.2. Թողարկողի տնօրենների խորհուրդ

Թողարկողի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը: Ընկերության խորհուրդը բաղկացած է երեք անդամներից՝ Խորհրդի նախագահից և երկու անդամներից:

| Անուն, ազգանուն | Պաշտոն | Փորձառությունը |
|---|---|---|
| Արտաշես Ավետիսյան | Տնօրենների խորհրդի նախագահ | Ավելի քան 8 տարի նշված պաշտոնում |
| Ռամի Տրեյստեր | Տնօրենների խորհրդի անդամ | Ավելի քան 8 տարի նշված պաշտոնում |
| Վաչե Գաբրիելյան | Տնօրենների խորհրդի անդամ | Պաշտոնում 2022 թ.-ի սեպտեմբերից |

### 1.5.3. Թողարկողի Գլխավոր գործադիր տնօրեն

Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

| Անուն, ազգանուն | Պաշտոն | Փորձառությունը |
|---|---|---|
| Արտյոմ Ղազարյան | Գլխավոր տնօրեն | Ավելի քան 21 տարի ոլորտում |

Ընկերության կառավարման մարմնի անդամները չեն տիրապետում Թողարկողի բաժնային արժեթղթերի նկատմամբ օպցիոնների:

### 1.5.4. Աշխատակիցներ

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում աշխատակիցների թվաքանակը հետևյալն է՝

- 31.12.2021թ. դրությամբ՝ 304 հոգի,
- 31.12.2022թ. դրությամբ՝ 352 հոգի,
- 31.12.2023թ. դրությամբ՝ 358 հոգի:

Թողարկողը չունի ժամանակավոր աշխատանքային պայմանագրով աշխատող աշխատակիցներ:

## 1.6. Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

Տեղաբաշխվող բաժնետոմսերը նոր թողարկված սովորական բաժնետոմսեր են, բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Ազդագրի ներքո նախատեսվող առաջարկի հիմնական վիաճակագրությունը.

| | |
|---|---|
| **Բաժնետոմսի տեսակը՝** | Սովորական բաժնետոմս |
| **Բաժնետոմսի ձևը՝** | Ոչ փաստաթղթային |
| **Բաժնետոմսերի քանակը** | 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ |
| **Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝** | 35 (երեսունհինգ) ՀՀ դրամ |
| **Մեկ բաժնետոմսի առաջարկի արժեքը՝** | 400 (չորսհարյուր) ՀՀ դրամ |
| **Բաժնետոմսերի ընդհանուր ծավալ (անվանական արժեքով)՝** | 134,750,000 (հարյուր երեսունչորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ |
| **Բաժնետոմսերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը՝** | 1,540,000,000 (մեկ միլիարդ հինգհարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ |

Բաժնետոմսերը տեղաբաշխվում և շրջանառվում են ՀՀ դրամով:

Բաժնետոմսերի թողարկման նպատակն է մեծացնել ընկերության ու բաժնետիրական կապիտալը, և ներգրավված միջոցները նախատեսվում են օգտագործվել Ընկերության զարգացման ռազմավարությունը իրականացնելու համար:

Տեղաբախշման սկզբի և ավարտի ժամկետները կորոշվեն Ազդագրի ԿԲ -ի կողմից գրանցումից հետո Ընկերության իրավասու մարմնի կողմից:

## 1.7. Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Բաժնետոմսերը կտեղաբաշխվեն Բորսայից դուրս, ուղղակի վաճառքի միջոցով:

Բաժնետոմսերի ձեռքբերելու նպատակով ներդրողը ներկայացնում է բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական՝ Տեղաբաշխողի հաստատված տիպային օրինակով, որը հրապարակվում է Թողարկողի և Տեղաբաշխողի ինտերնետային կայքում, (այսուհետ՝ հայտ):

Ներդրողը կարող է ձեռքբերման հայտ ներկայացնել հետևյալ եղանակներով.

- **Բաժանորդագրության Ձեռքբերման հայտ-հանձնարարական ստեղծել Թելսելլի TWallet հավելվածի միջոցով:** Այդ ապարագայում բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարումը կարող է կատարվել նաև «Telcell Wallet» հավելվածի միջոցով, որը չի կարող գերազանցել 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամը մեկ օրվա դրությամբ: Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը «Telcell Wallet» հավելվածի միջոցով ձեռքբերման հայտ-հանձնարարականը ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է սյուն առաջարկի նպատակով Թողարկողի անվամբ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163001479761 հաշվեհամարին ապահովի բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը (վճարումը պետք է կատարվի ՀՀ դրամով:
- **Ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացում Տեղաբաշխողին:** Բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողները սահմանված կարգով պետք է լրացվածձեռքբերման հայտերը և պատշաճ կերպով ներկայացնեն Տեղաբաշխողին: Դրանով նրանք կհավաստեն բաժնետոմսերի առաջարկի պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, որով էլ այդ պայմանները պարտադիր կդառնան ներդրողների համար: Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը ձեռքբերման հայտ-հանձնարարականը պատշաճ լրացված կկերպով ներկայաց**վ**ելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է սյուն առաջարկի նպատակով ստորև ներկայացված Տեղաբաշխողի «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163005043316 հաշվեհամարին կատարի հայտ-հանձնարարականում նշված քանակի բաժնետոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում՝ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Առաջարկվող բաժնետոմսերի մասով հայցվելու է ցուցակման թույլտվություն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում: Ցուցակման հայցը կարող է նաև չբավարարվել:

Առաջարկի ամբողջական նկարագիրը ներկայացված է Ազդագրի 2.4. ենթագլխում:

## 1.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

| **Ցուցանիշի անվանումը** | **2023թ. (աուդիտ անցած)** | **2022թ. (աուդիտ անցած)** | **2021թ. (աուդիտ անցած)** | **2020թ. (աուդիտ անցած)** |
|---|---|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 9,846,861 | 12,711,421 | 10,137,844 | 6,682,403 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | (4,185,451) | (6,006,947) | (5,038,381) | (3,964,523) |
| Համախառն շահույթ (վնաս) | 5,661,410 | 6,704,474 | 5,099,463 | 2,717,881 |
| Իրացման ծախսեր | (452,375) | (916,111) | (596,481) | (501,449) |
| Վարչական ծախսեր | (3,496,871) | (1,820,937) | (1,041,436) | (665,817) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 1,712,164 | 3,967,426 | 3,461,545 | 1,550,615 |
| Գործառնական այլ եկամուտներ | 1,086,342 | 1,353,764 | 326,993 | 211,079 |
| Գործառնական այլ ծախսեր | (635,140) | (597,807) | (476,519) | (387,231) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 2,163,366 | 4,723,384 | 3,312,019 | 1,374,463 |
| Ֆինանսական ծախսեր | 180,038 | (223,178) | (325,162) | 45,519 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | 0 | 0 | 0 | 0 |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս) | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 12,168 | | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 2,355,572 | 4,500,205 | 2,986,858 | 1,419,982 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 0 | 0 | 0 | 0 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 2,355,572 | 4,500,205 | 2,986,858 | 1,419,982 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | (504,831) | (984,556) | (600,941) | (290,647) |
| **Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո** | **1,850,741** | **3,515,650** | **2,385,917** | **1,129,335** |

Ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ

| **Ցուցանիշի անվանումը** | **2023թ. (աուդիտ անցած)** | **2022թ. (աուդիտ անցած)** | **2021թ. (աուդիտ անցած)** | **2020թ. (աուդիտ անցած)** |
|---|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 1,036,917 | 900,124 | 822,514 | 780,446 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 |
| Ոչ նյութական ակտիվներ | 1,634,170 | 1,659,612 | 1,598,430 | 705,708 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 264,285 | 294,348 | 276,295 | 1,157,700 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 409,183 | 317,359 | 268,735 | 86,599 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **3,344,555** | **3,171,444** | **2,965,974** | **2,730,452** |
| Պաշարներ | 272,969 | 148,000 | 140,903 | 76,592 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 236,715 | 241,856 | 196,846 | 0 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 892,756 | 739,758 | 789,042 | 799,467 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 1,555 | 1,555 | 1,555 | 1,555 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 193,518 | 198,742 | 214,599 | 11,120 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13,861,351 | 11,225,781 | 10,549,045 | 6,062,055 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **15,458,864** | **12,555,692** | **11,891,990** | **6,950,790** |
| **Ընդամենը ակտիվներ** | **18,803,419** | **15,727,136** | **14,857,963** | **9,681,242** |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 1,078,000 | 231,000 | 220,000 | 150,000 |
| Էմիսիոն եկամուտ | 0 | 0 | 0 | 0 |
| Կուտակված շահույթ | 2,416,860 | 4,073,198 | 2,568,748 | 1,608,583 |
| Պահուստային կապիտալ | 161,700 | 46,200 | 35,000 | 35,000 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 0 | 0 | 0 | 0 |
| Չվերահսկվող բաժնեմաս | 11,889 | 11,889 | 11,889 | 11,889 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **3,668,449** | **4,362,287** | **2,835,637** | **1,805,472** |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 2,099,720 | 1,326,704 | 589,849 | 498,021 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 287,934 | 448,909 | 403,305 | 245,655 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **2,387,654** | **1,775,613** | **993,154** | **743,676** |

| Ցուցանիշի անվանումը | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|
| Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 0 | 0 | 0 | 0 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 12,384,382 | 8,839,844 | 10,567,969 | 6,830,599 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 362,934 | 749,392 | 461,203 | 301,495 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **12,747,316** | **9,589,236** | **11,029,172** | **7,132,095** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **15,134,970** | **11,364,849** | **12,022,326** | **7,875,770** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **18,803,419** | **15,727,136** | **14,857,963** | **9,681,242** |

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ տվյալներ

| Ցուցանիշի անվանումը | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին** | **5,508,989** | **9,283,107** | **6,062,055** | **6,652,983** |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 4,948,958 | (1,506,573) | 5,723,432 | 855,802 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (535,148) | (561,419) | (620,770) | (650,773) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (1,869,072) | (1,267,079) | (1,282,023) | (828,850) |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | (75,289) | (439,047) | (301,058) | 32,893 |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **7,902,100** | **5,508,989** | **9,581,636** | **6,062,055** |

Ամփոփ ֆինանսական գործակիցներ

| **Ցուցանիշի անվանումը** | **2023թ. (աուդիտ անցած)** | **2022թ. (աուդիտ անցած)** | **2021թ. (աուդիտ անցած)** | **2020թ. (աուդիտ անցած)** |
|---|---|---|---|---|
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) | 8,412 | 15,980 | 15,311 | 7,529 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) | 51% | 98% | 103% | 82% |
| Ակտիվների շահութաբերություն (ROA) | 14% | 23% | 19% | 12% |
| Զուտ շահույթի մարժա (NPM) | 19% | 28% | 24% | 17% |
| Կապիտալի համարժեքության գործակից | 20% | 28% | 19% | 19% |
| Ֆինանսական կախվածության գործակից | 3.47 | 2.20 | 3.89 | 3.95 |
| Բացարձակ իրացվելության գործակից | 1.10 | 1.19 | 0.98 | 0.85 |
| Ընթացիկ իրացվելության գործակից | 1.19 | 1.29 | 1.07 | 0.96 |
| Ընդհանուր իրացվելության գործակից | 1.21 | 1.31 | 1.08 | 0.97 |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 12.20 | 16.63 | 12.76 | 9.98 |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 29.92 | 21.95 | 28.60 | 36.57 |
| Պաշարների շրջանառելիության գործակից | 22.35 | 41.58 | 46.33 | 47.73 |
| Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով | 16.33 | 8.78 | 7.88 | 7.65 |
| Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 1.51 | 2.33 | 2.22 | 2.21 |
| Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 242.48 | 156.60 | 164.46 | 164.86 |

Բաժնետոմսերի քանակի վիճակագրություն

| **Ցուցանիշի անվանումը** | **2023թ. (աուդիտ անցած)** | **2022թ. (աուդիտ անցած)** | **2021թ. (աուդիտ անցած)** | **2020թ. (աուդիտ անցած)** |
|---|---|---|---|---|
| Բաժնետոմսերի քանակ ժամանակաշրջանի վերջում | 220,000 | 220,000 | 220,000 | 150,000 |
| Բաժնետոմսերի ժամանակով միջին կշռված քանակ | 220,000 | 220,000 | 155,833* | 150,000 |

Նոր բեժնետոմեսրը թողարկվել են 2021թ -ի նոյեմբերին:

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 3-ում:

# 2. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2.1.Ռիսկային գործոններ

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված է հնարավոր ռիսկերի ոչ ամբողջական ցանկը: Հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու սպասումներով:

Ստորև ներկայացվում են Թողարկողի կողմից բացահայտված այն հիմնական ռիսկերը, որոնք ներդրողը պետք է կարևորի բաժնետոմսերում ներդրումներ կատարելիս:

### 2.1.1. Շուկայական ռիսկ

Երկրորդային շուկայում Թողարկողի բաժնետոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

### 2.1.2. Բիզնես ռիսկը

Ընդհանուր տնտեսական վիճակի, ոլորտի կամ Ընկերության մրցակցային դիրքի կամ ֆինանսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների առաջացում, որոնց արդյունքում կարող է նվազել շահույթը՝ հանգեցնելով բաժնետոմսերի գնի անկման երկրորդային շուկայում, ինչպես նաև հնարավոր շահաբաժինների նվազման:

### 2.1.3. Տոկոսադրույքի ռիսկը

Տոկոսադրույքների փոփոխությունը կարող է անուղղակիորեն ազդել բաժնետոմսերի գնի վրա որպես այլընտրանքային ներդրման ուղղություն: Մասնավորապես, տոկոսադրույքների բարձրացման պարագայում այլ հավասար պայմաններում հավանական է Թողարկողի բաժնետոմսերի գնի նվազում:

### 2.1.4. Արտարժութային ռիսկ

Այն կարող է առաջանալ ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքների տատանման արդյունքում: Թողարկվող բաժնետոմսերն արտահայտված են ՀՀ դրամով, ուստի ներդրումները, բաժնետոմսերի առուվաճառքը և շահաբաժինների վճարումն իրականացվելու են բացառապես ՀՀ դրամով: Հետևաբար, արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների համար, ում ֆինանսական հոսքերը հիմնականում իրականացվում են արտարժույթով:

### 2.1.5. Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկ

Թողարկողը երկրորդային շուկայում իրացվելիությունն ապահովելու համար ներգավելու է շուկա ստեղծող(ներ): Այնուամենայնիվ, վերջինս չի կարող երաշխավորել, որ կարգավորվող շուկայում բաժնետոմսերի շրջանառության ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել բաժնետոմսերը իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

### 2.1.6. Գնաճի կամ գնողունակության ռիսկ

ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական եկամտաբերությունից ցածր (գնաճի չափով): Ընդ որում, ռիսկը վերաբերվում է և՛ բաժնետոմսերի գնի աճից գոյացած եկամտաբերությանը, և՛ շահութաբաժինների հնարավոր վճարման արդյունքում ստացված մուտքերից եկամտաբերությանը:

### 2.1.7. Վարկային/դեֆոլտի ռիսկ

Ներդրողները ցանկացած թողարկողի բաժնետոմսերը ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

### 2.1.8. Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ

Ռիսկի առաջացման պատճառ են հանդիսանում նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները, մասնավերապես՝ ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխությունները, ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխությունները և ՀՀ ԿԲ որոշումները, ինչպես նաև Միջազգային օրենսդրական ոլորտային փոփոխությունները, որոնք կարող են նաև հանգեցնել գործընկերային հարաբերությունների վերանայումների ու փոփոխությունների: Վերոգրյալ փոփոխությունները կարող են անդրադառնալ Թողարկողի բնականոն գործունեության և շուկայում տիրող իրավիճակի վրա:

## 2.2. Հիմնական տեղեկատվություն

### 2.2.1. Կապիտալիզացիա և պարտավորություններ

«Թել-Սել» ԲԲԸ կապիտալիզացիան.

| *Հազար ՀՀ դրամ* | 31.12.23 թ. | 29.02.24 թ. |
|---|---|---|
| Կանոնադրական կապիտալ | 1,078,000 | 1,078,000 |
| Կուտակված շահույթ | 2,416,860 | 2,886,464 |
| Պահուստներ | 161,700 | 161,700 |
| Չվերահսկվող բաժնեմաս | 11,889 | 11,889 |
| **Սեփական կապիտալ** | **3,668,449** | **4,138,053** |

ԹԵԼ-ՍԵԼ ԲԲԸ բաժնետետերի տարեկան ընդհանուր ժողովը 01.04.2024թ. թիվ 010424 արձանագրությամբ որոշում է կայացրել 2023թ. շահույթից 1,419,000,000 ՀՀ դրամի չափով բաշխում կատարել, իսկ հետագայում Ընկերությունը նպատակ ունի կուտակված շահույթի հաշվին համալրել կանոնադրական կապիտալը մինչ 2024 թվականի ավարտ:

«Թել-Սել» ԲԲԸ պարտավորությունները .

| Հազար ՀՀ դրամ | 31.12.23 թ. | 29.02.24 թ. |
|---|---|---|
| **Երկարաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, այդ թվում՝** | **2,099,720** | **1,929,338** |
| Ապահովված պարտավորություններ | 0 | 0 |
| Չապահովված պարտավորություններ | 2,099,720 | 1,929,338 |
| **Կարճաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, այդ թվում՝** | **0** | **0** |
| Ապահովված պարտավորություններ | 0 | 0 |
| Չապահովված պարտավորություններ | 0 | 0 |
| **Արտահաշվեկշռային և պայմանական պարտավորություններ** | **147,050** | **140,100** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **15,134,970** | **7,288,273** |
| Երաշխավորված պարտավորություններ | 5,044,850 | 5,044,850 |
| Չերաշխավորված պարտավորություններ | 10,090,120 | 2,243,423 |

### 2.2.2. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Հնարավոր ներգրավվող համախառն գումարների մեծությունը կկազմի 1,540,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ նախքան տեղաբաշխման գծով վճարներն ու ծախսերը:

Ընկերության կողմից թողարկման և տեղաբաշխման նպատակն է ավելացնել կանոնադրական կապիտալը և օգտագործել ներգրավված միջոցները Ընկերության ռազմավարությունից բխող ներդրումների իրականացման ուղղությամբ:

Միջոցները չեն օգտագործվելու բնականոն գործունեության շրջանակներից դուրս ակտիվների ձեռքբերման համար, այլ բիզնեսների հայտարարված ձեռքբերումների նպատակով:

Միջոցները կարող են օգտագործվել որոշ պարտավորությունների մարման նպատակով և այլն:

## 2.3. Տեղեկատվություն, կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ

### 2.3.1. Արժեթղթի տեսակը և դասը

Սույն Ազդագրի միջոցով առաջարկվող արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական (հասարակ) բաժնետոմս (բաժնային արժեթուղթ), բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Թողարկվող բաժնետոմսերը տարբերակիչ ծածկագիրն (ISIN) է՝.AMTLCLS10ER3:

### 2.3.2. Երկիրը

Բաժնետոմսերը թողարկվելու են համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս լուծվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 2.3.3. Բաժնետոմսերի ձևը

Թողարկվող բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Դեպոզիտարիա) ըստ Դեպոզիտարիայի համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, հեռ.՝ +374 60 615555:

### 2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 35 (երեսունհինգ) ՀՀ դրամ: Ազդագրի ներքո նախատեսվում է տեղաբաշխել 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ բաժնետոմս:

### 2.3.5. Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

### 2.3.6. Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը

Թողարկողի հասարակ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

1. իրացնել Թողարկողի կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն) սահմանված իրավունքները,

2. իր ցանկությամբ օտարել Բժնետոմսերը Բորսայում (Բորսայում ցուցակված և/կամ առևտրի թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (Բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված բաժնետոմսեր,
3. օրնեսրդությամբ սահմանված այլ իրավունքներ:

Թողարկողի Կանոնադարությամբ հասարակ բաժնետոմսի սեփականատերը իրավունք ունի՝

1. Մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
2. Մասնակցել Թողարկողի կառավարմանը,
3. Ստանալ շահութաբաժիններ Թողարկողի գործունեությունից առաջացած շահույթից,
4. Ստանալ Թողարկողի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Թողարկողի արտադրատնտեսական գործունեությանը,
5. Թողարկողի հիմնադիր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
6. Հանդես գալ առաջարկություններով Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում,
7. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
8. Հայցով դիմել դատարան՝ Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
9. Թողարկողի լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Թողարկողի գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
10. Օգտվել Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

#### 2.3.6.1. Շահութաբաժինների ստացման իրավունք

Յուրաքանչյուր բաժնետոմս իր սեփականատիրոջը իրավունք է տալիս իրեն պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն ստանալ շահութաբաժիններ: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Թողարկողի Շահութաբաժնային քաղաքականությամբ:

Շահութաբաժնային քաղաքականությունը սահմանում է Թողարկողի շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները, Ընկերության բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման պայմանները, շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը, այդ թվում՝ վճարման ժամկետներն ու ձևը:

Թողարկողը իրավունք ունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունն է, իսկ միջանկյալ շահութաբաժինների վճարման պարագայում Թողարկողի խորհրդի:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Ընկերության խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Թողարկողի կողմից հայտարարված շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով, անկանխիկ ձևով:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Թողարկողի բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են շահույթից՝ հարկերը վճարելուց հետո (զուտ շահույթ), որը հաշվարկվում է Թողարկողի՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ՝ բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելիս: Ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջը շահութաբաժնի վճարում է համարվում Թողարկողի հաշվից համապատասխան դրամական գումարի անկանխիկ ստացումը՝ բաժնետիրոջ կողմից ներկայացրած բանկային հաշվին կամ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ անկանխիկ եղանակներով:

Թողարկողն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե՝

ա) լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը,

բ) Թողարկողն օրենքով սահմանված կարգով հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը,

գ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Թողարկողի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,

դ) Թողարկողի զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Թողարկողի ոչ ռեզիդենտ բաժնետերերի կողմից շահութաբաժինների ստացման առանձնահատկություններ սահմանված չեն:

Շահութաբաժինների հաշվարկման և վճարման հետ կապված այլ հարցերը կարգավորվում են Թողարկողի Շահութաբաժնային քաղաքականությամբ, որը հասանելի է Թողարկողի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, ինչպես նաև Թողարկողի՝ invest.telcell.am ինտերնետային կայքում:

#### 2.3.6.2. Ձայնի իրավունք

Թողարկողի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի՝ ենթարկվելով օրենսդրությամբ և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներին:

#### 2.3.6.3. Նույն դասի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունք

Թողարկողի բաժնետերերի 04.04.2024թ. արտահերթ ընդհանուր ժողովի 1.4 որոշման համաձայն՝ Բաժնետերերը որոշել են չկիրառել Տեղաբաշխման նպատակով թողարկված և սույն Ազդագրով առաջարկվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը: Նախապատվության իրավունքը նախատեսված է համապատասխան «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47- րդ հոդվածով:

#### 2.3.6.4. Լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունք

Թողարկողի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի Թողարկողի լուծարման դեպքում ստանալ Թողարկողի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը՝ ՀՀ օրենսդրությամբ (մասնավորապես՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքները) սահմանված հերթականությանը համապատասխան՝ Թողարկողի այլ պարտավորությունների մարումից հետո:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները,
- երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով,
- երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը,
- չորրորդ հերթին մարվում է բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը,
- հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի,
- վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պարտատերերի հանդեպ լուծարվող ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը բաշխում է բաժնետերերի միջև՝ հետևյալ հաջորդականությամբ՝

- առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն,
- երկրորդ հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները,
- երրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները,
- չորրորդ հերթին կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

#### 2.3.6.5. Հետգնման պահանջի իրավունք

Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Թողարկողից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը, եթե՝

ա. որոշում է ընդունվել Թողարկողի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին և նշված բաժնետերերը քվեարկել են Թողարկողի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ նշված խոշոր գործարք կնքելու դեմ, կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել,

բ. կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել,

գ. Թողարկողի կողմից բաժնետոմսերի հետգնումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, որը որոշվում է առանց բաժնետոմսի գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող Թողարկողի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

#### 2.3.6.6. Փոխարկման իրավունք

Թողարկվող սովորական բաժնետոմսերի փոխարկման իրավունք չի նախատեսվում:

### 2.3.7. Ազդագրով առաջարկվող բաժնետոմսերի մասին տեղեկատվություն

Բաժնետոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի 04.04.2024թ.-ի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ որոշվել է թողարկվել 4 200 000 (Չորս միլիոն երկու հարյուր հազար) հատ, 35 (երեսուն հինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմս, որից սույն Ազդագրով առաջարկվում է 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատը՝ 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ առաջարկի գնով, մեկ բաժնետոմսի համար:

### 2.3.8. Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Թողարկողի կանոնադրությամբ կամ Բաժնետոմսերի թողարկման մասին Թողարկողի իրավասու մարմնի որոշմամբ բաժնետոմսերի թողարկման/տեղաբաշխման, ինչպես նաև Բաժնետոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվել, բացառությամբ տեղաբախշման ընթացքում Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշվող նվազագույն և առավելագույն քանակի (Տես Ազդագրի նվազագույն և առավելագույն գումարների բաժինը):

Բաժնետոմսերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումներ չկան՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Թողարկողը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Ֆոնդային բորսա կամ Բորսա) բաժնետոմսերը ցուցակելու համար, և համաձայն գործող օրենսդրության Բաժնետոմսերի ցուցակման և/կամ առևտրին թույլատվության դեպքում վերջիններիս «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված Վաճառքը կարող է իրականացվել միայն Բորսայում:

### 2.3.9. Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորության նկարագրությունը

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորությունը, ինչպես նաև նման պարտավորության բացակայության դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Գլուխ 15-ով:

Յուրաքանչյուր անձ, որը թողարկողի բաժնային արժեթղթով մեկ կամ ավելի գործարքի հետևանքով դառնում է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր, պարտավոր է տվյալ դասի բոլոր արժեթղթերն իրեն հանձնելու առաջարկ անել: Նշված պահանջը տարածվում է նաև այն դեպքի վրա, երբ Հաշվետու թողարկողի (սույն դեպքում նույն Թողարկողի) դիմումի հիման վրա օպերատորի կողմից դադարեցվել է թողարկողի արժեթղթերի առևտուրը կարգավորվող շուկայում: Այս դեպքում արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկը պետք է ներկայացվի թողարկողի այն բաժնետերերի կողմից, որոնք կողմ են քվեարկել կարգավորվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության դադարեցման որոշմանը: Ընդ որում, կարգավորվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության դադարեցման որոշմանը կողմ քվեարկած բաժնետերերը ընտրում են ներկայացուցիչ, որը կիրականացնի արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկն իրենց անունից:

Անձը պարտավոր է արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագիրը Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան գործարքի կատարմանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, որի արդյունքում անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր:

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ՝

ա. անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր տվյալ ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման արդյունքում,

բ. անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր՝ իր կողմից տվյալ դասի բոլոր արժեթղթերի համար արժեթղթերը հանձնելու ոչ պարտադիր առաջարկի արդյունքում,

գ. արժեթղթերը ձեռք են բերվել ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից տեղաբաշխման նպատակով,

դ. անձը տվյալ դասի արժեթղթերի 75 տոկոսը գերազանցող մասը դրանց ձեռքբերման օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, օտարում է այն անձին, որը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 151-րդ հոդվածի համաձայն չի համարվում համատեղ գործելու համաձայնությամբ հանդես եկող անձ և պայմանով, որ այդ ժամկետի ընթացքում տվյալ արժեթղթերի թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով չի գումարվում:

### 2.3.10. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

**ՏԱՆՈՒԺՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ**

*Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից սպացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի սպացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:*

***Ռեզիդենտ իրավաբանական անձանց*** համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է ՀՀ Հարկային օրենսգրքի Հոդված 4–ի, Հոդված 104–ի, Հոդված 105–ի, Հոդված 107–ի, Հոդված 110–ի և Հոդված 123–ի համաձայն:

Մասնավորապես.

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի ստացած շահաբաժինների գումարի չափով, այսինքն՝ շահաբաժինները (բաժնետոմսերից ստացված եկամուտները) չեն հարկվում շահութահարկով:

**Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց** դեպքում հարկումը կատարվում է՝ ՀՀ Հարկային օրենսգրքի Հոդված 4–ի, Հոդված 104–ի, Հոդված 105–ի, Հոդված 107–ի, Հոդված 109–ի, Հոդված 110–ի, Հոդված 125–ի, Հոդված 126–ի և Հոդված 132–ի համաձայն:

Մասնավորապես.

Այս դեպքում շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները), բացառությամբ մինչև 2024թ -ի դեկտեմբերի 31 -ը ՀՀ–ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ենթակա են շահութահարկով հարկման որպես պասիվ եկամուտներ՝ 5% դրույքաչափով: Հարկումը կատարվում է հարկային գործակալի կողմից՝ շահութաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման պահին (ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից): Մինչև 2024թ -ի դեկտեմբերի 31 -ը ՀՀ–ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահութաբաժինների (բաժնետոմսերից ստացվող եկամուտների) մասով ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ազատվում են շահութահարկի վճարումից:

**Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց** համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է ՀՀ Հարկային օրենսգրքի Հոդված 4–ի, Հոդված 140–ի, Հոդված 141–ի, Հոդված 143–ի, Հոդված 144–ի, Հոդված 147–ի, Հոդված 149–ի և Հոդված 150–ի համաձայն:

Մասնավորապես.

**Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց** վճարվող շահութաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները), բացառությամբ մինչև 2024թ -ի դեկտեմբերի 31 -ը ՀՀ–ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահութաբաժինների, ենթակա են հարկման որպես պասիվ եկամուտներ՝ 5%, դրույքաչափով: Հարկումը կատարվում է հարկային գործակալի կողմից՝ շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման պահին (վճարվող եկամտի ընդհանուր գումարից):

Մինչև 2024թ -ի դեկտեմբերի 31 -ը ՀՀ–ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտներ) հարկման բազան որոշելիս նվազեցվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներից:

Արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով հարկման բազայի նկատմամբ եկամուտների հարկման դրույքաչափն է՝ զրո տոկոս:

## 2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

### 2.4.1. Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Բաժնետոմսերը կտեղաբաշխվեն Բորսայից դուրս, ուղղակի վաճառքի միջոցով:

Բաժնետոմս ձեռք բերել ցանկացող անձը բաժնետոմս ձեռքբերման հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է կատարի բաժնետոմսի ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի

վճարում: Այն դեպքում, երբ վճարումը կատարվում է ձեռքբերման օրը 16:30-ից հետո, դրանք համարվում են մուտքագրված վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Վճարումը համարվում է պատշաճ կատարված այդ նպատակով բացված Թողարկողի կամ Տեղաբաշխողի բանկային հաշվիներին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնելիս, ներդրողները պետք է հստակ տեղեկացված լինեն, որ հայտ-հանձնարարականների չբավարարման կամ մասնակի բավարարման դեպքում բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ բանկային հաշվի վրա մնալը՝ մինչև բաժնետոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Այն դեպքերում, երբ բաժնետոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարները կատարվում են բանկային փոխանցման միջոցով, հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը իրենց հաշվին հոգում են ներդրողները:

Այն հայտ-հանձնարարականները, որոնց ներկայացումից հետո սահմանված ժամկետում ներդրողների կողմից համապատասխան վճարում չի իրականացվում, համարվում են անվավեր:

Հայտ-հանձնարարականում նշված քանակի բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ վճարվող դրամական միջոցների չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P \times Q,$$

որտեղ՝

- V-ն հայտում նշված քանակի բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ վճարվող դրամական միջոցների չափն է,
- P-ն մեկ բաժնետոմսի առաջարկի գինն է,
- Q-ն բաժնետոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

#### 2.4.1.1. Առաջարկի ընդհանուր ծավալը

Բաժնետոմսերի առաջարկի ընդհանուր ծավալը բաղկացած է թողարկվող 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 35 (երեսուն հինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով.

Մեկ բաժնետոմսի առաջարկի գինը սահմանվում է՝ 400 (չորսհարյուր) ՀՀ դրամ:

Բաժնետոմսերի առաջարկի ընդհանուր ծավալը հաշվարկվում է որպես առաջարկվող բաժնետոմսերի քանակի և մեկ բաժնետոմսի առաջարկի գնի արտադրյալ, որը կազմում է 1,540,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր քառասուն միլիոն ) ՀՀ դրամ:

Առաջարկն ամբողջությամբ իրականացվում է նոր թողարկված բաժնետոմսերի հաշվին:

#### 2.4.1.2. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Բաժնետոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածը կորոշվի և այն կմեկնարկվի Թողարկողի իրավասու մարմնի կողմից ԿԲ-ի՝ սույն ազդագրի գրանցումից առավելագույնը երկու ամսվա ընթացքում:

Ազդագիրը և տեղաբախշման ժամկետները կհրապարակվեն տեղաբաշխումից առնվազն 5 աշխատանքային օր առաջ՝ Թողարկողի կայքում (www.telcell.am) և տեղաբաշխողի կայքում (https://www.armbrok.am/):

Թողարկողի կողմից բաժնետոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

#### 2.4.1.3. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով ներդրողը ներկայացնում է բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական՝ Տեղաբաշխողի հաստատված տիպային օրինակով, որը հրապարակվում է Թողարկողի և Տեղաբաշխողի ինտերնետային կայքում, (այսուհետ՝ հայտ):

Ներդրողը կարող է ձեռքբերման հայտ ներկայացնել հետևյալ եղանակներով.

☐ **Ձեռքբերման հայտ-հանձնարարական ստեղծել "ԹԵԼ-ՍԵԼ" ԲԲԸ-ի TWallet հավելվածի միջոցով**

Ներդրողը կարող է ձեռքբերման հայտ ստեղծել "ԹԵԼ-ՍԵԼ" ԲԲԸ-ի TWallet հավելվածի միջոցով: Այդ պարագայում բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարումը ստորև նշված բանկային հաշվին կարող է կատարվել նաև «Telcell Wallet» հավելվածի միջոցով, որը չի կարող գերազանցել 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամը մեկ օրվա դրությամբ: «Telcell Wallet» հավելվածի միջոցով բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարման դեպքում, Թողարկողը հաստատում է, որ Տեղաբաշխողն առնչություն չի ունենալու տեղաբաշխման արդյունքում ներդրողների կողմից «Telcell Wallet» հավելվածի միջոցով դրամական միջոցների ստացման և փոխանցման հարցերում:

Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը «Telcell Wallet» հավելվածի միջոցով ձեռքբերման հայտ-հանձնարարականը ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է սույն առաջարկի նպատակով Թողարկողի անվամբ «**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163001479761 հաշվեհամարին** ապահովի բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը (վճարումը պետք է կատարվի ՀՀ դրամով, իսկ վճարման կատարման ընթացում առաջացող բոլոր միջնորդավճարներն ապահովվի ներդրողի կողմից)՝ այն անկանխիկ եղանակով փոխանցում կատարելու միջոցով**:** Նպատակը պետք է նշվի՝ «Բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով»: Այն դեպքում, երբ վճարումը կատարվում է ձեռքբերման օրը 16:30-ից հետո, դրանք համարվում են մուտքագրված վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Թողարկողի՝ TWallet բջջային հավելվածի և Տեղաբաշխողի միջոցով բաժնետոմսերը գնելու հայտերը ստանալուց հետո դրանք կարող են մերժվել Թողարկողի և/կամ Տեղաբաշխողի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման և տնտեսական պատժամիջոցների կիրառման քաղաքականություններով սահմանված դեպքերում: Այդ պարագայում ներդրողի գումարը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում է ներդրողի TWallet կամ փոխանցվում է այն հաշվեհամարին, որից ստացվել է գումարը:

☐ **Ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացում Տեղաբաշխողին**

Բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողները սահմանված կարգով պետք է պատշաճ կերպով ներկայացնի լրացրած ձեռքբերման հայտերը Տեղաբաշխողին: Դրանով նրանք կհավաստեն բաժնետոմսերի առաջարկի պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, որով էլ այդ պայմանները պարտադիր կդառնան ներդրողների համար: Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը ձեռքբերման հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային

օրվա ժամը 16:30-ը, պետք է սույն առաջարկի նպատակով ստորև ներկայացված Տեղաբաշխողի հաշվեհամարին (այսուհետև՝ Հաշիվ) կատարի հայտ-հանձնարարականում նշված քանակի բաժնետոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում՝ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն.

| **Բանկի անվանումը** | **ՀՀ դրամ** |
|---|---|
| ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ | 163005043316 |

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ–հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացրած, եթե այն ներկայացվել է առձեռն՝ Տեղաբաշխողի գրասենյակ այցելելով, վերջինիս համաձայնության դեպքում էլ. փոստով կամ **Սի Բի Էյ Նեթ համակարգով** :

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39,
- **Էլեկտրոնային փոստ՝** ib@armbrok.am,
- **Հեռ.՝ +37411 590000,**
- **Սի Բի Էյ Նեթ՝** Armbrok OJSC/CBANet:

Այն գումարները, որոնք Տեղաբաշխման համար նախատեսված հաշվեհամարներին ստացվել են բաժնետոմսերի տեղաբաշխման հաստատված վերջնաժամկետից հետո, ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Տեղաբաշխողի կողմից ստացման ժամկետից:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 1-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 2-ում:

Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Հայտ-հանձնարարականները պետք է պատշաճ լրացված լինեն՝ հայտի վավերականությունն ապահովելու համար:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտը պետք է ներկայացվի տեղբաշխման սահմանված ժամանակահատվածի ընթացքում, որի մասին ներդրողները կտեղեկանան Թողարկողի կողմից հրապարակված վերջնական պայմաններում:

Հայտը համարվում է հաստատված, իսկ բաժնետոմսերի ձեռքբերման գործարքը կնքված, եթե միաժամանակ առկա են ստորև նշված բոլոր հանգամանքները.

- հայտը ներկայցվել է Ազդագրում նշված կարգով,
- բաժնետոմսերի ձեռքբերմանհամար անհրաժեշտ գումարն ապահովվել է Ազդագրում նշված կարգով,
- բաժնետոմսերի ձեռքբերման գործարքի վերաբերյալ առկա չէ Թողարկողի կամ Տեղաբաշխողի բացասական կարծիքը, ինչպես նաև առկա չէ Ազդագրի– ներքոնշյալ ենթակետով սահմանված հանգամանքներից որևիցե մեկը:

#### 2.4.1.4. Այն հանգամանքները, որոնց դեպքում առաջարկը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել

Առաջարկի հետաձգման կամ չեղյալ հայտարարման դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Հոդված 20-ով և Հոդված 21-ով:

1. Եթե տեղաբաշխողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել ձեռքբերման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով:
   Հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը սահմանվում է 5 աշխատանքային օր՝ ազդագրի լրացման հրապարակումից հետո: Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:
2. Կենտրոնական բանկն իր որոշմամբ կասեցնում է տեղաբաշխման ընթացքը, եթե՝
   - տեղաբաշխման ընթացքում խախտվել են օրենքի և (կամ) հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներ,
   - տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները,
   - ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:
3. Տեղաբաշխումը կասեցնելու որոշումը պետք է պարունակի հայտնաբերված խախտումները և բացթողումները վերացնելու հանձնարարական և դրա կատարման ժամկետները, որի կատարումից հետո Կենտրոնական բանկի թույլտվությամբ տեղաբաշխումը կարող է շարունակվել:
4. Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Առաջարկի հետաձգման կամ չեղյալ հայտարարման դեպքում գումարների հետ վերադարձն իրականացվում է ձեռքբերման հայտ ներկայացրած անձի դիմումի հիման վրա, դիմումում նշված եղանակով՝ փոխանցելով այն հաշվեհամարին, որից ստացվել է վճարումը:

Ազդագիրը ԿԲ-ի կողմից գրանցվելուց և բաժնետոմսերը տեղաբաշխելուց հետո 5 աշխատանքայնի օրվա ընթացքում Թողարկողը դիմելու է Բորսա կարգավորվող շուկայում բաժնետոմսերը ցուցակելու նպատակով: Հարկ է ընդգծել, որ Բորսան կարող է մերժել սույն կետում նշված ցուցակման հայցը: Բորսա դիմելուց հետո վեց ամիս ժամանակահատվածում Բաժնետոմսերի ցուցակման թույլտվություն չստանալու դեպքում, հաջորդող 3 ամսվա ընթացքում Ընկերությունը որոշում կկայացնի բաժնետոմսերը ձեռք բերելու վերաբերյալ համաձայն Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 54-րդ հոդվածի դրույթների:

#### 2.4.1.5. Տեղաբաշխման նվազեցման հնարավորությունը, ինչպես նաև այդ պարագայում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եղանակը և ձևը

Տեղաբաշխումը համարվում է կայացած տեղաբաշխման ցանկացած ծավալների ապահովման դեպքում:

Հայտերը հաստատվում են՝ ըստ Ազդագրի պահանջներն ամբողջությամբ բավարարելու ժամկետի հերթականության:

Թողարկողի բաժնետոմսերում ներդրողն իր կողմից ներկայացված Հայտի հաստատման մասին տեղեկացվում է Հայտի հաստատման օրը:

Հայտ ներկայացրած ներդրողների տեղաբաշխման նվազեցումն իրականացվում է հետևյալ կերպ.

- եթե ներկայացված հայտերում նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը, ապա առաջնայնությունը տրվում է ավելի վաղ ներկայացված հայտերին:
- տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակին համապատասխան քանակությունը լրացնող վերջին հայտը կարող է բավարարվել մասնակիորեն:

Հայտի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտերը չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ հաշվի վրա մնալը, մինչև դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

#### 2.4.1.6. Նվազագույն և առավելագույն գումարները

Տեղաբաշխման ընթացքում մեկ բաժնետիրոջ նկատմամբ կիրառվող ձեռք բերվող բաժնետոմսերի նվազագույն քանակը կազմում է առաջին գնման ժամանակ 10 (տասը) հատ, որը ենթադրում է նվազագույն 4 000 (չորս հազար) ՀՀ դրամ գումար, իսկ առավելագույն քանակը՝ 500 000 (հինգ հարյուր հազար) հատ, որը ենթադրում է առավելագույն 200 000 000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումար :

Վերոնշյալ սահմանափակումենրի խախտումներով հայտերը ենթակա են մերժման:

#### 2.4.1.7. Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայտը կարելի է հետ կանչել՝ նախատեսելով, որ ներդրողները կարող են հետ ստանալ ձեռբերման վճարները

Ներդրողների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք ամբողջությամբ բավարարում են Ազդագրով նախատեսված պահանջները, հետ կանչման ենթակա չեն: Այս դեպքում ձեռքբերման վճարները ևս հետ ստացման ենթակա չեն:

#### 2.4.1.8. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը վճարելու մեթոդները սահմանված են Ազդագրի 2.4.1.3 ենթակետում:

Բաժնետոմսերի սեփականության իրավունքը գրանցվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից, իսկ սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են ներդրողների արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի կողմից հաստատված կարգով և ժամկետներում:

Գնորդի՝ բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ցանկացած այլ պահառուի մոտ գնորդի անունով այդ բաժնետոմսի գրանցման պահից: Տեղաբաշխման արդյունքում Թողարկողի կանոնադրական կապիտալի փոփոխություն է կատարվելու, որը պետք է գրանցվի համապատասխան պետական մարմնի կողմից: Բաժնետոմսերից բխող իրավունքները ամբողջությամբ կարող է իրացվել տեղաբաշխված բաժնետոմսերով պայմանավորված՝ կանոնադրության (կանոնադրական կապիտալի փոփոխության) գրանցումից հետո:

#### 2.4.1.9. Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը

Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Թողարկողի ինտերնետային կայքում տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:

#### 2.4.1.10. Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը

Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում գնման նախապատվության իրավունք չի նախատեսվում, իսկ հայտերը հաստատվում են՝ ըստ Ազդագրի պահանջներն ամբողջությամբ բավարարելու ժամկետի հերթականության:

### 2.4.2. Տեղաբաշխման պլանը

#### 2.4.2.1. Ներդրողների խմբերը, որոնց ուղղված է առաջարկը

Առաջարկը չունի սահմանափակում ներդրողների որևէ խմբի համար:

Ներդրողները կստանան հնարավորություն հետագայում արտոնյալ պայմաններով օգտվել ընկերության կողմից մատուցվող ծառայություններից և առաջարկներից, նրանց համար պարբերաբար կներկայացվեն հատուկ առաջարկներ և մարքեթինգային ակցիաներ, որոնց մասին ընկերությունը պարբերաբար կտեղեկացնի հրապարակային կամ ուղղակի ծանուցումների միջոցով:

#### 2.4.2.2. Թողարկողի խոշոր բաժնետերերի կամ կառավարման անդամների մասնակցությունը առաջարկին

Խոշոր բաժնետիրոջ, կառավարման մարմնի անդամների կամ որևէ այլ անձի կողմից նախատեսվող 5 և ավելի տոկոս ձեռքբերման վերաբերյալ Թողարկողը տեղեկություններ չունի:

#### 2.4.2.3. Ներդրողների տեղեկացումը հայտերի բավարարման մասին

Ներդրողները Տեղաբաշխողից և/կամ Թողարկողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական(ները):

#### 2.4.2.4. Մանր ներդրողների, ինստիտուցիոնալ ներդրողների կամ Թողարկողի աշխատակիցների համար տրանշ

Մանր ներդրողների, ինստիտուցիոնալ ներդրողների կամ Ընկերության աշխատակիցների համար առանձին տրանշ նախատեսված է:

#### 2.4.2.5. Ձեռքբերման հայտերի բավարարումը կամ մերժումը

Հայտերը հաստատվում են՝ ըստ Ազդագրի պահանջներն ամբողջությամբ բավարարելու ժամկետի հերթականության: Եթե ներկայացված բոլոր հայտերում նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը, ապա առաջնայնությունը տրվում է ավելի վաղ ներկայացված հայտերին:

Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակին համապատասխան քանակությունը լրացնող վերջին հայտը կարող է բավարարվել մասնակիորեն: Հայտը կարող է մերժվել եթե բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով ներդրողի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են (կամ կեղծ) կամ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակն սպառվել է:

Այս դեպքում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարների հետ վերադարձման նպատակով Տեղաբաշխողի կամ Թողարկողի (կախված որ հաշվին է փոխանցվել հայտի գումարը) հաշվից համապատասխան գումարը վճարվում է ներդրողին:

### 2.4.3. Առաջարկի գինը

#### 2.4.3.1. Բաժնետոմսերի առաջարկի գինը

Տեղաբաշխման ընթացքում Ընկերության խորհրդի կողմից թողարկվող բաժնետոմսերի տեղաբաշխման գինը սահմանված է 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար:

Բանկային փոխանցման միջոցով բաժնետոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Տեղբաշխման ժամանակ ներդրողներից հավելյալ ծախսեր չեն գանձվելու:

#### 2.4.3.2. Առաջարկի գնի բացահայտման գործընթացը

Առաջարկի գինը որոշվել է Թողարկողի խորհրդի որոշմամբ՝ հաշվի առնելով ազատ դրամական հոսքերի կանխատեսման վերլուծությունը և Ընկերության աճի տեսլականը և հեռանկարները:

## 2.4.4. Տեղաբաշխումը

### 2.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում

Բաժնետոմսերի երաշխավորված տեղաբաշխում չի իրականացվելու:

### 2.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Արժեթղթերի տեղաբաշխման» պայմանագիր «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի հետ (ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ 39):

Համաձայն կնքված պայմանագրի՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ, սակայն չերաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկված բաժնետոմսերը:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ՝

- չերաշխավորված տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ավարտին բաժնետոմսերի՝ հայտարարված տեղաբաշխման ծավալը կարող է ամբողջությամբ չտեղաբաշխվել, այսինքն կարող է տեղի ունենալ թերտեղաբաշխում,
- անկախ տեղաբաշխման ավարտին բաժնետոմսերի փաստացի տեղաբաշխված ծավալից՝ տեղաբաշխումը համարվում է կայացած:

### 2.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Համաձայն «Արմբրոկ» ԲԲԸ-ի հետ կնքած «Արժեթղթերի տեղաբաշխման» պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել ծառայության վճար, որը կախված է տեղաբաշխված բաժնետոմսերի փաստացի ծավալից և կկազմի փաստացի տեղաբաշխված ծավալի 1.25%:

### 2.4.4.4. Երաշխավորված տեղաբաշխման (անդերռայթինգի) պայմանագրի կնքման ժամկետները

Թողարկողը չի նախատեսում իրականացնել երաշխավորված տեղաբաշխում: Տեղաբաշխման հետ կապված հավելյալ պայմանագրերի կամ պայմանագրի փոփոխությունների կամ լրացումների մասին տեղեկատվությունը կներկայացվի Ազդագրի համապատասխան բաժնում:

### 2.4.4.5. Բաժնետոմսերի դիմաց վճարումը և հաշվի բացումը

Տեղաբաշխում իրականացնելու դեպքում բաժնետոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել Թողարկողի և Տեղաբաշխողի կողմից տեղբաշխման համար նախատեսված հատուկ հաշվեհամարներին: Վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Թողարկողի բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն և/կամ գրանցումն իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար և պահառու՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Բաժնետոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ բաժնետոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Բաժնետոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ-ն:

Մինչև բաժնետոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա 5-րդ հարկ, հեռ.՝ +(374) 60 61 55 55, +(374) 10 54 33 21:

## 2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

### 2.5.1. Առևտրին թույլտվությունը

Սույն Ազդագիրը ԿԲ-ի կողմից գրանցելուց և բաժնետոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է Բորսային՝ տեղաբաշխված բաժնետոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար: Ընդ որում, բաժնետոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու դիմումը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Բորսա դիմելուց հետո վեց ամիս ժամանակահատվածում Բաժնետոմսերի ցուցակման թույլտվություն չստանալու դեպքում, հաջորդող 3 ամսվա ընթացքում Ընկերությունը որոշում կկայացնի բաժնետոմսերը ձեռք բերելու վերաբերյալ համաձայն Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 54-րդ հոդվածի դրույթների:

Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

### 2.5.2. Այն շուկաների անվանումները, որտեղ առաջարկվող արժեթղթերի նույն դասը արդեն իսկ թուլատրված են առևտրին

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ազդագրով գրանցվող բաժնետոմսերը որևէ շուկայում ցուցակված և առևտրի թույլատրված չեն:

### 2.5.3. Բաժնետոմսերի շուկա ստեղծողները

Ընկերությունը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Ազդագրով առաջարկվող բաժնետոմսերը Բորսայի կողմից ցուցակվելու դեպքում Թողարկողը նախատեսում է առնվազն մեկ մասնագիտացված անձի հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր: Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր կնքել և այդ մասին իր կայքի միջոցով տեղեկացնել ներդրողներին:

### 2.5.4. Գնի կայունացմանն ուղղված միջոցառումներ

Գնի կայունացմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

## 2.6. Վաճառող բաժնետերերը

Սույն ազդագրի միջոցով ներկայիս բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի վաճառքի առաջարկ չի նախատեսվում:

## 2.7. Թողարկման և առաջարկի ծախսերը

Հնարավոր հավաքագրվող համախառն գումարները Ընկերության գնահատմամբ կկազմեն 1,540,000,000 ՀՀ դրամ: Այս նպատակով Ընկերության բյուջետավորված ծախսերը կազմում են 120,000,000 ՀՀ դրամ, որը ներառում է նախապատրաստական ծախսերը, մարքեթինգային ծախսերը և Տեղաբաշխողի ծառայության վճարները:

## 2.8. Լրացուցիչ տեղեկատվություն

### 2.8.1. Խորհրդատուները

Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը օգտվել է Տեղաբաշխողի կողմից տեղաբաշխման ծառայություններից և «Էմ Բի Քնսալթինգ» ՓԲԸ–ի խորհրդատուների ծառայություններից:

### 2.8.2. Աուդիտորական եզրակացություն

Բացառությամբ Թողարկողի 2020-2023թթ. ֆինանսական տարիների պատմական ֆինանսական հաշվետվությունների, որոնք անկախ աուդիտորական ընկերությունների կողմից ենթարկվել են աուդիտի, սույն Ազդագրում ներկայացված տեղեկատվությունը անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել: Ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 5-ում:

### 2.8.3. Երրորդ անձանց կողմից ներկայացված տեղեկատվություն

Սույն բաժնում երրորդ անձանցից ստացված տեղեկատվություն առկա չէ:

# 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 3.1. Անկախ աուդիտորները և խորհրդատուները

### 3.1.1. Անկախ աուդիտորները

Թողարկողի 2020, 2021 և 2022թթ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է **«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող., 26/1 շենք, 8-րդ հարկ,

հեռ.՝ +374 10 595999, կայք՝ http://www.kpmg.am:Կազմակերպության տնօրենն է Իրինա Գևորգյան:

Թողարկողի 2023թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնում է **«Գրանթ Թորոնթոն» փակ բաժնետիրական ընկերությունը**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Գ.Լուսավորիչ փ 9, Երևան Պլազա ԲԿ, կայք՝ https://www.grantthornton.am/: Կազմակերպության տնօրենն է Արմեն Հովհաննիսյանը:

2023թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող ընկերության ընտրությունը պայմանավորված է հրապարակային մրցույթի արդյունքներով:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են Հավելված 5 - ում:

### 3.1.2. Խորհրդատուները

Թողարկման գլխավոր տեղաբաշխողն է՝ **«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 39, հեռ.՝ +374 11 590000, կայք՝ www.armbrok.am:Կազմակերպության տնօրենն է Արամ Կայֆաջյան:

Ազդագրի կազմման գործընթացում, որպես խորհրդատու Ընկերությունն օգտվել է **«Էմ Բի Քնսալթինգ» ՓԲԸ** - ի ծառայություններից:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 39, Հեռ՝ +374 11 59 00 00, կայք՝ www.mbconsulting.am , էլ. հասցե՝ info@mbconsulting.am : Կազմակերպության տնօրենն է Դավիթ Մանուկյանը:

## 3.2. Ռիսկային գործոններ

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն Թողարկողի հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված է հնարավոր ռիսկերի ոչ ամբողջական ցանկը: Հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու սպասումներով:

Ստորև ներկայացված է Թողարկողին վերաբերող ռիսկերի մանրամասն նկարագրությունը, սակայն ներդրողը պետք է հաշվի առնի, որ Թողարկողի գործունեության ընթացքում կարող են առաջանալ նաև այլ էական ռիսկեր.

### 3.2.1. Գործառնական ռիսկը

Սա Թողարկողի ներքին համակարգերի խափանման, անձնակազմի կողմից կատարվող գործառնություններում սխալների կամ չարաշահումների, ինչպես նաև անարդյունավետ գործընթացների հետևանքով Թողարկողի կողմից վնասներ կրելու հավանականությունն է: Այսպիսի իրավիճակները կարող են ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի և հեղինակության վրա:
Թողարկողի գործունեության ոլորտին հատուկ է գործառնական ռիսկի բարձր մակարդակը, որը առկա է նաև Թողարկողի մոտ:

Թողարկողը՝ հիմնվելով լավագույն միջազգային փորձի վրա, նշված ռիսկերի պատշաճ կառավարման համար մշտապես կատարելագործում է իր ներքին հսկողական համակարգը զսպող և հակակշիռ հանդիսացող մեխանիզմները: Թողարկողին հատուկ՝ աշխատակիցների պատասխանատվության շրջանակով և հասանելիություններով պայմանավորված շահերի բախման ռիկի զսպման նպատակով Թողարկողը փոփոխել է կազմակերպչական կառուցվածքը և ներդրել ներքին ընթացակարգեր՝ հստակ տարանջատելով աշխատակիցների իրավասությունները:

Այս ռիսկերի կառավարման հարցում Թողարկողը կարևորում է աշխատակիցների մասնագիտական որակավորումը: Թողարկողը մշակել և ներդրել է որակավորման բարձրացման ամենամյա ծրագիր, ինչպես նաև ձեռնարկում է բավարար և խելամիտ միջոցներ բարձր որակավորմամբ մասնագետների ներգրավման համար:

### 3.2.2. Ֆիզիկական անվտանգության ռիսկ

Թողարկողի անձնակազմի առողջության և կյանքի, նյութական արժեքների, կրիտիկական ենթակառուցվածքի վնասի կամ կողոպուտի ռիսկն է:
Այս դասի ռիսկերի թվին է պատկանում ինչպես դրամական միջոցների, այնպես էլ այլ ակտիվների գողությունը: Թողարկողի կողմից մշտապես ջանքեր են գործադրվում գողության կանխարգելման միջոցների բարելավման ուղղությամբ՝ ՀՀ Օրենսդրությանը, այդ թվում՝ ՀՀ ԿԲ պահանջներին համահունչ: Տվյալ ռիսկի կառավարման նպատակով, մասնավորապես, իրականացվում է ոստիկանության և մասնավոր մասնագիտացված լիցենզավորված ընկերությունների կողմից պահպանության կազմակերպում, ինկասացիոն զրահապատ ավտոմեքենաների օգտագործում և այլ միջոցառումներ:

### 3.2.3. Տեղեկատվական անվտանգության ռիսկ

Թողարկողի կողմից տնօրինվող տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության խախտման ռիսկն է:

Տեղեկատվությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները Թողարկողի գործունեության հիմքն են: Լինելով մեծածավալ անձնական տվյալների, առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության տիրապետող և մշակող՝ Թողարկողը միջազգային լավագույն փորձն է կիրառում պաշտպանելու տեղեկատվությունը չարտոնված մուտքերից և փոփոխումից, արտահոսքից և կորստից: Տեղեկատվության գաղտնիության ապահովման համար, ըստ անհրաժեշտության, կիրառվում են ռիսկերի նվազեցման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են տվյալների ծածկագրումը, մուտքի կառավարումը, տեղեկատվության պահուստավորումը և արխիվացումը: Տեղեկատվությանը մուտք ստանալ հնարավոր է միայն սահմանված ընթացակարգ անցնելու դեպքում: Բոլոր տվյալները սահմանված պարբերականությամբ պահուստավորվում են, մուտքը տվյալին խստորեն մշտադիտարկվում է առանձնացված անձնակազմի կողմից: Ցանկացած միջադեպ հետաքննվում է՝ պատճառները բացահայտելու և դրա կրկնությունը բացառելու նպատակով:

Տեղեկատվության և տվյալների ամբողջականությունն ապահովվում է հսկողության մեխանիզմների կիրառմամբ, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով, մուտքի կառավարմամբ, երկու անձի սկզբունքի պահպանմամբ, կրիտիկական տվյալների և ֆայլերի նկատմամբ հատուկ պաշտպանության ապահովմամբ: Տեղեկատվության հասանելիության ապահովումը օգտագործողներին, ինչպես օրինակ՝ հաճախորդներին կամ անձնակազմին, ապահովված է տեղեկատվական տեխնոլոգիաների բաղադրիչների կրկնօրինակմամբ, որը տեխնոգեն խափանումների պարագայում երաշխավորում է սահմանված ընդունելի ժամկետում տվյալների վերականգնումը և համակարգերի վերագործարկումը:

Միևնույն ժամանակ Թողարկողը գիտակցում է, որ այս ոլորտում անընդհատ առաջանում են նոր ռիսկեր, որոնց մեղմելու համար պետք է ներդրվեն նոր լուծումներ: Պայմանավորված ներդրված տեղեկատվական համակարգերի մեծաքանակությամբ և տեղեկատվական անվտանգության ոլորտի արագ զարգացմամբ, Թողարկողը իր մոտ որպես կարևոր ռիսկ առանձնացրել է հին օպերացիոն համակարգերի օգտագործումից ծագող ռիսկերը, որոնց արդիականացման գործընթացը առաջնահերթություն է:

Տեղեկատվական անվտանգության ռիսկերի զսպման նպատակով, Թողարկողը 31.05.2024թ. թվականի ստացել է PCI DSS 4.0 հավաստագիր: Ինչպես նաև Թողարկողը ներկա պահին գտնվում է ISO/IEC27001:2022 հավաստագրման գործընթացում, որն իրականացվում է ավստրիական TÜV AUSTRIA Standards and Compliance LLC կողմից: Միաժամանակ տեղեկատվական անվտանգության ռիսկերի զսպման նպատակով, Թողարկողը տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի (ՏԱԿՀ) պարտադիր պահանջներին համապատասխան արդիականացրել է իր ներքին գործընթացները:

### 3.2.4. Անընդհատության ռիսկ

Սա Թողարկողի կրիտիկական կարևորագույն գործընթացների խափանման, ծառայությունների մերժման կամ վճարումների կատարման կանգառի հետևանքով վնասներ կրելու հավանականությունն է:

Նշված ռիսկը կառավարելու նպատակով Թողարկողը մանրակրկիտ մշտադիտարկում է Ընկերության գործունեության անընդհատության վրա բացասական ազդող հնարավոր գործոնները և խնդիրների առաջացման դեպքում հնարավորինս արագ և արդյունավետ արձագանքում է դրանց՝ տալով համապատասխան լուծումներ: Ավելին, ապահովված է սարքավորումների, համակարգերի և կոմունիկացիաների կրկնօրինակումը՝ խաթարված գործընթացները հնարավորինս արագ վերականգնելու նպատակով: Մշակված են համապատասխան ներքին նորմատիվ ակտեր, ինչպիսիք են՝ գործունեության անընդհատության քաղաքականությունը:

### 3.2.5. Աճող մրցակցության ռիսկ

Սա շուկայում համանման ծառայությունների մատուցման ոլորտում մրցակցության ուժեղացման ռիսկն է, որի արդյունքում կարող են նվազել Թողարկողի կողմից մատուցվող ծառայությունների ծավալը, գինը՝ վերջիվերջո հանգեցնելով շահույթի նվազման:

Ներկայումս ՀՀ-ում վճարահաշվարկային ծառայությունների ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը՝ հաշվի առնելով, որ նմանատիպ ծառայություններ մատուցում են ինչպես բանկերը, այնպես էլ գործող և նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպությունները: Մրցակցության զգալի աճը և/կամ մրցակիցների ագրեսիվ քաղաքականությունը կարող են հանգեցնել հաճախորդների մի մասի արտահոսքի, ուստի և եկամուտների նվազման: Այս ռիսկի զսպման համար Թողարկողն անընդհատ ակտիվորեն զարգացնում է նոր ուղղություններ, մշակում է նոր ծառայություններ և շարունակաբար կատարելագործում է գործող ծառայությունները՝ շուկայում իր դիրքը ոչ միայն չկորցնելու, այլ նաև իր մասնաբաժինը մեծացնելու նպատակով:

Մրցակցության ակտիվացումը կարող է հանգեցնել նաև գործընկերների կողմից սակագների վերանայման պահանջի, ինչն ուղղակի ազդեցություն կունենա Թողարկողի շահույթի վրա:

### 3.2.6. Իրացվելիության ռիսկ

Այս ռիսկի էությունն այն է, որ Թողարկողը որոշակի պահի դրությամբ կարող է չունենալ բավարար իրացվելի ակտիվներ իր պարտավորություններն ամբողջությամբ և ժամանակին կատարելու համար: Իրացվելիության ռիսկն առաջանում է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Թողարկողն իրացվելիության կառավարման նպատակով կիրառում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության համապատասխանեցման և/կամ վերահսկվող անհամապատասխանության մեթոդները: Բացի այդ, որպես վճարահաշվարկային կազմակերպություն, Թողարկողի համար օրենսդրությամբ սահմանված է իրացվելիության տնտեսական նորմատիվ: Այն իրենից ներկայացնում է բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցություն: Նշված սահմանային հարաբերակցության ապահովումը մշտապես գտնվում է Թողարկողի ուշադրության կենտրոնում:

Թողարկողը նաև ձգտում է կանխիկ դրամական միջոցների շրջանառելիության արագացման միջոցով նվազեցնել իրացվելիության ռիսկը, մասնավորապես տերմինալների ինկասացիոն ցիկլի հնարավոր կրճատման միջոցով:
Ինչպես նաև Թողարկողը կիրառել է լրացուցիչ միջոց՝ ապահովագրելով որպես միջնորդ իր պարտավորությունը շահառուների նկատմամբ:

### 3.2.7. Օրենսդրական և նորմատիվ դաշտի փոփոխության ռիսկ

Ռիսկի առաջացման պատճառ են հանդիսանում նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները, մասնավերապես՝ ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխությունները, ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխությունները և ՀՀ ԿԲ որոշումները, ինչպես նաև Միջազգային օրենսդրական ոլորտային փոփոխությունները, որոնք կարող են նաև հանգեցնել գործընկերային հարաբերությունների վերանայումների ու փոփոխությունների: Վերոգրյալ փոփոխությունները կարող են անդրադառնալ Թողարկողի բնականոն գործունեության և շուկայում տիրող իրավիճակի վրա:
Թողարկողի կողմից կիրառվում են ռիսկի նվազեցման արդյունավետ մեխանիզմներ, մասնավորապես Ընկերության ղեկավարությունն արագ արձագանքում է օրենսդրական էական փոփոխություններին և հնարավորինս զսպում է դրանց բացասական հետևանքները: Այնուամենայնիվ, կարևոր ենք համարում ներդրողների ուշադրությունը հրավիրել հնարավոր ռիսկին, քանի որ փոփոխությունները կարող են էապես ազդել Ընկերության գործունեության վրա և հանգեցնել Ընկերության ֆինանսական ցուցանիշների անկման:

### 3.2.8. Երկրի ռիսկ

ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը, մասնավորապես տնտեսական աճի նվազումը, քաղաքական իրադարձությունները կարող են հանգեցնել բնակչության եկամուտների նվազման, որն էլ իր հերթին կարող է բացասական ազդել Թողարկողի շրջանառության ծավալների վրա, հետևաբար նաև շահույթի վրա: Այս ամենը հաշվի առնելով՝ Թողարկողը մշտապես թարմացնում և ադապտացնում է իր ծառայությունների ցանկը՝ համապատասխանեցնելով գործող տնտեսական իրավիճակին, ինչով էլ նվազեցնում է նշված ռիսկի ազդեցությունը:

### 3.2.9. Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ

Ռիսկն առաջանում է ՀՀ օրենսդրական պահանջների, միջազգային նորմերի և ստանդարտների, Ընկերության ներքին իրավական ակտերի, պայմանագրերի, համաձայնագրերի, ինչպես նաև էթիկայի կանոնների չպահպանման հետևանքով: Թողարկողի հանդեպ կարող են կիրառվել իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցներ, որոնք կարող են հանգեցնել էական ֆինանսական կորուստների: Ռիսկի զսպման համար Թողարկողը աչալրջորեն հետևում է ՀՀ օրենսդրական և ԿԲ կողմից արդեն իսկ ներդրված նորմատիվների և սահմանված պահանջների կատարմանը, ինչպես նաև արագ և բարձր պրոֆեսիոնալիզմով է արձագանքում բոլոր փոփոխություններին:

### 3.2.10. Համբավի ռիսկ

Թողարկողի վերաբերյալ որոշակի հանգամանքներում հանրության լայն շրջաններում կարող է ձևավորվել բացասական կարծիք: Դա կարող է հանգեցնել հաճախորդների թվաքանակի նվազմանը, որն էլ իր հերթին կարող է բերել կազմակերպության եկամուտների և շահույթի նվազմանը: Թողարկողը, գիտակցելով բարի համբավի կարևորությունը, անմիջապես արձագանքում է իր համբավին սպառնացող ցանկացած հանգամանքի ի հայտ գալու պարագայում և հետևողականորեն աշխատում է հանրության հետ՝ իր բարի համբավը պահպանելու ուղղությամբ:

### 3.2.11. Անձնակազմի հոսունության ռիսկ

Սա իրենից ներկայացնում է Ընկերության կառավարման մեջ ակտիվորեն ներգրավված աշխատակիցների և/կամ մեծ թվով բարձր որակավորում ունեցող մասնագետների միաժամանակ աշխատանքից ազատվելու դեպքում Թողարկողի վնասներ կրելու ռիսկը:

Բարձրորակ կադրերի առկայությունը չափազանց կարևոր է մրցունակ լինելու և կազմակերպության առջև դրված խնդիրներին հասնելու համար: Ներկայումս շուկայում ձևավորվել է այնպիսի իրավիճակ, որ բարձր որակավորում ունեցող աշխատակիցների նկատմամբ պահանջարկը մեծացել է, և մրցակիցներն ավելի լավ պայմաններ առաջարկելու միջոցով ջանքեր են գործադրում լավագույն կադրերին ներգրավելու ուղղությամբ: Տվյալ ռիսկը հնարավորինս զսպելու համար Թողարկողը կիրառում է ոչ միայն ֆինանսական խրախուսման մեթոդներ, այլ նաև ջանքեր է գործադրում աշխատակիցների սոցիալական ապահովագրության բարելավման և վերապատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ:

### 3.2.12. Խարդախության ռիսկ

Ընկերության հանդեպ կամ նրա հաճախորդների հանդեպ կարող են իրականացվել խարդախություններ: Դա կարող է հանգեցնել ինչպես ֆինանսական կորուստների, այնպես էլ Թողարկողի հեղինակության կորստի:

Այս ռիսկը զսպելու նպատակով Ընկերությունը մշտապես իրականացնում է խարդախության հնարավոր սխեմաների բացահայտում և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակում: Բացի այդ, Թողարկողը պարբերաբար տարբեր միջոցներով իրականացնում է տեղեկատվության տրամադրում հաճախորդներին՝ հավանական խարդախությունների և դրանցից խուսափելու հնարավորությունների մասին:

## 3.3. Տեղեկություն թողարկողի մասին

### 3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

#### 3.3.1.1. Թողարկողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը, գրանցված ապրանքանիշերը.

| Լեզու | Լրիվ ֆիրմային անվանումը | Կրճատ անվանումը |
|---|---|---|
| հայերեն՝ | «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն | «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ |
| ռուսերեն՝ | «ТЕЛ-СЕЛЛ» Открытое Акционерное Общество | «ТЕЛ-СЕЛЛ» ОАО |
| անգլերեն՝ | «TEL-CELL» Open Joint-Stock Company | «TEL-CELL» OJSC |

Թողարկողի գրանցված ապրանքանիշերն են՝

| Ապրանքանիշի անվանումը | Գրանցման համարը | Գրանցման ամսաթիվը | Գործողության ժամկետը |
|---|---|---|---|
| Telcell | 18842 | 03.09.2012 | 14.04.2032 |
| | 19252 | 08.01.2013 | 14.04.2032 |
| Telcell WALLET | 31288 | 12.08.2020 | 13.12.2029 |
| SCAN AND PAY Powered by Telcell | 32525 | 14.04.2021 | 10.08.2030 |
| Telcell BUSINESS | 32784 | 11.06.2021 | 07.12.2030 |
| BON | 32846 | 29.06.2021 | 07.12.2030 |
| TELCELL | 35302 | 01.08.2022 | 13.04.2032 |
| | 35303 | 01.08.2022 | 13.04.2032 |
| TELCELL WALLET | 35652 | 15.09.2022 | 16.05.2032 |

### 3.3.1.2. Թողարկողի պետական գրանցումը

| | |
|---|---|
| Թողարկողի հիմնադրման երկիր | Հայաստանի Հանրապետություն |
| Թողարկողի պետական գրանցման վայր | ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փողոց 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա 1-ին և 3-րդ հարկեր |
| Թողարկողի պետական գրանցման համար | 264.130.1368627 |
| «Թել-Սել» ՓԲԸ -ի պետական գրանցման ամսաթիվ | 29.05.2007թ. |
| «Թել-Սել» ԲԲԸ -ի պետական գրանցման ամսաթիվ («Թել-Սել» ՓԲԸ -ի իրավահաջորդ) | 06.02.2024թ. |

### 3.3.1.3. Ստեղծման տվյալներ

Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2007թ. մայիսի 29-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Ընկերությունը ծավալում է գործունեություն մինչ օրս:

### 3.3.1.4. Գտնվելու վայրը և կապի միջոցները

| | |
|---|---|
| Թողարկողի գտնվելու վայր | ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փողոց 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա 3-րդ հարկ |
| Գործունեության վայր | Հայաստանի Հանրապետություն |
| Կապի միջոցներ | Հեռ.՝ +374 60 270005<br>Էլ. փոստ info@telcell.am |

### 3.3.1.5. Թողարկողի զարգացման ընթացքում նշանակալի դեպքերը

“ԹԵԼ-ՍԵԼ” բաց բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է “ԹԵԼ-ՍԵԼ” փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է “ԹԵԼ-ՍԵԼ” փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2007թ. մայիսի 29-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2007թ. հուլիսի 24-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ «Թել-Սել» ՓԲԸ-ին (սույն բաժնում Ընկերություն տերմինի տակ նաև կհասկացվի “ԹԵԼ-ՍԵԼ” բաց բաժնետիրական ընկերությունը) տրամադրվեց դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնելու լիցենզիա: Նույն տարվա ընթացում Ընկերությունը կնքեց առաջին առևտրային պայմանագիրը, բջջային օպերատորների բաժանորդների միջոցով իրականացվեցին տերմինալով առաջին գործարքները, ինչպես նաև տերմինալների միջոցով հնարավոր դարձավ իրականացնել

կոմունալ, և այլ տեսակի վճարներ: Տարեվերջին հնարավոր դարձավ Ընկերության վճարումների ընդունման համակարգով համալրել այլ էլեկտրոնային դրամապանակներ:

2008թ. Ընկերությունն իր հաճախորդներին ներկայացավ նոր ֆունկցիոնալ հնարավորություններով՝ ծառայությունների առցանց վճարում, վարկերի մարում գործընկեր վարկային կազմակերպությունների հաճախորդների համար, Ընկերության պրոցեսինգային կենտրոնին գործընկեր բանկերի հաշվիչ դրամարկղային հանգույցների ինտեգրացիաներ, տերմինալների ինտերֆեյսի ամբողջովին թարմացում, օպերատորների խմբավորում: Նույն տարվա ընթացքում Ընկերության վճարումների ընդունման համակարգին միացավ առաջին առևտրային գործընկեր կազմակերպությունը, որի շնորհիվ բազմահազար հաճախորդներ կարողացան պատվերները վճարել Ընկերության միջոցով:

Հաջորդ տարիների ընթացքում Ընկերությունը վստահ քայլերով շարունակեց զարգացման ճանապարհը՝ ամրապնդելով դիրքերը որպես վճարահաշվարկային ծառայությունների շուկայում առաջատար ընկերություն: Գործարկվեց էքսպրես-վճարումների շարքից առաջին ծառայությունը, մեկնարկեց նաև Ճանապարհային ոստիկանության սահմանած տուգանքների վճարումների ընդունումը: Հետագայում գործարկվեց վճարումների ընդունման ստացիոնար կետերի կազմակերպման նախագիծը:

2010թ. Ընկերությունը սկսեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի օգտին վճարային տերմինալների միջոցով հանգանակության ընդունումը : Նույն տարվա ընթացքում գործարկվեց ԱՊՊԱ վկայագրերի վաճառքի մոդուլը՝ գործընկեր ապահովագրական ընկերության համար: 2011թ. Ընկերության վճարումների ընդունման համակարգին միացան առաջին սոցցանցերը՝ սկսվեց սոց. կայքերում առցանց հաշիվների լիցքավորումը վճարային տերմինալներով: Վճարային ծառայությունների ընդլայնմանն ու զարգացմանը զուգահեռ Ընկերությունը կարևոր քայլեր արեց՝ ուղղված հաճախորդների կողմից ծառայությունների օգտագործման հարմարավետությունն ապահովելուն և շարունակական կերպով բարելավելուն: Արդեն հաջորդ տարի գործընկեր բանկն առաջինն անցավ հաճախորդների ինքնասպասարկման՝ Ընկերության պրոցեսինգային կենտրոնին միացված տերմինալների միջոցով:

Ծառայությունների շրջանակը զարգացնելու հետ մեկտեղ Ընկերությունն էականորեն բարելավեց տեխնոլոգիական հագեցվածությունը:

2012թ. Ընկերությունը և «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ն մեկ միասնական ծրագրային հարթակ տեղափոխեցին իրենց վճարային տերմինալները՝ Ընկերության պրոցեսինգային բազայի վրա: Արդեն 2016թ. Ընկերությունն ամբողջությամբ անցավ պրոցեսինգային նոր՝ տեխնիկական և անվտանգության ժամանակակից պահանջներին համապատասխանող համակարգի: Գործարկվեց դրամական արագ փոխանցումների Telcell transfer համակարգը, որի միջոցով սպառողները կարող էին առանց հաշիվ բացելու կատարել դրամական արագ փոխանցումներ՝ թե՛ ՀՀ տարածքում, թե՛ Հայաստանի Հանրապետությունից դուրս: Ներդրվեց «Իմ Telcell էջը» ծառայությունը՝ ընձեռելով միանգամից 8 տարբեր ծառայության դիմաց խմբային վճարումներ կատարելու հնարավորություն:

2016թ. փետրվարի 22-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ Ընկերությանը տրամադրվեց էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն: Արդեն հաջորդ տարի գործարկվեց MyTelcell հավելվածը (ներկայում՝ Telcell Wallet), որը հնարավորություն է տալիս Telcell համակարգով բոլոր գործառնությունները կատարել էլեկտրոնային դրամապանակով: Սկսած 2019թ. Telcell Wallet հավելվածով QR վճարումները Ընկերությունն իրականացնում է սեփական Scan and Pay ապրանքանիշի ներքո: Ներդրվեց նաև BON լոյալության ծրագիրը, որի շրջանակում հաճախորդները կուտակում են բոնուսային միավորներ ֆինանսական

գործառույթներ իրականացնելու դիմաց և օգտագործում են դրանք Ընկերության կողմից սահմանված եղանակով:

Վերջին տարիներին ևս Ընկերությունն ընդլայնել է առաջարկվող ծառայությունների շրջանակը, մեծ կարևորություն տալով թվային լուծումներին, հարմարավետությանը և հասանելիությանը: 2019թ. մշակվել և ներդրվել է Telcell Business հավելվածը, որի օգնությամբ բիզնես գործունեությամբ զբաղվող անձինք կարող են վճարումներ ընդունել հաճախորդներից: Արդեն 2021թ. գործարկվեց «Վարկային պորտալ» ծառայությունը, որը հնարարավորություն է տալիս ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին 24/7 ռեժիմով իրականացնել վարկավորում էլեկտրոնային դրամապանակի օգտատերերին անմիջապես Telcell Wallet հավելվածի ինտերֆեյսի միջոցով:

2021 թվականից ընկերությունը սկսեց իրագործել ռեբրենդավորման ընթացքը, որի նպատակն էր կառուցել էկոհամակարգ և թարմացնել ընկերության հեղինակային ոճը:

Ընկերությունն իրականացրեց մեծ ռեբրենդավորման միջոցառում 2023 թվականի հունիսի վերջին, որտեղ հայտարարվեց ընկերության նոր տեսլականը և ներկայացվեցին առաջիկա տարվա ընթացքում սպասվող նախագծերն ու պրոյեկտները:

2022 թվականի վերջում Ընկերությունը շահել է Երևան քաղաքի հասարակական տրանսպորտում միասնական տոմսային համակարգի ներդրման մրցույթը՝ դառնալով այդ նախագծի կատարողը: Նախագծի շրջանակում ընկերությունը կատարեց ներդրում, տեղադրելով վալիդատորներ, ինտեգրելով ուղետոմսերի վճարման համակարը և այլն:

Նախագծին մասնակցության շրջանակում մեր նպատակներն են՝

- Հայաստանի քաղաքացիների օգտատիրական փորձառության թվային տրանսֆորմացում,
- Թվային գործիքների և տեխնոլոգիաների ներդրում քաղաքացիների առօրյա կյանք,
- Յուրաքանչյուր քաղաքացու ապահովում եզակի թվային ռեսուրսներով՝ ստեղծելու համար ավելի հարմար և արդյունավետ միջավայր իրենց կյանքի և գործունեության համար:

Մեր տեսլական է Երևանի հասարակական տրանսպորտային միջոցներում վճարային համակարգի ներդրման գործընթացն ամբողջությամբ ավարտելուց հետո համակարգն ինտեգրել նաև մարզային տրանսպորտում:

Telcell Wallet-ը միակ հավելվածն է, որի միջոցով կարելի է գնել QR ուղետոմսեր՝ հասարակական տրանսպորտում ուղևորության դիմաց վճարելու համար:

Ներկայիս ձեռքբերումները նախագծի շրջանակներում՝

- Երևանի ավտոբուսներում, տրոլեյբուսներում և մետրոյում 1100 վալիդատորի տեղադրում և ծրագրային ապահովում, ինչը կազմում է հասարակական տրանսպորտի 95%-ը:
- 500 տերմինալի տեղադրում ավտոբուսի կանգառներում և 20 տերմինալի տեղադրում մետրոպոլիտենի տարածքում:
- Telcell Wallet հավելվածի, Ընկերության տերմինալների, բանկային քարտերի, տրանսպորտային քարտերի և կայքի միջոցով ուղետոմսերի գնման ֆունկցիոնալի ներդրում:
- Ներդրման տեխնիկական աջակցության ապահովում:
- Վերահսկիչների ինստիտուտի ներդրում:

- Fleet management համակարգի ներդրում (հասարակական տրանսպորտի կառավարման համակարգ):
- Մետրոպոլիտենի արդիականացում, նոր պտտադռնակների տեղադրում:

Նախագիծը կատարված է 90%-ով: Վերջնական փուլը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի շրջանակներում՝ վերջինիս հետ ժամկետների համաձայնեցման արդյունքում, ինչից հետո կանջատվեն վճարային այլ համակարգերը:

Ռեբրենդավորումից հետո նույն տարվա ընթացքում ընկերությունը թողարկեց Հայէկոնոմբանկի հետ միասին Visa թվային քարտերը, որոնք հնարավորություն են տվել օգտատերերին առանց բանկ այցելելու ստեղծել հավելվածում բանկային քարտ ու համալրել Հայաստանի տարածքում տեղադրված Ընկերության 4500+ տերմինալներից 0% միջնորդավճարով: Նման համագործակցության նպատակն է ներգրավել առավել շատ բանկեր առաջարկելով քարտերի բացում բանկերի հավելվածներից դուրս:

2023 թվականին սեպտեմբերին Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ միասին թողարկվեց «Գնիր հիմա, վճարիր հետո» (BNPL) ծառայությունը, որը առավել հարմարավետ պայմաններ է ստեղծում օգտատերերի համար՝ թույլ տալով նրանց վճարել գնումներն անելուց որոշ ժամանակ անց: BNPL ծառայության հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս վճարումները մասնատել ավելի փոքր՝ կառավարելի գումարների: Մեծ գնումներ կատարելիս այլևս պետք չէ մտածել գումարային սահմանափակման մասին:

Ընկերության առաքելությունն է դիրքավորել էկոհամակարգը ու ստեղծել պրոդուկտները ու ծառայությունները, հիմնված ազգային արժեքների հիման վրա՝ ստեղծել այն, ինչի կարիքը ունի Հայաստանում յուրաքանչյուր մարդը: Մեր տեսլականն է ստեղծել ագրեգատ ու ապահովել open-banking համակարգը, որը թույլ կտա մեր օգտատերերին տեսնել պրոդուկտների ամբողջ սպեկտրը (բոլոր բանկերի ծառայություններ և պրոդուկտները, միջոցառումները և այլ գործընկերների ծառայությունները) միասնական համակարգում ընկերության պրոդուկտներում:

### 3.3.2. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը Ընկերության կողմից այլ անձանց կապիտալում էական ներդրումներ չեն իրականացվել:

#### 3.3.2.1. Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում կատարված ներդրումներ

Ընկերության նախորդ երեք տարիների կատարած ներդրումային հոսքերը ներկայացված են ստորև:

Ներդրումային դրամական հոսքերը.

| *Հազար ՀՀ դրամ* | *2021* | *2022* | *2023* |
|---|---|---|---|
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 620,770 | 561,419 | 535,148 |

Վերջին երեք տարիներին Ընկերության տարեկան կատարած ներդրումները կազմում են 572 միլիոն ՀՀ դրամ:

2023 թվականի կարևոր ներդրումային ուղղություն է Երևանի քաղաքապետարանի Տրանսպորտային նախագծը: Երևանի քաղաքապետարանի Տրանսպորտային նախագծի մրցույթը շահելուց ի վեր Թողարկողն արդեն իսկ կատարել է մոտ 200 մլն ՀՀ դրամի ներդրում՝ նախագծի իրագործման տարբեր փուլերում անհրաժեշտ սարքավորումների և արտոնագրերի ձեռքբերման ուղղությամբ:

#### 3.3.2.2. Ընթացիկ ներդրումները

Երևանի քաղաքապետարանի Տրանսպորտային նախագծի շրջանակներում Թողարկողը ներկայումս շարունակում է զգալի ներդրումներ իրականացնել ծառայությունների բարելավման, ծրագրային ապահովման բարեկարգման և հավելյալ անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման ուղղությամբ:

#### 3.3.2.3. Պլանավորված ներդրումները

Թողարկողի ներկայիս ներդրումային քաղաքականությունը միտված է շարունակական բնույթ կրող ծրագրերի և նախագծերի թե զարգացման և թե նոր նախագծերի իրականացմանն ուղղորդել ողջամիտ ֆինանսական միջոցներ, ինչպես նաև շարունակել դիտարկել այլ կազմակերպությունների Կապիտալում ներդրումը և/կամ նոր օժանդակ ընկերությունների ստեղծումը, որորք կարող են սիներգիա ստեղծել առկա բիզնեսի հետ:

## 3.4. Բիզնեսի նկարագիրը

### 3.4.1. Հիմնական գործունեությունը

#### 3.4.1.1. Վճարահաշվարկային ծառայություններ

«Թել-Սել» ԲԲ ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային և հարակից ծառայություններ մատուցող առաջատար ընկերություն: Ընկերությունը ներկայումս մատուցում է ծառայությունների հետևյալ տեսակները՝

1. Վճարումների ընդունման ծառայություն՝ տերմինալների միջոցով վճարումների ընդունում՝ պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ:
2. Ընկերության մասնաճյուղերի միջոցով վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, այդ թվում նաև՝ դրամական (փողային) փոխանցումների իրականացում, վճարումների ընդունում, կանխիկ դրամական միջոցների տրամադրում, Հաստատված վարկերի կանխիկ տրամադրում, Յունիստրիմ համակարգով փոխանցումների

տրամադրում և ուղարկում, TCW դրամապանակի նույնականացումներ կատարում, դիմում բողոքների ընդունում, սխալ վճարումների հայտերի ընդունում,

3. Telcell Wallet հավելվածի միջոցով՝ էլեկտրոնային փողերի թողարկումը և սպասարկում, պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ, այդ թվում նաև՝
    - QR տեխնոլոգիայի վրա հիմնված Scan and Pay ապրանքանիշի ներքո էլեկտրոնային փողով մերչանտների օգտին վճարումների ընդունում,
    - Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հաճախորդներին տրամադրված վարկային միջոցների տրամադրում հաճախորդի էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվին:
4. ՀՀ առևտրային բանկերին WEB/API հասանելիություն տրամադրելով՝ Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների օգտին վճարումներ ընդունելու հնարավորության ստեղծում:
5. Պրոցեսինգի իրականացում:
6. Քլիրինգի իրականացում:

#### 3.4.1.2. Telcell Wallet հավելված

Ստանալով էլեկտրոնային փողի թոխարկման լիզենզիա Կենտրոնական բանկի կողմից՝ 2019թ.-ից սկսած, ելնելով համացանցի, բջջային հեռախոսների, հավելվածների ակտիվ զարգացման տենդենցից՝ Ընկերությունը թողարկեց ֆինանսական գործառնությունների իրականացումն ապահովող Telcell Wallet հավելվածը, որը հասանելի է ios, Android համակարգերի օգտատերերի համար:

Telcell Wallet-ն առաջին փուլում կրկնում էր վճարային տերմինալների ֆունկցիաները. վճարումների ընդունում հօգուտ բազմաթիվ ծառայություններ մատուցող իրավաբանական անձանց, որոնցից են բջջային օպերատորները, կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունները, վարկային կազմակերպությունները, ինտերնետ մատակարարող ընկերությունները և այլն:

Հետագայում Telcell Wallet-ի զարգացման և առաջխաղացման համար ձևավորվեց թիմ, որի աշխատանքի արդյունքում մեկնարկվեց բջջային հավելվածի 1-ին ռելիզը, ինչից հետո մեկնարկվում է Telcell Wallet հավելվածի ներսում լոյալության ծրագիրը՝ BON Market-ը:

Հաջորդ ռելիզով հավելվածի ներսում զարգացան այնպիսի ֆինանսական ծառայություններ, ինչպիսիք են՝ քարտից քարտ փոխանցումներ, փոխանցումներ ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշիվներին, դրամական փոխանցումներ հավելվածի ներսում, օնլայն վարկավորում ունիվերսալ վարկային կազմակերպությունների կողմից հավելվածի ներսում և այլն:

Երրորդ փուլով սկսվեցին Telcell Wallet հավելվածի ներսում ծառայությունների ցանկի զարգացման աշխատանքները, որի շրջանակներում զարգացավ ֆինանսական վերահսկողության ծառայությունը, անձանց անհատական բյուջետավորումը, հնարավորութուն ստեղծվեց հավելվածի ներսում կցել մեքենայի տվյալները և վճարել տուգանքները, կատարել պետական հարկերի, տուրքերի վճարումներ:

Իսկ չորրորդ փուլով ընդլայնվեց գործընկերական ենթակառուցվածքը, ինչը թույլ է տալիս հազարավոր կետերում՝ ռեստորաններում, սրճարաններում, խանութներում կատարել վճարում Telcell Wallet հավելվածի հաշվին եղած գումարով:

Ինչպես նաև մշակվել և ներդրվել է էլեկտրոնային կոմերցիայի համար նախատեսված վճարային ձև, որը գործընկերների կայքերին հնարավորություն է տվել արագ ինտեգրվել և ընդունել վճարումներ Telcell Wallet հավելվածի օգտատերերից:

Հավելվածի միջոցով հետագա ակտիվություններից են եղել՝ օնլայն տոմսեր գնելու հնարավորությունը, որոշ լրացուցիչ ծառայությունների հավելում, որոնք Telcell Wallet հավելվածի օգտատերերին տալիս են հնարավորություն կատարել համալիր վճարումներ ամեն անգամ ավելի շատ և արդի ծառայությունների դիմաց:

Այսօր Telcell Wallet հավելվածն ունի ավելի քան 1,900,000 հավելվածի ներբեռնում:

#### 3.4.1.3. Նոր ապրանքներ և ծառայություններ

Ընկերությունը անընդհատ զարգացնում է Telcell Wallet հավելվածը՝ ներդնելով նոր գործիքներ և ծառայություններ հավելվածի միջոցով:

Ընկերությունը իրականացնում է Երևան քաղաքի հանրային տրանսպորտի վճարային համակարգի ներդրում, որի արդյունքում Ընկերությունը կդառնա համակարգի հիմնական սպասարկողը:

### 3.4.2. Հիմնական շուկաները և մրցակցային դիրքը

#### 3.4.2.1. Հիմնական շուկաները և մրցակցային դիրքը

«Թել-Սել» ԲԲԸ ծառայությունների համար շուկա է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքը: Ընկերությունը հանդես է գալիս իր տերմինալների ցանցով, որը տարածվում է երկրի ողջ բնակելի տարածքով: ՀՀ ողջ բնակչությանը հասանելի են նաև վճարումների ընդունման ծառայություններ կատարելու հնարավորությունները և Telcell Wallet հավելվածը: Ընկերությունը չի մատուցում ծառայություններ արտերկրում:

Ներկայումս ավելի քան 2,300,000 մարդ օգտվում է Ընկերության ծառայություններից, ինչը վկայում է Ընկերության՝ շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնելու մասին, իսկ Telcell Wallet հավելվածն ունի ավելի քան 1,900,000 հավելվածի ներբեռնում:

Տերմինալների միջոցով վճարումներ ընդունելու գործունեության ոլորտում Ընկերությունը առաջատար դիրքում է և հմտորեն օգտագործում է իր բազում տարիների ստեղծած համբավը և հավատարիմ հաճախորդների մեծ բազան իր առաջատար դիրքը տարեցտարի ամրապնդելու և այդ ոլորտում մեծ քայլերով զարգանալու և ընդլայնվելու համար:

Telcell Wallet հավելվածով վճարումներ ընդունելու մասով ընկերությունը շուկայում երկու առաջատարներից մեկն է՝ և օգտատերերի քանակով և ամսեկան գործարքների քանակով: Նշված ցուցանիշներով Telcell Wallet հավելվածի մրցակիցն է Idram հավելվածը:

Շուկայի մրացկիցների թվում կարելի է նշել նաև «ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ -ն , «ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍՊԸ -ն և առևտրային բանկերը, որոնք առաջարկում են օնլայն վճարումները իրենց հավելվածներով:

Ընկերության վճարահաշվարկային և այլ ծառայություններից ստացվող եկամուտների կշիռները ընդհանուր հասույթի մեջ պատմական ժամանակահատվածի համար ներկայացված է ստորև:

| 000 ՀՀ դրամ | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| Միջնորդավճարներ վճարումների ընդունման, դրամական փոխանցումների և կանխիկացման ծառայություններից | 95% | 96% | 95% |
| Հասույթ գովազդի և սպասարկման ծառայություններից | 4% | 3% | 4% |
| Այլ հասույթ | 1% | 1% | 0% |

Վճարահաշվարկային ծառայությունների մասով եկամտի հիմնական աղբյուր են հանդիսանում վճարումները վարկային կազմակերպություններին և բանկերին, բջջային օպերատորներին, կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններին, ինտերնետ մատակարարող ընկերություններին, պետական մարմիններին և հանրային ծառայություն մատուցող ընկերություններին, օնլայն խաղերի ընկերություններին, առողջապահական ոլորտի ընկերություններին և այլն:

#### 3.4.2.2. Վաճարահաշվարկային ծառայությունների մասով Ընկերությունը հանդիսանում է շաուկայի առաջատարներից:Բացառիկ գործոններ

2017 թվականից տարեց տարի Թողարկողի տարեկան զուտ եկամուտը ունեցել է կայուն աճ, սակայն 2022 թվականին եղավ պլանավորված աճից զգալի ավելի մեծ Եկամուտ:

Հիմնական պատճառներից մեկը՝ պատերազմը Ռուսաստանի և Ուկրաինայի միջև: Պատերազմի սկզբից Ռուսաստանի Դաշնությունից մեծ քանակի որակավորված աշխատողներ տեղափոխվեցին Հայաստանի Հանրապետություն (ՀՀ), որի արդյունքում ՀՀ -ում 2022-2023 թթ-ին գրանցվեց շատ բարձր տնտեսական ակտիվություն: Նաև սկսվեց Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների մեծ հոսքեր: Քաղաքական վերոնշյալ պատճառը նաև խթանեց ՌԴ տարադրամի փոխարժեքի անկայությունյանը: Այս գործոնները շատ մեծ դրական ազդեցություն ունեցան Ընկերության եկամուտների աճի վրա, հատկապես դրամական միջոցների փոխանցումների մասով:

Օգտվելով ընձեռված հնարավորությունից և զգալի մեծ եկամուտից, Թողարկողը 2023 թվականին որոշեց էական ներդրում կատարել և լրացուցիչ ծախսեր անել Տրանսպորտային նախագծի և Վիզայի նախագծի շրջանակներում:

Ի հավելումն, 2023 թվականին նաև կարգավորման փոփոխությամբավելի խստացվեցին նույնականացման և վերահսկման մեխանիզմները, որը ավելացրեց հաշիվների բացման և հավելվածում նույնականացման ծախսերը:

Չեզոքացնելով վերոնշյալ թվարկած գործոնները՝ Թողարկողի տարեկան զուտ եկամուտը միևնույն է պահպանում է 2017թ-ից աճի միտումը:

## 3.5. Թողարկողի խմբի կառուցվածքը

### 3.5.1. Խմբի կառուցվածքը

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն խմբի մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ և դրա դուստր կազմակերպություններից, որոնցից յուրաքանչյուրում Թողարկողի մասնակցությունը 100% է: Թողարկողի դուստր կազմակերպություններն են՝ «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ն և «ԹԵԼ-ՍԵԼ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ-ն:

«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ հիմնական գործունեությունը գովազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումը:

«ԹԵԼ-ՍԵԼ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը նախատեսվում է առաջիկայում բեռնափոխադրման ծառայությունների մատուցում:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն նաև ունի 50% մասնակցություն «Մեգա Պանտերա» ՍՊԸ -ում, որի գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից:




## 3.6. Թողարկողի հիմնական միջոցները

### 3.6.1. Թողարկողի էական հիմնական միջոցների նկարագիր

| **Էական հիմնական միջոցներն* առ 31.12.2023թ.** | **Զուտ հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ)** |
|---|---|
| Վարչական տարածքի վարձակալած գույքի կապիտալ ծախս՝ Մերգելյանի անվան ինստիտուտ (ԵրՄՄԳՀԻ) | 168,560,560.82 |
| **Ընդամենը Էական հիմնական միջոցներ** | 168,560,560.82 |

*Հիմնական միջոցը համարվում է էական մեծություն կազմող, եթե դրա արժեքը գերազանցում է թողարկողի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը:

Ընկերության էական հիմնական միջոցները կազմում են ընդամենը հիմնական միջոցների 13.91%-ը:

Թողարկողին պատկանող հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն: Թողարկողը ներկայումս չի պլանավորում ձեռք բերել էական մեծություն կազմող հիմնական միջոցներ:

### 3.6.2. Հիմնական միջոցների փոփոխություն և օգտագործման սահմանափակումներ

Թելսելլ Սերվիս ՓԲԸ-ն, որը հանդիսանում է Թողարկողի դուստր կազմակերպություն, ունի փոխառություն, որի դիմաց գրավադրված է 188 մլն ՀՀ դրամի հաշվեկշռային արժեքով հիմնական միջոց: Այլ փոխառություններ, որոնք կարող են սահմանափակել Ընկերության կողմից հիմնական միջոցների օգտագործումը, չկան:

## 3.7. Թողարկողի կապիտալ ռեսուրսները

### 3.7.1. Ընկերության սեփական կապիտալի և պարտավորությունները

Ընկերության սեփական կապիտալը 2023թ -ի դեկտեմբերի 31 -ի դրությամբ կազմում է 3.79 միլիարդ ՀՀ դրամ, իսկ փետրվարի 29-ի դրությամբ կազմում է 4.14 միլիարդ ՀՀ դրամ:

| | **31.12.23 թ.** | **29.02.24 թ.** |
|---|---|---|
| Կանոնադրական կապիտալ | 1,078,000 | 1,078,000 |
| Կուտակված շահույթ | 2,416,860 | 2,886,464 |
| Պահուստներ | 161,700 | 161,700 |
| Չվերահսկվող բաժնեմաս | 11,889 | 11,889 |
| **Սեփական կապիտալ** | **3,668,449** | **4,138,053** |

ԹԵԼ-ՍԵԼ ԲԲԸ բաժնետետերի տարեկան ընդհանուր ժողովը 01.04.2024թ. թիվ 010424 արձանագրությամբ որոշում է կայացրել 2023թ. շահույթից 1,419,000,000 ՀՀ դրամի չափով բաշխում կատարել, իսկ հետագայում Ընկերությունը նպատակ ունի կուտակված շահույթի հաշվին համալրել կանոնադրական կապիտալը մինչ 2024 թվականի ավարտ:

| **Հազար ՀՀ դրամ** | **2023թ.** | **2022թ.** |
|---|---|---|
| Վարկեր և փոխառություններ | 2,099,720 | 1,326,704 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 287,934 | 448,909 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | **2,387,654** | **1,775,613** |
| | | |
| Վարկեր և փոխառություններ | 0 | 0 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 12,747,316 | 9,589,236 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | **12,747,316** | **9,589,236** |

| | | |
|---|---|---|
| **Ընդամենը պարտավորություններ** | **15,134,970** | **11,364,849** |

### 3.7.2. Դրամական հոսքերի առաջացման աղբյուրները և գումարները

Թողարկողի դրամական հոսքերը գոյանում են նրա հիմնական գործունեությունից, այն է միջնորդավճարներ «Դրամական (փողային) փոխանցումներ «ԹԵԼՍԵԼ» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի միջոցով կատարվող վճարումների ընդունման ծառայություններից, վճարումների ընդունման տերմինալների միջոցով վճարումների ընդունում, հասույթ գովազդի և գործակալի տերմինալի սպասարկման ծառայություններից, միջնորդավճարներ կանխիկացման ծառայություններից և դրամական փոխանցումներից:
2023թ -ի արդյունքներով գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել են 4.95 միլիարդ ՀՀ դրամ, նույն ժամանակահատվածի համար ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ արտահոսքերը կազմել են 535 միլիոն ՀՀ դրամ, այսպիսով Ընկերության գեներացրած ազատ դրամական հոսքերը կազմել են 4.4 միլիարդ դրամ:
Դրամական հոսքերի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններով:

### 3.7.3. Փոխառություն ներգրավելու պահանջ

Թողարկողը ներկայումս չունի փախառություն ներգրավելու պահանջ:

### 3.7.4. Կապիտալ ռեսուրսների օգտագործման սահմանափակումները

Ընկերությունը չունի կապիտալ ռեսուրսների օգտագործման այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի էապես ազդել վերջինիս գործունեության վրա:

## 3.8. Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար Թողարկողի կողմից հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված քաղաքականություն մշակված չէ:

Հետազոտությունները իրականացվում են ըստ անհրաժեշտության:

Պատմական ժամանակահատվածի ընթացքում Թողարկողը հարկ է համարում ընդգծել հետևյալ զարգացման ուղղությունները.

- Գործընկեր բանկի հետ սերտ համագործակցությամբ մշակվել է նախատիպային լուծում՝ Visa թվային քարտերը Telcell Wallet-ում ինտեգրելու համար՝ վերջնական օգտագործողների համար ապահովելով անվտանգության և հարմարավետության բարձր մակարդակ: VISA թվային քարտերի նախագծի շրջանակում մեզ հաջողվեց և ավտոմատացնել քարտերի ավելացման հնարավորությունը Apple Pay և Google Pay-ում:
- 2022-2023 թվականների ընթացքում Telcell ընկերությունը ներդրեց մինչև 15 000 000 ՀՀ դրամ օգտատերերի խնդիրների ու ինովացիոն լուծումների ուսումնասիրության ուղղությամբ, որի արդյունքում դուրս են բերվել ընկերության էկոհամակարգային խնդիրներ: Մենք ընդունեցինք ագրեգատ ստեղծելու ուղղությամբ մեր ռազմավարությունը, հիմնվելով օգտատերերի խնդիրների հիման վրա: Ագրեգատ

ծառայությունների մասին խոսելիս, նպատակ ունենք զարգացնել BNPL ծառայությունը, մեծացնելով գործընկերների ցանկը, որտեղից մեր օգտատերերը կկարողանան գնել ապրանքը նույն պահին, իսկ վճարել հետո: Առաջին նման համագործակցությունը կայացավ Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ-ի հետ միասին, որը հնարավորություն է ընձեռնում և՛ վարկային կազմակերպությունների, և՛ բանկերի համար ներդնել իրենց BNPL ծառայությունը մեր հավելվածում:

- Երևան քաղաքի միասնական տոմսային համակարգի ներդրման իմպլեմենտացումը՝ Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ մշակելով հասարակական տրանսպորտից օգտվելու դիմաց վճարման նոր, անկանխիկ համակարգ: Այս համակարգով ներդրվեց ուղետոմսերի գնման և մարման տեխնոլոգիա, որը քաղաքացիներին թույլ է տալիս կանխիկի օգտագործման փոխարեն անցնել ավելի հարմար ու արագ՝ թվային եղանակի: Նպատակ ունենք բարելավվել նախագծի շրջանակում ստեղծված ֆունկցիոնալը, ինչպես նաև բանկ (երի) հետ համատեղ թողարկել տրանսպորտային քարտեր: Տրանսպորտային քարտերի շնորհիվ ուղևորները հնարավորություն կունենան համալրել քարտերը ուղետոմսերով ու տրանսպորտային միջոցներում առկա նարջնագույն սքաների օգնությամբ մարել իրենց ուղետոմսը:

## 3.9. Արտոնագրերը և լիցենզիաները

Ընկերությանը տրված են հետևյալ լիցենզիաները.

| **Լիցենզիա/թույլտվություն** | **Տրման ամսաթիվ** | **Գործողության ժամկետ** |
|---|---|---|
| ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԽԹՅՈՒՆՆԵՐԻ №5 ԼԻՑԵՆԶԻԱ՝ դրամական /փողային/ փոխանցումներ իրականացնելու համար, վճարային գործարքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացնելու համար | 24.07.2007թ. | անժամկետ |
| «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ | 22.02.2016թ. | անժամկետ |

## 3.10. Զարգացման վերջին միտումները

Ընկերությունը 2022 թ.-ի ունեցել է ռեկորդային հասույթ, որը կազմել է 12.7 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ աճել էր 25%, նույն ժամանակահատվածում զուտ շահույթը աճել էր 47%: Այս կտրուկ աճը պայմանավորված էր 3.4.2.2. ենթակետում նշված բացառիկ գործոններով:

2023 թ.-ի տվայլներով Ընկերության հասույթը կրճատվել է 23% - ով համեմատած 2022 թ -ի, իսկ զուտ շահույթը 47% - ով: Սա հիմնականում պայմանավորված է 3.4.2.2. ենթակետում նշված բացառիկ գործոնների ազդեցության նվազմամբ:

Թողարկողի մարտավարությունը միտված է թվային պրոդուկտների զարգացմանը՝ դրանով իսկ նպաստելով համախառն մարժայի աճին և եկամտաբերության աճին:

Թողարկողը մասնակցել է Երևանի Քաղաքապետարանի կողմից անցկացված միասնական տոմսային օպերատորի բաց մրցույթի և հաղթող է ճանաչվել:

2022թ.-ի հուլիսին Թողարկողը ստորագրել է համաձայնագիր միջազգային VISA վճարահաշվարկային կազմակերպության հետ: Այդ համաձայնագիրը հնարավորություն կտա Թողարկողին ստեղծել անհատական VISA քարտեր իր հաճախորդների համար: Եկամուտ է ակնկալվում անմիջապես հիմնական վճարահաշվարկային գործունեությունից, ինչպես նաև Apple Pay պրոդուկտից:

## 3.11. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

### 3.11.1. Կառավարման մարմինների կառուցվածքը

Ընկերության կառավաման մարմինների սխեմատիկ կառուցվածքը հետևյալն է.




Թողարկողի կառավարման մարմիններն են բաժնետերերի ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) և գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Թողարկողի կառավարման բարձրագույն մարմինը Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն

ունի Թողարկողի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման մարմին է հանդիսանում Թողարկողի խորհուրդը, որի անդամները ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից՝ առանց ընդհանուր տևողության սահմանափակման և բաղկացած է երեք անդամներից (նախագահ և խորհրդի երկու անդամներ): Տնօրենների խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել ինչպես սովորական, այնպես էլ գումարային (կոմուլյատիվ) քվեարկությամբ:

Թողարկողը նաև ունի Գլխավոր հաշվապահ, վերստուգող, և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներ:

## 3.11.2.Կառավարման մարմինների իրավասությունները

### 3.11.2.1. Բաժնետերերի ընդհանուր ժողով

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովն (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով) Թողարկողի կառավարման բարձրագույն մարմինն է:

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 1 ամիս հետո 6 ամսվա ընթացքում:

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Թողարկողի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Թողարկողի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
2. Թողարկողի վերակազմակերպումը,
3. Թողարկողի լուծարումը,
4. Թողարկողի լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
5. Թողարկողի տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
7. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
8. Տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Թողարկողի կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
9. Թողարկողի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,
10. Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

11. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
12. Թողարկողի գլխավոր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
13. Թողարկողի տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի, շահույթի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
14. Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),
15. Թողարկողի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, այդ թվում այլ կազմակերպություններին մասնակցելը,
16. Թողարկողի կողմից դուստր կամ կախյալ Ընկերությունների ստեղծումը,
17. Դուստր և կախյալ Ընկերություններում մասնակցությունը,
18. Հոլդինգային Ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,
19. Հոլդինգային Ընկերություն, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,
20. Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

Ընդհանուր ժողովների որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ: Կանոնադրությամբ նաև նախատեսվում է հեռակա քվեարկության հնարավորություն:

#### 3.11.2.2. Տնօրենների խորհուրդ

Թողարկողի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Թողարկողի տնօրենների խորհուրդը:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

1. Թողարկողի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
2. Թողարկողի բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
3. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հաստատումը,
4. Գույքի շուկայական արժեքի որոշումը,
5. Թողարկողի տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռք բերումը Օրենքով նախատեսված դեպքերում,
6. պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
7. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը,
8. Թողարկողի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և

վճարման կարգի վերաբերյալ Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի առաջարկությունների նախապատրաստումը,

9. Թողարկողի բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
10. Թողարկողի պահուստային հիմնադրամի օգտագործումը,
11. Թողարկողի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
12. Խոշոր գործարքների կատարման մասին որոշման ընդունումը Օրենքով սահմանված դեպքերում,
13. Այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
14. Թողարկողի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
15. Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
16. Ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումը,
17. Օրենքով և սույն կանոնադրությամբ Թողարկողի տնօրենների խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, ընդ որում ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամների կազմից՝ իր անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Բացառությամբ կանոնադրությամբ նախատեսված դեպքից, Թողարկողի խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

Թողարկողի տնօրենների խորհրդի նախագահը.

1. կազմակերպում է Թողարկողի տնօրենների խորհրդի աշխատանքները,
2. գումարում է Թողարկողի տնօրենների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
4. նախագահում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

#### 3.11.2.3. Գլխավոր տնօրեն

Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Թողարկողի գլխավոր տնօրենը:

Գլխավոր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի և Թողարկողի տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի

և Թողարկողի տնօրենների խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի, այնպես էլ Թողարկողի տնօրենների խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Թողարկողի գլխավոր տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ ի շահ իր կողմից ներկայացվող Թողարկողի: Նա Թողարկողի առջև պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետևանքով Թողարկողին պատճառած վնասի համար:

Թողարկողի գլխավոր տնօրենը՝

1. Տնօրինում է Թողարկողի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Թողարկողի անունից,
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
3. Գործում է առանց լիազորագրի,
4. Տալիս է լիազորագրեր,
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
6. Բանկերում բացում է Թողարկողի հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,
7. Թողարկողի տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Թողարկողի աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը,
8. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Թողարկողի աշխատակիցներին,
10. Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
11. Հաստատում է հաստիքացուցակը:

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Թողարկողի գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

#### 3.11.2.4. Վերստուգող և վերստուգիչ հանձնաժողով

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է Թողարկողի վերստուգող հանձնաժողով: Վերստուգող հանձնաժողովը հետևում է Թողարկողի կառավարման մարմինների որոշումների կատարումը, ստուգում է Թողարկողի փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Թողարկողի կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Թողարկողի այն բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով, որոնց հանրագումար բաժինը Թողարկողի կանոնադրական կապիտալում կազմում է 10 և ավելի տոկոս:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իր մեջ ներառում է.

1. Թողարկողի ֆինանսատնտեսական փաստաթղթերի, հաշվապահական և այլ ցուցանիշների հավաքագրում և վերլուծություն, ստուգման օբյեկտին վերաբերող բանավոր և գրավոր բացատրությունների ստացում,
2. Թողարկողի պահեստի, արխիվի և այլ ծառայողական տարածքների զննում,
3. Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության ՀՀ օրենսդրությանը անհամապատասխանությունների, հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերում աղավաղումների բացահայտում,
4. Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության օբյեկտիվ և համապարփակ ստուգումն ապահովելու նպատակով իր իրավասությունների սահմաններում այլ անհրաժեշտ գործողությունների իրականացում:

Վերստուգող հանձնաժողովը ստուգումների արդյունքներն ուղարկում է Թողարկողի ընդհանուր ժողով: Վերստուգող հանձնաժողովն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Թողարկողի հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Թողարկողի կառավարման մարմիններում չընդգրկված գործունակ ֆիզիկական անձինք: Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

## 3.11.3. Թողարկողի կառավարման մարմինների անդամները

### 3.11.3.1. Թողարկողի բաժնետերեր

Իրավասությունները և պարտականությունները ներկայացված են Ազդագրի 3.11.2.1 ենթաբաժնում ներկայացված է:

| Անունը, ազգանունը/ Կազմակերպության անվանում | Բնակության վայրը/ Գրանցման հասցեն | Զբաղեցրած պաշտոնը (պաշտոնավարման սկիզբ/ազարտ) | Թողարկողի կազմից դուրս գործունեությունը |
|---|---|---|---|
| «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն | ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 1-ին և 3-րդ հարկեր | Ընկերության բաժնետեր, չի մասնակցում քվեարկության Ընդհանուր ժողովին | Թողարկողի կազմից դուրս գործունեություն չի ծավալում: |
| «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» | Նիկոսիա, Կիպրոս | Ընկերության բաժնետեր, քվեարկության իրավունքով մասնակցում է Ընդհանուր ժողովին | Թողարկողի կազմից դուրս գործունեություն չի ծավալում: |
| Տիգրան Սարգսյան | ՀՀ, ք. Երևան, | Ընկերության բաժնետեր, քվեարկության իրավունքով մասնակցում է Ընդհանուր ժողովին | Թողարկողի կազմից դուրս գործունեություն չի ծավալում: |
| Արամայիս Բադալյան | ՀՀ, ք. Երևան, | Ընկերության բաժնետեր, քվեարկության իրավունքով մասնակցում է Ընդհանուր ժողովին | Անդր Սան ՍՊԸ 100% բաժնետեր<br>Բաժնետեր է նաև Գրին ֆուդ-ում |
| Տաթևիկ Ավետիսյան | ՀՀ, ք. Երևան, | Ընկերության բաժնետեր, քվեարկության իրավունքով մասնակցում է Ընդհանուր ժողովին | Ֆինանսական համակարգի հաշտարար |
| Արամ Սարգսյան | ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, | Ընկերության բաժնետեր, քվեարկության իրավունքով մասնակցում է Ընդհանուր ժողովին | Թողարկողի կազմից դուրս գործունեություն չի ծավալում: |

### 3.11.3.2. Տնօրենների խորհուրդ

Իրավասությունները և պարտականությունները ներկայացված են Ազդագրի 3.11.2.2 ենթաբաժնում ներկայացված է:

| Անունը, ազգանունը | Բնակության վայրը/ Գրանցման հասցեն | Զբաղեցրած պաշտոնը (պաշտոնավարման սկիզբ/ազարտ) | Թողարկողի կազմից դուրս գործունեությունը |
|---|---|---|---|
| Արտաշես Ավետիսյան | ՀՀ, ք.Երևան, | Տնօրենների խորհրդի նախագահ | Գրին Ֆուդ ՍՊԸ ընկերության բաժնետեր |

| | | | |
|---|---|---|---|
| | | (պաշտոնավարում է 12.05.2015թ.-ից) | |
| Վաչե Գաբրիելյան | ՀՀ, ք.Երևան, | Տնօրենների խորհրդի անդամ (պաշտոնավարում է 11.10.2022թ.-ից) | Հայաստանի ամերիկյան համալսարանի Գործարարության և տնտեսագիտության քոլեջի դեկան<br>Արդշինբանկ՝ Խորհրդի անդամ<br>Արմենիա Ինշուրանս՝ Խորհրդի անդամ |
| Ռամի Տրեյստեր | ՌԴ, ք. Մոսկվա, | Տնօրենների խորհրդի անդամ (պաշտոնավարում է 12.05.2015թ.-ից) | Թել-Սել Մարկետ ՓԲԸ որպես 56.28% բաժնետեր<br>RobyMarket LLC<br>Որպես 100% բաժնետեր |

### 3.11.3.3. Գործադիր տնօրեն

Իրավասությունները և պարտականությունները ներկայացված են Ազդագրի 3.11.2.3 ենթաբաժնում ներկայացված է:

| **Անունը, ազգանունը** | **Բնակության վայրը/ Գրանցման հասցեն** | **Զբաղեցրած պաշտոնը (պաշտոնավարման սկիզբ/ազարտ)** | **Թողարկողի կազմից դուրս գործունեությունը** |
|---|---|---|---|
| Արտյոմ Ղազարյան Վաչագանի | Հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Ա.Բնակության հասցե՝ ՀՀ, ք. Երևան | Գլխավոր տնօրեն 2023/ | Թողարկողի կազմից դուրս գործունեություն չի ծավալում |

### 3.11.3.4. Վերստուգող

Իրավասությունները և պարտականությունները ներկայացված են Ազդագրի 3.11.2.4 ենթաբաժնում ներկայացված է:

| **Անունը, ազգանունը** | **Բնակության վայրը/ Գրանցման հասցեն** | **Զբաղեցրած պաշտոնը (պաշտոնավարման սկիզբ/ազարտ)** | **Թողարկողի կազմից դուրս գործունեությունը** |
|---|---|---|---|
| Դավթյան Արմեն Ալբերտի | ՀՀ, ք.Վեդի | Վերստուգող - ներքին աուդիտոր<br>01.12.2015թ-ից մինչ օրս | Գրին ֆուդ ՍՊԸ տնօրեն<br>Անալիտիկայի և հետազոտությունների կենտրոն ՍՊԸ բաժնետեր |

## 3.11.4. Կառավարման մարմինների անդամների ազգակցական կապը

Կառավարման անդամների միջև ազգակցական կապը բացակայում է:

### 3.11.5. Կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամի մասին

| Անունը, ազգանունը/ Կազմակերպության անվանում | Պաշտոնը | Մասնագիտությունը (Որակավորումը) | Նախորդ 5 տարվա ընթացքում գործունեությունը |
|---|---|---|---|
| Ռամի Տրեյստեր | «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» - բաժնետեր և Խորհրդի անդամ | 1. Էլեկտրոնիկայի ինժեներ – Մոսկվայի Լեռնային Համալսարան<br>2. EMBA - IBDA համալսարանում (AHX/RSM) | Ձեռնարկատիրական գործունեություն |
| Տիգրան Սարգսյան | Բաժնետեր | 1. Պլանավորման ու էկոնոմիկայի ֆակուլտետ - ՀՊՏՀ<br>2. Ֆինանսատնտեսական գիտությունների թեկնածու - Վոզնեսենսկու անվան Լենինգրադի համալսարանում<br>3. Օրինաստեղծ գործունեություն - Վաշինգտոնի Իրավունքի միջազգային ինստիտուտ<br>4. Բանկերի արդյունավետ կառավարում - Համաշխարհային բանկի Տնտեսական զարգացման ինստիտուտ | Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ մինչ 2020թ. Եվրասիական զարգացման բանկի Կառավարման խորհրդի նախագահի տեղակալ |
| Արամայիս Բադալյան | Բաժնետեր | ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ Իրանագետ | Ձեռնարկատիրական գործունեություն |
| Տաթևիկ Ավետիսյան | Բաժնետեր | Իրավաբան (Բակալավր) ՀՌՀ | Ֆինանսական համակարգի Հաշտարար |
| Արամ Սարգսյան | Բաժնետեր | | |
| Արտաշես Ավետիսյան | Խորհրդի նախագահ | Ինժեներ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, Էլեկտրոտեխնիկական ֆակուլտետ | Ձեռնարկատիրական գործունեություն |
| Վաչե Գաբրիելյան | Խորհրդի անդամ | 1. Տնտեսագետ մաթեմատիկոս ԵՊՀ,<br>2. Հանրային կառավարում՝ ԱՄՆ Ռատգերս համալսարան | Հայաստանի ամերիկյան համալսարանի Գործարարության և տնտեսագիտության քոլեջի դեկան |

| Անունը, ազգանունը/ Կազմակերպության անվանում | Պաշտոնը | Մասնագիտությունը (Որակավորումը) | Նախորդ 5 տարվա ընթացքում գործունեությունը |
|---|---|---|---|
| | | | Արդշինբանկ՝ Խորհրդի անդամ<br>Արմենիա Ինշուրանս՝ Խորհրդի անդամ |
| Արտյոմ Ղազարյան Վաչագանի | Գործադիր տնօրեն | 1. Երևանի պետական համալսարան-Կենսաֆիզիկայի բաժին, <<Կենսաֆիզիկա>> մասնագիտություն:<br>2.Մարքեթինգ և վաճառք, Մագիստրոսի աստիճան<br>3. Կենսաբանական գիտությունների թեկնածուի որակավորում /PhD/ կենսաբժշկական մասնագիտությամբ: | ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ մարքեթինգի վարչության պետ |
| Դավթյան Արմեն Ալբերտի | Վերստուգող | 1. Երևանի ժաղավրդական տնտեսության ինստիտուտում «Էկոնոմիկայի պետական կարգավորում»<br>2. Տնտեսագիտական հետազոտության ինստիտուտում «Էկոնոմիկայի կառավարում» որպես ասպիրանտ: | |

Թողարկողի կառավարման մարմնի անդամներն ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում որևէ առնչություն չեն ունեցել որևէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ:

Թողարկողի կառավարման մարմնի անդամներն ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում պատասխանատվության չեն ենթարկվել պետական որևէ մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից և նրանք դատարանի կողմից չեն զրկվել որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

### 3.11.6. Շահերի բախման առկայություն

Թողարկողի կարծիքով Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց, ինչպես նաև իրական շահառուների միջև շահերի բախում առկա չէ: Կառավարմանը մասնակցող որևէ անձ չի բացահայտել շահերի բախման մասին տեղեկատվություն:

### 3.11.7.Այլ տեղեկություններ

Ընկերությունը խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ չունի կառավարման մարմնի անդամ նշանակելու մասին որևէ պայմանավորվածություն կամ բացառություն:

## 3.12. Վարձատրությունները և պարգևավճարները

Ներկայացվում է վերջին հաշվետու ֆինանսական տարվա կտրվածքով.

Թողարկողի կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի կողմից թողարկողից և նրա դուստր ընկերություններից որպես վարձատրություն և պարգևավճար ստացված գումարները՝ ներառյալ նրանց օգտին կատարված ցանկացած ձևով փոխհատուցումները (կուտակային կենսաթոշակային հատկացումները, ապահովագրական վճարները, բաժնետոմսերի ձեռքբերման օպցիոնները և այլն), և Թողարկողի կողմից թողարկողի կառավարման մարմինների անդամների օգտին կատարված կենսաթոշակային վճարումները՝ ընդհանուր գումարով:

| **Կառավարման անդամի անուն,ազգանունը** | **Որպես վարձատրություն և (կամ) պարգևավճար վճարված գումարները** |
|---|---|
| Տիգրան Սարգսյան | X |
| Արամայիս Բադալյան | 12,447,780 ՀՀ դրամ, որից 180,000 ՀՀ դրամ դրոշմանիշային գումար, 2,489,556 ՀՀ դրամ եկամտային հարկ, 944,784 ՀՀ դրամ պարտադիր կուտակային վճար |
| Տաթևիկ Ավետիսյան | X |
| Արամ Սարգսյան | X |
| Տիգրան Սարգսյան | X |
| Արտաշես Ավետիսյան | 12,000,000 ՀՀ դրամ, որից 102,000 ՀՀ դրամ դրոշմանիշային գումար, 2,400,000 ՀՀ դրամ եկամտային հարկ |
| Ռամի Տրեյստեր | 1,000,000 ՀՀ դրամ, որից 200,000 ՀՀ դրամ եկամտային հարկ |
| Վաչե Գաբրիելյան | 12,000,000 ՀՀ դրամ, որից 102,000 ՀՀ դրամ դրոշմանիշային գումար, 2,400,000 ՀՀ դրամ եկամտային հարկ, 900,000 ՀՀ դրամ պարտադիր կուտակային վճար |
| Արտյոմ Ղազարյան Վաչագանի | 34,769,546 ՀՀ դրամ, որից 180,000 ՀՀ դրամ դրոշմանիշային գումար, 6,953,912 ՀՀ դրամ |

| | |
|---|---|
| | եկամտային հարկ, 1,050,000 ՀՀ դրամ պարտադիր կուտակային վճար |
| Դավթյան Արմեն Ալբերտի | 5,022,723 ՀՀ դրամ, որից 69,000 ՀՀ դրամ դրոշմանիշային գումար, 1,004,545 ՀՀ դրամ եկամտային հարկ, 259,758 ՀՀ դրամ պարտադիր կուտակային վճար |

## 3.13. Կառավարման մարմինների գործունեությունը

### 3.13.1. Կառավարման մարմինների անդամների վերաբերյալ

Կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի պաշտոնավարման ընթացքը նշված է Ազդագրի 3.11.3 բաժնում:

Թողարկողի կառավարման անդամները չունեն պայմանագրեր Թողարկողի կամ նրա դուստր ընկերությունների հետ այն մասին, որ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո պետք է ստանան պարգևավճար կամ լրավճար:
Թողարկողի վերստուգողի մասին տեղեկատվությունը ներկայացված է 3.11.2.4 և 3.11.3.4 ենթակետերում:

### 3.13.2. Կորպորատիվ կառավարման սկզբունքները

Թողարկողը հետևում է իր կազմակերպաիրավական կառուցվածքին համապատասխանող կորպորատիվ կառավարման սկզբունքներին, մասնավորապես՝ ապահովում է արդյունավետ կորպորատիվ կառավարման միջավայր, իր մասնակիցների իրավունքների իրականացումը և հավասար վերաբերմունք վերջիններիս նկատմամբ, ինչպես նաև համագործակցում է վերջիններիս հետ՝ խթանելով հասարակության բարեկեցության մակարդակի աճը:

Ընկերության կառավարման համակարգը մշակված է ՀՀ օրենսդրության շրջանակում և բավարարում է ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին (կանոնագրքին):

Ընկերությունը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- *Թիմային աշխատանք*
- *Պատասխանատվություն*
- *Ազնվություն*
- *Արժանապատվություն*
- *Ուսուցում և զարգացում*
- *Հաճախորդամետ լինելը*

## 3.14. Աշխատակիցները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում աշխատակիցների թվաքանակը հետևյալն է՝

- 31.12.2019թ. դրությամբ՝ 185 հոգի,

- 31.12.2020թ. դրությամբ՝ 272 հոգի,
- 31.12.2021թ. դրությամբ՝ 304 հոգի,
- 31.12.2022թ. դրությամբ՝ 352 հոգի,
- 31.12.2023թ. դրությամբ՝ 358 հոգի:

Ժամանակավոր աշխատողների թիվը էական չի Թողարկողի մոտ:

Թողարկողի աշխատակիցները չունեն թողարկողի բաժնային արժեթղթեր և այդ արժեթղթերի նկատմամբ օպցիոններ:

Ազդագրի ներկայացման պահին աշխատակիցների բաժնետիրացման ընդունված ծրագիր Թողարկողը չունի:

## 3.15. Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք

| Բաժնետերերը | Թողարկողի կանոնադրական կապիտալում քվյարկող բաժնետոմսերի տոկոսը |
|---|---|
| «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» | 56.28% |
| Տիգրան Սարգսյան | 18.00% |
| Արամայիս Բադալյան | 15.00% |
| Տաթևիկ Ավետիսյան | 5.81% |
| Արամ Սարգսյան | 4.91% |

Թողարկողի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ուժով Ընկերությանը հսկող անձն է «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի»: «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» վերջնական վերահսկող անձն է Ռամի Տրեսյտերը :

Թողարկողի բոլոր խոշոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանաչյուրը տալիս է ձայնի միևնույն իրավունքը:

Պայմանագրի ուժով հսկող անձինք առկա չեն:

## 3.16. Փոխկապակցված անձանց հետ գործարքները

Թողարկողը ունի 2023թ.-ի տարեվերջի դրությամբ փոխկապակցված անձանց տրված չմարված ոչ ընթացիկ փոխառություններ 2,099.72 մլն դրամի :

## 3.17. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

### 3.17.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2020-2023թթ. աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հավելված 5-ում:

### 3.17.2. Միջանկյալ Ֆինանսական Տեղեկատվություն

Թողարկողի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ ներկայացված չէ:

### 3.17.3. Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Ազդագրում ներառված 2023թ-ի ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն, որը վերաբերվում է սեփական կապիտալին, մասնավորապես.

- ԹԵԼ-ՍԵԼ ԲԲԸ բաժնետետերի տարեկան ընդհանուր ժողովը 01.04.2024թ. թիվ 010424 արձանագրությամբ որոշում է կայացրել 2023թ. շահույթից 1,419,000,000 ՀՀ դրամի չափով բաշխում կատարել, իսկ հետագայում Ընկերությունը նպատակ ունի կուտակված շահույթի հաշվին համալրել կանոնադրական կապիտալը մինչ 2024 թվականի ավարտ:

### 3.17.4. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Ընկերությունը ներգրավված չէ դատական և (կամ) արբիտրաժային վարույթներում, որոնք կարող են էական ազդել Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 23.01.2024թ. թիվ 1/05 ԾՕՀ-Ա որոշմամբ Ընկերությունն ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 1,500,000 ՀՀ դրամի չափով: Ընկերությունն որոշմամբ սահմանված ժամկետներում իրականացրել է անհրաժեշտ միջոցառումները վարչական պատասխանատվության հիմք հանդիսացած խախտումները վերացնելու և ապագայում նման խախտումները բացառելու համար:

### 3.17.5. Հարկային արտոնությունները

ՀՀ Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը որպես վճարահաշվարկային կազմակերպություն ազատված է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ):

## 3.18. Լրացուցիչ տեղեկատվություն

### 3.18.1. Կանոնադրական կապիտալը

#### 3.18.1.1. Կանոնադրական կապիտալի մեծությունը

Թողարկողի կանոնադրական կապիտալն Ազդագրի գրանցման ներկայացման պահին կազմում է 1,078,000,000 (մեկ միլիարդ յոթանասուն ութ միլիոն) ՀՀ դրամ:

#### 3.18.1.1. Հայտարարված բաժնետոմսերը

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 4,200,000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

#### 3.18.1.2. Թողարկված բաժնետոմսերը

Ընկերության թողարկված և լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը կազմում է 30,800,000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսեր, որոնք լրիվ վճարված բաժնետոմսեր են:

#### 3.18.1.3. Թողարկողին պատկանող՝ թողարկողի թողարկած բաժնետոմսերի քանակը, անվանական և հաշվեկշռային արժեքները

Ազդագրի կազմման պահին Ընկերությունը չունի թողարկած հասարակ բաժնետոմսերի ընդհանուր քանակից իրեն պատկանող բաժնետոմսեր:

### 3.18.2. Կանոնադրությունը

#### 3.18.2.1. Թողարկողի նպատակը

«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է առևտրային կազմակերպություն հանդիսացող օտարերկրյա ներդրմամբ տնտեսական ընկերություն, որի ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Տե'ս Կանոնադրության 1.1 և 2.1 կետերը:

#### 3.18.2.2. Կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները

Ընկերության կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի X-XI գլուխներով և Կանոնադրությամբ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավունքներն ու պարտականությունները.

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում այնպիսի հարցերը, ինչպիսիք են Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը, Ընկերության վերակազմակերպումը, Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և այլ հարցեր:

Կանոնադրության 8.3 կետով սահմանված է այն հարցերի շրջանակը, որոնք չեն կարող փոխանցվել որոշում ընդունելու համար Ընկերության տնօրենների խորհրդին և (կամ) Ընկերության գլխավոր տնօրենին: Տե'ս Կանոնադրության 8.2, 8.6-8.8 կետերը:

Ընկերության տնօրենների խորհրդի իրավունքներն ու պարտականությունները.

- Ընկերության տնօրենների խորհրդի իրավասության շրջանակում են Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռք բերումը Օրենքով նախատեսված դեպքերում, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը և այլն:

Կանոնադրության 8.16 կետով սահմանված է այն տնօրենների խորհրդի իրավասության մեջ մտնող հարցերի շրջանակը, որը կարող է իրականացնել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը: Տե'ս Կանոնադրության 8.15 կետը:

Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի իրավունքներն ու պարտականությունները.

- Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը կազմակերպում է Ընկերության տնօրենների խորհրդի աշխատանքները, նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում և այլն:

Տե'ս Կանոնադրության 8.17 կետը:

Ընկերության գլխավոր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները.

- Ընկերության գլխավոր տնօրենը իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը,
- լուծում է այն բոլոր հարցերը, որոնք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը չեն վերապահվել,
- կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և Ընկերության տնօրենների խորհրդի որոշումների կատարումը,
- ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում և այլն:
  Տե'ս Կանոնադրության 8.18 կետը:

#### 3.18.2.3. Բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները

Ընկերության յուրաքանչյուր **հասարակ** (սովորական) բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները: Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի.

- Մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

- Մասնակցել Ընկերության կառավարմանը,
- Ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- Ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- Ընկերության հիմնադիր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- Հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
- Հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- Օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Տե՛ս Կանոնադրության 6.1 կետը:

**Հասարակ (սովորական)** բաժնետոմսերի սեփականատերերին առնչվող **սահմանափակումները**.

- Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք: Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:
- Հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեսակարար կշիռը Ընկերության կանոնադրական կապիտալում չպետք է պակաս լինի 75 տոկոսից:

Տե՛ս Կանոնադրության 6.5 կետը:

### 3.18.2.4. Բաժնետերերի իրավունքներում փոփոխությունները

Բաժնետերերի իրավունքներում փոփոխություններ կարող են իրականացվել համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ կատարվելու դեպքում:

Բաժնետերերի իրավունքներում փոփոխությունները կատարվում են Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

Կանոնադրության 8.2 կետի համաձայն՝ Ընկերության Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատումը պատկանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը: Կանոնադրության 4.3 կետի համաձայն՝ Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի **ձայների 3/4-ով**, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների **2/3-ից:**

Կանոնադրության 10.1 կետի համաձայն՝ Ընկերության Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատելը տեղի է ունենում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է

ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի **ձայների 3/4-ով**, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ: Ըստ Կանոնադրության 10.2 կետի՝ Ընկերության Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ Կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ Կանոնադրությամբ սահմանված դեպքերում՝ պետական գրանցումն իրականացնող մարմնին ծանուցելու պահից: Սակայն Ընկերությունը և նրա բաժնետերերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումից հետո:

#### 3.18.2.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցությունը

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխած ինչպես հասարակ (սովորական), այնպես էլ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրենց պատկանող լրիվ վճարված սովորական (արտոնյալ) բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, բացառությամբ Ընկերության հիմնադիրների, որոնք Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ավելի, քան Ընկերության պետական գրանցման պահից 1 տարվա ընթացքում, կարող են ձայնի իրավունք ունենալ իրենց անունով տեղաբաշխված բոլոր սովորական (արտոնյալ)՝ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող Ընկերության տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերը պետք է ծանուցվեն Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ: Ծանուցումը պետք է առնվազն պարունակի օրենքով նախատեսված տեղեկությունները: Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը և Ընդհանուր ժողովին վերաբերող տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրումը կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով կամ առձեռն հանձնելով կամ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ինտերնետային կայքով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով), որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին:

Տե'ս Կանոնադրության 8.12 կետը:

#### 3.18.2.6. Բաժնետիրական ընկերությունում մասնակցություն ձեռք բերելիս դրա մասին տեղեկատվության բացահայտումը

Բաժնետիրական ընկերությունում մասնակցություն ձեռք բերելիս դրա մասին տեղեկատվության բացահայտումը կանոնակարգվում է.

- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 153- 157 հոդվածներով, 169 հոդվածով,

- ՀՀ ԿԲ-ի «Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» Կանոնակարգ 4/15-ով,

- ՀՀ ԿԲ-ի «Հաշվետու թողարկողի ղեկավարի, նրա և թողարկողի հետ փոխկապակցված անձանց կողմից իրենց հաշվին՝ թողարկողի բաժնետոմսերով, ածանցյալ գործիքներով կամ այդպիսի ածանցյալների հետ կապված այլ արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկությունների կազմը, հաշվետվությունների ձևը և ներկայացման կարգը» կանոնակարգ 4/16-ով:

#### 3.18.2.7. Կանոնադրությամբ առավել մանրամասն կարգավորված հարցերը

Կանոնադրությամբ առավել մանրամասն կարգավորված է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգմանն առնչվող հարցերի շրջանակը, քան դա սահմանված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Ի թիվս օրենքում նշված հարցերի շրջանակի՝ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իր մեջ ներառում է.

- Ընկերության պահեստի, արխիվի և այլ ծառայողական տարածքների զննում,
- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ՀՀ օրենսդրությանը անհամապատասխանությունների, հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերում աղավաղումների բացահայտում,
- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության օբյեկտիվ և համապարփակ ստուգումն ապահովելու նպատակով իր իրավասությունների սահմաններում այլ անհրաժեշտ գործողությունների իրականացում:

Տե'ս Կանոնադրության 9.1 կետը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 91-92 հոդվածները:

### 3.18.3. Էական պայմանագրերը

Թողարկողը վերջին 2 տարիների ընթացքում չի արձանագրել էական պայմանագրեր հիմնագան գործունեությունից դուրս:

## 3.19. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

## 3.20. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճենը) մշտապես մատչելի են հանրությանը.

1) Ընկերության կանոնադրությունը,

2) 2021, 2022, 2023 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները:

Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները կարող են ձեռք բերվել Ընկերության գտնվելու վայրի հետևյալ հասցեից՝ ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ: Դրանք հրապարակված են նաև www.telcell.am կայքում:

## 3.21. Մասնակցություն այլ անձանց կապիտալում

Թողարկողն ունի ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասնակցություն հետևյալ ընկերություններում՝ «ԹԵԼ-ՍԵԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ, «ԹԵԼ-ՍԵԼ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ, «Մեգա Պանտերա» ՍՊԸ:

# Բաժին 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (իրավաբանական անձանց համար)

**«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ Ընկերության թողարկած սովորական բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև**
(իրավաբանական անձանց համար)

**Order-application form for ordinary shares issued by Tel-Cell OJSC**
(for legal entities)

| | |
|---|---|
| **Թողարկող**<br>**Issuer** | |
| **Թողարկման արժույթը**<br>**Currency of denomination** | |
| **Թողարկվող բաժնետոմսերի ընդհանուր քանակը**<br>**Total number of issued shares** | |
| **Թողարկվող բաժնետոմսերի ԱՄՏԾ**<br>**ISIN of issued shares** | |
| **Մեկ բաժնետոմսի ձեռքբերման գինը**<br>**Price per unit** | |
| **Ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը**<br>**Number of purchasing shares** | |
| **Գործարքի ծավալը**<br>**Transaction volume** | |

**Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ**
**Investor Information**

| | |
|---|---|
| **Իրավաբանական անձի անվանումը**<br>**Company name** | |
| **Գրանցման տվյալներ**<br>**Registration details** | |
| **Իրավաբանական հասցեն**<br>**Legal address** | |
| **ՀՎՀՀ**<br>**Tax Code** | |

| | |
|---|---|
| **Կապի միջոցները (հեռ., Էլ. փոստ)**<br>**Contact details (tel., e-mail)** | |
| **Արժեթղթերի հաշվի տվյալները**<br>**Securities account details** | |
| **Բանկային տվյալները**<br>**Bank details** | |
| **Իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն ազգանունը, պաշտոնը**<br>**Full name, position of the authorized person of legal entities** | |

| անուն ազգանուն / full name | օր, ամիս, տարեթիվ / day, month, year | ստորագրություն / signature |
|---|---|---|

## Լրացվում է տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից
## For use by the authorized employee of the underwriter

**Հայտի ստացման ամսաթիվ**
**Receive date**

| օր, ամիս, տարեթիվ / day, month, year | ժամ, րոպե / hour, minute |
|---|---|

**Վճարման ամսաթիվ**
**Payment date**

| օր, ամիս, տարեթիվ / day, month, year |
|---|

**Լիազորված աշխատակից**
**Authorized employee**

| անուն ազգանուն / full name | ստորագրություն / signature |
|---|---|

Սույնով, հավաստում եմ, որ ձեռքբերման հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետոմսերի հրապարակային առաջարկի ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ բաժնետոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

We hereby acknowledge that before submitting this subscription order we have reviewed the Prospectus of the public offering of stocks of Tel-Cell OJSC, which forms an integral part of this order. We hereby accept and agree to the terms and conditions thereof and assume the responsibilities and possible risks of investing in these stocks.

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են բաժնետոմսերի գնման նպատակով ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու հետ:

We confirm that the funds transferred for the purposes of buying the stocks have been acquired in a lawful manner and are in no way linked to terrorism financing, drug trafficking, human trafficking, and tax evasion.

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ թողարկած բաժնետոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ: /

We agree that in case this order is satisfied, it shall constitute a properly executed and valid contract between us and Tel-Cell OJSC on our acquisition (purchase) of stocks issued by Tel-Cell OJSC.

## ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

**«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ Ընկերության թողարկած սովորական բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև**

(ֆիզիկական անձանց համար)

| | |
|---|---|
| **Թողարկող**<br>**Issuer** | |
| **Թողարկման արժույթը**<br>**Currency of denomination** | |
| **Թողարկվող բաժնետոմսերի ընդհանուր քանակը**<br>**Total number of issued shares** | |
| **Թողարկվող բաժնետոմսերի ԱՄՏԾ**<br>**ISIN of issued shares** | |
| **Մեկ բաժնետոմսի ձեռքբերման գինը**<br>**Price per unit** | |
| **Ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը**<br>**Number of purchasing shares** | |
| **Գործարքի ծավալը**<br>**Transaction volume** | |

**Order-application form for ordinary shares issued by Tel-Cell OJSC**

(for individuals)

**Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ**
**Investor Information**

| | |
|---|---|
| **Անուն, ազգանուն**<br>**Full name** | |
| **Անձնագրի տվյալներ**<br>**Passport details** | |
| **Բնակության հասցեն**<br>**Residence address** | |
| **Կապի միջոցները (հեռ., Էլ. փոստ)**<br>**Contact details (tel., e-mail)** | |

| **Արժեթղթերի հաշվի տվյալները**<br>**Securities account details** | |
|---|---|
| **Բանկային տվյալները**<br>**Bank details** | **Անվանումը՝**<br>**Name:**<br>**Հաշվի համարը՝**<br>**Acc. number:** |

| անուն ազգանուն / full name | օր, ամիս, տարեթիվ /day, month, year | ստորագրություն / signature |
|---|---|---|

**Լրացվում է տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից**
**For use by the authorized employee of the underwriter**

| | | |
|---|---|---|
| **Հայտի ստացման ամսաթիվ**<br>**Receive date** | օր, ամիս, տարեթիվ / day, month, year | ժամ, րոպե / hour, minute |
| **Վճարման ամսաթիվ**<br>**Payment date** | օր, ամիս, տարեթիվ / day, month, year | |
| **Լիազորված աշխատակից**<br>**Authorized employee** | անուն ազգանուն / full name | ստորագրություն / signature |

Սույնով, հավաստում եմ, որ ձեռքբերման հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետոմսերի հրապարակային առաջարկի ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ բաժնետոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

We hereby acknowledge that before submitting this subscription order we have reviewed the Prospectus of the public offering of stocks of Tel-Cell OJSC, which forms an integral part of this order. We hereby accept and agree to the terms and conditions thereof and assume the responsibilities and possible risks of investing in these stocks.

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են բաժնետոմսերի գնման նպատակով ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու հետ: /

We confirm that the funds transferred for the purposes of buying the stocks have been acquired in a lawful manner and are in no way linked to terrorism financing, drug trafficking, human trafficking, and tax evasion.

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ թողարկած բաժնետոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ: /

We agree that in case this order is satisfied, it shall constitute a properly executed and valid contract between us and Tel-Cell OJSC on our acquisition (purchase) of stocks issued by Tel-Cell OJSC.

## ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը):

# ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը



## ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

## «Թել-Մել» փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2023թ.



# Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 10 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 12 |

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

**Grant Thornton CJSC**
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Թել-Սել» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թել-Սել» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

*Կարծիքի հիմքը*

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր Եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Grant Thornton

*Այլ հանգամանքներ*

Խմբի 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա համախմբած ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2023թ. հունիսի 30-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

Grant Thornton

Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նաիրա Ուլունց
Առաջադրանքի ղեկավար

28 հունիսի, 2024թ.

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 1,036,917 | 900,124 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 476,470 | 501,912 |
| Գուդվիլ | 6 | 1,157,700 | 1,157,700 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 7 | 264,285 | 294,348 |
| Կանխավճարներ | | 139,518 | 50,182 |
| Տրամադրված փոխառություններ | 10 | 205,785 | 205,000 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 8 | 63,880 | 62,177 |
| | | 3,344,555 | 3,171,443 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 9 | 272,969 | 148,000 |
| Տրամադրված փոխառություններ | 10 | 38,159 | 43,383 |
| Ավանդներ բանկերում | 11 | 155,359 | 155,359 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 12 | 1,129,471 | 981,614 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | | 1,555 | 1,555 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 | 7,902,100 | 5,508,989 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 13 | 5,959,251 | 5,716,791 |
| | | 15,458,864 | 12,555,691 |
| Ընդամենն ակտիվներ | | 18,803,419 | 15,727,134 |

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

| Հազար դրամ | Ծանոթ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Սեփական կապիտալ և պարտավորություններ | | | |
| *Կապիտալ և պահուստներ* | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 14 | 1,078,000 | 231,000 |
| Պահուստային կապիտալ | | 161,700 | 46,200 |
| Չբաշխված շահույթ | | 2,416,860 | 4,073,198 |
| Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ | | 3,656,560 | 4,350,398 |
| Չվերահսկվող բաժնեմաս | | 11,889 | 11,889 |
| Ընդամենը սեփական կապիտալ | | 3,668,449 | 4,362,287 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 15 | 2,099,720 | 1,326,704 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 16 | 205,866 | 262,757 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 17 | 82,068 | 186,152 |
| | | 2,387,654 | 1,775,613 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարձակալության գծով պարտավորություն | 16 | 73,281 | 65,374 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 17 | 12,384,382 | 8,839,844 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 289,653 | 684,016 |
| | | 12,747,316 | 9,589,234 |
| Ընդամենը պարտավորություններ | | 15,134,970 | 11,364,847 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 18,803,419 | 15,727,134 |

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 28 հունիսի, 2024թ.

Արտյոմ Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Արթուր Թորոսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված նշ նաև նոտաթղթությունների հետ միասին:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ | 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 18 | 9,846,861 | 12,711,421 |
| Գործակալներին վճարված միջնորդավճարներ | | (3,124,954) | (4,378,737) |
| Այլ Եկամուտ | 19 | 1,086,342 | 1,353,764 |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (2,193,961) | (2,063,231) |
| Վարձակալության գծով ծախսեր | 16 | (615,985) | (477,655) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 4,5,7 | (458,299) | (417,978) |
| Թույլտվության վճարներ | | (228,340) | (228,790) |
| Ինկասացիոն ծառայություններ | | (261,408) | (241,492) |
| Գովազդի և մարքեթինգի ծախսեր | | (452,375) | (350,160) |
| Աջակցման և սպասարկման ծախսեր | | (112,450) | (97,570) |
| Բանկային ծառայությունների վճարներ | | (686,925) | (436,563) |
| Պարտքային կորուստների գծով (ծախս) /ծախսի հակադարձում | 12,13 | 12,168 | (38,164) |
| Այլ ծախսեր | 20 | (635,140) | (611,463) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | | 2,175,534 | 4,723,382 |
| Ֆինանսական եկամուտ | 21 | 308,839 | 392,804 |
| Ֆինանսական ծախսեր | 21 | (128,801) | (615,980) |
| Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս) | | 180,038 | (223,176) |
| Շահույթ մինչև հարկերը | | 2,355,572 | 4,500,206 |
| Շահութահարկի գծով ծախս | 22 | (504,831) | (984,556) |
| Տարվա շահույթ | | 1,850,741 | 3,515,650 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք վերագրելի՝ | | 1,850,741 | 3,515,650 |
| Ընկերության սեփականատերերին | | 1,850,741 | 3,515,650 |
| Չվերահսկող բաժնեմասին | | - | - |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | Ընկերության սեփականատերերին վերագրելի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բաժնետիրական կապիտալ | Պահուստային կապիտալ | Չբաշխված շահույթ | Ընդամենը | Չվերահսկող բաժնեմաս | Ընդամենը սեփական կապիտալ |
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 220,000 | 35,000 | 2,568,748 | 2,823,748 | 11,889 | 2,835,637 |
| Տարվա շահույթ | - | - | 3,515,650 | 3,515,650 | - | 3,515,650 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | 3,515,650 | 3,515,650 | - | 3,515,650 |
| Սովորական բաժնետոմսերի թողարկում | 11,000 | - | - | 11,000 | - | 11,000 |
| Շահաբաժիններ | - | - | (2,000,000) | (2,000,000) | - | (2,000,000) |
| Հատկացում պահուստին | - | 11,200 | (11,200) | - | - | - |
| Գործարքներ սեփականատերերի հետ | 11,000 | 11,200 | (2,011,200) | (1,989,000) | - | (1,989,000) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 231,000 | 46,200 | 4,073,198 | 4,350,398 | 11,889 | 4,362,287 |
| Տարվա շահույթ | - | - | 1,850,741 | 1,850,741 | - | 1,850,741 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | 1,850,741 | 1,850,741 | - | 1,850,741 |
| Սովորական բաժնետոմսերի թողարկում | 847,000 | - | - | 847,000 | - | 847,000 |
| Շահաբաժիններ | - | - | (3,391,579) | (3,391,579) | - | (3,391,579) |
| Հատկացում պահուստին | - | 115,500 | (115,500) | - | - | - |
| Գործարքներ սեփականատերերի հետ | 847,000 | 115,500 | (3,507,079) | (2,544,579) | - | (2,544,579) |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,078,000 | 161,700 | 2,416,860 | 3,656,560 | 11,889 | 3,668,449 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Ստացված միջնորդավճարներ | 9,146,424 | 12,474,798 |
| Վճարված միջնորդավճարներ | (3,001,723) | (4,242,196) |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | 1,026,154 | 1,213,945 |
| Մուտքեր մատուցված այլ ծառայություններից | 443,004 | 291,386 |
| Ստացված այլ եկամուտ | 50,163 | 69,945 |
| Վճարումներ աշխատակիցներին | (2,176,903) | (1,962,738) |
| Վճարված այլ ծախսեր | (2,977,458) | (2,420,413) |
| Ստացված տոկոսներ | 308,839 | 392,802 |
| *Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները* | 2,818,500 | 5,817,529 |
| *(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում* | | |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | (242,460) | (4,450,853) |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | 186,875 | (33,890) |
| Պաշարների փոփոխություն | (124,969) | (7,097) |
| Կանխավճարների փոփոխություն | (89,336) | (36,182) |
| *Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում* | | |
| Օպերատորներին վճարվելիք գումարներ | 3,189,652 | (1,972,946) |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | (40,993) | (111,293) |
| Այլ պարտավորություններ | 177,817 | 93,602 |
| Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը | 5,875,086 | (701,130) |
| Շահութահարկի վճարում | (900,897) | (719,761) |
| Վճարված տոկոսներ | (25,231) | (85,682) |
| Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ | 4,948,958 | (1,506,573) |

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից | 1,485 | 5,715 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (541,072) | (542,276) |
| Ավանդի տեղաբաշխում | (162,000) | (150,000) |
| Ավանդի էլքագրում | 162,000 | 150,809 |
| Տրամադրված փոխառություններ | (83,563) | (142,000) |
| Տրամադրված փոխառությունների մարում | 88,002 | 116,333 |
| Ներդրումային գործունեությունից գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ | (535,148) | (561,419) |
| *Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| Վարկերի և փոխառությունների մարում | (2,618,563) | (1,222,503) |
| Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ | (97,509) | (55,576) |
| Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից | 847,000 | 11,000 |
| Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ | (1,869,072) | (1,267,079) |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում) | 2,544,738 | (3,335,071) |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում | 5,508,989 | 9,283,107 |
| Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա | (76,338) | - |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (75,289) | (439,047) |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում (Ծանոթ. 13) | 7,902,100 | 5,508,989 |

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Թել-Սել» ՓԲԸ-ն («Ընկերություն») և վերջինիս դուստր ընկերությունները («Խումբ») փակ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ են՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: 2024թ. ապրիլ ամսին Ընկերությունը վերագրանցվել է որպես բաց բաժնետիրական ընկերություն: Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն 2007թ-ին: 2007թ. հուլիսի 24-ին Ընկերությունը ստացել է դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա թիվ 5 գրանցման վկայականով ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից և ունի էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- դրամական (փողային) փոխանցումներ իրականացում,
- վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացում:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Հակոբ Հակոբյան փող. 3 (հիմնական մասնաշենքի 1-ին սեկցիա, 3-րդ շենք):

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում 12 մասնաճյուղերի (2022թ.-ին՝ 13) և ավելի քան 4400 վճարային տերմինալների միջոցով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 358 (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 352):

*Գործարար միջավայր*

Խումբն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը ենթակա են տարբեր մեկնաբանությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին: Հայաստանի տնտեսության կայունությունն ու զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը վերահաստատել է իր հավատարմությունը լավ կառավարման սկզբունքներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, թափանցիկության և հաշվետվողականության:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել 2020թ. Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր

տնտեսության վրա: 2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի նշանակալի առևտրային գործընկեր է, ուստի Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, ինչպես նաև այդ պատժամիջոցների ուժգնացումը էական ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսության և ֆինանսական շուկայի վրա:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Այդ հանգամանքը նպաստել է հայկական շուկա արտարժույթի ներհոսքի աճին, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր առմամբ գրանցվել է երկնիշ աճ: Խմբի ղեկավարությունը հետևում է տնտեսական ընթացիկ իրավիճակը: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է այն ունենալ Խմբի գործունեության վրա, քանի որ ընդհանուր տնտեսության վրա դրա ազդեցության աստիճանի վերաբերյալ առկա է անորոշություն:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

### 2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով կամ իրական արժեքով:

## 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

**Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

| Ստանդարտ | Ստանդարտի կամ մեկնաբանության անունը | |
|---|---|---|
| *ՖՀՄՍ 17* | *Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)* | *1 հունվարի 2023թ.* |
| *ՀՀՄՍ 12* | *Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)* | *1 հունվարի 2023թ.* |
| *ՖՀՄՍ 17* | *ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)* | *1 հունվարի 2023թ.* |

| | | |
|---|---|---|
| *ՀՀՄՍ 8* | *Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում(ՀՀՄՍ 8 փոփոխություններ)* | *1 հունվարի 2023թ.* |
| *ՀՀՄՍ 1* | *Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)* | *1 հունվարի 2023թ.* |
| *ՀՀՄՍ 12* | Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն) | *1 հունվարի 2023թ* |
| *ՖՀՄՍ ՓՄՁ-ների համար* | Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար) | *1 հունվարի 2023թ* |

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

| **Ստանդարտ** | **Ստանդարտի կամ մեկնաբանության անունը** | **Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի** |
|---|---|---|
| *ՀՀՄՍ 1* | *Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)* | *1 հունվարի 2024թ.* |
| *ՖՀՄՍ 16* | *Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)* | *1 հունվարի 2024թ.* |
| *ՀՀՄՍ 1* | *Ոչ ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)* | *1 հունվարի 2024թ.* |
| *ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7* | *Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)* | *1 հունվարի 2024թ.* |
| *ՀՀՄՍ 21* | *Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)* | *1 հունվարի 2025թ.* |

## 2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

| | Մասնա-բաժին % | Գրանցման երկիր | Գրանցման ամսաթիվ | Գործունեության ոլորտ | Ձեռք-բերման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|
| «Թել-Սել Լոգիստիկս» ՍՊԸ | 100 | Հայաստանի Հանրապետություն | 13.06.2023 | Ընկերության հիմնական գործունեությունը փոխադրման ծառայությունների մատուցումն է: | 13.06.2023 |
| «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ | 100 | Հայաստանի Հանրապետություն | 29.08.2007 | Ընկերության հիմնական գործունեությունը գովազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն է: | 06.12.2012 |
| «Մեգա Պաներա» ՍՊԸ | 50 | Հայաստանի Հանրապետություն | 30.01.2007 | Ընկերության գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից: | 27.12.2011 |

2023թ մայիսի 26-ին տեղի ունեցած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ հիմնադրվել է «Թել-Սել Լոգիստիկս» անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի նպատակը տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է: Միաժամանակ, հաստատվել է «Թել-Սել Լոգիստիկս» ՍՊԸ-ի կանոնադրությունը և սահմանվել է կանոնադրական կապիտալի չափը՝ 100,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 100 բաժնեմասերի՝ յուրաքանչյուրը 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

# 3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

## 3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

## 3.2 Բիզնեսի միավորումներ

Բիզնես միավորումների հաշվառման ժամանակ Խումբը կիրառում է գնման մեթոդը: Դուստր ընկերության նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու համար փոխանցված հատուցումը հաշվառվում է որպես փոխանցված ակտիվների, առաջացած պարտավորությունների և Խմբի թողարկած սեփական կապիտալի բաժնեմասերի՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքների հանրագումար, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող ցանկացած ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռք բերման ծախսերը ծախսագրվում են տեղի ունենալուն զուգընթաց:

Ձեռք բերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով:

## 3.3 Արտարժույթ

*Արտարժույթով գործարքներ*

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

| | 2023թ. դեկտեմբերի 31 | 2022թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 404.79 | 393.57 |
| ՀՀ դրամ/1 Եվրո | 447.90 | 420.06 |
| ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ | 4.50 | 5.59 |

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում օգուտի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

## 3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և

ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Համակարգչային տեխնիկա | 1 տարի |
| Սարքավորումներ և տերմինալներ | 8 տարի |
| Փոխադրամիջոցներ | 8 տարի |
| Գրասենյակային գույք | 8 տարի |
| Այլ հիմնական միջոցներ | 8 տարի |
| Կապիտալ ներդրումներ վարձակալած հիմնական միջոցներում (անշարժ գույք) | 20 տարի |

## 3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի և 1 տարի լիցենզիաների համար:

## 3.6 Գուդվիլ

Գուդվիլը, որն առաջանում է դուստր կազմակերպությունների ձեռքբերման արդյունքում, չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ. եթե ինչ-որ իրադարձություն կամ հանգամանքի փոփոխություն վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, պարզելու համար, թե արդյոք գոյություն

ունի որևէ հայտանիշ ըստ որի արժեզրկումից կորուստը նվազել է կամ այլևս գոյություն չունի: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այնքանով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

## 3.7 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

## 3.8 Վարձակալված ակտիվներ

*Խումբը որպես վարձակալ*

Խումբը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի համար: Վարձակալական պայմանագրերը սովորաբար կնքվում են 1-ից 5 տարի ժամկետով, և բոլորն ունեն երկարաձգման ժամկետներ:

Խումբը չի կնքում վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր: Բոլոր վարձակալության պայմանագրերը կնքվում են անհատական հիմունքներով:

Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

*Վարձակալության ճանաչումը և չափումը*

*Խումբը որպես վարձակալ*

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը իր ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Խմբի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապամոնտաժման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Խումբը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Խումբը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

## 3.9 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

## 3.10 Ֆինանսական գործիքներ

*Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է պարտքային կորուստների ծծով ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 25.2-ում:

*Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

*Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով):

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղչման ազդեցությունն աննշան է, գեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումն այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

*Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ*

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվներն օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևավորում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 26-ում:

*Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին և սեփական տերմինալներում:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպա-տակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 25.2-ում:

*Վարկեր և փոխառություններ*

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող

փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

*Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

*Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ*

Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով:

## 3.11 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

*Բաժնետիրական կապիտալ*

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

*Պահուստային կապիտալ*

Պահուստային կապիտալը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների` ընդհանուր պարտքային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս, քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

*Չբաշխված շահույթ*

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

*Շահաբաժիններ*

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով հասարակ բաժնետոմսերի գծով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

## 3.12 Չվերահսկող բաժնեմաս

Չվերահսկող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Դուստր կազմակերպությունում Խմբի բաժնեմասի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում հսկողության կորստի, հաշվառվում են որպես բաժնային գործառնություններ:

## 3.13 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

## 3.14 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի

մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կրնան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

## 3.15 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

*Վճարովի բացակայություններ*

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

*Պարգևավճարներ*

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

## 3.16 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում ծառայություն մատուցողների («Օպերատորների») անունից վերջնական օգտագործողներից վճարումների ընդունման ծառայություններից և մատուցված այլ վճարահաշվարկային ծառայություններից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություններ վճարահաշվարկային գործառնությունների գծով (տե՛ս ծանոթագրություն 17): Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

| Ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչում ՖՀՄՍ 15 համաձայն |
|---|---|---|
| Վճարումների ընդունման, դրամական փոխանցումների ծառայություններ | Վճարումների ընդունման և դրամական փոխանցումների ծառայությունների գծով կատարման պարտականությունները կատարվում են, երբ Ընկերությունն ընդունում է վճարումներ Օպերատորների վերջնական հաճախորդներից, ընդունում է փոխանցումների հայտերը և փոխանցում է դրամական միջոցները: Վճարումների ընդունման, կամ դրամական փոխանցումների ծառայությունների ակտերը ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Վճարումների ընդունման, դրամական փոխանցումների ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցման ժամանակ: Կատարման պարտականության կատարման առաջընթացի չափումը հիմնված է ընդունված վճարումների, դրամական փոխանցումների ծավալի վրա: |
| Սպասարկման և գովազդի ծառայություններ | Սպասարկման և գովազդի ծառայությունների հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Սպասարկման ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող հաստատուն ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցման ժամանակ՝ անցած ժամանակահատվածը կիրառելով որպես կատարման պարտականության կատարման առաջընթացի չափման միավոր: |

## 4 Հիմնական միջոցներ

| Հազար դրամ | Համակարգչային տեխնիկա, սարքավորում ներ և տերմինալներ | Տրանսպորտային միջոցներ | Գրասենյակային սարքավորումներ | Այլ հիմնական միջոցներ | Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | | |
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 1,403,771 | 31,793 | 120,146 | 19,620 | 224,477 | 1,799,807 |
| Ավելացում | 207,699 | 3,306 | 34,773 | 474 | 23,073 | 269,325 |
| Օտարում | (46,898) | (452) | (12,058) | (2,448) | - | (61,856) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,564,572 | 34,647 | 142,861 | 17,646 | 247,550 | 2,007,276 |
| Ավելացում | 251,413 | 4,593 | 20,332 | 3,394 | 54,295 | 334,027 |
| Օտարում | (6,895) | - | (4,273) | (60) | - | (11,228) |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,809,090 | 39,240 | 158,920 | 20,980 | 301,845 | 2,330,075 |

| Հազար դրամ | Համակարգչային տեխնիկա, սարքավորումներ և տերմինալներ | Տրանսպորտային միջոցներ | Գրասենյակային սարքավորումներ | Այլ հիմնական միջոցներ | Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| *Կուտակված մաշվածություն* | | | | | | |
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 836,548 | 13,235 | 70,087 | 13,902 | 36,646 | 970,418 |
| Տարվա հաշվարկ | 145,623 | 4,353 | 11,886 | 901 | 19,507 | 182,270 |
| Օտարում | (30,698) | (452) | (11,938) | (2,448) | - | (45,536) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 951,473 | 17,136 | 70,035 | 12,355 | 56,153 | 1,107,152 |
| Տարվա հաշվարկ | 149,895 | 5,679 | 15,004 | 2,642 | 22,529 | 195,749 |
| Օտարում | (6,089) | - | (3,594) | (60) | - | (9,743) |
| Վերադասակարգում | 75 | (75) | - | - | - | - |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,095,354 | 22,740 | 81,445 | 14,937 | 78,682 | 1,293,158 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | | |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 613,099 | 17,511 | 72,826 | 5,291 | 191,397 | 900,124 |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 713,736 | 16,500 | 77,475 | 6,043 | 223,163 | 1,036,917 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 485,669 հազար դրամ (2022թ.՝ 349,813 հազար դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 188,291 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի 332 հատ սարքավորումները (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 195,417 հազար դրամ) գրավադրված են 1 բանկից ստացված երաշխիքի դիմաց, որը ենթակա է մարման մինչև 30.09.2024թ. (ծանոթագրություն 17):

## 5 Ոչ նյութական ակտիվներ

| Հազար դրամ | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ | Տերմինալի տեղադրման թույլտվություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | |
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 280,282 | 33,073 | 375,000 | 688,355 |
| Ավելացում | 230,377 | 1,890 | - | 232,267 |
| Օտարում | (96) | - | - | (96) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 510,563 | 34,963 | 375,000 | 920,526 |
| Ավելացում | 129,871 | 34,228 | - | 164,099 |
| Վերադասակարգում | (7,889) | 7,889 | - | - |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 632,545 | 77,080 | 375,000 | 1,084,625 |
| *Կուտակված ամորտիզացիա* | | | | |
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 104,621 | 18,004 | 125,000 | 247,625 |
| Տարվա հաշվարկ | 44,084 | 1,905 | 125,000 | 170,989 |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 148,705 | 19,909 | 250,000 | 418,614 |
| Տարվա հաշվարկ | 60,621 | 3,920 | 125,000 | 189,541 |
| Վերադասակարգում | (1,976) | 1,976 | - | - |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 207,350 | 25,805 | 375,000 | 608,155 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 361,858 | 15,054 | 125,000 | 501,912 |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 425,195 | 51,275 | - | 476,470 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 89,929 հազար դրամ (2022թ.՝74,774 հազար դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

## 6 Գուդվիլ

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 1,077,950 | 1,077,950 |
| «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 79,750 | 79,750 |
| | 1,157,700 | 1,157,700 |

*Գուդվիլ պարունակող դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգում*

Արժեզրկման ստուգման նպատակով գուդվիլը բաշխվում է Խմբի ընդհանուր գործառնություններին: Խումբը չունի ավելի փոքր դրամաստեղծ միավոր, որի միջոցով հնարավոր կլիներ վերահսկել գուդվիլը ներքին կառավարչական նպատակների համար:

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը հիմնված է վերջինիս օգտագործման արժեքի վրա, որը որոշվել է գեղչելով Խմբի շարունակվող գործառնություններից առաջացող ապագա դրամական հոսքերը: Որոշվել է, որ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը գերազանցում է վերջինիս հաշվեկշռային արժեքից և արժեզրկումից կորուստ չի ճանաչվել:

*Ջեղչված դրամական հոսքերի կանխատեսումների համար կիրառված հիմնական ենթադրություններ*

Օգտագործման արժեքը որոշելու համար կիրառված հիմնական ենթադրություններն են գեղչման դրույքը և նախքան տոկոսների վճարումը, հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի մասհանումները շահույթի (EBITDA) մարժաները:

*Հյուջեով նախատեսված EBITDA*

EBITDA-ի մարժայի կանխատեսվող մակարդակները կանխատեսման հորիզոնի համար համապատասխանում էին պատմական մեծություններին: Հաշվի առնելով գործունեության դինամիկան և ոլորտի առանձնահատկությունները՝ EBITDA մարժայի աճի տեմպն կանխատեսման առաջին ժամանակաշրջանում հիմնավորվում է անցյալ ժամանակաշրջանների մակարդակներով և Ընկերության 2024թ. բյուջեով՝ հետագա աճով, որը համապատասխանում է ԱՄՀ-ի ՀՀ գնաճի կանխատեսման վերլուծության ամսաթվի դրությամբ հետագա տարիների՝ 2025-2028թթ. համար:

*Զգայունությունը ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ*

Ջեղչման դրույքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունը չի հանգեցնի արժեզրկման:

## 7 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

| Հազար դրամ | Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | |
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 427,022 | 427,022 |
| Ավելացում | 14,235 | 14,235 |
| Վերաչափում | 63,713 | 63,713 |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 504,970 | 504,970 |
| Ավելացում | 19,548 | 19,548 |
| Վերաչափում | 23,398 | 23,398 |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 547,916 | 547,916 |
| | | |
| *Կուտակված մաշվածություն* | | |
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 145,903 | 145,903 |
| Տարվա հաշվարկ | 64,719 | 64,719 |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 210,622 | 210,622 |
| Տարվա հաշվարկ | 73,009 | 73,009 |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 283,631 | 283,631 |
| | | |
| *Հաշվեկշռային արժեք* | | |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 294,348 | 294,348 |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 264,285 | 264,285 |

## 8 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 62,177 | 54,735 |
| Շահույթում ճանաչված փոխհատուցում (տե՛ս ծանոթագրություն 22) | 1,703 | 7,442 |
| Տարեվերջի մնացորդ | 63,880 | 62,177 |

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 01 հունվարի 2023թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | 31 դեկտեմբերի 2023թ. | |
|---|---|---|---|---|
| | Զուտ մնացորդ | | Զուտ մնացորդ | Հետաձգված հարկային ակտիվ |
| Հիմնական միջոցներ | 5,755 | (185) | 5,570 | 5,570 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 10,201 | 123 | 10,324 | 10,324 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 1,816 | 1,816 | 1,816 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 40,140 | 1,246 | 41,386 | 41,386 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 6,081 | (3,406) | 2,675 | 2,675 |
| Փոխանցվող հարկային վնաս | - | 2,109 | 2,109 | 2,109 |
| Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ | 62,177 | 1,703 | 63,880 | 63,880 |

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 01 հունվարի 2022թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | 31 դեկտեմբերի 2022թ. | |
|---|---|---|---|---|
| | Զուտ մնացորդ | | Զուտ մնացորդ | Հետաձգված հարկային ակտիվ |
| Հիմնական միջոցներ | 11,724 | (5,969) | 5,755 | 5,755 |
| Տրամադրված փոխառություններ | 2,869 | (2,869) | - | - |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 14,288 | (4,087) | 10,201 | 10,201 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 21,780 | 18,360 | 40,140 | 40,140 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 4,074 | 2,007 | 6,081 | 6,081 |
| Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ | 54,735 | 7,442 | 62,177 | 62,177 |

## 9 Պաշարներ

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Պահեստամասեր | 108,960 | 94,764 |
| Վավերացնող սարքավորումներ | 71,458 | - |
| Այլ | 92,551 | 53,236 |
| | 272,969 | 148,000 |

## 10 Տրամադրված փոխառություններ

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | |
| ՀՀ վարկային կազմակերպություններին տրված փոխառություններ | 200,000 | 200,000 |
| Երրորդ կողմերին տրված փոխառություններ | 5,785 | 5,000 |
| | 205,785 | 205,000 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | |
| Երրորդ կողմերին տրված փոխառություններ | 37,159 | 38,483 |
| Կապակցված կողմերին տրված փոխառություններ | 1,000 | 4,900 |
| | 38,159 | 43,383 |
| | 243,944 | 248,383 |

Տրամդրված փոխառությունների մի մասը անտոկոս են։ Փոխառությունները զեղչվել են շուկայական տոկոսադրույքներով, որի արդյունքում իրական արժեքը ներկայացված է 27 ծանոթագրությունում, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված փոխառությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին։

Տրամդրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում։

## 11 Ավանդներ բանկերում

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ավանդ բանկում | 155,359 | 155,359 |
| | 155,359 | 155,359 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավանդը ներդրված է մեկ բանկում (2022թ.՝ մեկ բանկում) և ենթակա են մարման 21.07.2024թ., սակայն Ընկերությունն ըստ ավանդային պայմանագրերի իրավունք ունի ժամկետի ավարտից շուտ ետ ստանալ ավանդը՝ բանկին համապատասխան դիմում ներկայացնելու և ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսները 0% տոկոսադրույքով վերահաշվարկվելու պայմանով:

Ավանդները ներդրված են ՀՀ դրամով (2022թ.՝ ՀՀ դրամով):

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամով ներդրված ավանդների անվանական տոկոսադրույքը կազմում է 8% (2022թ. 8%):

Բանկերում ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

## 12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| *Հազար դրամ* | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | |
| Ստացվելիք միջնորդավճարներ | 258,510 | 505,116 |
| Դրամական փոխանցումների գծով ստացվելիք գումարներ | 433,275 | 111,563 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր այլ ծառայությունների գծով | 255,728 | 174,594 |
| *Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ* | (57,355) | (53,909) |
| | 890,158 | 737,364 |
| *Ոչ ֆինանսական ակտիվներ* | | |
| Տրված կանխավճարներ | 236,715 | 241,074 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 2,598 | 3,176 |
| | 239,313 | 244,250 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,129,471 | 981,614 |

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

| | 2023թ. 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ | 2022թ. 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ |
|---|---|---|
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ | 53,909 | 68,956 |
| Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում | (88,506) | 38,164 |
| Տարվա ընթացքում դեբիտորական պարտքերի վերականգնում/ (դուրսգրում) | 91,952 | (53,211) |
| Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ | 57,355 | 53,909 |

26 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Արժեզրկման պահուստի ընթացիկ և համադրելի գումարները հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

Տե՛ս ծանոթագրություն 26 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

## 13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ

Հազար դրամ

| | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Բանկային հաշիվների մնացորդներ | 1,157,420 | 1,082,527 |
| Դրամական միջոցները տերմինալներում | 2,267,474 | 1,924,329 |
| Դրամական միջոցները դրամարկղում | 3,062,505 | 1,630,899 |
| Դրամական միջոցները ճանապարհին | 1,418,516 | 871,234 |
| *Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ* | (3,815) | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7,902,100 | 5,508,989 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 5,965,525 | 5,716,791 |
| *Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ* | (6,274) | - |
| | 5,959,251 | 5,716,791 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 13,861,351 | 11,225,780 |

Օգտագործման սահմանափակումով հաշիվներն իրենցից ներկայացնում են բանկերում պահվող հատուկ հաշիվներ: Ցանկացած պահի այս հաշիվների մնացորդները չպետք է պակաս լինի նախորդ օրվա ընդունված վճարումների ընդհանուր գումարից: Այս հաշիվների

մնացորդները կարող են օգտագործվել միայն առևտրային կրեդիտորական պարտքերի վճարումների ընդունման ծառայությունների շրջանակում վճարումներ կատարելու համար (Ծանոթագրություն 17):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

*Հազար դրամ*

| | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| | 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ | 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ |
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ | - | - |
| Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում | 76,338 | - |
| Զուտ դուրսգրում տարվա ընթացքում | (66,249) | - |
| Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ | 10,089 | - |

26 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Վերը ներկայացված արժեզրկման պահուստի համեմատական գումարը հաշվարկված է ՖՀՄՍ 9-ի ակնկալվող կորուստների մոդելի հիման վրա:

Դրամական միջոցները ճանապարհին իրենցից ներկայացնում են Ընկերության աշխատակից ինկասատորների, այլ ինկասացիոն կազմակերպությունների և գործակալների կողմից տերմինալներից և Ընկերության մասնաճյուղերից ինկասացված և բանկային հաշիվներին մուտքագրված, սակայն բանկերի կողմից դեռևս չհաշվառված գումարները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդների արտարժութային և պարտքային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

## 14 Սեփական կապիտալ

### 14.1 Բաժնետիրական կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 1,078,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 220,000 հասարակ անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 4,900 դրամ անվանական արժեքով:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

| Հազար ԱՆ դրամ | 31 դեկտեմբերի 2023թ. | | 31 դեկտեմբերի 2022թ. | |
|---|---|---|---|---|
| | Վճարված բաժնեհավաքա-կան կապիտալ | Բաժնեմասը վճարված կապիտալում % | Վճարված բաժնեհավաքա-կան կապիտալ | Բաժնեմասը վճարված կապիտալում % |
| Լեեդասի Թրեյդինգ Էլ Թի Դի | 606,698 | 56.28 | 130,007 | 56.28 |
| Սարգսյան Տիգրան Սուրենի | 194,040 | 18.00 | 41,580 | 18.00 |
| Բադալյան Արամայիս Ներսեսի | 161,700 | 15.00 | 34,650 | 15.00 |
| Ավետիսյան Տաթևիկ Արտաշեսի | 62,632 | 5.81 | 13,421 | 5.81 |
| Սարգսյան Արամ Նորիկի | 52,930 | 4.91 | 11,342 | 4.91 |
| | 1,078,000 | 100 | 231,000 | 100 |

2023թ. Ընկերությունը համալրել է կանոնադրական կապիտալը՝ թողարկելով է 847,000 հազար դրամի սովորական բաժնետոմսեր (2022թ.՝ 11,000 հազար դրամի սովորական բաժնետոմսեր):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Ընկերության մնացորդային ակտիվների նկատմամբ:

## 14.2 Շահաբաժիններ

2023թ. հունիսի 27-ին Ընկերությունը հայտարարել է սովորական բաժնետոմս ունեցող բաժնետերերին վճարվել է 3,391,579 հազար ԱՆ դրամ շահաբաժին (2022թ.՝ 2,000,000 հազար ԱՆ դրամ), որից 3,317,439 հազար դրամ ընդհանուր գումարով հայտարարված շահաբաժինները հարկերի նվազեցումից հետո փոխարկվել են վարկերի և փոխառությունների (2022թ. 1,956,280 հազար դրամ):

## 14.3 Պահուստային կապիտալ

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ԱՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով:

# 15 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ

| Ոչ ընթացիկ պարտավորություններ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ | 2,099,720 | 1,326,704 |
| | 2,099,720 | 1,326,704 |

Խումբն ունի գլխավոր վարկային պայմանագիր բանկի հետ, որի համաձայն ստանում է վարկեր և երաշխիքներ: Բանկից ստացված վարկի մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո է, բանկից ստացված երաշխիքի մնացորդը կազմում է 150,000 հազար ԱՆ դրամ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (31 դեկտեմբերի 2022թ.՝ 150,000 հազար ԱՆ դրամ): Այդ պայմանագրի դիմաց գրավադրված են 188,291 հազար ԱՆ դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի սարքավորումները (31 դեկտեմբերի 2022թ.՝ 195,417 հազար ԱՆ դրամ) (Ծանոթագրություն 4):

Կապակցված կողմերից չապահովված փոխառություններն ունեն տարեկան 10% միջին տոկոսադրույք (2022թ.՝ 11% տոկոսադրույք):

Ստացված վարկերը և փոխառությունները ենթակա են մարման 2027-2028թթ-ներին:

Հաշվետու ժամանակաշրջանում Խումբը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2022թ.՝ ոչինչ):

Վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ տե՛ս ծանոթագրություն 27:

Տե՛ս ծանոթագրություն 26՝ վարկերի և փոխառությունների տոկոսային և արտարժութային ռիսկերի բացահայտման համար:

## 16 Վարձակալության գծով պարտավորություն

Վարձակալական պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընթացիկ | 73,281 | 65,374 |
| Ոչ ընթացիկ | 205,866 | 262,757 |
| | 279,147 | 328,131 |

Խումբը վարձակալել է գլխամասային գրասենյակ և մասնաճյուղերի տարածքներ: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Խմբի վարձակալությունները չեն պարունակում վարձակալության փոփոխուն վճարումներ: Խումբը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմամբ համահունչ (տե՛ս ծանոթագրություն 4-ը):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Խումբը, քանի դեռ առկա չէ ակտիվն այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվն անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Խմբին արգելված է հիմքում ընկած ակտիվը վաճառել կամ գրավադրել: Վարձակալված գրասենյակային և մասնաճյուղերի տարածքները Խումբը

պետք է պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության վերջում գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Վարձակալության գծով պարտավորություններն ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: Ապագա նվազագույն վարձավճարները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

| Հազար դրամ | Նվազագույն վարձավճարներ | |
|---|---|---|
| | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| Մեկ տարվա ընթացքում | | |
| Վարձավճարներ | 97,408 | 90,976 |
| Ֆինանսական ծախս | (26,804) | (30,656) |
| | 70,604 | 60,320 |
| Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում | | |
| Վարձավճարներ | 243,556 | 326,021 |
| Ֆինանսական ծախս | (35,013) | (58,210) |
| | 208,543 | 267,811 |
| Զուտ ներկա արժեք | 279,147 | 328,131 |

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում վարձակալության գծով դրամական միջոցների ընդհանուր արտահոսքը կազմել է 97,509 հազար դրամ (2022թ.՝ 55,576 հազար դրամ):

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն Խումբն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով: Ի լրումն, թույլատրելի չէ որոշակի փոփոխուն վարձավճարներ ճանաչել որպես վարձակալության գծով պարտավորություն, դրանք ծախսագրվում են իրականացման պահին:

Վարձակալության գծով պարտավորությունը չափելիս չներառած վճարներին վերաբերող ծախսերը ներկայացված են ստորև.

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Փոքրարժեք ակտիվների վարձակալություններ | 615,985 | 477,655 |
| | 615,985 | 477,655 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի կարճաժամկետ վարձակալությունների գծով ապագա պարտավորվածություններ, և այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարը կազմում է 7,948 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,681 հազար դրամ):

## 17 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Օպերատորներին վճարվելիք գումարներ | 10,477,232 | 7,035,111 |
| Գործակալներին վճարվելիք գումարներ | 325,813 | 510,937 |
| Այլ առևտրային կրեդիտորական պարտքեր | 427,587 | 398,012 |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | 286,102 | 327,095 |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 256,066 | 239,008 |
| Ընդամենը առևտրային կրեդիտորական պարտքեր | 11,772,800 | 8,510,163 |
| Ստացված կանխավճարներ | 650,214 | 467,777 |
| Բողոքարկման գծով վճարվելիք գումարներ | 2,556 | 9,017 |
| Պետական բյուջե վճարվելիք գումարներ | 40,880 | 39,039 |
| Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր | 693,650 | 515,833 |
| Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 12,466,450 | 9,025,996 |
| Ընթացիկ | 12,384,382 | 8,839,844 |
| Ոչ ընթացիկ | 82,068 | 186,152 |

Օպերատորներին վճարվելիք գումարներն իրենցից ներկայացնում են օպերատորների անունից ընդունված վճարները, որոնք չեն փոխանցվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը (Ծանոթագրություն 13): Խումբն ունի նաև կնքված երաշխիքի պայմանագիր, համաձայն որի ստանձնած վճարային պարտավորությունների ժամանակին, պատշաճ և ամբողջ ծավալով կատարումը 150,000 հազ. ՀՀ դրամ չափով ապահովված է բանկային երաշխիքով (Ծանոթագրություն 17):

Խմբի արտարժութային և իրացվելիության ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

## 18 Հասույթ

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Միջնորդավճարներ վճարումների ընդունման ծառայություններից | 9,024,884 | 11,632,160 |
| Միջնորդավճարներ բանկային քարտերի համալրումից | 355,766 | 223,772 |
| Միջնորդավճարներ էլեկտրոնային դրամապանակի լիցքավորումից | 84,840 | 352,244 |
| Հասույթ գովազդի և գործակալի տերմինալի սպասարկման ծառայություններից | 285,585 | 344,879 |
| Միջնորդավճարներ դրամական փոխանցումներից | 21,863 | 49,034 |
| Այլ հասույթ | 73,923 | 109,332 |
| | 9,846,861 | 12,711,421 |

## 19 Այլ եկամուտ

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Զուտ եկամուտ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | 1,026,154 | 1,222,421 |
| Տույժեր և տուգանքներ | 42,788 | 22,299 |
| Զուտ եկամուտ պաշարների վաճառքից | 6,335 | 12,384 |
| Օգուտ հիմնական միջոցների օտարումից | 1,040 | 4,977 |
| Այլ | 10,025 | 91,683 |
| | 1,086,342 | 1,353,764 |

## 20 Այլ ծախսեր

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Միջնորդավճարներ բանկերին | 102,676 | 94,282 |
| Տրանսպորտային ծախսեր | 75,075 | 71,635 |
| Կոմունալ և կապի ծառայություններ | 61,133 | 57,240 |
| Ապահովագրության գծով ծախսեր | 79,175 | 54,787 |
| Համախորդների ներգրավման ծախսեր | 21,422 | 45,774 |
| Գրասենյակային ծախսեր | 25,883 | 31,999 |
| Համախորդների սպասարկում | 31,870 | 37,406 |
| Մասնագիտական ծառայություններ | 40,138 | 28,841 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 76,160 | 41,909 |
| Այլ պաշարների վաճառքների ծախսեր | 14,606 | 22,876 |
| Նվիրատվություններ | 7,475 | 19,994 |
| Անվտանգության ծառայություն | 21,990 | 19,736 |
| Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր | 11,467 | 14,923 |
| Պրոցեսինգային համակարգի սպասարկում | - | 5,426 |
| Վճարված տուգանքներ | 3,109 | 2,640 |
| Այլ | 62,961 | 61,995 |
| | 635,140 | 611,463 |

## 21 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից | 70,210 | 489,211 |
| Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով | 25,231 | 93,607 |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով | 33,360 | 33,162 |
| Ընդհանուր ֆինանսական ծախսեր | 128,801 | 615,980 |
| Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների գծով | 281,839 | 366,362 |
| Տոկոսային եկամուտ տրամադրված փոխառությունների գծով | 27,000 | 26,442 |
| Ընդհանուր ֆինանսական եկամուտ | 308,839 | 392,804 |
| Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր) | 180,038 | (223,176) |

## 22 Շահութահարկի գծով ծախս

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 506,534 | 956,916 |
| Ընթացիկ տարում ճանաչված՝ նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ | - | 35,082 |
| Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 8) | (1,703) | (7,442) |
| | 504,831 | 984,556 |

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2023թ. | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2022թ. | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների) | 2,355,572 | | 4,500,206 | |
| Շահութահարկ՝ 18% դրույքաչափով | 424,003 | 18 | 803,641 | 18 |
| Չնվազեցվող ծախսեր | 80,828 | 3 | 145,833 | 1 |
| Ընթացիկ տարում ճանաչված՝ նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ | - | - | 35,082 | 3 |
| Շահութահարկի գծով ծախս | 504,831 | 21 | 984,556 | 22 |

## 23 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2023թ. դեկտեմբերի 25-ին Ընկերության բաժնետերերի ժողովը որոշեց Ընկերության վերակազմավորման ճանապարհով հիմնադրել «Թել-Մել» Բաց Բաժնետիրական Ընկերություն:

20 մարտի 2024թ.-ին Ընկերությունը ստացել է ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա «Թել-Մել» ԲԲԸ-ի անվան տակ:

18 ապրիլի 2024թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը գրանցել է Ընկերության նոր կանոնադրությունը՝ «Թել-Մել» ԲԲԸ անվան տակ:

## 24 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

## 24.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է, թե արդյոք գոյություն ունեն ակտիվների արժեզրկման ցուցանիշներ: Եթե կան նման ցուցանիշներ, Խումբը հաշվարկում է այդ ակտիվների փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման որոշման ժամանակ ղեկավարությունը կատարել է որոշ գնահատումներ, որոնք ներառում են, մասնավորապես, արժեզրկման պատճառը, ժամանակը և գումարը: Արժեզրկումը կախված է մի շարք գործոններից, մասնավորապես, տեխնոլոգիական փոփոխություններից (որոնք կարող են ազդել ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքների վրա), ծառայության մատուցման դադարեցումից (որը կարող է հանգեցնել լիցենզիայի դադարեցմանը և հետևաբար համապատասխան ոչ նյութական ակտիվի արժեզրկմանը):

*Իրական արժեքի չափումը*

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես ծանոթագրություն 27):

*Կապակցված կողմերի հետ գործառնություններ*

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Խումբը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

## 25 Ֆինանսական գործիքներ

### 25.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

### 25.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ամortիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ* | | |
| Տրամադրված փոխառություններ | 243,944 | 248,383 |
| Ավանդներ բանկերում | 155,359 | 155,359 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 890,158 | 737,364 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7,902,100 | 5,508,989 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 5,959,251 | 5,716,791 |
| | 15,150,812 | 12,366,886 |

*Ֆինանսական պարտավորություններ*

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ամortիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ* | | |
| Վարկեր և փոխառություններ | 2,099,720 | 1,326,704 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 279,147 | 328,131 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 11,772,800 | 8,510,163 |
| | 14,151,667 | 10,164,998 |

## 26 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, ներկայացված են ստորև:

**Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

*Արտարժութային ռիսկ*

Խումբը որոշակի գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված

| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ԱՄՆ դոլար | Եվրո | Այլ |
|---|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | - | 11,928 | 425,756 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 2,420 | 1,728 | 137,191 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 40,789 | - | 158,961 |
| | 43,209 | 13,656 | 721,908 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 831 | - | 90,266 |
| | 831 | - | 90,266 |
| Զուտ արդյունք | 42,378 | 13,656 | 631,642 |
| Ընդամենը ֆինանսական ակտիվներ | 69,954 | 14,199 | 805,802 |
| Ընդամենը ֆինանսական պարտավորություններ | 828 | - | 114,730 |
| Զուտ դիրք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 69,126 | 14,199 | 691,072 |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլիի նկատմամբ դրամի 10% (2022թ. 10%) ամր կամ նվազման դեպքում: 10%-ը (2022թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%):

| | ԱՄՆ դոլարի ազդեցություն | | Եվրոյի ազդեցություն | | Ռուսական ռուբլիի ազդեցություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2023թ. | 2022թ. | 2023թ. | 2022թ. | 2023թ. | 2022թ. |
| Շահույթ կամ վնաս | 4,238 | 6,913 | 1,366 | 1,420 | 63,164 | 69,107 |
| Սեփական կապիտալ | 4,238 | 6,913 | 1,366 | 1,420 | 63,164 | 69,107 |

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

*Տոկոսադրույքային ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Խմբի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Խմբի զգայունությունը տոկոսադրույքի ռաճ նկատմամբ հիմնականում կախված է. ներգրավված վարկի պայմանագրով սահմանված տոկոսադրույքի հնարավոր փոփոխությունից: Խումբը գնահատել է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը է զուտ տոկոսային եկամտի վրա՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ֆինանսական պարտավորությունների գծով գնահատվել ոչ էական:

*բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառություններ և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Խումբը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները՝ ելնելով պարտքի վարկանիշային քարտից: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Խմբի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Խումբը գրավ չի վերցնում:

*Առևտրային դեբիտորական պարտքեր*

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2023թ.դեկտեմբերի 31-ին և 2023թ.հունվարի 1-ին համապատասխանաբար նախորդող ժամանակահատվածում ձևավորված պատմական պարտքային կորուստների վրա: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը կապված է Խմբի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Խումբը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Խումբը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Խմբի հետ մասնավորապես:

Խմբի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Խումբը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան, այն է՝ էլեկտրոնային փող թողարկող վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև հարաբերակցությունը պետք է կազմի 100 տոկոս:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելության նորմատիվը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

| | Աուդիտ չարված | |
|---|---|---|
| Հազար ՀՀ դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ,% | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ,% |
| Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ | 112 | 119 |

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների*

Ստորև ներկայացվում է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

| 2023թ. | Մինչև 1 ամիս | 1 - 12 ամիս | 1-5 տարի | 5 տարուց ավելի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| Վարկեր և փոխառություններ | - | - | 3,072,807 | - | 3,072,807 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 8,406 | 89,002 | 243,557 | - | 340,965 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 11,486,698 | 204,032 | 82,070 | - | 11,772,800 |
| | 11,495,104 | 293,034 | 3,398,434 | - | 15,186,572 |

| 2022թ. | Մինչև 1 ամիս | 1 - 12 ամիս | 1-5 տարի | 5 տարուց ավելի | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| Վարկեր և փոխառություններ | - | - | 1,959,015 | - | 1,959,015 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 7,914 | 83,062 | 310,397 | - | 401,373 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 8,182,868 | 141,143 | 186,152 | - | 8,510,163 |
| | 8,190,782 | 224,205 | 2,455,564 | | 10,870,551 |

## 27 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

## 27.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2023թ. դեկտմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը իրական արժեք | Ընդամենը հաշվեկշռային արժեք |
| *Ֆինանսական ակտիվներ* | | | | | |
| Տրամադրված փոխառություններ | - | 240,104 | - | 240,104 | 243,944 |
| Ավանդներ բանկերում | - | 155,359 | - | 155,359 | 155,359 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | - | 890,158 | - | 890,158 | 890,158 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 7,902,100 | - | 7,902,100 | 7,902,100 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | - | 5,959,251 | - | 5,959,251 | 5,959,251 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | 2,099,720 | - | 2,099,720 | 2,099,720 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | - | 279,147 | - | 279,147 | 279,147 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | - | 11,772,800 | - | 11,772,800 | 11,772,800 |

| | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Հաղամեները իրական արժեք | Հաղամեները հաշվեկշռայ ին արժեք |
| *Ֆինանսական ակտիվներ* | | | | | |
| Տրամադրված փոխառություններ | - | 243,108 | - | 243,108 | 248,383 |
| Ավանդներ բանկերում | - | 155,359 | - | 155,359 | 155,359 |
| Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր | - | 737,364 | - | 737,364 | 737,364 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | - | 5,508,989 | - | 5,508,989 | 5,508,989 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | - | 5,716,791 | - | 5,716,791 | 5,716,791 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | - | 1,326,704 | - | 1,326,704 | 1,326,704 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | - | 328,131 | - | 328,131 | 328,131 |
| Առնտրայինկրեդիտորական պարտքեր | - | 8,510,163 | - | 8,510,163 | 8,510,163 |

*Առնտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր*

Առնտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք և ստացվելիք գումարների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

*Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրամական միջոցների և դրանց համարժեքների հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

## 28 Կապիտալի համարժեքություն

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոններով և նորմատիվներով:

ՀՀ կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 100,000 հազար դրամի չափով:

Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը (ընդ որում, բաժնետիրական կապիտալի ոչ նյութական ակտիվներով համալրված մասը ընդհանուր կապիտալի հաշվարկին մասնակցում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի՝ 100,000 հազար դրամի 25 տոկոսի չափով) կուտակված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը:

2023 և 2022թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

| Հազար ՀՀ դրամ | Աուդիտ չարված | |
|---|---|---|
| | 31 դեկտեմբերի 2023թ. | 31 դեկտեմբերի 2022թ. |
| Հիմնական կապիտալ | 2,488,588 | 337,133 |
| Լրացուցիչ կապիտալ | - | - |
| Ընդամենը՝ ընդհանուր նորմատիվային կապիտալ | 2,488,588 | 337,133 |

## 29 Պարտավորվածություններ

### 29.1 Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է. և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Խմբին ներկայացվող դատական հայցերի առումով Խմբի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

## 30 Պայմանականություններ

### 30.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խմբի տերմինալներն ապահովագրված են: Այնուամենայնիվ, Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### 30.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարութունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

## 31 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Խմբի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

| Հազար դրամ | Վարկեր և փոխառություններ | Վարձակալության գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 2022թ. հունվարի 1-ի դրությամբ | 589,849 | 298,927 | 888,776 |
| Մուտքեր | - | 77,948 | 77,948 |
| Մարումներ | (1,222,503) | (55,576) | (1,278,079) |
| Մուտքեր շահաբաժիններից | 1,956,280 | - | 1,956,280 |
| Այլ | 3,078 | 6,832 | 9,910 |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,326,704 | 328,131 | 1,654,835 |
| Մուտքեր | - | 42,946 | 42,946 |
| Մարումներ | (2,618,563) | (97,509) | (2,716,072) |
| Մուտքեր շահաբաժիններից | 3,317,439 | - | 3,317,439 |
| Այլ | 74,140 | 5,579 | 79,719 |
| 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,099,720 | 279,147 | 2,378,867 |

## 32 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, նրա կողմից վերահսկվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը:

### 32.1 Վերահսկողություն

Ընկերության անմիջական և վերջնական մայր ընկերությունն է Կիպրոսում գրանցված Lendasy Trading Ltd, որի վերջնական հսկող անձն է Ռամի (Եվգենի) Թրեյստերը:

### 32.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ

| Գործարքներ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Մայր ընկերություն | | |
| Տոկոսային ծախս | 39,256 | 93,607 |

| Հազար դրամ<br>Մնացորդներ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Մայր ընկերություն | | |
| Տրամադրված փոխառություններ | 1,000 | 4,900 |
| Ստացված փոխառություններ | 2,099,720 | 1,326,704 |

### 32.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները «ԹԷլ-ՍԷլ» ՓԲԸ-ի բաժնետիրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Անձնակազմի գծով ծախսեր» հոդվածում.

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևատրումներ | 104,404 | 275,909 |
| | 104,404 | 275,909 |

**«Թել-Մել» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ**
**2022թ. համար**

**Բովանդակություն**

| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## «Թել-Սել» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թել-Սել» ՓԲԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր ընկերությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) *(ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊ
30 հունիսի 2023թ.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG ARMENIA»
02529689

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
## առ 31 դեկտեմբերի 2022թ.

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 9 | 900,124 | 822,514 |
| Ոչ նյութական ակտիվներ | 10 | 501,912 | 440,730 |
| Գուդվիլ | 11 | 1,157,700 | 1,157,700 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 19 | 294,348 | 276,295 |
| Կանխավճարներ | | 50,182 | 14,000 |
| Տրամադրված փոխառություններ | 13 | 205,000 | 200,000 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 8 | 62,177 | 54,735 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | **3,171,443** | **2,965,974** |
| | | | |
| Պաշարներ | 12 | 148,000 | 140,903 |
| Տրամադրված փոխառություններ | 13 | 43,383 | 58,432 |
| Բանկային ավանդներ | | 155,359 | 156,167 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 14 | 981,614 | 985,888 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | | 1,555 | 1,555 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15 | 5,508,989 | 9,283,107 |
| Օգտագործման սահմանափակում հաշիվների մնացորդներ | 15 | 5,716,791 | 1,265,938 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | **12,555,691** | **11,891,990** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **15,727,134** | **14,857,964** |
| | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 16 | 231,000 | 220,000 |
| Պահուստներ | 16 | 46,200 | 35,000 |
| Չբաշխված շահույթ | | 4,073,198 | 2,568,748 |
| **Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ** | | **4,350,398** | **2,823,748** |
| Չվերահսկող բաժնեմաս | | 11,889 | 11,889 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **4,362,287** | **2,835,637** |
| | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 18 | 1,326,704 | 589,849 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 19 | 262,757 | 249,506 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 20 | 186,152 | 153,799 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **1,775,613** | **993,154** |
| | | | |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 19 | 65,374 | 49,421 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 20 | 8,839,844 | 10,567,970 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 684,016 | 411,782 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | **9,589,234** | **11,029,173** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **11,364,847** | **12,022,327** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **15,727,134** | **14,857,964** |

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

| հազ. դրամ | Ծնթգ. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 12,711,421 | 10,137,844 |
| Գործակալներին վճարված միջնորդավճարներ | | (4,378,737) | (3,567,982) |
| Այլ եկամուտ | 6(ա) | 1,353,764 | 326,993 |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (2,063,231) | (1,232,033) |
| Վարձակալության գծով ծախսեր | 19(գ) | (477,655) | (486,119) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (417,978) | (346,155) |
| Վճարներ տերմինալների համար | | (228,790) | (226,360) |
| Դրամական միջոցների փոխադրման ծախսեր | | (241,492) | (171,766) |
| Գովազդ և շուկայավարում | | (350,160) | (220,827) |
| Աջակցման և սպասարկման ծախսեր | | (97,570) | (106,255) |
| Բանկային ծառայությունների վճարներ | | (436,563) | (267,923) |
| Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ | | (38,164) | (14,900) |
| Այլ ծախսեր | 6(բ) | (611,463) | (512,497) |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | | **4,723,382** | **3,312,020** |
| Ֆինանսական եկամուտ | 7 | 392,804 | 45,135 |
| Ֆինանսական ծախսեր | 7 | (615,980) | (370,297) |
| **Զուտ ֆինանսական ծախսեր** | 7 | **(223,176)** | **(325,162)** |
| Շահույթ մինչև շահութահարկով հարկումը | | **4,500,206** | **2,986,858** |
| Շահութահարկի գծով ծախս | 8 | (984,556) | (600,941) |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | | **3,515,650** | **2,385,917** |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք վերագրելի՝** | | | |
| Ընկերության սեփականատերերին | | 3,515,650 | 2,385,917 |
| Չվերահսկող բաժնեմասին | | - | - |
| | | **3,515,650** | **2,385,917** |

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 27-ին և ստորագրվել են վերջինիս անունից

Համբարձում Դանեղյան
Գլխավոր տնօրեն

Արթուր Թորոսյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2022թ. համար

| հազ. դրամ | Ընկերության սեփականատերերին վերագրելի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բաժնեհարթական կապիտալ | Պահուստներ | Չբաշխված շահույթ | Ընդամենը | Չվերահսկող բաժնեմաս | Ընդամենը սեփական կապիտալ |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 150,000 | 35,000 | 1,608,583 | 1,793,583 | 11,889 | 1,805,472 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | 2,385,917 | 2,385,917 | - | 2,385,917 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | - | - | **2,385,917** | **2,385,917** | - | **2,385,917** |
| **Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | | | | | | |
| Սովորական բաժնետոմսերի թողարկում | 70,000 | - | - | 70,000 | - | 70,000 |
| Շահաբաժիններ* | - | - | (1,415,000) | (1,415,000) | - | (1,415,000) |
| Այլ գործառնություններ | - | - | (10,752) | (10,752) | - | (10,752) |
| **Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | **70,000** | - | **(1,425,752)** | **(1,355,752)** | - | **(1,355,752)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **220,000** | **35,000** | **2,568,748** | **2,823,748** | **11,889** | **2,835,637** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 220,000 | 35,000 | 2,568,748 | 2,823,748 | 11,889 | 2,835,637 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | | | 3,515,650 | 3,515,650 | | 3,515,650 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | | | **3,515,650** | **3,515,650** | | **3,515,650** |
| **Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | | | | | | |
| Սովորական բաժնետոմսերի թողարկում | 11,000 | - | - | 11,000 | - | 11,000 |
| Հայտարարված շահաբաժիններ | - | - | (2,000,000) | (2,000,000) | - | (2,000,000) |
| Այլ գործառնություններ | - | 11,200 | (11,200) | - | - | - |
| **Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | **11,000** | **11,200** | **(2,011,200)** | **(1,989,000)** | - | **(1,989,000)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **231,000** | **46,200** | **4,073,198** | **4,350,398** | **11,889** | **4,362,287** |

* 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 1,956,280 հազար դրամ ընդհանուր գումարով հայտարարված շահաբաժինները (2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 795,066 հազար դրամ) փոխհարկվել են վարկերի և փոխառությունների (Ծանոթագրություն 18 (բ)):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
## 2022թ. համար

| հազ. դրամ | Ծնթգ. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| **հազ. դրամ** | | | |
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | 12,474,798 | 9,660,691 |
| Ստացված միջնորդավճարներ | | (4,242,196) | (3,490,786) |
| Վճարված միջնորդավճարներ | | 1,213,945 | 197,685 |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 295,660 | 313,516 |
| Մուտքեր մատուցված այլ ծառայություններից | | 69,945 | 74,447 |
| Ստացված այլ եկամուտ | | (1,962,738) | (1,292,056) |
| Վճարումներ աշխատակիցներին | | (2,501,856) | (1,933,025) |
| Վճարված այլ ծախսեր | | 392,802 | 38,968 |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | | |
| Օգտագործման սահմանափակում հաշիվների մնացորդներ | | (4,450,853) | (967,409) |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | | |
| Պայերատուներին վճարվելիք գումարներ | | (1,972,946) | 3,482,538 |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | | (111,293) | 3,775 |
| Ստացված կանխավճարներ | | 93,602 | 128,469 |
| **Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից՝ մինչև շահութահարկի և տոկոսների վճարումը** | | **(701,130)** | **6,216,813** |
| Վճարված շահութահարկ | | (719,761) | (434,053) |
| Վճարված տոկոսներ | | (85,682) | (59,328) |
| **Գործառնական գործունեության համար (օգտագործված)/ գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | | **(1,506,573)** | **5,723,432** |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից | | 5,715 | 17,916 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (542,276) | (241,374) |
| Ավանդի տեղաբաշխում | | (150,000) | (150,000) |
| Ավանդի եկացգրում | | 150,809 | - |
| Տրամադրված փոխառություններ | | (142,000) | (247,312) |
| Տրամադրված փոխառությունների մարում | | 116,333 | - |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(561,419)** | **(620,770)** |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | | - | 25,000 |
| Վարկերի և փոխառությունների մարում | | (1,222,503) | (737,812) |
| Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ | | (55,576) | (50,209) |
| Վճարված շահաբաժիններ | | - | (589,002) |
| Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից | | 11,000 | 70,000 |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(1,267,079)** | **(1,282,023)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | | **(3,335,071)** | **3,820,639** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | | 9,283,107 | 5,763,526 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (439,047) | (301,058) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի** | 15(ա) | **5,508,989** | **9,283,107** |

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## 2022թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|
| 1. Հաշվետու ընկերություն | 11 |
| 2. Պատրաստման հիմունքներ | 12 |
| 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ | 12 |
| 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում | 12 |
| 5. Հասույթ | 13 |
| 6. Եկամուտ և ծախսեր | 15 |
| 7. Զուտ ֆինանսական ծախսեր | 16 |
| 8. Շահութահարկ | 16 |
| 9. Հիմնական միջոցներ | 18 |
| 10. Ոչ նյութական ակտիվներ | 19 |
| 11. Գուդվիլ | 20 |
| 12. Պաշարներ | 21 |
| 13. Տրամադրված փոխառություններ | 21 |
| 14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 21 |
| 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 22 |
| 16. Կապիտալ և պահուստներ | 22 |
| 17. Կապիտալի կառավարում | 23 |
| 18. Վարկեր և փոխառություններ | 24 |
| 19. Վարձակալություն | 25 |
| 20. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 26 |
| 21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում | 26 |
| 22. Դուստր ընկերություններ | 32 |
| 23. Պայմանական դեպքեր | 32 |
| 24. Կապակցված կողմեր | 33 |
| 25. Չափման հիմունքներ | 34 |
| 26. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր | 34 |
| 27. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ | 49 |

# 1. Հաշվետու ընկերություն

## (ա) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Ուստի, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի անուեհությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է առեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների անուեհական գործունեության, այլև՝ համաշխարհային անուեհության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև անուեհական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և համախմբված ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## (բ) Կառուցվածքը և գործունեությունը

«Թել-Մել» ՓԲԸ-ն («Ընկերություն») և վերջինիս դուստր ընկերությունները («Խումբ») փակ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ են՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն 2007թ-ին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: 2007թ. հուլիսի 24-ին Ընկերությունը ստացել է դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա և ունի էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- վճարումների ընդունման ծառայությունների մատուցումը, օրինակ՝ վերջնական օգտագործողների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունում ծառայություններ մատուցողների (Օպերատորների) անունից իր սեփական և գործակալների տերմինալների միջոցով,
- դրամական փոխանցումներ,
- կանխիկացման ծառայություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Հակոբ Հակոբյան փող. 3 (հիմնական մասնաշենքի 1-ին սեկցիա, 3-րդ շենք):

Ընկերությանն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում 13 մասնաճյուղերի (2021թ-ին՝ 13) և ավելի քան 4300 վճարային տերմինալների միջոցով: Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության բաժնետերերն են՝ Lendasy Trading Ltd (56.28%), Արամայիս Բադալյանը (13.00%), Արտակ Գաբրիելյանը (10.00%), Տիգրան Նահապետյանը (10.00%), Արամ Սարգսյանը (4.91%) և Տաթևիկ Ավետիսյանը (5.81%): Խմբի վերջնական հսկող անձն է Վոլհա Կիրինիցկայան:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

## 2. Պատրաստման հիմունքներ

**Համապատասխանության հավաստում**

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթն է և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

## 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, և այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է Ծանոթագրություն 11-ում՝ գուդվիլի արժեզրկման ստուգման համար կիրառվող հիմնական ենթադրությունների և այն դրամաստեղծ միավորի որոշման հետ կապված, որին բաշխվում է գուդվիլը:

*Իրական արժեքի չափում*

Խմբի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- *1-ին մակարդակ.* նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):

- *2-րդ մակարդակ*. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ անուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- *3-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումներն Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

## 5. Հասույթ

### (ա) Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը հիմնականում ստանում է ծառայություն մատուցողների («Օպերատորների») անունից վերջնական օգտագործողներից վճարումների ընդունման ծառայություններից և մատուցված այլ ծառայություններից:

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | | |
| Միջնորդավճարներ վճարումների ընդունման ծառայություններից | 11,632,160 | 9,145,633 |
| Միջնորդավճարներ կանխիկացման ծառայություններից | 576,016 | 386,160 |
| Հասույթ գովազդի և գործակալի տերմինալի սպասարկման ծառայություններից | 344,879 | 382,669 |
| Միջնորդավճարներ դրամական փոխանցումներից | 49,034 | 127,570 |
| Այլ հասույթ | 109,332 | 95,812 |
| **Ընդամենը հասույթ** | **12,711,421** | **10,137,844** |

### (բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների:

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| **Շուկա** | | |
| Հայաստանի Հանրապետություն | 12,663,671 | 10,010,400 |
| ԱՊՀ այլ երկրներ | 47,750 | 127,444 |
| | **12,711,421** | **10,137,844** |
| **Հասույթի ճանաչման ժամկետներ** | | |
| Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ | 12,711,421 | 10,137,844 |
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **12,711,421** | **10,137,844** |

## (գ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով առևտրական դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|---|
| «Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր | 14 | 827,797 | 696,410 |

Չի տրամադրվել տեղեկատվություն 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացած կատարման պարտականությունների վերաբերյալ, որոնց սկզբնական ակնկալվող տևողությունը կազմում է մեկ տարի կամ պակաս, ինչպես դա թույլատրվում է ՖՀՄՍ 15-ով:

## (դ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

| Ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչում ՖՀՄՍ 15 համաձայն |
|---|---|---|
| **Վճարումների ընդունման, կանխիկացման և դրամական փոխանցումների ծառայություններ** | Վճարումների ընդունման և կանխիկացման ծառայությունների գծով կատարման պարտականությունները կատարվում են, երբ Ընկերությանն ընդունում է վճարումներ Օպերատորների վերջնական հաճախորդներից, ընդունում է փոխանցումների հայտերը և փոխանցում է դրամական միջոցները: Վճարումների ընդունման, կանխիկացման կամ դրամական փոխանցումների ծառայությունների սակերը ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Վճարումների ընդունման, կանխիկացման և դրամական փոխանցումների ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցման ժամանակ: Կատարման պարտականության կատարման առաջընթացի չափումը հիմնված է ընդունված վճարումների, կանխիկացման գործառնությունների և դրամական փոխանցումների ծավալի վրա: |
| **Սպասարկման և գովազդի ծառայություններ** | Սպասարկման և գովազդի ծառայությունների հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Սպասարկման ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող հաստատուն ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցման ժամանակ՝ անցած ժամանակահատվածը կիրառելով որպես կատարման պարտականության կատարման առաջընթացի չափման միավոր: |

## 6. Եկամուտ և ծախսեր

### (ա) Այլ եկամուտ

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Զուտ եկամուտ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | 1,222,421 | 181,369 |
| Տույժեր և տուգանքներ | 22,299 | 41,512 |
| Զուտ եկամուտ պաշարների վաճառքից | 12,384 | 979 |
| Օգուտ հիմնական միջոցների օտարումից | 4,977 | 14,171 |
| Այլ | 91,683 | 88,962 |
| | **1,353,764** | **326,993** |

### (բ) Այլ ծախսեր

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Միջնորդավճարներ | 92,616 | 41,809 |
| Տրանսպորտային ծախսեր | 71,635 | 44,024 |
| Կոմունալ և կապի ծառայություններ | 57,239 | 38,847 |
| Ապահովագրության գծով ծախսեր | 54,787 | - |
| Արտապատվիրակված ծառայություններ | 45,774 | 33,178 |
| Գրասենյակային պիտույքներ | 39,992 | 24,965 |
| Համակարգիչների սպասարկում | 37,406 | 37,074 |
| Մասնագիտական ծառայություններ | 28,852 | 28,647 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 22,731 | 40,589 |
| Նվիրատվություններ | 19,994 | 17,842 |
| Անվտանգության ծառայություն | 19,736 | 11,053 |
| Հարկեր և տուգանքներ | 14,923 | 10,933 |
| Պրոցեսինգային համակարգի սպասարկում | 5,426 | 48,900 |
| Պահանջներ | 2,640 | 21,825 |
| Զուտ վնաս արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | - | 23,769 |
| Այլ | 97,712 | 89,042 |
| | **611,463** | **512,497** |

## 7. Զուտ ֆինանսական ծախսեր

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| **Շահույթում կամ վնասում ճանաչված** | | |
| Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների գծով | 392,804 | 33,605 |
| Տոկոսային եկամուտ տրամադրված փոխառությունների գծով | 36,508 | 11,530 |
| **Ֆինանսական եկամուտ** | **356,296** | **45,135** |
| | | |
| Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից | (489,211) | (303,324) |
| Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով | (93,607) | (45,344) |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով | (33,162) | (21,629) |
| **Ֆինանսական ծախսեր** | **(615,980)** | **(370,297)** |
| **Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր** | **(223,176)** | **(325,162)** |

## 8. Շահութահարկ

### (ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խմբի համար կիրառվում է հայկական ընկերությունների համար գործող շահութահարկի 18% դրույքաչափը (2021թ-ին՝ 18%):

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| **Ընթացիկ հարկի գծով ծախս** | | |
| Ընթացիկ տարի | (956,916) | (587,255) |
| Պակաս ներկայացված նախորդ տարիներում | (35,082) | (21,606) |
| | **(991,997)** | **(608,861)** |
| **Հետաձգված հարկի գծով ծախս** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | 7,442 | 7,920 |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **(984,556)** | **(600,941)** |

### Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

| | 2022թ. | | 2021թ. | |
|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | % | հազ. դրամ | % |
| Շահույթ մինչև շահութահարկով հարկումը | 4,500,206 | | 2,986,858 | |
| Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով | (803,641) | (18.0) | (537,634) | (18.0) |
| Պակաս ներկայացված նախորդ տարիներում | (35,082) | (0.8) | (21,607) | (0.7) |
| Չնվազեցվող ծախսեր | (145,833) | (3.3) | (41,700) | (1.3) |
| | **(984,556)** | **(22.1)** | **(600,941)** | **(20.0)** |

### (բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

| հազ. դրամ | Ակտիվներ | | Պարտավորություններ | | Զուտ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2022թ. | 2021թ. | 2022թ. | 2021թ. | 2022թ. | 2021թ. |
| Հիմնական միջոցներ | 5,755 | 11,724 | - | - | 5,755 | 11,724 |
| Տրամադրված փոխառություններ | - | 2,869 | - | - | - | 2,869 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 10,201 | 14,288 | - | - | 10,201 | 14,288 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 40,140 | 21,780 | - | - | 40,140 | 21,780 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 6,081 | 4,074 | - | - | 6,081 | 4,074 |
| **Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)** | **62,177** | **54,735** | **-** | **-** | **62,177** | **54,735** |

### (գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

Հետաձգված հարկի մնացորդների բոլոր փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

## 9. Հիմնական միջոցներ

| հազ. դրամ | Վճարումների պրոցեսինգի սարքավորումն. | Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ | Տնտեսական միջոցներ | Փոխադրա-միջոցներ | Կապիտալիզված գույքի բարելավում | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 1,125,713 | 190,364 | 112,130 | 21,116 | 128,070 | 1,577,393 |
| Ավելացումներ | 76,775 | 55,764 | 19,722 | 4,966 | 37,056 | 194,283 |
| Օտարումներ | (23,549) | - | - | - | - | (23,549) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **1,178,939** | **246,128** | **131,852** | **26,082** | **165,126** | **1,748,127** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 1,178,939 | 246,128 | 131,852 | 26,082 | 165,126 | 1,748,127 |
| Ավելացումներ | 123,910 | 99,010 | 28,930 | 3,064 | 14,314 | 269,228 |
| Օտարումներ | (8,045) | (38,363) | (15,448) | (99) | - | (61,955) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **1,294,804** | **306,775** | **145,334** | **29,047** | **179,440** | **1,955,400** |
| ***Մաշվածություն*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 572,773 | 144,853 | 61,982 | 6,995 | 10,344 | 796,947 |
| Տարվա մաշվածություն | 90,217 | 30,711 | 18,822 | 3,334 | 7,237 | 150,321 |
| Օտարումներ | (21,655) | - | - | - | - | (21,655) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **641,335** | **175,564** | **80,804** | **10,329** | **17,581** | **925,613** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 641,335 | 175,564 | 80,804 | 10,329 | 17,581 | 925,613 |
| Տարվա մաշվածություն | 105,076 | 50,607 | 10,390 | 4,030 | 10,273 | 180,376 |
| Օտարումներ | (7,946) | (27,427) | (15,340) | - | - | (50,713) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **738,465** | **198,744** | **75,854** | **14,359** | **27,854** | **1,055,276** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | | |
| Առ 1 հունվարի 2021թ. | 552,940 | 45,511 | 50,148 | 14,121 | 117,726 | 780,446 |
| Առ 31 դեկտեմբերի 2021թ. | 537,604 | 70,564 | 51,048 | 15,753 | 147,545 | 822,514 |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **556,339** | **108,031** | **69,480** | **14,688** | **151,586** | **900,124** |

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 195,417 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի սարքավորումները (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 214,261 հազար դրամ) գրավադրված են գրավով ապահովված վարկի դիմաց (Ծանոթագրություն 18 (ա)):

## 10. Ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ | Տերմինալի տեղադրման թույլտվություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 223,634 | 15,334 | 375,000 | 613,968 |
| Ավելացումներ | 70,825 | - | - | 70,825 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **294,459** | **15,334** | **375,000** | **684,793** |
| | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 294,459 | 15,334 | 375,000 | 684,793 |
| Ավելացումներ | 216,533 | 17,532 | - | 234,065 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **510,992** | **32,866** | **375,000** | **918,858** |
| | | | | |
| ***Ամորտիզացիա*** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 86,891 | 10,460 | - | 97,351 |
| Տարվա ամորտիզացիա | 20,407 | 1,305 | 125,000 | 146,712 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **107,298** | **11,765** | **125,000** | **244,063** |
| | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 107,298 | 11,765 | 125,000 | 244,063 |
| Տարվա ամորտիզացիա | 36,562 | 11,321 | 125,000 | 172,883 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **143,860** | **23,086** | **250,000** | **416,946** |
| | | | | |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | |
| Առ 1 հունվարի 2021թ. | 136,743 | 4,874 | 375,000 | 516,617 |
| Առ 31 դեկտեմբերի 2021թ. | 187,161 | 3,569 | 250,000 | 440,730 |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **367,132** | **9,780** | **125,000** | **501,912** |

## 11. Գուդվիլ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|
| «Մեգա Պանաեա» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 1,077,950 | 1,077,950 |
| «Թեք-Մեդ Սերվիս» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 79,750 | 79,750 |
| | **1,157,700** | **1,157,700** |

**(ա) Գուդվիլ պարունակող դրամահոսքեր ծնող միավորի արժեզրկման սուգում**

Արժեզրկման սուգման նպատակով գուդվիլը բաշխվում է Խմբի ընդհանուր գործառնություններին: Խումբը չունի ավելի փոքր դրամահոսքեր ծնող միավոր, որի միջոցով հնարավոր կլիներ վերահսկել գուդվիլը ներքին կառավարչական նպատակների համար:

Դրամահոսքեր ծնող միավորի փոխհատուցվող գումարը հիմնված է վերջինիս օգտագործման արժեքի վրա, որը որոշվել է գնդելով Խմբի շարունակվող գործառնություններից առաջացող ապագա դրամական հոսքերը: Որոշվել է, որ դրամահոսքեր ծնող միավորի փոխհատուցվող գումարը գերազանցում է վերջինիս հաշվեկշռային արժեքից և արժեզրկումից կորուստ չի ճանաչվել:

**Գնդված դրամական հոսքերի կանխատեսումների համար կիրառված հիմնական ենթադրություններ**

Օգտագործման արժեքը որոշելու համար կիրառված հիմնական ենթադրություններն են գնդման դրույքը և նախքան տոկոսների վճարումը, հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի մասհանումները շահույթի (EBITDA) մարժաները:

*(i) Գնդման դրույք*

Դրամահոսքեր ծնող միավորի փոխհատուցվող գումարը որոշելու համար կիրառվել է 17.8% հարկումից հետո գնդման անվանական դրույք:

Գնդման դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը, որը հիմնված է պարտքի լծակավորման 21.48% հնարավոր տիրույթի վրա՝ 12.89% միջին շուկայական տոկոսադրույքով:

*(ii) Բյուջեով նախատեսված EBITDA*

EBITDA-ի մարժայի կանխատեսվող մակարդակները կանխատեսման հորիզոնի համար համապատասխանում էին պատմական մեծություններին: Հաշվի առնելով գործունեության դինամիկան և ոլորտի առանձնահատկությունները՝ EBITDA մարժայի աճի տեմպն կանխատեսման առաջին ժամանակաշրջանում հիմնավորվում է անցյալ ժամանակաշրջանների մակարդակներով և Ընկերության 2023թ. բյուջեով՝ հետագա աճով, որը համապատասխանում է ԱՄՀ-ի ՀՀ գնաճի կանխատեսմանը վերլուծության ամսաթվի դրությամբ հետագա տարիների՝ 2024-2027թթ. համար:

*(iii) Զգայունությունը ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ*

Գնդման դրույքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունը չի հանգեցնի արժեզրկման:

## 12. Պաշարներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|
| Պահեստամասեր | 94,764 | 64,279 |
| Այլ | 53,236 | 76,624 |
| | **148,000** | **140,903** |

## 13. Տրամադրված փոխառություններ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հայկական վարկային կազմակերպություններին տրված փոխառություններ | 200,000 | 175,000 |
| Երրորդ կողմերին տրված փոխառություններ | 5,000 | 25,000 |
| | **205,000** | **200,000** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Երրորդ կողմերին տրված փոխառություններ | 38,483 | - |
| Կապակցված կողմերին տրված փոխառություններ | 4,900 | 58,432 |
| | **43,383** | **58,432** |
| | **248,383** | **258,432** |

Տրամադրված փոխառությունները ժամկետանց չեն և արժեզրկված չեն (Ծանոթագրություն 21):

## 14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|
| Ստացվելիք միջնորդավճարներ | 505,116 | 570,274 |
| Դրամական փոխանցումների գծով ստացվելիք գումարներ | 111,563 | 87,259 |
| Առևտրական դեբիտորական պարտքեր այլ ծառայությունների գծով | 120,685 | 126,136 |
| **Ընդամենը առևտրական դեբիտորական պարտքեր** | **737,364** | **783,669** |
| Տրված կանխավճարներ | 241,074 | 196,837 |
| Այլ դեբիտորական պարտքեր | | |
| **Ընդամենը այլ դեբիտորական պարտքեր** | 3,176 | 5,382 |
| **Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր** | **244,250** | **202,219** |

Պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

## 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|
| Բանկային հաշիվների մնացորդներ | 1,082,526 | 4,611,488 |
| Դրամական միջոցները տերմինալներում | 1,924,329 | 2,033,660 |
| Դրամական միջոցները դրամարկղում | 1,630,899 | 1,658,870 |
| Դրամական միջոցները ճանապարհին | 871,234 | 979,089 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություններում** | **5,508,988** | **9,283,107** |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 5,716,792 | 1,265,938 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ** | **11,225,780** | **10,549,045** |

Տոկոսադրույքի ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

Օգտագործման սահմանափակումով հաշիվներն իրենցից ներկայացնում են բանկերում պահվող հատուկ հաշիվներ: Ցանկացած պահի այս հաշիվների մնացորդները չպետք է պակաս լինի նախորդ օրվա ընդունված վճարումների ընդհանուր գումարից: Այս հաշիվների մնացորդները կարող են օգտագործվել միայն վճարումների ընդունման ծառայությունների շրջանակում վճարումներ կատարելու համար: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդները «դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածից վերադասակարգվել են «օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ»: Համադրելի տեղեկատվության փոփոխությունները ներկայացված են Ծանոթագրություն 26 (ն) կետում:

## 16. Կապիտալ և պահուստներ

### (ա) Բաժնեհիմնական կապիտալ

| *Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ* | Սովորական բաժնետոմսեր | |
|---|---|---|
| | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված | 220,000 | 220,000 |
| Հայտարարված բաժնետոմսեր – անվանական արժեք | 1,050 դրամ | 1,000 դրամ |

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

**Սովորական բաժնետոմսեր**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2022թ. օգոստոսի բաժնետերերի արտահերթ ժողովը հաստատեց «Թել-Մել» ՓԲԸ-ի բաժնեհիրական կապիտալի աճը 11,000 հազար դրամով՝ բաժնետոմսերի անվանական արժեքը մինչև 1,050 դրամ ավելացնելու միջոցով (2021թ-ին՝ 70 հազար սովորական բաժնետոմսերի թողարկում՝ 1,000 դրամ արժեքով մեկ բաժնետոմսի համար): Բաժնետոմսերի թողարկման արդյունքում բաժնետերերի կազմը չի փոխվել:

**(բ) Շահաբաժիններ**

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության և վերջինիս դուստր ընկերությունների բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով, բացառությամբ չբաշխված շահույթի համար գործող ստորև ներկայացված սահմանափակումների:

Օրենսդրության պահանջների համաձայն՝ Ընկերությունը պետք է ձևավորի բաշխման ոչ ենթակա պահուստ իր չբաշխված շահույթից՝ իր բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով ապագա վնասները ծածկելու համար:

2022թ-ին Ընկերությունը հայտարարել է 2,000,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2021թ-ին՝ 1,415,000 հազար դրամ), որոնցից 1,956,280 հազար դրամը փոխարկվել է վարկերի և փոխառությունների՝ հարկերի նվազեցումից հետո (2021թ-ին վճարել է 589,002 հազար դրամ, մնացած մասը փոխարկվել էր վարկերի և փոխառությունների): Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմում է 9,091 դրամ (2021թ-ին՝ 6,432 դրամ):

## 17. Կապիտալի կառավարում

Խորհրդի քաղաքականությամբ պահանջվում է ապահովել կապիտալի կայուն բազա ներդրողների և վարկատուների և գործունեության հետագա կայուն զարգացումն ապահովելու համար: Տնօրենների խորհուրդը վերահսկում է կապիտալի եկամտաբերությունը, որը Խմբի կողմից որոշվում է որպես գործառնական գործունեության արդյունքի և ընդհանուր սեփական կապիտալի (առանց չվերահսկող բաժնեմասի) հարաբերակցություն: Տնօրենների խորհուրդը վերահսկում է նաև սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վճարվող շահաբաժինների մակարդակը:

Խումբը վերահսկում է կապիտալը՝օգտագործելով ճշգրտված զուտ պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը: Այդ նպատակով ճշգրտված զուտ պարտավորությունները սահմանվում են որպես պարտավորությունների ընդհանուր գումար, որը ներառում է տոկոսակիր վարկերը և փոխառությունները՝ հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ստորև ներկայացված է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ճշգրտված զուտ պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը:

| **հազ. դրամ** | **2022թ.** | **2021թ.** |
|---|---|---|
| Ընդամենը պարտավորություններ | 11,364,847 | 12,022,327 |
| Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդները | (11,225,780) | (10,549,045) |
| **Զուտ պարտավորություններ** | **139,067** | **1,473,282** |
| Ընդամենը սեփական կապիտալ | 4,362,287 | 2,835,637 |
| **Զուտ պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **0.03** | **0.52** |

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման Խմբի մոտեցումը չի փոխվել:

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վճարային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վճարային կազմակերպությունների նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 100,000 հազար դրամ (2021թ-ին՝ 100,000 հազար դրամ): 2022թ և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափը:

## 18. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | |
| Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից | 1,326,704 | 589,849 |
| | **1,326,704** | **589,849** |

### (ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների համար գործող պայմանները:

| հազ. դրամ | Արժույթ | Անվանակ. տոկոսադր. | Մարման տարի | 31 դեկտեմբերի 2022թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2022թ. Հաշվեկշռ. արժեք | 31 դեկտեմբերի 2021թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2021թ. Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից | ՀՀ դրամ | 11% | 2027 | 1,319,952 | 1,319,952 | - | - |
| Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից | ՀՀ դրամ | 0% | 2027 | 6,751 | 6,751 | - | - |
| Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից | ՀՀ դրամ | 11% | 2024 | - | - | 589,849 | 589,849 |
| **Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ** | | | | **1,326,704** | **1,326,704** | **589,849** | **589,849** |

Խումբն ունի գլխավոր վարկային պայմանագիր բանկի հետ, որի համաձայն ստանում է վարկեր և երաշխավորություններ: Բանկից ստացված վարկի մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո է, բանկից ստացված երաշխավորության մնացորդը կազմում է 150,000 հազար դրամ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (31 դեկտեմբերի 2021թ.՝ 150,000 հազար դրամ): Այդ պայմանագրի դիմաց գրավադրված են 195,417 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի սարքավորումները (31 դեկտեմբերի 2021թ.՝ 214,261 հազար դրամ) (Ծանոթագրություն 9):

### (բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

| հազ. դրամ | Վարկեր և փոխառություններ 2022թ. | Վարկեր և փոխառություններ 2021թ. |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի** | **589,849** | **498,021** |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | - | 25,000 |
| Ստացված և տրամադրված փոխառությունների հաշվանցում | (36,000) | - |
| Վարկերի և փոխառությունների մարում | (1,222,503) | (737,812) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | **(1,258,503)** | **(712,812)** |
| **Հայտարարված շահաբաժիններից ստացված փոխառություններ** | **1,956,280** | **795,066** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 93,607 | 45,344 |
| Վճարված տոկոսներ | (54,529) | (35,770) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **1,326,704** | **589,849** |

## 19. Վարձակալություն

Ստորև ներկայացված է տեղեկատվություն այն վարձակալությունների վերաբերյալ, որոնց շրջանակում Խումբը հանդես է գալիս որպես վարձակալ:

### (ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Մնացորդը սկ 1 հունվարի | 276,295 | 189,356 |
| Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով | 14,235 | 136,334 |
| Վարձակալության պայմանագրերի փոփոխություններ | 68,537 | - |
| Ժամանակաշրջանի մաշվածության գումար | (64,719) | (49,395) |
| **Մնացորդը սկ 31 դեկտեմբերի** | **294,348** | **276,295** |

### (բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| **Մնացորդը սկ 1 հունվարի** | **298,927** | **212,802** |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | | |
| Ավելացումներ | 14,235 | 136,334 |
| Վարձակալության պայմանագրերի փոփոխություններ | 70,545 | - |
| Հիմնական գումարի մարում | (55,576) | (50,209) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | **29,204** | **86,125** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 31,153 | 21,629 |
| Վճարված տոկոսներ | (31,153) | (21,629) |
| **Մնացորդը սկ 31 դեկտեմբերի** | **328,131** | **298,927** |

### (գ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն | 59,895 | 49,395 |
| Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ | 31,153 | 21,629 |
| Ցերմինալների տարածքների փարձակալության ծախս և այլ կարճաժամկետ վարձակալություններ | 477,655 | 486,119 |

## 20. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2022թ. | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---:|---:|
| Օպերատորներին վճարվելիք գումարներ | 7,035,111 | 9,067,135 |
| Գործակալներին վճարվելիք գումարներ | 510,937 | 374,396 |
| Այլ առևտրական կրեդիտորական պարտքեր | 398,012 | 404,372 |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | 327,095 | 314,045 |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 16,014 | 17,522 |
| **Ընդամենը առևտրական կրեդիտորական պարտքեր** | **8,287,169** | **10,177,470** |
| Ստացված կանխավճարներ | 467,777 | 374,830 |
| Հաշվեգրված ծախսեր | 232,011 | 121,000 |
| Պետական բյուջե վճարվելիք գումարներ | 39,039 | 48,469 |
| **Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր** | **738,827** | **544,299** |
| **Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր** | **9,025,996** | **10,721,769** |
| Ընթացիկ | 8,839,844 | 10,567,970 |
| Ոչ ընթացիկ | 186,152 | 153,799 |

Օպերատորներին վճարվելիք գումարներն իրենցից ներկայացնում են օպերատորների անունից ընդունված վճարները, որոնք չեն փոխանցվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

## 21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

### (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և իրական արժեք

Ղեկավարության գնահատմամբ բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին՝ պայմանավորված ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթով կամ երկարաժամկետ ակտիվների և պարտավորությունների համար գործող շուկայական տոկոսադրույքների հետ մոտարկումով:

### (բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (տես Ծանոթագրություն 21 (բ) (ii)),
- իրացվելիության ռիսկ (տես Ծանոթագրություն 21 (բ) (iii)),
- շուկայական ռիսկ (տես Ծանոթագրություն 21 (բ) (iv)):

#### *(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ*

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության

փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման սուանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

*(ii) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները, և առաջանում է հիմնականում Խմբի հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին**

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Ստորև ներկայացված է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին հաշվետու ամսաթվի դրությամբ:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | 2022թ. | 2021թ. |
| Տրամադրված փոխառություններ | 248,383 | 258,432 |
| Բանկային ավանդներ | 155,359 | 156,167 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի | 737,364 | 783,669 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 1,953,760 | 5,590,577 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 5,716,792 | 1,265,938 |
| | **8,811,658** | **8,054,783** |

**Տրամադրված փոխառություններ**

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածության վրա հիմնականում ազդում են յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերը: Այնուամենայնիվ, ղեկավարությունը հաշվի է առնում նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ իր հաճախորդների բազայի պարտքային ռիսկի վրա, ներառյալ պարտապանցման ռիսկը, որը կապված է այն ոլորտի և երկրի հետ, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները: Փոխառությունները արտամաղվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված պայմանագրային կողմերին: Խումբը չի պահանջում գրավ արտամաղված փոխառությունների համար:

Խումբը չի ակնկալում էական վնասներ արտամաղված փոխառություններից, քանի որ պայմանագրային կողմերի ֆինանսական վիճակը կայուն է:

Փոխառությունները արտամաղվել են արտաքին վարկանիշ չունեցող կազմակերպություններին: Ղեկավարության գնահատմամբ այդ կազմակերպությունների վարկանիշը մոտավորապես համապատասխանում է «Moody's»-ի վարկանիշային համակարգի Ba3-B1 վարկանիշին:

**Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Խմբի հաճախորդների բազայի վրա, այդ թվում՝ այն ոլորտին և երկրին բնորոշ պարտապանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի մոտ 73%-ն իրենից ներկայացնում է վճարային ծառայություններից ստացվելիք գումարները, որոնք պարտքային ռիսկի չեն ենթարկվում, քանի որ Խումբն անընդհատ վճարումներ է ընդունում օպերատորների անունից և պահում է կրեդիտորական պարտքերի մնացորդն ընդունված վճարումներից (տես Ծանոթագրություն 20): 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 452,494 հազար դրամ գումարով կրեդիտորական պարտքեր

առևտրական դեբիտորական պարտքերի դիմաց (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 531,505 հազար դրամ): Խումբը ճանաչել է 71,064 հազար դրամ գումարով ակնկալվող պարտքային կորուստ առևտրական կրեդիտորական պարտքերի մնացած մնացորդի գծով:

Խումբն օգտագործում է պահուստավորման մատրից ֆիզիկական անձանցից ստացվելիք առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որոնք ներառում են մեծ թվով փոքր գումարով մնացորդներ: Կորստի մակարդակը հաշվարկվում է «roll rate» մեթոդով, որը հիմված է այն հավանականության վրա, որ դեբիտորական պարտքը կանցնի ժամկետանցությունից մինչև դուրս գրումը հաջորդական փուլերով:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ստորև ներկայացված է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

| **հազ. դրամ** | **Հաշվեկշռային արժեք** | |
|---|---|---|
| | **2022թ.** | **2021թ.** |
| Հայաստանի Հանրապետություն | 554,183 | 694,668 |
| ԱՊՀ այլ երկրներ | 183,182 | 89,001 |
| | **737,364** | **783,669** |

Ստորև ներկայացված է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

| **հազ. դրամ** | **Հաշվեկշռային արժեք** | |
|---|---|---|
| | **2022թ.** | **2021թ.** |
| Բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ | 163,911 | 97,629 |
| Առցանց խաղեր | 252,052 | 307,577 |
| Հեռահաղորդակցության ընկերություններ | 135,607 | 215,461 |
| Կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ | 40,781 | 33,822 |
| Առևտրային կազմակերպություններ | 2,426 | 5,336 |
| Այլ | 142,587 | 123,844 |
| | **737,364** | **783,669** |

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, օգտագործման սահմանափակումով դրամական միջոցներ և բանկային ավանդներ**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 7,479,667 հազար դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, օգտագործման սահմանափակումով դրամական միջոցներ և բանկային ավանդներ բանկերում (2022թ-ին՝ 6,856,515 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Ստորև ներկայացված է «Moody`s» վարկանիշային գործակալության վարկանիշների վրա հիմնված դրամական միջոցների և դրանց համարժեքների, գտագործման սահմանափակումով դրամական միջոցների և բանկային ավանդներ պարտքային որակը:

| **հազ. դրամ** | **Հաշվեկշռային արժեք** | |
|---|---|---|
| | **2022թ.** | **2021թ.** |
| – Ba1-ից Ba3 վարկանիշով | 5,174,767 | 4,230,496 |
| – B1-ից B3 վարկանիշով | 101,834 | 390,331 |
| – վարկանիշ չունեցող | 2,393,951 | 2,235,688 |
| | **7,670,552** | **6,856,515** |

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 871,234 հազար դրամ գումարով դրամական միջոցներ ճանապարհին (2021թ-ին՝ 696,112 հազար դրամ), որոնք ներառված են «վարկանիշ չունեցող» դասում՝ վերը ներկայացված աղյուսակում: Ճանապարհին գտնվող դրամական միջոցների համար ապահովություն են ծառայում ստացված կանխավճարները և երաշխավորությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեզրկումը չափվել է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիմունքով և արտացոլում է ռիսկին ենթարկվող գործիքների կարճ ժամկետները: Հիմք ընդունելով պայմանագրային կողմերի արտաքին վարկանիշները՝ Խումբն իր դրամական միջոցների և դրանց համարժեքների պարտքային ռիսկը գնահատում է որպես ցածր:

Ընթացիկ հաշիվների և ճանապարհին գտնվող դրամական միջոցների գծով արժեզրկման գծով պահուստ չի ճանաչվել ՓՀՄՍ 9-ի համաձայն:

*(iii) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի հեղինակությունը վտանգելու:

**Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրով մնացած մարման ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները:

| 31 դեկտեմբերի 2022թ. | | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Ընդամենը | Ցպահանջ | Մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 1,326,704 | 1,945,864 | 71,672 | 23,009 | 115,045 | 138,053 | 1,598,085 | - |
| Վաճառակարության գծով պարտավորություններ | 328,131 | 415,454 | - | 14,718 | 77,436 | 95,284 | 228,017 | - |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 8,287,169 | 8,287,169 | 57,905 | 7,903,569 | 139,543 | 120,788 | 65,364 | - |
| | **9,942,004** | **10,648,487** | **129,577** | **7,941,296** | **332,024** | **354,125** | **1,891,466** | **-** |

| 31 դեկտեմբերի 2021թ. | | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Ընդամենը | Ցպահանջ | Մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 589,849 | 744,268 | 32,594 | 10,216 | 51,082 | 61,298 | 589,077 | - |
| Վաճառակարության գծով պարտավորություններ | 298,927 | 372,867 | - | 12,296 | 64,525 | 93,289 | 199,941 | 2,816 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 10,163,669 | 10,163,669 | 57,246 | 9,795,598 | 157,026 | 29,843 | 123,956 | - |
| | **11,052,445** | **11,280,804** | **89,840** | **9,818,110** | **272,633** | **184,430** | **912,974** | **2,816** |

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

*(iv) Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

**Արժութային ռիսկ**

Արժութային ռիսկին Խմբի ենթարկվածությունը կապված է Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխատվությունների արժույթի հետ: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուբլով:

**Ենթարկվածություն արժութային ռիսկին**

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արդժութային ռիսկին:

| հազ. դրամ | ԱՄՆ դոլարով արտահայտված 2022թ. | Եվրոյով արտահայտված 2022թ. | Ռուբլով արտահայտված 2022թ. | ԱՄՆ դոլարով արտահայտված 2021թ. | Եվրոյով արտահայտված 2021թ. | Ռուբլով արտահայտված 2021թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Առևտրական դեբիտորական պարտքեր | 1,724 | - | 123,106 | - | - | 81,734 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 24,937 | 8,108 | 256,197 | 47,707 | 75,599 | 3,745,037 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | 43,293 | 6,091 | 426,477 | 214,027 | 52,437 | 283,513 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | (828) | - | (114,730) | - | - | (137,021) |
| **Զուտ ենթարկվածություն** | **69,126** | **14,199** | **691,050** | **261,734** | **128,036** | **3,973,263** |

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

| << դրամով | Միջին փոխարժեք | | Տվյալ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | 2022թ. | 2021թ. | 2022թ. | 2021թ. |
| 1 ԱՄՆ դոլար | 434.86 | 503.81 | 393.57 | 480.14 |
| 1 եվրո | 459.48 | 596.65 | 420.06 | 542.61 |
| 1 ռուբլի | 6.48 | 6.84 | 5.59 | 6.42 |

*Զգայունության վերլուծություն*

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Արտարժույթի փոխարժեքի տատանումներից առաջացող օգուտը (կորուստը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնում կանխատեսվող վաճառքի և գնումների ազդեցությունը:

| **հազ. դրամ** | **Աճ** | **Նվազում** |
|---|---|---|
| | **Շահույթ կամ վնաս** | **Շահույթ կամ վնաս** |
| **31 դեկտեմբերի 2022թ.** | | |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ | (6,913) | 6,913 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ | (1,420) | 1,420 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ռուբլու նկատմամբ | (69,105) | 69,105 |
| **31 դեկտեմբերի 2021թ.** | | |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ | (26,173) | 26,173 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ | (12,804) | 12,804 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ռուբլու նկատմամբ | (397,326) | 397,326 |

**Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքների փոփոխությունները ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ հաստատուն թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Խմբի համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

*Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին*

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

| **հազ. դրամ** | **Հաշվեկշռային արժեք** | |
|---|---|---|
| | **2022թ.** | **2021թ.** |
| **Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական ակտիվներ | 6,077,150 | 1,622,105 |
| Ֆինանսական պարտավորություններ | (1,326,704) | (589,849) |
| | **4,750,446** | **1,032,256** |

*Իրական արժեքի զգայունության վերլուծություն հաստատուն տոկոսադրույքով գործիքների համար*

Խումբը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

## 22. Դուստր ընկերություններ

Ստորև ներկայացված են Խմբի դուստր ընկերությունները:

| Անվանումը | Գրանցման երկիրը | Հիմնական գործունեությունը | Մեխականության % 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|---|
| «Լեհ-Մել Սերվիս» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | Ընկերության հիմնական գործունեությունը գոփազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն է: | 100% | 100% |
| «Մեգա Պանոռամա» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | Ընկերության գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից: | 50% | 50% |

## 23. Պայմանական դեպքեր

### (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խմբի տերմինալները ապահովագրված են: Այնուամենայնիվ, Խումբն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### (բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

### (գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2021թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2021թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են սառը ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում 200 միլիոն դրամը հարկային տարում.

- միջպետական գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջպետական գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերտային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 24. Կապակցված կողմեր

**(ա) Մայր ընկերություն և վերջնական հսկող կողմ**

Ընկերության անմիջական և վերջնական մայր ընկերությունն է Կիպրոսում գրանցված Lendasy Trading Ltd, որի վերջնական հսկող անձն է Վոլիա Կիրնիցկայան:

Ընկերության վերջնական մայր ընկերությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

**(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի անդամների և ղեկավարության հետ**

*(i) Տնօրենների խորհրդի և ղեկավարության վարձատրությունը*

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է սառը ներկայացված վարձատրությունը, որը ներառված է անձնակազմի գծով ծախսերում:

| հազ. դրամ | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևավճարներ | 283,694 | 75,954 |

*(ii) Գործարքներ Տնօրենների խորհրդի և ղեկավարության հետ*

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը սուր 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2022թ. | 2021թ. | 2022թ. | 2021թ. |
| Ցրամադրված փոխառություններ | - | 61,000 | 4,900 | 66,900 |

*(iii) Գործարքներ սեփականատերերի հետ*

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2022թ. | 2021թ. | 2022թ. | 2021թ. |
| **Ստացված վարկեր և փոխառություններ** | | | | |
| Բաժնետերեր | 1,956,280 | 820,066 | 1,326,704 | 589,849 |

Ստացված վարկերը և փոխառությունները ենթակա են մարման 2027թ-ին՝ 11% և 0% առկոսադրույքով:

## 25. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

## 26. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների կողմից: 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել գործող ստանդարտների մի շարք փոփոխություններ, որոնք սակայն չունեն նշանակալի ազդեցություն խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**(ա) Համախմբման հիմունքներ**

*(i) Բիզնես միավորումներ*

Բիզնես միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որն այն ամսաթիվն է, երբ վերահսկողությունը փոխանցվում է խմբին (Ծանոթագրություն 26(ա)(iii)):

Խումբը գուդվիլի չափումն իրականացնում է ձեռքբերման ամսաթվին որպես՝

- փոխանցված հատուցման իրական արժեք, գումարած
- ձեռք բերվող կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերի ճանաչված գումարը, գումարած
- ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում՝ ձեռքբերվող կազմակերպությունում նախկինում գոյություն ունեցող բաժնեմասը, հանած
- ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների զուտ ճանաչված գումարը (որպես կանոն՝ իրական արժեքը):

Երբ տարբերությունը բացասական է, գեղչով ձեռքբերումից օգուտը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխանցված հատուցումը չի ներառում նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը վերաբերող գումարները: Նման գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկման հետ կապված ծախսերի, որոնք Խումբը կրում է բիզնես միավորման հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

*(ii) Չվերադասվող բաժնեմասեր*

Չվերադասվող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չվերադասվող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Դուստր կազմակերպությունում խմբի բաժնեմասի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում հսկողության կորստի, հաշվառվում են որպես բաժնային գործառնություններ:

*(iii) Դուստր կազմակերպություններ*

Դուստր կազմակերպությունները խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Խումբը վերահսկողություն ունի կազմակերպության նկատմամբ, երբ այդ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և կազմակերպության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Անհրաժեշտության դեպքում դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություններում կատարվում են փոփոխություններ՝ խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպություններում չվերահսկող բաժնեմասերին բաժին ընկնող վնասը վերագրվում է չվերահսկող բաժնեմասերին, նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

*(iv) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ*

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

**(բ) Հասույթ**

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

**(գ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր**

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

**(դ) Արտարժույթ**

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստը իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխում, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**(զ) Ցահույթահարկ**

Ցահույթահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է բիզնես միավորումներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

*(i) Ընթացիկ հարկ*

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով հարկի վճարվելիք կամ առացվելիք գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Վճարվելիք ընթացիկ հարկը ներառում է նաև շահաբաժինների գծով առաջացող հարկային պարտավորությունը:

*(ii) Հետաձգված հարկ*

Հետաձգված հարկը ճանաչվում է Ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում՝

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում բիզնես միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում կատարած ներդրումներին, այնքանով որքանով Խումբն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչման հետ կապված:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումների մասով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Խմբի առանձին դուստր կազմակերպությունների գործարար ծրագրերի հիման վրա:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ ակտիվները:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը ունի պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

## (է) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

## (ը) Հիմնական միջոցներ

### (i) *Ճանաչում և չափում*

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից առացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից առացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «Այլ եկամուտներ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

*(ii) Հետագա ծախսումներ*

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ հստակ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

*(iii) Մաշվածություն*

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր բաղկացուցիչների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

| | |
|---|---|
| – վճարումների պրոցեսինգի սարքավորումներ | 8 տարի |
| – համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ | 1-5 տարի |
| – տնտեսական միջոցներ | 5 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5-10 տարի |
| – վարձակալված գույքի բարելավում | 5-20 տարի |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում:

**(յթ) Ոչ նյութական ակտիվներ**

*(i) Գուդվիլ*

Գուդվիլը, որն առաջանում է դուստր կազմակերպությունների ձեռքբերման արդյունքում, չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

*(ii) Այլ ոչ նյութական ակտիվներ*

Խմբի կողմից ձեռքբերված այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

*(iii) Հետագա ծախսումներ*

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

*(iv) Ամորտիզացիա*

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի (բացառությամբ գուդվիլի) օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

| | |
|---|---|
| – համակարգչային ծրագրեր | 10 տարի |
| – լիցենզիաներ | 10 տարի |

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում:

**(ժ) Ֆինանսական գործիքներ**

*(i) Ճանաչում և սկզբնական չափում*

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

*(ii) Դասակարգում և հետագա չափում*

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված առկոսների վճարումներ են:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այստեղ ներառված են բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում**

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի առացումը, ապահովել առկոսային դրոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

**Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխառվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի նկատմամբ զեղչով կամ հավելագնով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարով, որն ըստ էության իրենից ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսը (որը կարող է ներառել լրացուցիչ ողջամիտ փոխհատուցումը պայմանագրի վաղաժամ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է սկզբնական ճանաչման պահին:

**Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

**Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ օգուտը և կորուստները, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում*

**Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ առացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ առկոսադրույքով, նվազագույնը 10 առկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացորդային ժամանակահատվածում:

*(iv) Ապաճանաչում*

**Ֆինանսական ակտիվներ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ առանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*(v) Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը ավյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

**(h) Բաժնեհիրական կապիտալ**

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

*Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սոուվորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

**(յ) Արժեզրկում**

***(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ***

*Ֆինանսական գործիքներ*

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Խումբը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկը) նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:
Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին:

*Ակնկալվող պարտքային կորուստների չափում*

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերություն):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

*Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

**Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

*(ii)* *Ոչ ֆինանսական ակտիվներ*

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Գուդվիլի և օգտակար ծառայության անսահմանափակ ժամկետ ունեցող կամ շահագործման համար դեռ ոչ պիտանի ոչ նյութական ակտիվների համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Խմբի կորպորատիվ ակտիվները չեն առաջացնում առանձին դրամական միջոցների հոսքեր և օգտագործվում են մեկից ավելի դրամաստեղծ միավորի կողմից: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են դրամաստեղծ միավորների ողջամիտ և հետեւողական հիմունքով և ստուգվում են արժեզրկման տեսանկյունից այն դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգման շրջանակներում, որի բաշխվում է կորպորատիվ ակտիվը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև վերջիններիս ներկա արժեքը՝ օգտագործելով նախքան հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը բաշխվում է այնպես, որ նախ նվազեցվի դրամաստեղծ միավորին (կամ դրամաստեղծ միավորների խմբին) բաշխված գուդվիլի հաշվեկշռային արժեքը և, այնուհետև, այդ դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ համամասնորեն:

Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, պարզելու համար, թե արդյոք գոյություն ունի որևէ հայտանիշ ըստ որի արժեզրկումից կորուստը նվազել է կամ այլևս գոյություն չունի: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այնքանով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

**(իս) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են սկզբնավող ապագա դրամական հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքաչափով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

**(ծ) Վարձակալություն**

Պայմանագրի սկզբում Խումբը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

*(ւ) Խումբը՝ որպես վարձակալ*

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապամոնտաժման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած առացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Խմբին չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Խումբը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Խումբը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամortիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Խմբի գնահատականի փոփոխություն, եթե Խումբը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Խումբը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Խումբը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

*(vi) Խումբը՝ որպես վարձատու*

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Երբ Խումբը հանդես է գալիս որպես վարձատու, վարձակալության սկզբում այն որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական կամ գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելիս Խումբը գնահատում է, թե արդյոք վարձակալության շրջանակում փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Եթե ռիսկերն ու հատույցները փոխանցվում են, վարձակալությունը դասակարգվում որպես ֆինանսական վարձակալություն, այլապես՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս, Խումբը դիտարկում է որոշակի ցուցանիշներ, մասնավորապես, արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի անառեսական ծառայության մեծ մասը:

**(կ) Համադրելի տեղեկատվություն**

*(i) Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության ներկայացման փոփոխություն*

2022թ. ընթացքում ղեկավարությունը վերագնահատել է բանկերում պահվող հաշիվների դասակարգումը, և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդները (Ծանոթագրություն 15) «դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածից վերադասակարգվել են «օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ»: Այս հատուկ հաշիվների մնացորդները 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 298,529 հազար դրամ:

| հազ. դրամ | Ըստ 2021թ. հաշվետվության | Վերադասակարգում | 2021թ. վերադասակարգված |
|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 10,549,045 | (1,265,938) | 9,283,107 |
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | - | 1,265,938 | 1,265,938 |

*(ii) Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության ներկայացման փոփոխություն*

Վերը նշված վերագնահատման արդյունքում 2021թ. համար իրականացվել են հետևյալ վերադասակարգումները՝ 2022թ. ներկայացման հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

| հազ. դրամ | Ըստ 2021թ. հաշվետվության | Վերադասակարգում | 2021թ. վերադասակարգված |
|---|---|---|---|
| Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ | - | (967,409) | (967,409) |
| Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից՝ մինչև շահութահարկի և տոկոսների վճարումը | 7,184,222 | (967,409) | 6,216,813 |
| Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից | 6,690,841 | (967,409) | 5,723,432 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ | 4,788,048 | (967,409) | 3,820,639 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները սա 1 հունվարի | 6,062,055 | (298,529) | 5,763,526 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները սա 31 դեկտեմբերի | 10,549,045 | (1,265,938) | 9,283,107 |

## 27. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

### (ա) Մեկ գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հակվանիշ ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և ապագործարկման պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Սյուս բոլոր գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

Փոփոխությունների կիրառումը նշանակալի ազդեցություն չի ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

### (բ) Պարտավորությունների դասակարգումն ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

2020թ-ին հրապարակված փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանել պարտավորության ընթացիկ կամ ոչ ընթացիկ լինելը որոշելու պահանջները և կիրառելի են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Այնուամենայնիվ, ՀՀՄՍԽ-ն հետագայում առաջարկել է ՀՀՄՍ 1-ի լրացուցիչ փոփոխություններ և 2020թ. փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի հետաձգում մինչև 2024թ. հունվարի 1-ը: Այս շարունակական զարգացումների պատճառով Խումբը չի կարող որոշել այդ փոփոխությունների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակաշրջանում: Խումբը հետևում է զարգացումներին:

### (գ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր և փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* և ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* փոփոխություններ,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ),
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ),

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի LIBOR դրույքով ֆինանսական պարտավորություններ:

***(ii) Հեջի հաշվառում***

Փոփոխությունները նախատեսում են բացառություններ հեջի հաշվառման պահանջների հետ կապված հետևյալ ոլորտներում.

- Թույլ տալ փոփոխություն հեջավորման հարաբերության նախորոշման հետ կապված բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունների արտացոլելու համար:
- Բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունների արտացոլելու համար դրամական հոսքերի հեջում հեջավորված հոդվածի գծով փոփոխություն կատարելիս՝ դրամական հոսքերի հեջի պահուստում կուտակված գումարը կդիտարկվի որպես հիմնված այն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքի վրա, որով որոշվում են հեջավորված ապագա դրամական հոսքերը:
- Երբ հոդվածների խումբը նախորոշվում է որպես հեջավորված հոդված, և խմբի հոդվածի հետ կապված կատարվում է փոփոխություն բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունների արտացոլելու համար, հեջավորված հոդվածները բաշխվում են ենթախմբերի հեջավորվող ուղենիշային տոկոսադրույքների հիման վրա:
- Եթե Խումբը ողջամտորեն ակնկալում է, որ այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքն առանձին նույնականացվող է 24 ամսվա ընթացքում, ապա չի արգելվում տոկոսադրույքը նախորոշել որպես պայմանագրորեն չհատկորոշված ռիսկային բաղադրիչ, եթե այն առանձին նույնականացվող չէ նախորոշման ամսաթվի դրությամբ:

Հեջի հաշվառման բացակայության հետևանքով Խումբը չի ակնկալում որևէ ազդեցություն IBOR-ի անցման հետ կապված:

***(iii) Բացահայտում***

Փոփոխությունները Խմբից կպահանջեն բացահայտել լրացուցիչ տեղեկատվություն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում առաջացող ռիսկերին Խմբի ենթարկվածության և ռիսկերի կառավարման համար իրականացվող համապատասխան գործունեության վերաբերյալ:

***(iv) Անցում***

Խումբը մտադիր է կիրառել փոփոխությունները 2021թ. հունվարի 1-ից: Փոփոխությունների կիրառումն ազդեցություն չի ունենա 2020թ. կամ նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված գումարների վրա:

**(գ) Այլ ստանդարտներ**

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *COVID-19 բռնկման հետ հետ կապված զիջումներ վարձակալության գծով (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)*
- *Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)*
- *Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)*
- *Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ*

**«Թել-Մել» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ**
**2020թ. համար**

**Բովանդակություն**


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## «Թել-Սել» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թել-Սել» ՓԲԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՄԽ կանոնագիրք*) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Այլ հանգամանք

Խմբի 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2020թ. հունիսի 29-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված պատասխանատվությամբ անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Խումբը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարա չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնությունները և իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպությունների կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LL C

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 հունիսի 2021թ.

| **հազ. դրամ** | **Ծնթզ.** | **31 դեկտեմբերի 2020թ.** | **31 դեկտեմբերի 2019թ.** |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 9 | 780,446 | 693,954 |
| Ոչ նյութական ակտիվներ | 10 | 516,352 | 88,916 |
| Գուդվիլ | 11 | 1,157,700 | 1,157,700 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 19 | 189,356 | 252,437 |
| Կանխավճարներ | | 39,784 | 28,751 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 8 | 46,815 | 31,234 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | **2,730,453** | **2,252,992** |
| | | | |
| Պաշարներ | 12 | 76,592 | 89,520 |
| Ներդրումներ | | 11,120 | 27,340 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 13 | 799,467 | 624,356 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | | 1,555 | 6,211 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 14 | 6,062,055 | 6,652,983 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | **6,950,789** | **7,400,410** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **9,681,242** | **9,653,402** |
| | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Բաժնետոմսական կապիտալ | 15 | 150,000 | 150,000 |
| Պահուստներ | 15 | 35,000 | 35,000 |
| Չբաշխված շահույթ | | 1,608,583 | 750,343 |
| **Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ** | | **1,793,583** | **935,343** |
| Չվերադարձվող բաժնեմաս | | 11,889 | 11,889 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **1,805,472** | **947,232** |
| | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 17 | 498,021 | 175,308 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 18 | 148,280 | 206,928 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 19 | 97,375 | 225,545 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **743,676** | **607,781** |
| | | | |
| Վարկեր և փոխառություններ | 17 | - | 800,570 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 18 | 64,522 | 51,710 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 19 | 6,830,599 | 7,096,946 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 236,973 | 149,163 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | **7,132,094** | **8,098,389** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **7,875,770** | **8,706,170** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **9,681,242** | **9,653,402** |

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 50-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Ծնթգ. | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 6,682,403 | 5,186,415 |
| Գործակալներին վճարված միջնորդավճարներ | | (2,566,448) | (2,161,214) |
| Այլ եկամուտ | 6(ա) | 211,079 | 197,938 |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (1,132,899) | (746,951) |
| Վարձակալության գծով այլ ծախսեր | 19(գ) | (448,438) | (423,571) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (211,511) | (166,123) |
| Վճարներ մամուլի կրպակներում տեղադրված տերմինալների համար | | (211,190) | (162,082) |
| Դրամական միջոցների փոխադրման ծախսեր | | (125,132) | (91,925) |
| Գովազդ և շուկայավարում | | (119,731) | (92,247) |
| Աջակցման և սպասարկման ծախսեր | | (101,410) | (130,833) |
| Բանկային ծառայությունների վճարներ | | (97,653) | (36,861) |
| Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ | | (48,324) | (15,731) |
| Այլ ծախսեր | 6(բ) | (456,283) | (328,277) |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | | **1,374,463** | **1,028,538** |
| Ֆինանսական եկամուտ | 7 | 94,986 | 41,475 |
| Ֆինանսական ծախսեր | 7 | (49,467) | (67,077) |
| **Զուտ ֆինանսական ծախսեր** | 7 | **45,519** | **(25,602)** |
| Շահույթ նախքան շահութահարկով հարկումը | | **1,419,982** | **1,002,936** |
| Շահութահարկի գծով ծախս | 8 | (290,647) | (220,840) |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | | **1,129,335** | **782,096** |
| | | | |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք վերագրելի՝** | | | |
| Ընկերության սեփականատերերին | | 1,129,335 | 782,096 |
| Չվերահսող բաժնեմասին | | - | - |
| | | **1,129,335** | **782,096** |

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արամ Ազատյան
Գլխավոր տնօրեն

«ԹԵԼ-ՍԵԼ»
"TEL-CELL"
"TEL-CELL"
02703102

Արթուր Թորոսյան
Գլխավոր հաշվապահ

| **հազ. դրամ** | **Ընկերության սեփականատերերին վերագրելի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Բաժնետիրական կապիտալ** | **Պահուստներ** | **Չբաշխված շահույթ** | **Ընդամենը** | **Չվերահսկող բաժնեմաս** | **Ընդամենը սեփական կապիտալ** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | 150,000 | 35,000 | 498,387 | 683,387 | 11,889 | 695,276 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | 782,096 | 782,096 | - | 782,096 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | - | - | **782,096** | **782,096** | - | **782,096** |
| **Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | | | | | | |
| Շահաբաժիններ | - | - | (502,000) | (502,000) | - | (502,000) |
| Այլ գործառնություններ | - | - | (28,140) | (28,140) | - | (28,140) |
| **Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | - | - | **(530,140)** | **(530,140)** | - | **(530,140)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **150,000** | **35,000** | **750,343** | **935,343** | **11,889** | **947,232** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 150,000 | 35,000 | 750,343 | 935,343 | 11,889 | 947,232 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | 1,129,335 | 1,129,335 | - | 1,129,335 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | - | - | **1,129,335** | **1,129,335** | - | **1,129,335** |
| **Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | | | | | | |
| Շահաբաժիններ* | - | - | (250,000) | (250,000) | - | (250,000) |
| Այլ գործառնություններ | - | - | (21,095) | (21,095) | - | (21,095) |
| **Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | - | - | **(271,095)** | **(271,095)** | - | **(271,095)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **150,000** | **35,000** | **1,608,583** | **1,793,583** | **11,889** | **1,805,472** |

* 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 244,535 հազար դրամ ընդհանուր գումարով հայտարարված շահաբաժինները փոխարկվել են վարկերի և փոխառությունների (Ծանոթագրություն 17 (բ)):

| հազ. դրամ | Ծնթգ. | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|---|
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված միջնորդավճարներ | | 6,166,814 | 4,701,480 |
| Վճարված միջնորդավճարներ | | (2,508,610) | (2,038,809) |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 133,284 | (9,799) |
| Մուտքեր մատուցված այլ ծառայություններից | | 336,693 | 397,467 |
| Ստացված այլ եկամուտ | | 70,781 | 47,701 |
| Վճարումներ աշխատակիցներին | | (1,014,119) | (727,927) |
| Վճարված այլ ծախսեր | | (1,535,900) | (1,292,523) |
| Ստացված տոկոսներ | | 49,187 | 34,136 |
| Վճարումների հարկերի գծով բացառությամբ շահութահարկի | | 66 | (49,954) |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | | |
| Օպերատորներին վճարվելիք գումարներ | | (501,254) | 1,626,140 |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | | 6,674 | 796 |
| Ստացված կանխավճարներ | | (88,084) | 212,754 |
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան շահութահարկի և առկոսների վճարումը** | | **1,115,532** | **2,901,462** |
| Վճարված շահութահարկ | | (213,761) | (182,066) |
| Վճարված առկոսներ | | (45,969) | (43,668) |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | | **855,802** | **2,675,728** |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից | | 10,759 | 14,348 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (677,752) | (326,854) |
| Ավանդի տեղաբաշխում | | - | (20,000) |
| Ավանդի ելքագրում | | 20,510 | - |
| Տրամադրված փոխառություններ | | (11,900) | (1,650) |
| Տրամադրված փոխառությունների մարում | | 7,610 | 33,760 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(650,773)** | **(300,396)** |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | | 375,000 | 43,056 |
| Վարկերի և փոխառությունների մարում | | (1,100,890) | (176,856) |
| Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ | | (45,836) | (35,926) |
| Վճարված շահաբաժիններ | | (36,029) | (471,436) |
| Գործառնություններ սեփականատերերի հետ | | (21,095) | (28,140) |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(828,850)** | **(669,302)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | | **(623,821)** | **1,706,030** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | | 6,652,983 | 4,928,760 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 32,893 | 18,193 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի** | 14 | **6,062,055** | **6,652,983** |

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 50-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|
| 1. Հաշվետու կազմակերպություն | 11 |
| 2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ | 12 |
| 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ | 12 |
| 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում | 12 |
| 5. Հասույթ | 13 |
| 6. Եկամուտ և ծախսեր | 15 |
| 7. Զուտ ֆինանսական ծախսեր | 16 |
| 8. Շահութահարկ | 16 |
| 9. Հիմնական միջոցներ | 18 |
| 10. Ոչ նյութական ակտիվներ | 19 |
| 11. Գույվիլ | 20 |
| 12. Պաշարներ | 21 |
| 13. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 21 |
| 14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 21 |
| 15. Կապիտալ և պահուստներ | 22 |
| 16. Կապիտալի կառավարում | 23 |
| 17. Վարկեր և փոխառություններ | 24 |
| 18. Վարձակալություն | 25 |
| 19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 26 |
| 20. Իրական արժեք և ռիսկերի կառավարում | 27 |
| 21. Դուստր կազմակերպություններ | 32 |
| 22. Պայմանական դեպքեր | 33 |
| 23. Կապակցված կողմեր | 34 |
| 24. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր | 35 |
| 25. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ | 49 |

# 1. Հաշվետու կազմակերպություն

**(ա) Հայաստանի գործարար միջավայրը**

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի վարվեխություններին, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է առեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Bacil.եռնային Ղարաբաղում 2020թ. սեպտեմբերին վերսկսված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, և COVID-19 համաճարակն էլ ավելի են մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

**(բ) Կազմակերպչական կառուցվածքը և գործունեությունը**

«Թել-Մել» ՓԲԸ-ն («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունները («Խումբ») փակ բաժնետիրական և աննմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ են՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն 2007թ-ին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: 2007թ. հուլիսի 24-ին Ընկերությունը ստացել է դրամական վոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- վճարումների ընդունման ծառայությունների մատուցումը, օրինակ՝ վերջնական օգտագործողների կոմունալ ծառայությունների վճարների, վարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունում ծառայություններ մատուցողների (Օպերատորների) անունից իր սեփական և գործակալների տերմինալների միջոցով,
- դրամական վոխանցումներ,
- կանխիկացման ծառայություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Հակոբ Հակոբյան փող. 3 (հիմնական մասնաշենքի 1-ին սեկցիա, 3րդ շենք):

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում 9 մասնաճյուղերի և ավելի քան 3500 վճարային տերմինալների միջոցով: Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության բաժնետերերն են՝ Lendasy Trading Ltd (56.28%), Արամ Սարգսյանը (37.91%) և Տաթևիկ Ավետիսյանը (5.81%): Խմբի վերջնական վերահսկող անձն է Վռիհա Կիրակոսյան:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

## 2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

**Համապատասխանության հավաստում**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթն է և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշատարվում են այլ նշումներ:

## 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ճշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, և այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է ճշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է Ծանոթագրություն 11-ում՝ գուդվիլի արժեզրկման առումգման համար կիրառվող հիմնական ենթադրությունների և այն դրամասառեղծ միավորի որոշման հետ կապված, որին բաշխվում է գուդվիլը:

***Իրական արժեքի չափում***

Խմբի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահատումներ պահանջում են ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված եզակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ*. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնահաշված գները (չճշգրտվող):
- *2-րդ մակարդակ*. 1-ին մակարդակում ներառված գնահաշված գներից տարբեր եզակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ անուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից առացվող):
- *3-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության գծով եզակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի եզակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված երկկետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն ընդեր մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղաշարժումներն Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

## 5. Հասույթ

### (ա) Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը հիմնականում առանում է ծառայություն մատուցողների («Օպերատորների») անունից վերջնական օգտագործողներից վճարումների ընդունման ծառայություններից և մատուցված այլ ծառայություններից:

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | | |
| Միջնորդավճարներ վճարումների ընդունման ծառայություններից | 6,153,108 | 4,911,613 |
| Հասույթ մատուցված ծառայություններից | 301,137 | 157,341 |
| Միջնորդավճարներ կանխիկացման ծառայություններից | 134,613 | 45,094 |
| Միջնորդավճարներ դրամական փոխանցումներից | 57,594 | 45,484 |
| Այլ հասույթ | 35,951 | 26,883 |
| **Ընդամենը հասույթ** | **6,682,403** | **5,186,415** |

### (բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերված աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների:

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| **Շուկա** | | |
| Հայաստանի Հանրապետություն | 6,622,112 | 5,137,145 |
| ԱՊՀ այլ երկրներ | 60,291 | 49,270 |
| | **6,682,403** | **5,186,415** |
| **Հասույթի ճանաչման ժամկետներ** | | |
| Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ | 6,682,403 | 5,186,415 |
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **6,682,403** | **5,186,415** |

**(գ) Պայմանագրերի գծով մնացորդներ**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

| հազ. դրամ | Ծնթզ. | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|---|
| «Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր | 13 | 650,449 | 518,492 |

Չի արտամաղվել տեղեկատվություն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացած կատարման պարտականությունների վերաբերյալ, որոնց սկզբնական ակնկալվող տևողությունը կազմում է մեկ տարի կամ պակաս, ինչպես դա թույլատրվում է ՖՀՄՍ 15-ով:

**(դ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն**

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է վոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

| Ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչում ՖՀՄՍ 15 համաձայն |
|---|---|---|
| **Վճարումների ընդունման, կանխիկացման և դրամական փոխանցումների ծառայություններ** | Վճարումների ընդունման և կանխիկացման ծառայությունների գծով կատարման պարտականությունները կատարվում են, երբ Ընկերությունն ընդունում է վճարումներ Օպերատորների վերջնական հաճախորդներից: Վճարումների ընդունման, կանխիկացման կամ դրամական փոխանցումների ծառայությունների ակտերը ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Վճարումների ընդունման, կանխիկացման և դրամական փոխանցումների ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցման ժամանակ: Կատարման պարտականության կատարման առաջընթացի չափումը հիմնված է ընդունված վճարումների, կանխիկացման գործառնությունների և դրամական փոխանցումների ծավալի վրա: |
| **Սպասարկման և գովազդի ծառայություններ** | Սպասարկման և գովազդի ծառայությունների հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Սպասարկման ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ֆիքսված ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցման ժամանակ՝ անցած ժամանակահատվածը կիրառելով որպես կատարման պարտականության կատարման առաջընթացի չափման միավոր: |

## 6. Եկամուտ և ծախսեր

### (ա) Այլ եկամուտ

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| Զուտ եկամուտ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | 133,284 | 81,369 |
| Զուտ եկամուտ պաշարների վաճառքից | 11,901 | 15,188 |
| Օգուտ հիմնական միջոցների օտարումից | 7,014 | 13,920 |
| Տույժեր և տուգանքներ | - | 12,810 |
| Այլ | 58,880 | 74,651 |
| | **211,079** | **197,938** |

### (բ) Այլ ծախսեր

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| Հաճախորդների սպասարկում | 59,639 | 33,368 |
| Պրոցեսինգային համակարգի սպասարկում | 48,660 | 22,626 |
| Զուտ վնաս արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | 46,172 | 12,924 |
| Նվիրատվություններ | 38,176 | 22,197 |
| Արտաքին կազմակերպություններից ստացված ծառայություններ | 35,980 | 30,251 |
| Միջնորդավճարներ | 30,734 | 17,192 |
| Կոմունալ և կապի ծառայություններ | 26,885 | 26,310 |
| Փոխադրման ծախսեր | 25,915 | 22,394 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 21,711 | 30,639 |
| Գրասենյակային պիտույքներ | 15,518 | 6,938 |
| Պահանջներ | 15,481 | 66,548 |
| Մասնագիտական ծառայություններ | 10,120 | 8,913 |
| Հարկեր և տուգանքներ | 9,369 | 6,937 |
| Անվտանգության ծառայություն | 7,728 | 7,842 |
| Այլ | 64,195 | 13,198 |
| | **456,283** | **328,277** |

## 7. Զուտ ֆինանսական ծախսեր

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| **Շահույթում կամ վնասում ճանաչված** | | |
| Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների գծով | 49,187 | 34,342 |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 45,799 | 7,133 |
| **Ֆինանսական եկամուտ** | **94,986** | **41,475** |
| | | |
| Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով | (27,272) | (53,511) |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով | (22,195) | (13,566) |
| **Ֆինանսական ծախսեր** | **(49,467)** | **(67,077)** |
| **Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր** | **45,519** | **(25,602)** |

## 8. Շահութահարկ

### (ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խմբի համար կիրառելի հայկական ընկերությունների համար գործող շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2019թ-ին՝ 20%):

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| **Ընթացիկ հարկի գծով ծախս** | | |
| Ընթացիկ տարի | (306,228) | (209,975) |
| | **(306,228)** | **(209,975)** |
| **Հետաձգված հարկի գծով ծախս** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | 15,581 | (10,865) |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **(290,647)** | **(220,840)** |

**Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում**

| | 2020թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **%** | **հազ. դրամ** | **%** |
| Շահույթ նախքան շահութահարկով հարկումը | 1,419,982 | | 1,002,936 | |
| Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով | (255,597) | (18.0) | (200,587) | (20.0) |
| Հարկի դրույքաչափի նվազեցման հետևանք* | - | - | (4,210) | (0.4) |
| Չնվազեցվող ծախսեր | (35,050) | (2.5) | (16,043) | (1.6) |
| | **(290,647)** | **(20.5)** | **(220,840)** | **(22.0)** |

* Ճանաչված գումարն իրենից ներկայացնում է 2020թ. հունվարի 1-ից գործող ՀՀ օրենսդրության փոփոխությունների համաձայն շահութահարկի 20% դրույքաչափը 18%-ի նվազեցնելու հետևանքը:

**(գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ**

| **հազ. դրամ** | **1 հունվարի 2020թ.** | **Ճահույթում կամ վնասում ճանաչված** | **31 դեկտեմբերի 2020թ.** |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 10,755 | (5,410) | 5,345 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 2,175 | 11,578 | 13,753 |
| Վարկեր և փոխառություններ | 2,870 | - | 2,870 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 14,316 | 6,311 | 20,627 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | (45,437) | 11,353 | (34,084) |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 46,555 | (8,251) | 38,304 |
| **Զուտ հարկային ակտիվներ** | **31,234** | **15,581** | **46,815** |

| **հազ. դրամ** | **1 հունվարի 2019թ.** | **Ճահույթում կամ վնասում ճանաչված** | **31 դեկտեմբերի 2019թ.** |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 11,797 | (1,042) | 10,755 |
| Պաշարներ | 4,433 | (4,433) | - |
| Տրամադրված փոխառություններ | 1,115 | (1,115) | - |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 7,796 | (5,621) | 2,175 |
| Վարկեր և փոխառություններ | 3,189 | (319) | 2,870 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 13,769 | 547 | 14,316 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | - | (45,437) | (45,437) |
| Վարձակալության գծով պարտավորություններ | - | 46,555 | 46,555 |
| **Զուտ հարկային ակտիվներ** | **42,099** | **(10,865)** | **31,234** |

## 9. Հիմնական միջոցներ

| հազ. դրամ | Վճարումների պրոցեսինգի սարքավորումն. | Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ | Տնտեսական միջոցներ | Փոխադրա-միջոցներ | Վարձակալված գույքի բարելավում | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | 818,287 | 137,013 | 67,413 | 11,766 | 30,157 | 1,064,636 |
| Ավելացումներ | 259,820 | 26,851 | 12,183 | 8,188 | 15,392 | 322,434 |
| Օտարումներ | (19,964) | - | - | - | - | (19,964) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **1,058,143** | **163,864** | **79,596** | **19,954** | **45,549** | **1,367,106** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 1,058,143 | 163,864 | 79,596 | 19,954 | 45,549 | 1,367,106 |
| Ավելացումներ | 81,272 | 26,530 | 33,774 | 1,162 | 82,521 | 225,259 |
| Օտարումներ | (13,702) | (30) | (1,240) | - | - | (14,972) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **1,125,713** | **190,364** | **112,130** | **21,116** | **128,070** | **1,577,393** |
| ***Մաշվածություն*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | 442,618 | 87,544 | 42,188 | 2,247 | 5,181 | 579,778 |
| Տարվա մաշվածություն | 70,916 | 26,944 | 8,798 | 2,022 | 2,419 | 111,099 |
| Օտարումներ | (17,725) | - | - | - | - | (17,725) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **495,809** | **114,488** | **50,986** | **4,269** | **7,600** | **673,152** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 495,809 | 114,488 | 50,986 | 4,269 | 7,600 | 673,152 |
| Տարվա մաշվածություն | 86,986 | 30,365 | 12,201 | 2,726 | 2,744 | 135,022 |
| Օտարումներ | (10,022) | - | (1,205) | - | - | (11,227) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **572,773** | **144,853** | **61,982** | **6,995** | **10,344** | **796,947** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | | |
| Առ 1 հունվարի 2019թ. | 375,669 | 49,469 | 25,225 | 9,519 | 24,976 | 484,858 |
| Առ 31 դեկտեմբերի 2019թ. | 562,334 | 49,376 | 28,610 | 15,685 | 37,949 | 693,954 |
| **Առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **552,940** | **45,511** | **50,148** | **14,121** | **117,726** | **780,446** |

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 204,460 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի սարքավորումները (2019թ-ին՝ նման հիմնական միջոցներ չկային) գրավադրված են գրավով ապահովված վարկ 2 դիմաց (Ծանոթագրություն 17(ա)):

## 10. Ոչ նյութակա ակտիվներ

| հազ. դրամ | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ | Տերմինալի տեղադրման թույլտվություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | 117,038 | 16,089 | - | 133,127 |
| Ավելացումներ | 39,720 | - | - | 39,720 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **156,758** | **16,089** | - | **172,847** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 156,758 | 16,089 | - | 172,847 |
| Ավելացումներ | 65,452 | 392 | 375,000 | 440,844 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **222,210** | **16,481** | **375,000** | **613,691** |
| ***Ամորտիզացիա*** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | 65,303 | 8,054 | - | 73,357 |
| Տարվա ամորտիզացիա | 8,964 | 1,610 | - | 10,574 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **74,267** | **9,664** | - | **83,931** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 74,267 | 9,664 | - | 83,931 |
| Տարվա ամորտիզացիա | 12,142 | 1,266 | - | 13,408 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **86,409** | **10,930** | - | **97,339** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | |
| Առ 1 հունվարի 2019թ. | 51,735 | 8,035 | - | 59,770 |
| Առ 31 դեկտեմբերի 2019թ. | 82,491 | 6,425 | - | 88,916 |
| **Առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **135,801** | **5,551** | **375,000** | **516,352** |

## 11. Գուդվիլ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|
| «Մեգա Պանոռեյա» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 1,077,950 | 1,077,950 |
| «Թել-Մել Սերվիս» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 79,750 | 79,750 |
| | **1,157,700** | **1,157,700** |

**(ա) Գուդվիլ պարունակող դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգում**

Արժեզրկման ստուգման նպատակով գուդվիլը բաշխվում է Խմբի ընդհանուր գործառնություններին, բացառությամբ առցանց դրամախաղանակի աշխատանքից և դրամական վոխանցումներից ստացվող դրամական հոսքերի: Խումբը չունի ավելի փոքր դրամաստեղծ միավոր, որի միջոցով հնարավոր կլիներ վերահսկել գուդվիլը ներքին կառավարչական նպատակների համար:

Դրամաստեղծ միավորի վոխհատուցվող գումարը հիմնված է վերջինիս օգտագործման արժեքի վրա, որը որոշվել է զեղչելով Խմբի շարունակվող գործառնություններից առաջացող ապագա դրամական հոսքերը: Ընդունվել է, որ դրամաստեղծ միավորի վոխհատուցվող գումարը գերազանցում է վերջինիս հաշվեկշռային արժեքից և արժեզրկումից կորուստ չի ճանաչվել:

**Չեղչված դրամական հոսքերի կանխատեսումների համար կիրառված հիմնական ենթադրություններ**

Օգտագործման արժեքը որոշելու համար կիրառված հիմնական ենթադրություններն են զեղչման դրույքը և 2 հավաքան առևտուրների վճարումը, հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի մասհանումները շահույթի (EBITDA) մարժաները:

***(i) Զեղչման դրույք***

Դրամաստեղծ միավորի վոխհատուցվող գումարը որոշելու համար կիրառվել է 14.3% հավաքան հարկումը զեղչման դրույք:

Զեղչման դրույքը որոշվել է հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների փորձը և տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը, որը հիմնված է պարտքի լծակավորման 26.3% հնարավոր սիրույթի վրա՝ միջինում 13.7%% շուկայական առևտրադրույքով:

***(ii) Բյուջեով նախատեսված EBITDA-ի նվազում***

Արժեզրկման ստուգման համար օգտագործված բյուջեով նախատեսված EBITDA-ն ըստ կանխատեսումների կազմում է միջինը 13.6% 2021-2025թթ. կանխատեսման ժամանակաշրջանի համար, հիմնված է անցյալ ժամանակաշրջանների միտումների վրա և հաշվարկվում է կանխատեսման ժամանակաշրջանի տարեկան եվազման դրույքների հիման մինչև այն պահը, երբ Խմբի ազատ դրամական հոսքերի մեծությունը դառնում է բացասական:

- Կանխատեսվում է EBITDA-ի մարժայի աստիճանական եվազում մինչև 14.1% մինչև 2025թ., որը համապատասխանում է անցյալ ժամանակաշրջանների շուկայի անկման միտումներին:
- Եռելով ԱՄՀ-ի տվյալներից՝ կանխատեսվում է, որ հատույթը և գործառնական ծախսերը կաճեն ՀՀ գնաճին զուգահեռ:

***(iii) Զգայունություն ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ***

Կապիտալի միջին կշռված արժեքի 5.6% աճը կհանգեցնի գուդվիլի ամբողջական արժեզրկմանը:

## 12. Պաշարներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|
| Պահեստամասեր | 50,038 | 80,010 |
| Այլ | 26,554 | 9,510 |
| | **76,592** | **89,520** |
| Պաշարների արժեքի նվազման հակադարձում | - | **(22,165)** |

## 13. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|
| Առևտրական դեբիտորական պարտքեր միջնորդավճարներ գծով | 572,499 | 416,680 |
| Առևտրական դեբիտորական պարտքեր այլ ծառայությունների գծով | 77,950 | 76,170 |
| Առևտրական դեբիտորական պարտքեր դրամական փոխանցումների գծով | - | 25,642 |
| **Ընդամենը առևտրական դեբիտորական պարտքեր** | **650,449** | **518,492** |
| Տրված կանխավճարներ | 129,339 | 84,496 |
| Բյուջեից առացվելիք գումարներ | - | 2,097 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 19,679 | 19,271 |
| **Ընդամենը այլ դեբիտորական պարտքեր** | **149,018** | **105,864** |
| **Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր** | **799,467** | **624,356** |

Պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

## 14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|
| Դրամական միջոցները դրամարկղում | 1,320,128 | 1,984,484 |
| Դրամական միջոցները տերմինալներում | 1,602,085 | 1,350,323 |
| Դրամական միջոցները ճանապարհին | 868,761 | 665,201 |
| Բանկային հաշիվների մնացորդներ | 2,271,081 | 2,652,975 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություններում** | **6,062,055** | **6,652,983** |

Բանկային հաշիվների մնացորդներում ներառված 140,433 հազար դրամ (2019թ-ին՝ 155,400 հազար դրամ) գումարով մնացորդը պահվում է դրամական փոխանցումների հատուկ օգտագործման համար, և մնացորդի եղբագրման գծով գործում է կարճաժամկետ սահմանափակում:

Տոկոսադրույքի ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 20-ում:

## 15. Կապիտալ և պահուստներ

### (ա) Բաժնետիրական կապիտալ

| *Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ* | Սովորական բաժնետոմսեր | |
|---|---|---|
| | **31 դեկտեմբերի 2020թ.** | **31 դեկտեմբերի 2019թ.** |
| Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված | 150,000 | 150,000 |
| Հայտարարված բաժնետոմսեր – անվանական արժեք | 1,000 դրամ | 1,000 դրամ |

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

**Սովորական բաժնետոմսեր**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

### (բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության և վերջինիս դուստր կազմակերպությունների բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով, բացառությամբ չբաշխված շահույթի համար գործող առողջ ներկայացված սահմանափակումների:

Օրենսդրության պահանջների համաձայն՝Ընկերությունը պետք է ձևավորի բաշխման ոչ ենթակա պահուստ իր չբաշխված շահույթից՝ իր բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով ապագա վնասները ծածկելու համար:

2020թ-ին Ընկերությունը հայտարարել է 250,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2019թ-ին՝ 502,000 հազար դրամ) և վճարել է 36,029 հազար դրամ (2019թ-ին՝ 471,436 հազար դրամ): 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 244,535 հազար դրամ ընդհանուր գումարով հայտարարված շահաբաժինները փոխարկվել են վարկերի և փոխառությունների: Մեկ բաժնետոմսից բաժին ընկնող շահաբաժինը կազմում է 1,667 դրամ (2019թ-ին՝ 3,347 դրամ):

## 16. Կապիտալի կառավարում

Խորհրդի քաղաքականությամբ պահանջվում է ապահովել կապիտալի կայուն բազա ներդրողների և վարկատուների և գործունեության հետագա կայուն զարգացումն ապահովելու համար: Տնօրենների խորհուրդը վերահսկում է կապիտալի եկամտաբերությունը, որը Խմբի կողմից որոշվում է որպես գործառնական գործունեության արդյունքի և ընդհանուր սեփական կապիտալի (առանց չվերահսկող բաժնեմասի) հարաբերակցություն: Տնօրենների խորհուրդը վերահսկում է նաև առկորական բաժնետոմսերի սեփականատերերին վճարվող շահաբաժինների մակարդակը:

Խումբը վերահսկում է կապիտալը՝ օգտագործելով ճշգրտված զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը: Այդ նպատակով ճշգրտված զուտ պարտքը սահմանվում է որպես պարտավորությունների ընդհանուր գումարը, որը ներառում է տոկոսակիր վարկերը և փոխառությունները՝ հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ստորև ներկայացված է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ճշգրտված զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը:

| **հազ. դրամ** | **2020թ.** | **2019թ.** |
|---|---|---|
| Ընդամենը պարտավորություններ | 7,875,770 | 8,706,170 |
| Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները | (6,062,055) | (6,652,983) |
| **Զուտ պարտք** | **1,813,715** | **2,053,187** |
| | | |
| Ընդամենը սեփական կապիտալ | 1,805,472 | 947,232 |
| **Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1.00** | **2.17** |

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման Խմբի մոտեցումը չի փոխվել:

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վճարային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վճարային կազմակերպությունների նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 100,000 հազար դրամ (2019թ-ին՝ 100,000 հազար դրամ): 2020թ և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափը:

## 17. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

| **հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2020թ.** | **31 դեկտեմբերի 2019թ.** |
|---|---|---|
| ***Ոչ ընթացիկ պարտավորություններ*** | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր | 375,000 | - |
| Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից | 123,021 | 175,308 |
| | **498,021** | **175,308** |
| ***Ընթացիկ պարտավորություններ*** | | |
| Գրավով ապահովված բանկային վարկեր | - | 800,570 |
| | - | **800,570** |
| | **498,021** | **975,878** |

### (ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների համար գործող պայմանները:

| | | | | **31 դեկտեմբերի 2020թ.** | | **31 դեկտեմբերի 2019թ.** | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **Արժույթ** | **Անվանակ. տոկոսադր.** | **Մարման տարի** | **Անվանակ. արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** | **Անվանակ. արժեք** | **Հաշվեկշռ. արժեք** |
| Գրավով ապահովված բանկային վարկ 1 | ՀՀ դրամ | 2% | 2020 | - | - | 800,570 | 800,570 |
| Գրավով ապահովված բանկային վարկ 2 | ՀՀ դրամ | 13% | 2023 | 375,000 | 375,000 | - | - |
| Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից | ՀՀ դրամ | 11% | 2022 | 123,021 | 123,021 | - | - |
| Գրավով չապահովված փոխառություն այլ կապակցված կողմերից | ՀՀ դրամ | 11% | 2022 | - | - | 175,308 | 175,308 |
| **Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ** | | | | **498,021** | **498,021** | **975,878** | **975,878** |

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավով ապահովված վարկերի դիմաց գրավադրված է Խմբի բաժնեռոմսերի 100%-ը: Բացի այդ, գրավով ապահովված վարկ 2 դիմաց գրավադրված են 204,460 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի սարքավորումները (Ծանոթագրություն 9):

**(բ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում**

| | Վարկեր և փոխառություններ | |
|---|---|---|
| **հազ. դրամ** | **2020թ.** | **2019թ.** |
| **Մնացորդը առ 1 հունվարի** | **975,878** | **1,106,626** |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | 375,000 | 43,056 |
| Վարկերի և փոխառությունների մարում | (1,100,890) | (192,801) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | **(725,890)** | **(149,745)** |
| **Հայտարարված շահաբաժիններից ստացված փոխառություններ** | **244,535** | - |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 27,272 | 53,511 |
| Վճարված տոկոսներ | (23,774) | (34,514) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **498,021** | **975,878** |

## 18. Վարձակալություն

Ստորև ներկայացված է տեղեկատվություն այն վարձակալությունների վերաբերյալ, որոնց շրջանակում Խումբը հանդես է գալիս որպես վարձակալ:

**(ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ**

| **հազ. դրամ** | **2020թ.** | **2019թ.** |
|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի | 252,437 | 131,474 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով ավելացումներ | - | 163,090 |
| Ժամանակաշրջանի մաշվածության գումար | (63,081) | (42,127) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **189,356** | **252,437** |

**(բ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում – վարձակալության գծով պարտավորություններ**

| **հազ. դրամ** | **2020թ.** | **2019թ.** |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի** | **258,638** | - |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | | |
| Ավելացումներ | - | 294,564 |
| Հիմնական գումարի մարում | (45,836) | (35,926) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | **(45,836)** | **258,638** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 22,195 | 13,566 |
| Վճարված տոկոսներ | (22,195) | (13,566) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **212,802** | **258,638** |

**(գ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ**

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն | 63,081 | 42,127 |
| Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ | 22,195 | 13,566 |
| Տեղամնասների սպասածքների վարձակալության ծախս և այլ կարճաժամկետ վարձակալություններ | 448,438 | 423,571 |

## 19. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|
| Օպերատորներին վճարվելիք գումարներ | 5,645,802 | 6,147,056 |
| Գործակալներին վճարվելիք գումարներ | 297,200 | 239,362 |
| Այլ առևտրական կրեդիտորական պարտքեր | 208,201 | 185,273 |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | 322,270 | 330,596 |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 10,389 | 5,258 |
| **Ընդամենը առևտրական կրեդիտորական պարտքեր** | **6,483,862** | **6,907,545** |
| Ստացված կանխավճարներ | 245,706 | 333,790 |
| Հաշվեգրված ծախսեր | 197,806 | 80,540 |
| Պետական բյուջե վճարվելիք գումարներ | 600 | 616 |
| **Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր** | **444,112** | **414,946** |
| **Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր** | **6,927,974** | **7,322,491** |
| Ընթացիկ | 6,830,599 | 7,096,946 |
| Ոչ ընթացիկ | 97,375 | 225,545 |

Օպերատորներին վճարվելիք գումարներն իրենցից ներկայացնում են օպերատորների առևտրից ընդունված վճարները, որոնք չեն փոխանցվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

## 20. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

**(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և իրական արժեք**

Ղեկավարության գնահատմամբ բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին՝ պայմանավորված ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթով կամ երկարաժամկետ ակտիվների և պարտավորությունների համար գործող շուկայական տոկոսադրույքների հետ մոտարկմամբ:

**(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում**

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (տես 20 (բ) (ii)),
- իրացվելիության ռիսկ (տես 20 (բ) (iii)),
- շուկայական ռիսկ (տես 20 (բ) (iv)):

***(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ***

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հասակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

Խմբի ներքին աուդիտի բաժինը վերահսկում է, թե ինչպես է ղեկավարությունը հսկում համապատասխանությունը Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի պահանջների հետ և ռազմավարական է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի համապատասխանության լինելն այն ռիսկերի տեսանկյունից, որոնց բախվում է Խումբը: Ներքին աուդիտի բաժինն իրականացնում է ռիսկերի կառավարման հսկողության համակարգի և ընթացակարգերի կանոնավոր և ընդարձակ ստուգումներ:

***(ii) Պարտքային ռիսկ***

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները, և առաջանում է հիմնականում Խմբի հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին**

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Ստորև ներկայացված է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին հաշվեառու ամսաթվի դրությամբ:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | **2020թ.** | **2019թ.** |
| Ներդրումներ | 11,120 | 27,340 |
| Առևտրական դեբիտորական պարտքերի | 650,449 | 518,492 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 3,139,842 | 3,318,176 |
| | **3,801,411** | **3,864,008** |

**Տրամադրված վոխառություններ**

Խմբի քաղաքականության համաձայն՝ վոխառությունները տրամադրվում են հիմնականում կապակցված կողմերին՝ առանց գրավ պահանջելու:

**Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Խմբի հաճախորդների բազայի վրա, այդ թվում՝ այն ոլորտին և երկրին բնորոշ պարտատուցման տեղի ունենալու ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի մոտ 88%-ն իրենից ներկայացնում է վճարային ծառայություններից ստացվելիք գումարները, որոնք պարտքային ռիսկի չեն ենթարկվում, քանի որ Խումբն անընդհատ վճարումներ է ընդունում օպերատորների անունից և պահում է կրեդիտորական պարտքերի մնացորդը ընդունված վճարումներից (տես Ծանոթագրություն 20): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 420,910 հազար դրամ գումարով կրեդիտորական պարտքեր առևտրական դեբիտորական պարտքերի դիմաց: Խումբը ճանաչել է 26,405 հազար դրամ գումարով ակնկալվող պարտքային կորուստ առևտրական կրեդիտորական պարտքերի մնացած մնացորդի գծով:

Խումբն օգտագործում է պահանջատավորման մատրիցա ֆիզիկական անձանցից ստացվելիք առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որոնք ներառում են մեծ թվով փոքր գումարով մնացորդներ: Կորստի մակարդակը հաշվարկվում է «roll rate» մեթոդով, որը հիմնված է այն հավանականության վրա, որ դեբիտորական պարտքը կանցնի ժամկետանցությունից մինչև դուրս գրումը հաջորդական վիճակով:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ստորև ներկայացված է առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | **2020թ.** | **2019թ.** |
| Հայաստանի Հանրապետություն | 649,286 | 515,550 |
| ԱՊՀ այլ երկրներ | 1,163 | 2,942 |
| | **650,449** | **518,492** |

Ստորև ներկայացված է առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | 2020թ. | 2019թ. |
| Հեռահաղորդակցության ընկերություններ | 302,794 | 171,285 |
| Առցանց խաղեր | 223,541 | 161,212 |
| Բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ | 46,139 | 66,644 |
| Կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ | 31,994 | 30,808 |
| Առևտուր | 5,094 | 10,941 |
| Այլ | 40,887 | 77,602 |
| | **650,449** | **518,492** |

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակմամբ դրամական միջոցներ**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 3,139,842 հազար դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակմամբ դրամական միջոցներ (2019թ-ին՝ 3,318,176 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Ստորև ներկայացված է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշների վրա հիմնված դրամական միջոցների և դրանց համարժեքների և օգտագործման սահմանափակմամբ դրամական միջոցների պարտքային որակը:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | 2020թ. | 2020թ. |
| - Ba1-ից Ba3 վարկանիշով | 181,676 | 1,102,418 |
| - B1-ից B3 վարկանիշով | 1,302,330 | 1,204,481 |
| - առանց վարկանիշի | 1,655,836 | 1,011,277 |
| | **3,139,842** | **3,318,176** |

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 868,761 հազար դրամ գումարով դրամական միջոցներ ճանապարհին (2019թ-ին՝ 665,201 հազար դրամ), որոնք ներառված են «առանց վարկանիշի» դասում՝ վերը ներկայացված աղյուսակում: Ճանապարհին գտնվող դրամական միջոցների հատկ ապահովություն են ծառայում առացված կանխավճարները, երաշխավորությունները և գրավադրված վճարումների պրոցեսինգի ապրքավորումները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեզրկումը չափվել է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիմունքով և արտացոլում է ռիսկին ենթարկվող գործիքների կարճ ժամկետները: Հիմք ընդունելով պայմանագրային կողմերի արտաքին վարկանիշները՝ Խումբն իր դրամական միջոցների և դրանց համարժեքների պարտքային ռիսկը գնահատում է որպես ցածր:

Ընթացիկ հաշիվների և ճանապարհին գտնվող դրամական միջոցների գծով արժեզրկման գծով պահուստ չի ճանաչվել ՖՀՄՍ 9-ի համաձայն:

### *(iii) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հսպացում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտատակարգ պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի հեղինակությունը վտանգելու:

**Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրով մնացած մարման ժամկետները հաշվեառու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված առկոսների վճարումները:

| 31 դեկտեմբերի 2020թ. | | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Ընդամենը | Ցպահանջ | Մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 498,021 | 654,679 | - | 7,479 | 40,469 | 182,981 | 423,750 | - |
| Վաճառակարության գծով պարտավորություններ | 212,082 | 269,207 | - | 12,339 | 58,555 | 92,391 | 94,178 | 11,744 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 6,483,862 | 6,483,862 | - | 6,162,992 | 223,495 | 40,986 | 56,389 | - |
| | **7,193,965** | **7,407,748** | - | **6,182,810** | **322,519** | **316,358** | **574,317** | **11,744** |

| 31 դեկտեմբերի 2019թ. | | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Ընդամենը | Ցպահանջ | Մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 975,878 | 975,878 | - | - | 800,570 | 175,308 | - | - |
| Վաճառակարության գծով պարտավորություններ | 258,638 | 335,126 | - | 12,379 | 61,896 | 62,293 | 93,439 | 105,119 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 6,907,545 | 6,907,544 | 5,900 | 6,576,948 | 99,151 | 15,483 | 57,697 | 152,365 |
| | **8,142,061** | **8,218,548** | **5,900** | **6,589,327** | **961,617** | **253,084** | **151,136** | **257,484** |

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կսկսող են սառաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

### *(iv) Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

**Արժութային ռիսկ**

Արժութային ռիսկին Խմբի ենթարկվածությունը կապված է Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխառությունների արժույթի հետ: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով:

**Ենթարկվածություն արժութային ռիսկին**

Սառրև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժութային ռիսկին:

| հազ. դրամ | ԱՄՆ դոլարով արտահայտված 2020թ. | Եվրոյով արտահայտված 2020թ. | Ռուբլով արտահայտված 2020թ. | ԱՄՆ դոլարով արտահայտված 2019թ. | Եվրոյով արտահայտված 2019թ. | Ռուբլով արտահայտված 2019թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ներդրումներ | - | - | 140,433 | - | - | 155,400 |
| Առևտրական դեբիտորական պարտքեր | - | - | 2,278 | - | - | 74,848 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 271,358 | 135,995 | 610,589 | 137,987 | 71,729 | 37,844 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | (76,661) | - | (148,792) | (45,349) | (4,715) | (165,501) |
| **Զուտ ենթարկվածություն** | **194,697** | **135,995** | **604,508** | **92,638** | **67,014** | **102,591** |

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

| ՀՀ դրամով | Միջին փոխարժեք | | Ամթոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | 2020թ. | 2019թ. | 2020թ. | 2019թ. |
| 1 ԱՄՆ դոլար | 489.31 | 480.41 | 522.59 | 479.7 |
| 1 եվրո | 559.30 | 537.94 | 641.11 | 537.26 |
| 1 ռուսական ռուբլի | 6.79 | 7.42 | 7.02 | 7.77 |

***Զգայնության վերլուծություն***

Սառրև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի վրա սառրև ներկայացված գումարների չափով: Արտարժույթի փոխարժեքի տատանումներից առաջացող օգուտը (կորուստը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես առկա տարադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնում կանխատեսվող վաճառքի և գնումների ազդեցությունը:

| հազ. դրամ | Աճ | Նվազում |
|---|---|---|
| | Շահույթ կամ վնաս | Շահույթ կամ վնաս |
| **31 դեկտեմբերի 2020թ.** | | |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ | (19,470) | 19,470 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ | (13,600) | 13,600 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ռուբլու նկատմամբ | (60,451) | 60,451 |
| **31 դեկտեմբերի 2019թ.** | | |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ | (9,264) | 9,264 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ | (6,701) | 6,701 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ռուբլու նկատմամբ | (10,259) | 10,259 |

**Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքների փոփոխությունները ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ ֆիքսված թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Խմբի համար միջնաժամկետ ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

***Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին***

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի առկա ակտիվ ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | **2020թ.** | **2019թ.** |
| **Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական ակտիվներ | 11,120 | 27,340 |
| Ֆինանսական պարտավորություններ | (498,021) | (975,878) |
| | **(486,901)** | **(948,538)** |

***Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված տոկոսադրույքով գործիքների համար***

Խումբը չի հաշվառում ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չտրվող կամ վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

## 21. Դուստր կազմակերպություններ

Ստորև ներկայացված են Խմբի դուստր կազմակերպությունները:

| Անվանումը | Գրանցման երկիրը | Հիմնական գործունեությունը | Մասնակցության % | |
|---|---|---|---|---|
| | | | **2020թ.** | **2019թ.** |
| «Թել-Մել Սերվիս» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | Ընկերության հիմնական գործունեությունը գովազդի համար ապրանքի տրամադրումն է վճարային աերմինալների վրա և աերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումը: | 100% | 100% |
| «Մեգա Պանոռեյա» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | Ընկերության գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից: | 50% | 50% |

## 22. Պայմանական դեպքեր

**(ա) Ապահովագրություն**

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խմբի տեղամիավորներն ապահովագրված են: Այնուամենայնիվ, Խումբն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պատասխանատվություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում աղեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

**(բ) Դատական վարույթներ**

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

**(գ) Պայմանական հարկային պարտավորություններ**

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմինները իրավասու չեն առաջացրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է արևանփեղային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համապատասխան են ՏՀԶԿ-ի առաջնորդողներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար և սահմանում են լրացուցիչ հարկերի և տուգանքների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են առանց նեղկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը հարկային տարում:

- միջազգայնային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջազգայնային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն արևանփեղային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել արևանփեղային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 23. Կապակցված կողմեր

**(ա) Մայր կազմակերպություն և վերջնական վերահսկող կողմ**

Ընկերության մայր կազմակերպությունն է Կիպրոսում գրանցված Lendasy Trading Ltd, որի վերջնական վերահսկող անձն է Վոլոդիա Կիրնիցկայան:

Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը չի հրապարակում առանձին ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

**(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի անդամների և ղեկավարության հետ**

***(i) Տնօրենների խորհրդի և ղեկավարության վարձատրությունը***

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է անձնակազմի գծով ծախսերում:

| հազ. դրամ | 2020թ. | 2019թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևավճարներ | **66,377** | **66,386** |

***(ii) Գործարքներ Տնօրենների խորհրդի և ղեկավարության հետ***

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2020թ. | 2019թ. | 2020թ. | 2019թ. |
| Տրամադրված փոխառություններ | - | - | 6,000 | 6,000 |
| Ստացված վարկեր և փոխառություններ | - | 3,008 | - | 175,308 |

***(iii) Գործարքներ անփոխկանգառների հետ***

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2020թ. | 2019թ. | 2020թ. | 2019թ. |
| **Ստացված վարկեր և փոխառություններ** | | | | |
| Բաժնետերեր | 416,835 | - | 123,021 | - |

2020թ-ին Տնօրենների խորհրդից ստացված փոխառությունը փոխանցվել էր բաժնետերերին ցեսիայի պայմանագրի շրջանակում: Ստացված վարկերը և փոխառությունները ենթակա են մարման 2022թ-ին՝ 11% տոկոսադրույքով:

## 24. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների կողմից:

**(ա) Համախմբման հիմունքներ**

***(i) Քիզնես միավորումներ***

Քիզնես միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որն այն ամսաթիվն է, երբ վերահսկողությունը փոխանցվում է Խմբին (Ծանոթագրություն 25(ա)(iii)):

Խումբը գումարվի չափումն իրականացնում է ձեռքբերման ամսաթվին որպես՝

- փոխանցված հատուցման իրական արժեք, գումարած
- ձեռք բերվող կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերի ճանաչված գումարը, գումարած
- ձեռնարկատիրական գործունեության վաղային ձեռքբերման դեպքում՝ ձեռքբերվող կազմակերպությունում նախկինում գոյություն ունեցող բաժնեմասը, հանած
- ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների զուտ ճանաչված գումարը (որպես կանոն՝ իրական արժեքը):

Երբ տարբերությունը բացասական է, գեղչով ձեռքբերումից օգուտը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխանցված հատուցումը չի ներառում նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը վերաբերող գումարները: Նման գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկման հետ կապված ծախսերի, որոնք Խումբը կրում է քիզնես միավորման հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

***(ii) Չվերահսկող բաժնեմասեր***

Չվերահսկող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Դուստր կազմակերպություններում Խմբի բաժնեմասի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում հսկողության կորստի, հաշվառվում են որպես բաժնային գործառնություններ:

***(iii) Դուստր կազմակերպություններ***

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Խումբը վերահսկողություն ունի կազմակերպության ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ դրանց ենթարկվածություն և կազմակերպության ներգրավմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Անհրաժեշտության դեպքում դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություններում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպություններում չվերահսկող բաժնեմասերի նկատմամբ կիրառելի վճասը բաշխվում է չվերահսկող բաժնեմասերին նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

***(iv) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ***

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

**(բ) Հասույթ**

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

**(գ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր**

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

**(դ) Արտարժույթ**

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխում, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**(զ) Ճահճաթահարկ**

Ճահճաթահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է բիզնես միավորումներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

***(i) Ընթացիկ հարկ***

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով հարկի վճարվելիք կամ առացվելիք գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ լուսաբանության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Վճարվելիք ընթացիկ հարկը ներառում է նաև շահաբաժինների գծով առաջացող հարկային պարտավորությունը:

***(ii) Հետաձգված հարկ***

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում՝

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում բիզնես միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում կատարած ներդրումներին, այնքանով որքանով Խումբն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչման հետ կապված:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, ապա հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումների ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Խմբի գործարար ծրագրերի հիման վրա:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Խմբի հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներն զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

**(է) Պաշարներ**

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից ելնազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխադրման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու հետևյալ գնահատված ծախսումները:

**(ը) Հիմնական միջոցներ**

***(i) Ճանաչում և չափում***

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից առացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «Այլ եկամուտներ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

***(ii) Հետագա ծախսումներ***

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

***(iii) Մաշվածություն***

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը պրպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր բաղկացուցիչների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

| | |
|---|---|
| – վճարումների պրոցեսինգի սարքավորումներ | 5 տարի |
| – համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ | 1-5 տարի |
| – անտեսական միջոցներ | 5 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5-10 տարի |
| – վարձակալված գույքի բարելավում | 5-20 տարի |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում:

**(թ) Ոչ նյութական ակտիվներ**

***(i) Գուդվիլ***

Գուդվիլը, որն առաջանում է դուստր կազմակերպությունների ձեռքբերման արդյունքում, չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

***(ii) Այլ ոչ նյութական ակտիվներ***

Խմբի կողմից ձեռքբերված այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

***(iii) Հետագա ծախսումներ***

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

***(iv) Ամորտիզացիա***

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի (բացառությամբ գուդվիլի) օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական

օգտակարների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

| | |
|---|---|
| – համակարգչային ծրագրեր | 10 տարի |
| – լիցենզիաներ | 10 տարի |

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(ժ) Ֆինանսական գործիքներ**

***(i) Ճանաչում և սկզբնական չափում***

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

***(ii) Դասակարգում և հետագա չափում***

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը վոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կլող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:
Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները դրաշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնել իրական արժեքի հետագա վոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այստեղ ներառված են բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ

համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում**

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացումը ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

**Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխառվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի նկատմամբ զեղչով կամ հավելագնով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարով, որն ըստ էության իրենից ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսը (որը կարող է ներառել լրացուցիչ ողջամիտ փոխհատուցումը պայմանագրի վաղաժամ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է սկզբնական ճանաչման պահին:

**Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

**Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ օգուտը և կորուստները, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

***(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում***

**Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- զրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ: Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- զրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացորդային ժամանակահատվածում:

### *(iv) Ապաճանաչում*

**Ֆինանսական ակտիվներ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

### *(v) Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

### (ի) Բաժնետիրական կապիտալ

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

*Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

**(լ) Արժեզրկում**

***(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ***

*Ֆինանսական գործիքներ*

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Խումբը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտառուզանցում տեղի ունենալու ռիսկը) նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է ապագայնական տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտառուզանցում, եթե՝

- հավանական չէ, որ վարկառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտառակառությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտառուզանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտառուզանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին:

*Ակնկալվող պարտքային կորուստների չափում*

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող առացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

*Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

**Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

***(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ***

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Օգտակար ծառայության անսահմանափակ ժամկետ ունեցող կամ շահագործման համար դեռ ոչ պիտանի ոչ նյութական ակտիվների և գուդվիլի համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր: Կախված գործառնական սեգմենտի վերին սահմանաչափի թեստից՝ գուդվիլի արժեզրկման ստուգման նպատակով՝ դրամաստեղծ միավորները, որոնց բաշխվել է գուդվիլը, միավորվում են այնպես, որպեսզի արժեզրկման ստուգման մակարդակն արտացոլի այն նվազագույն մակարդակը, որում ներքին կառավարման նպատակներով գուդվիլը ենթարկվում է մոնիտորինգի: Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը

բաշխվում է դրամաստեղծ միավորների այն խմբերին, որոնք ակնկալվում է, որ օգուտներ կստանան ձեռնարկատիրական գործունեության միավորման սինեργիաներից:

Խմբի կորպորատիվ ակտիվները չեն առաջացնում առանձին դրամական միջոցների հոսքեր և օգտագործվում են մեկից ավելի դրամաստեղծ միավորի կողմից: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են դրամաստեղծ միավորների ողջամիտ և հետեւողական հիմունքով և ստուգվում են արժեզրկման տեսանկյունից այն դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգման շրջանակներում, որի բաշխվում է կորպորատիվ ակտիվը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև վերջիններիս ներկա արժեքը՝ օգտագործելով նախքան հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը բաշխվում է այնպես, որ նախ նվազեցվի դրամաստեղծ միավորին (կամ դրամաստեղծ միավորների խմբին) բաշխված գուդվիլի հաշվեկշռային արժեքը և, այնուհետև, այդ դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ համամասնորեն:

Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, պարզելու համար, թե արդյոք գոյություն ունի որևէ հայտանիշ ըստ որի արժեզրկումից կորուստը նվազել է կամ այլևս գոյություն չունի: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այնքանով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց հատկապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

**(խ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի անհեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքաչափով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Շեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

**(ծ) Վարձակալություն**

Պայմանագրի սկզբում Խումբը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման իրավունքը:

***(i) Խումբը՝ որպես վարձակալ***

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի սպասարեղակայման և քանդման, կամ վերջինիս վերակազմման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերակազմման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Խմբին չեն վերհանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Խումբը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Խմբի լրացուցիչ վոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Խումբը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որոշում է լրացուցիչ վոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության վոխհոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես ապահովում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Խումբը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Խմբի գնահատականի փոփոխություն, եթե Խումբը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Խումբը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Խումբը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

### *(ii) Խումբը՝ որպես վարձատու*

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Երբ Խումբը հանդես է գալիս որպես վարձատու, ապա այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական թե գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Խումբն ընդհանուր գնահատում է, թե արդյոք վարձակալությամբ փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս՝ Խումբը դիտարկում է որոշ հայտանիշներ, օրինակ՝ թե արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

## 25. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2020թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

### (ա) Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Խումբը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Խումբը որոշել է, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բոլոր պայմանագրերը կավարտվեն մինչ փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

### (բ) Ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխում. Փուլ 2 (Արժեզրկման հետ կապված փոփոխություններ, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 փոփոխություններ)

Փոփոխություններն անդրադառնում են այն հարցերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման արդյունքում, ներառյալ փոփոխությունների ազդեցությունը պայմանագրային դրամական հոսքերի կամ հեջավորման հարաբերությունների վրա՝ ուղենիշային տոկոսադրույքն այլընտրանքային ուղենիշային տոկոսադրույքով փոխարինելու դեպքում: Փոփոխությունները նախատեսում են ազատում ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 որոշակի պահանջներից, որոնք վերաբերում են.

- ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և վարձակալության գծով պարտավորությունների հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություններին և
- հեջի հաշվառմանը:

### *(i) Դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխություն*

Փոփոխությունները Խմբից կպահանջեն հաշվառել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով պայմանագրային դրամական հոսքերը որոշելու հիմքի փոփոխությունը՝ թարմացնելով ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքն ուղենիշային տոկոսադրույքի բարեփոխման հետ կապված:

# ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

**«ԹԵԼ-ՍԵԼ»**
**բաց բաժնետիրական ընկերություն**
թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը
ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հեռ՝ +374 60 272222
Էլ.-փոստ՝ info@telcell.am
Կայք՝ www.telcell.am

**«Արմբրոկ»**
**բաց բաժնետիրական ընկերություն**
գլխավոր տեղաբաշխողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 39
Հեռ՝ +374 11 590000
Էլ.-փոստ՝ armbrok@armbrok.am
Կայք՝ https://www.armbrok.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ**

| | |
|---|---|
| **Արժեթղթերի տեսակը՝** | Սովորական բաժնետոմս |
| **Արժեթղթերի ձևը՝** | Ոչ փաստաթղթային |
| **Արժեթղթերի քանակը՝** | 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ |
| **Արժեթղթերի տեղաբաշխման արժեքը՝** | 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ |
| **Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը՝** | 1,540,000,000 (մեկ միլիարդ հինգհարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ..... 4

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ ..... 4

1.2. Թողարկողին և բաժնետոմսերին առնչվող ռիսկերը ..... 11

1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները ..... 18

1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ ..... 18

1.5. Թողարկողի կառավարումը և բաժնետերերը ..... 19

1.6. Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները ..... 20

1.7. Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը ..... 21

1.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ ..... 23

2. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 28

ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ ..... 30

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք Ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել Ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

| Անուն, ազգանուն | Պաշտոն | Ստորագրություն | Ամսաթիվ |
|---|---|---|---|
| Արտաշես Ավետիսյան | Տնօրենների խորհրդի նախագահ | | 24.09.24 |
| Ռամի Տրեյստեր | Տնօրենների խորհրդի անդամ | | 24.09.24 |
| Վաչե Գաբրիելյան | Տնօրենների խորհրդի անդամ | | 24.09.24 |
| Արտյոմ Ղազարյան | Գլխավոր տնօրեն | | 24.09.24 |
| Թամարա Սարգսյան | Ֆինանսական տնօրեն | | 24.09.24 |
| Արթուր Թորոսյան | Գլխավոր հաշվապահ | | 24.09.24 |
| Արամ Կայֆաջյան | Գլխավոր տեղաբաշխող | | 24.09.24 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| Արտյոմ Ղազարյան | Գլխավոր տնօրեն | | 24.09.24 |

# 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՇԱՆՈՒԳՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ**

*Ամփոփաթերթը պետք է դիտվի՝ որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել սույն Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով https://thogharkogh.cba.am/, www.telcell.am, և www.armbrok.am կայքերից:*

## 1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

### 1.1.1. Թողարկողի համառոտ տվյալները և կապի միջոցները

Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևն է՝

| **Լեզու** | **Լրիվ ֆիրմային անվանումը** | **Կրճատ անվանումը** |
|---|---|---|
| հայերեն՝ | «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն | «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ |
| ռուսերեն՝ | «ТЕЛ-СЕЛЛ» Открытое Акционерное Общество | «ТЕЛ-СЕЛЛ» ОАО |
| անգլերեն՝ | «TEL-CELL» Open Joint-Stock Company | «TEL-CELL» OJSC |

Թողարկողի պետական գրանցումն ու գործունեության վայրն է՝

| | |
|---|---|
| Թողարկողի հիմնադրման երկիր | Հայաստանի Հանրապետություն |
| Թողարկողի պետական գրանցման վայր | ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փողոց 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա 3-րդ հարկ |
| Թողարկողի պետական գրանցման համար | 264.130.1368627 |

| | |
|---|---|
| «Թել-Սել» ՓԲԸ -ի պետական գրանցման ամսաթիվ | 29.05.2007թ. |
| «Թել-Սել» ԲԲԸ -ի պետական գրանցման ամսաթիվ («Թել-Սել» ՓԲԸ -ի իրավահաջորդ) | 06.02.2024թ. |
| Թողարկողի գործունեության վայր | ՀՀ, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փողոց 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա 3-րդ հարկ |
| Կապի միջոցներ | Հեռ.՝ +374 60 272222,<br>Էլ. փոստ info@telcell.am |

Բաժնետոմսերին առնչվող հարցերի դեպքում ներդրողները կարող են դիմել «Թել-Սել» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկողին կամ Ընկերություն) Արսեն Ավետիսյանին, նոր նախագծերի գնահատման և մշտադիտարկման բաժնի ղեկավարին ՝+374 60 272222 հեռախոսահամարով:

## 1.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

### 1.1.2.1. Թողարկողի համառոտ պատմությունը

Թողարկողի պատմությունը մանրամասն ներկայացված է Ազդագրի 3.3.1. ենթակետում:

“ԹԵԼ-ՍԵԼ” բաց բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է “ԹԵԼ-ՍԵԼ” փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է “ԹԵԼ-ՍԵԼ” փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ 2007թ. մայիսի 29-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

- 2007թ. հուլիսի 24-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ «Թել-Սել» ՓԲԸ-ին տրամադրվեց դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնելու լիցենզիա: Տարեվերջին հնարավոր դարձավ Telcell համակարգով համալրել այլ էլեկտրոնային դրամապանակներ:
- 2008թ. Ընկերությունն իր հաճախորդներին ներկայացավ նոր ֆունկցիոնալ հնարավորություններով՝ ինտերնետային ծառայությունների վճարում, վարկերի մարում գործընկեր վարկային կազմակերպությունների հաճախորդների համար, Telcell պրոցեսինգային կենտրոնին գործընկեր բանկերի հաշվիչ դրամարկղային հանգույցների ինտեգրացիաներ, տերմինալների ինտերֆեյսի ամբողջովին թարմացում, օպերատորների խմբավորում: Նույն տարվա ընթացքում Telcell համակարգին միացավ առաջին առևտրային գործընկեր կազմակերպությունը, որի շնորհիվ բազմահազար հաճախորդներ կարողացան պատվերները վճարել Ընկերության միջոցով:

- Ծառայությունների շրջանակը զարգացնելու հետ մեկտեղ, Ընկերությունն էականորեն բարելավեց տեխնոլոգիական հագեցվածությունը: 2012թ. Ընկերությունը և «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ն մեկ միասնական ծրագրային հարթակ տեղափոխեցին իրենց վճարային տերմինալները՝ Telcell պրոցեսինգային բազայի վրա:
- 2016թ. Փետրվարի 22-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ Ընկերությանը տրամադրվեց էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն: Արդեն հաջորդ տարի գործարկվեց MyTelcell հավելվածը (ներկայում՝ Telcell Wallet), որը հնարավորություն է տալիս Telcell համակարգով բոլոր գործառնությունները կատարել էլեկտրոնային դրամապանակով:
- Վերջին տարիներին ևս Ընկերությունը ընդլայնել է առաջարկվող ծառայությունների շրջանակը, մեծ կարևորություն տալով թվային լուծումներին, հարմարավետությանը և հասանելիությանը: 2019թ. մշակվել և ներդրվել է Telcell Business հավելվածը, որի օգնությամբ բիզնես գործունեությամբ զբաղվող անձինք կարող են վճարումներ ընդունել հաճախորդներից:
- 2021թ. գործարկվել է «Վարկային պորտալ» ծառայությունը, որը հնարարավորություն է տալիս ՀՀ առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին 24/7 ռեժիմով իրականացնել վարկավորում էլեկտրոնային դրամապանակի օգտատերերին անմիջապես Telcell Wallet հավելվածի ինտերֆեյսի միջոցով:
- 2022 թվականի վերջում Ընկերությունը շահել է Երևան քաղաքի հասարակական տրանսպորտում միասնական տոմսային համակարգի ներդրման մրցույթը՝ դառնալով այդ նախագծի կատարողը: Նախագծի շրջանակում ընկերությունը կատարեց ներդրում, տեղադրելով վալիդատորներ, ինտեգրելով ուղետոմսերի վճարման համակարգը և այլն:
- 2021 թվականից ընկերությունը սկսեց իրագործել ռեբրենդավորման ընթացքը, որի նպատակն էր կառուցել էկոհամակարգ և թարմացնել ընկերության հեղինակային ոճը: Ընկերությունը իրականացրեց մեծ ռեբրենդավորման միջոցառում 2023 թվականի հունիսի վերջին, որտեղ հայտարարվեց ընկերության նոր տեսլականը և ներկայացվեցին առաջիկա տարվա ընթացքում սպասվող նախագծերը ու պրոյեկտները:
- Ռեբրենդավորումից հետո նույն տարվա ընթացքում ընկերությունը Հայէկոնոմբանկի հետ միասին թողարկեցին Visa թվային քարտերը, օգտատերերին հնարավորություն տալով ստեղծել հավելվածում բանկային քարտ առանց բանկ այցելելու ու համալրել այդ քարտերը Հայաստանի տարածքում տեղադրված Ընկերության 4500+ տերմինալներից 0% միջնորդավճարով: Ընկերության նպատակն է համագործակցել առավել շատ բանկերի հետ՝ առաջարկելով քարտերի բացում բանկերի հավելվածներից դուրս:
- 2023 թվականի սեպտեմբերին Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ միասին թողարկվեց «Գնիր հիմա, վճարիր հետո» (BNPL) ծառայությունը, որը առավել հարմարավետ պայմաններ է ստեղծում օգտատերերի համար՝ թույլ տալով նրանց վճարել գնումներն անելուց որոշ ժամանակ անց: BNPL ծառայության հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս վճարումները մասնատել ավելի փոքր՝ կառավարելի

գումարների: Մեծ գնումներ կատարելիս այլևս պետք չէ մտածել գումարային սահմանափակման մասին:

#### 1.1.2.2. Թողարկողի ռազմավարությունը

**Ընկերության առաքելությունն է** դիրքավորել էկոհամակարգը ու ստեղծել պրոդուկտները ու ծառայությունները, հիմնված ազգային արժեքների հիման վրա՝ ստեղծել այն, ինչի կարիքը ունի Հայաստանում յուրաքանչյուր մարդը:

**Մեր տեսլականն է** ստեղծել ագրեգատ ու ապահովել open-banking համակարգը, որը թույլ կտա մեր օգտատերերին տեսնել պրոդուկտների ամբողջ սպեկտրը (բոլոր բանկերի ծառայություններ և պրոդուկտները, միջոցառումները և այլ գործընկերների ծառայությունները) միասնական համակարգում՝ ընկերության պրոդուկտներում:

Ընկերության կայուն զարգացման, շահառուների կարիքներն ու սպասելիքները առավելագույնս բավարարելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ներքին բացասական գործոնները և ռիսկերը նվազեցնելու նպատակով Ընկերությունը իր առջև դրել է հետևյալ հիմնական ռազմավարական խնդիրները.

- թվայնացնել և ավտոմատացնել վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը,
- ընդունել վճարումներ նոր տեխնոլոգիաների միջոցով,
- ընդլայնել վճարումների ընդունման տերմինալների ցանցը,
- զարգացնել Telcell Wallet և Telcell Business հավելվածները,
- ընդլայնել մասնաճյուղերի ցանցը,
- զարգացնել էլեկտրոնային և թվային կոմերցիան,
- ավելացնել գործընկեր ծառայություն մատուցող կազմակերպությունների քանակը, այդ թվում ներգրավելով միջազգային գործընկերների,
- մատուցել ծառայությունների ավելի լայն շրջանակ,
- զարգացոնել և կատարելագործել կառավարման համակարգը ,
- Նախաձեռնել օրենսդրական ռեֆորմներ,
- Հետևողականորեն կիրառել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականություն ,
- Շարունակաբար իրականացնել բարեգործական ծրագրեր:

### 1.1.3. Թողարկողի կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալն Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ կազմել է 1,078,000,000 (մեկ միլիարդ յոթանասունութ միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 30,800,000 (երեսուն միլիոն ութ հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) տեղաբաշխված բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 35 (երեսունհինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերության մեկ բաժնետիրոջը պատկանող Թողարկողի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն քանակ չի սահմանվում:

Ընկերության նշանակալից բաժնետերերն են՝ «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» – 56,28%: Ընկերությունը հայտարարել է նոր 4,200,000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, որից սույն Ազդագրի ներքո նախատեսվում է տեղաբաշխել 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ բաժնետոմս: Միևնույն ժամանակ Ընկերությունը նախատեսում է ցուցակման թույլտվությունը ստանալուց հետո երեք ամիսների ընթացքում լրացուցիչ որոշմամբ հաստատել համապատասխան կարգը՝ 350,000 (երեք հարյուր հիսուն հազար) հատ բաժնետոմսը աշխատակիցներին առաջարկելու և/կամ բաժնետիրացման ծրագրի շրջանակներում վերջիններիս տրամադրելու վերաբերյալ: 4,200,000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսը ամբողջությամբ տեղաբաշխելուց՝ «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» – ի մասնաբաժինը կկազմի համապատասխանաբար 49.53%:

Թողարկողի բաժնետիրական կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի 3.5.1 ենթագլխում:

### 1.1.4. Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 4-ում:

### 1.1.5. Թողարկողի խմբի կառուցվածքը

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն խմբի մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ և դրա դուստր կազմակերպություններից, որոնցից յուրաքանչյուրում Թողարկողի մասնակցությունը 100% է: Թողարկողի դուստր կազմակերպություններն են՝ «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ-ն և «ԹԵԼ-ՍԵԼ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ-ն:

«Թել-Սել Սերվիս» ՍՊԸ հիմնական գործունեությունը գովազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումը:

«ԹԵԼ-ՍԵԼ ԼՈԳԻՍՏԻԿՍ» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը նախատեսվում է առաջիկայում բեռնափոխադրման ծառայությունների մատուցում:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն նաև ունի 50% մասնակցություն «Մեգա Պանտերա» ՍՊԸ -ում, որի գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից:




### 1.1.6. Թողարկողի բիզնես նկարագիրը

«Թել-Սել» ԲԲ ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային և հարակից ծառայություններ մատուցող առաջատար ընկերություններից մեկը: Ընկերությունը ներկայումս մատուցում է ծառայությունների հետևյալ տեսակները՝

1. Վճարումների ընդունման ծառայություն՝ տերմինալների միջոցով վճարումների ընդունում՝ պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ:
2. Ընկերության մասնաճյուղերի միջոցով վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, այդ թվում նաև՝ դրամական (փողային) փոխանցումների իրականացում, վճարումների ընդունում, կանխիկ դրամական միջոցների տրամադրում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ:
3. Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով՝ էլեկտրոնային փողերի թողարկում և սպասարկում, պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց օգտին վճարումների ընդունում, իրավաբանական և ֆիզիկական անձանց բանկային/քարտային հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների հաշվառման հաշվեհամարների համալրումների իրականացում, վարկերի մարումներ, այդ թվում նաև՝
    - QR տեխնոլոգիայի վրա հիմնված Scan and Pay ապրանքանիշի ներքո էլեկտրոնային փողով տնտեսվարողների օգտին վճարումների ընդունում,
    - Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հաճախորդներին վարկային միջոցների տրամադրում հաճախորդի էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվին:

    Այսօր Telcell Wallet հավելվածն ունի ավելի քան 1,900,000 ներբեռնում: Telcell Wallet դրամապանակը հնարավորություն է տալիս օգտվել 450+ ծառայություններից մեկ հավելվածում: Ոինենալով ծառայությունների տեսականու լայն սանդղակ, Telcell Wallet-ի օգտատերերը կատարում են ամենօրյա գործարքները մեկ հավելվածում՝ ստանալով թարմացումներ և այլ ծառայությունների ավելացումներ:

4. ՀՀ առևտրային բանկերին WEB/API հասանելիություն տրամադրելով՝ Ընկերության հետ համագործակցող կազմակերպությունների օգտին վճարումներ ընդունելու հնարավորության ստեղծում:
5. Պրոցեսինգի իրականացում:
6. Քլիրինգի իրականացում:

#### 1.1.6.1.Հիմնական շուկաները և մրցակցային դիրքը

«Թել-Սել» ԲԲԸ ծառայությունների համար շուկա է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքը: Ընկերությունը հանդես է գալիս իր տերմինալների ցանցով, որը տարածվում է երկրի ողջ բնակելի տարածքով: ՀՀ ողջ բնակչությանը հասանելի են նաև վճարումների ընդունման ծառայություններ կատարելու հնարավորությունները և Telcell Wallet հավելվածը: Ընկերությունը չի մատուցում ծառայություններ արտերկրում:

Ընկերության էկոհամակարգի պրոդուկտների հետ օրական միջինում 220 հազար հպումներ են իրականացվում, ինչը վկայում է Ընկերության՝ շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնելու մասին: Տերմինալների միջոցով վճարումներ ընդունելու գործունեության ոլորտում Թողարկողն առաջատար դիրքում է և հմտորեն օգտագործում է իր բազում տարիների ստեղծած համբավը և հավատարիմ հաճախորդների մեծ բազան իր առաջատար դիրքը տարեցտարի ամրապնդելու, այդ ոլորտում մեծ քայլերով զարգանալու և ընդլայնվելու համար: Telcell Wallet հավելվածով վճարումներ ընդունելու մասով ընկերությունը շուկայում երկու առաջատարներից մեկն է՝ և օգտատերերի քանակով և ամսեկան գործարքների քանակով: Նշված ցուցանիշներով Telcell Wallet հավելվածի մրցակիցն է Idram հավելվածը:

Ունենալով շուկայում մրցակցային կառավարչական արխետիպ (անգլ. Archetype of Ruler), Telcell ընկերության պրոդուկտները ներառյալ Telcell Terminal-ը ճանաչելի են ՀՀ բնակչության զգալի տոկոսի համար:

Թողարկողի բիզնես նկարագիրը ներկայացված է սույն Ազդագրի 3.4 ենթագլխում:

### 1.1.7. Ակտիվների որակը

2023թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության ակտիվների մեծությունը կազմել է 18.8 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2022թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության ակտիվների մեծությունը կազմել է 15.7 մլրդ ՀՀ: 2023թ-ի աուդիտ անցած և 2022թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն է ընդհանուր ակտիվներին) կազմել է 20% և 28% համապատասխանաբար:
2023թ-ի աուդիտ անցած և 2022թ-ի աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով Ընկերության ակտիվների զգալի մաս է կազմում դրամական միջոցները և դրանց համարժեքը՝ 74% և 71% համապատասխանաբար:

## 1.2. Թողարկողին և բաժնետոմսերին առնչվող ռիսկերը

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն Թողարկողի հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված է հնարավոր ռիսկերի ոչ ամբողջական ցանկը: Հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու սպասումներով:

Ստորև ներկայացված է Թողարկողին և բաժնետոմսերին վերաբերող ռիսկերի մանրամասն նկարագրությունը, սակայն ներդրողը պետք է հաշվի առնի, որ Թողարկողի գործունեության ընթացքում կարող են առաջանալ նաև այլ էական ռիսկեր:

### 1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերը

Թողարկողին առնչվող ռիսկերը մանրամասն նկարագրված են Ազդագրի 3.2. ենթագլխում:

#### 1.2.1.1. Գործառնական ռիսկը

Սա Թողարկողի ներքին համակարգերի խափանման, անձնակազմի կողմից կատարվող գործառնություններում սխալների կամ չարաշահումների, ինչպես նաև անարդյունավետ գործընթացների հետևանքով Թողարկողի կողմից վնասներ կրելու հավանականությունն է: Այսպիսի իրավիճակները կարող են ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի և հեղինակության վրա:
Թողարկողի գործունեության ոլորտին հատուկ է գործառնական ռիսկի բարձր մակարդակը, որը առկա է նաև Թողարկողի մոտ:

Թողարկողը՝ հիմնվելով լավագույն միջազգային փորձի վրա, նշված ռիսկերի պատշաճ կառավարման համար մշտապես կատարելագործում է իր ներքին հսկողական համակարգը զսպող և հակակշիռ հանդիսացող մեխանիզմները: Թողարկողին հատուկ՝ աշխատակիցների պատասխանատվության շրջանակով և հասանելիություններով պայմանավորված շահերի բախման ռիկի զսպման նպատակով Թողարկողը փոփոխել է կազմակերպչական կառուցվածքը և ներդրել ներքին ընթացակարգեր՝ հստակ տարանջատելով աշխատակիցների իրավասությունները:

Այս ռիսկերի կառավարման հարցում Թողարկողը կարևորում է աշխատակիցների մասնագիտական որակավորումը: Թողարկողը մշակել և ներդրել է որակավորման բարձրացման ամենամյա ծրագիր, ինչպես նաև ձեռնարկում է բավարար և խելամիտ միջոցներ բարձր որակավորմամբ մասնագետների ներգրավման համար:

#### 1.2.1.2. Ֆիզիկական անվտանգության ռիսկ

Թողարկողի անձնակազմի առողջության և կյանքի, նյութական արժեքների, կրիտիկական ենթակառուցվածքի վնասի կամ կողոպուտի ռիսկն է:
Այս դասի ռիսկերի թվին է պատկանում ինչպես դրամական միջոցների, այնպես էլ այլ ակտիվների գողությունը: Թողարկողի կողմից մշտապես ջանքեր են գործադրվում գողության կանխարգելման միջոցների բարելավման ուղղությամբ՝ ՀՀ Օրենսդրությանը, այդ թվում՝ ՀՀ ԿԲ պահանջներին համահունչ: Տվյալ ռիսկի կառավարման նպատակով, մասնավորապես, իրականացվում է ոստիկանության և մասնավոր մասնագիտացված լիցենզավորված ընկերությունների կողմից պահպանության կազմակերպում, ինկասացիոն զրահապատ ավտոմեքենաների օգտագործում և այլ միջոցառումներ:

#### 1.2.1.3. Տեղեկատվական անվտանգության ռիսկ

Թողարկողի կողմից տնօրինվող տեղեկատվության գաղտնիության, ամբողջականության և հասանելիության խախտման ռիսկն է:

Տեղեկատվությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները Թողարկողի գործունեության հիմքն են: Լինելով մեծածավալ անձնական տվյալների, առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության տիրապետող և մշակող՝ Թողարկողը միջազգային լավագույն փորձն է կիրառում պաշտպանելու տեղեկատվությունը չարտոնված մուտքերից և փոփոխումից, արտահոսքից և կորստից: Տեղեկատվության գաղտնիության ապահովման համար, ըստ անհրաժեշտության, կիրառվում են ռիսկերի նվազեցման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են տվյալների ծածկագրումը, մուտքի կառավարումը, տեղեկատվության պահուստավորումը և արխիվացումը: Տեղեկատվությանը մուտք ստանալ հնարավոր է միայն սահմանված ընթացակարգ անցնելու դեպքում: Բոլոր տվյալները սահմանված պարբերականությամբ պահուստավորվում են, մուտքը տվյալին խստորեն մշտադիտարկվում է առանձնացված անձնակազմի կողմից: Ցանկացած միջադեպ հետաքննվում է՝ պատճառները բացահայտելու և դրա կրկնությունը բացառելու նպատակով:

Տեղեկատվության և տվյալների ամբողջականությունն ապահովվում է հսկողության մեխանիզմների կիրառմամբ, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով՝ մուտքի կառավարմամբ, երկու անձի սկզբունքի պահպանմամբ, կրիտիկական տվյալների և ֆայլերի նկատմամբ հատուկ պաշտպանության ապահովմամբ: Տեղեկատվության հասանելիության ապահովումը օգտագործողներին, ինչպես օրինակ՝ հաճախորդներին կամ անձնակազմին, ապահովված է տեղեկատվական տեխնոլոգիաների բաղադրիչների կրկնօրինակմամբ, որը տեխնոգեն խափանումների պարագայում երաշխավորում է սահմանված ընդունելի ժամկետում տվյալների վերականգնումը և համակարգերի վերագործարկումը:

Միևնույն ժամանակ Թողարկողը գիտակցում է, որ այս ոլորտում անընդհատ առաջանում են նոր ռիսկեր, որոնց մեղմելու համար պետք է ներդրվեն նոր լուծումներ: Պայմանավորված ներդրված

տեղեկատվական համակարգերի մեծաքանակությամբ և տեղեկատվական անվտանգության ոլորտի արագ զարգացմամբ, Թողարկողը իր մոտ որպես կարևոր ռիսկ առանձնացրել է հին օպերացիոն համակարգերի օգտագործումից ծագող ռիսկերը, որոնց արդիականացման գործընթացը առաջնահերթություն է:

Տեղեկատվական անվտանգության ռիսկերի զսպման նպատակով, Թողարկողը 31.05.2024թ. թվականի ստացել է PCI DSS 4.0 հավաստագիր: Ինչպես նաև Թողարկողը ներկա պահին գտնվում է ISO/IEC27001:2022 հավաստագրման գործընթացում, որն իրականացվում է ավստրիական TÜV AUSTRIA Standards and Compliance LLC կողմից: Միաժամանակ տեղեկատվական անվտանգության ռիսկերի զսպման նպատակով, Թողարկողը տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի (ՏԱԿՀ) պարտադիր պահանջներին համապատասխան արդիականացրել է իր ներքին գործընթացները:

#### 1.2.1.4. Անընդհատության ռիսկ

Սա Թողարկողի կրիտիկական կարևորագույն գործընթացների խափանման, ծառայությունների մերժման կամ վճարումների կատարման կանգառի հետևանքով վնասներ կրելու հավանականությունն է:
Նշված ռիսկը կառավարելու նպատակով Թողարկողը մանրակրկիտ մշտադիտարկում է Ընկերության գործունեության անընդհատության վրա բացասական ազդող հնարավոր գործոնները և խնդիրների առաջացման դեպքում հնարավորինս արագ և արդյունավետ արձագանքում է դրանց՝ տալով համապատասխան լուծումներ: Ավելին, ապահովված է սարքավորումների, համակարգերի և կոմունիկացիաների կրկնօրինակումը՝ խաթարված գործընթացները հնարավորինս արագ վերականգնելու նպատակով: Մշակված են համապատասխան ներքին նորմատիվ ակտեր, ինչպիսիք են՝ գործունեության անընդհատության քաղաքականությունը:

#### 1.2.1.5. Աճող մրցակցության ռիսկ

Սա շուկայում համանման ծառայությունների մատուցման ոլորտում մրցակցության ուժեղացման ռիսկն է, որի արդյունքում կարող են նվազել Թողարկողի կողմից մատուցվող ծառայությունների ծավալը, գինը՝ վերջիվերջո հանգեցնելով շահույթի նվազման:

Ներկայումս ՀՀ-ում վճարահաշվարկային ծառայությունների ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը՝ հաշվի առնելով, որ նմանատիպ ծառայություններ մատուցում են ինչպես բանկերը, այնպես էլ գործող և նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպությունները: Մրցակցության զգալի աճը և/կամ մրցակիցների ագրեսիվ քաղաքականությունը կարող են հանգեցնել հաճախորդների մի մասի արտահոսքի, ուստի և եկամուտների նվազման: Այս ռիսկի զսպման համար Թողարկողն անընդհատ ակտիվորեն զարգացնում է նոր ուղղություններ, մշակում է նոր ծառայություններ և շարունակաբար կատարելագործում է գործող

ծառայությունները՝ շուկայում իր դիրքը ոչ միայն չկորցնելու, այլ նաև իր մասնաբաժինը մեծացնելու նպատակով:

Մրցակցության ակտիվացումը կարող է հանգեցնել նաև գործընկերների կողմից սակագների վերանայման պահանջի, ինչն ուղղակի ազդեցություն կունենա Թողարկողի շահույթի վրա:

#### 1.2.1.6. Իրացվելիության ռիսկ

Այս ռիսկի էությունն այն է, որ Թողարկողը որոշակի պահի դրությամբ կարող է չունենալ բավարար իրացվելի ակտիվներ իր պարտավորություններն ամբողջությամբ և ժամանակին կատարելու համար: Իրացվելիության ռիսկն առաջանում է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Թողարկողն իրացվելիության կառավարման նպատակով կիրառում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության համապատասխանեցման և/կամ վերահսկվող անհամապատասխանության մեթոդները: Բացի այդ, որպես վճարահաշվարկային կազմակերպություն, Թողարկողի համար օրենսդրությամբ սահմանված է իրացվելիության տնտեսական նորմատիվ: Այն իրենից ներկայացնում է բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցություն: Նշված սահմանային հարաբերակցության ապահովումը մշտապես գտնվում է Թողարկողի ուշադրության կենտրոնում:

Թողարկողը նաև ձգտում է կանխիկ դրամական միջոցների շրջանառելիության արագացման միջոցով նվազեցնել իրացվելիության ռիսկը, մասնավորապես տերմինալների ինկասացիոն ցիկլի հնարավոր կրճատման միջոցով:
Ի լրումն, իրացվելոիության ռիսկի նվազեցման և հնարավորինս բացառման նպատակով Թողարկողը համապատասխան պայմանագրեր է կնքել նաև ապահովագրական ընկերությունների հետ:
Ինչպես նաև Թողարկողը կիրառել է լրացուցիչ միջոց՝ ապահովագրելով որպես միջնորդ իր պարտավորությունը շահառուների նկատմամբ:

#### 1.2.1.7. Օրենսդրական և նորմատիվ դաշտի փոփոխության ռիսկ

Ռիսկի առաջացման պատճառ են հանդիսանում նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները, մասնավերապես՝ ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխությունները, ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխությունները և ՀՀ ԿԲ որոշումները, ինչպես նաև Միջազգային օրենսդրական ոլորտային փոփոխությունները, որոնք կարող են նաև հանգեցնել գործընկերային հարաբերությունների վերանայումների ու փոփոխությունների: Վերոգրյալ փոփոխությունները կարող են անդրադառնալ Թողարկողի բնականոն գործունեության և շուկայում տիրող իրավիճակի վրա:
Թողարկողի կողմից կիրառվում են ռիսկի նվազեցման արդյունավետ մեխանիզմներ, մասնավորապես Ընկերության ղեկավարությունն արագ արձագանքում է օրենսդրական էական

փոփոխություններին և հնարավորինս զսպում է դրանց բացասական հետևանքները: Այնուամենայնիվ, կարևոր ենք համարում ներդրողների ուշադրությունը հրավիրել հնարավոր ռիսկին, քանի որ փոփոխությունները կարող են էապես ազդել Ընկերության գործունեության վրա և հանգեցնել Ընկերության ֆինանսական ցուցանիշների անկման:

#### 1.2.1.8. Երկրի ռիսկ

ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը, մասնավորապես տնտեսական աճի նվազումը, քաղաքական իրադարձությունները կարող են հանգեցնել բնակչության եկամուտների նվազման, որն էլ իր հերթին կարող է բացասական ազդել Թողարկողի շրջանառության ծավալների վրա, հետևաբար նաև շահույթի վրա: Այս ամենը հաշվի առնելով՝ Թողարկողը մշտապես թարմացնում և ադապտացնում է իր ծառայությունների ցանկը՝ համապատասխանեցնելով գործող տնտեսական իրավիճակին, ինչով էլ նվազեցնում է նշված ռիսկի ազդեցությունը:

#### 1.2.1.9. Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ

Ռիսկն առաջանում է ՀՀ օրենսդրական պահանջների, միջազգային նորմերի և ստանդարտների, Ընկերության ներքին իրավական ակտերի, պայմանագրերի, համաձայնագրերի, ինչպես նաև էթիկայի կանոնների չպահպանման հետևանքով: Թողարկողի հանդեպ կարող են կիրառվել իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցներ, որոնք կարող են հանգեցնել էական ֆինանսական կորուստների: Ռիսկի զսպման համար Թողարկողը աչալրջորեն հետևում է ՀՀ օրենսդրական և ԿԲ կողմից արդեն իսկ ներդրված նորմատիվների և սահմանված պահանջների կատարմանը, ինչպես նաև արագ և բարձր պրոֆեսիոնալիզմով է արձագանքում բոլոր փոփոխություններին:

#### 1.2.1.10. Համբավի ռիսկ

Թողարկողի վերաբերյալ որոշակի հանգամանքներում հանրության լայն շրջաններում կարող է ձևավորվել բացասական կարծիք: Դա կարող է հանգեցնել հաճախորդների թվաքանակի նվազմանը, որն էլ իր հերթին կարող է բերել կազմակերպության եկամուտների և շահույթի նվազմանը: Թողարկողը, գիտակցելով բարի համբավի կարևորությունը, անմիջապես արձագանքում է իր համբավին սպառնացող ցանկացած հանգամանքի ի հայտ գալու պարագայում և հետևողականորեն աշխատում է հանրության հետ՝ իր բարի համբավը պահպանելու ուղղությամբ:

#### 1.2.1.11. Անձնակազմի հոսունության ռիսկ

Սա իրենից ներկայացնում է Ընկերության կառավարման մեջ ակտիվորեն ներգրավված աշխատակիցների և/կամ մեծ թվով բարձր որակավորում ունեցող մասնագետների միաժամանակ աշխատանքից ազատվելու դեպքում Թողարկողի վնասներ կրելու ռիսկը:

Բարձրորակ կադրերի առկայությունը չափազանց կարևոր է մրցունակ լինելու և կազմակերպության առջև դրված խնդիրներին հասնելու համար: Ներկայումս շուկայում ձևավորվել է այնպիսի իրավիճակ, որ բարձր որակավորում ունեցող աշխատակիցների նկատմամբ պահանջարկը մեծացել է, և մրցակիցներն ավելի լավ պայմաններ առաջարկելու միջոցով ջանքեր են գործադրում լավագույն կադրերին ներգրավելու ուղղությամբ: Տվյալ ռիսկը հնարավորինս զսպելու համար Թողարկողը կիրառում է ոչ միայն ֆինանսական խրախուսման մեթոդներ, այլ նաև ջանքեր է գործադրում աշխատակիցների սոցիալական ապահովագրության բարելավման և վերապատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ:

#### 1.2.1.12. Խարդախության ռիսկ

Ընկերության հանդեպ կամ նրա հաճախորդների հանդեպ կարող են իրականացվել խարդախություններ: Դա կարող է հանգեցնել ինչպես ֆինանսական կորուստների, այնպես էլ Թողարկողի հեղինակության կորստի:

Այս ռիսկը զսպելու նպատակով Ընկերությունը մշտապես իրականացնում է խարդախության հնարավոր սխեմաների բացահայտման և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակում: Բացի այդ, Թողարկողը պարբերաբար տարբեր միջոցներով իրականացնում է տեղեկատվության տրամադրում հաճախորդներին՝ հավանական խարդախությունների և դրանցից խուսափելու հնարավորությունների մասին:

### 1.2.2. Բաժնետոմսերին առնչվող ռիսկերը

Բաժնետոմսերին առնչվող ռիսկերը մանրամասն նկարագրված են Ազդագրի 2.1. ենթագլխում:

#### 1.2.2.1. Շուկայական ռիսկ

Երկրորդային շուկայում Թողարկողի բաժնետոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

#### 1.2.2.2. Բիզնես ռիսկը

Այս ռիսկը ընդհանուր տնտեսական վիճակի, ոլորտի կամ Ընկերության մրցակցային դիրքի կամ ֆինանսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների անբարենպաստ հետևանքն է, որի արդյունքում կարող է նվազել շահույթը՝ հանգեցնելով երկրորդային շուկայում բաժնետոմսերի գնի անկման , ինչպես նաև հնարավոր շահաբաժինների նվազման:

#### 1.2.2.3. Տոկոսադրույքի ռիսկը

Տոկոսադրույքների փոփոխությունը կարող է անուղղակիորեն ազդել բաժնետոմսերի գնի վրա՝ որպես այլընտրանքային ներդրման ուղղություն: Մասնավորապես, տոկոսադրույքների բարձրացման պարագայում այլ հավասար պայմաններում հավանական է Թողարկողի բաժնետոմսերի գնի նվազում:

#### 1.2.2.4. Արտարժութային ռիսկ

Այն կարող է առաջանալ ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքների տատանման արդյունքում: Թողարկվող բաժնետոմսերն արտահայտված են ՀՀ դրամով, ուստի ներդրումները, բաժնետոմսերի առուվաճառքը և շահաբաժինների վճարումն իրականացվելու են բացառապես ՀՀ դրամով: Հետևաբար, արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների համար, ում ֆինանսական հոսքերը հիմնականում իրականացվում են արտարժույթով:

#### 1.2.2.5. Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկ

Թողարկողը երկրորդային շուկայում իրացվելիությունն ապահովելու համար ներգավելու է շուկա ստեղծող(ներ): Այնուամենայնիվ, վերջինս չի կարող երաշխավորել, որ կարգավորվող շուկայում բաժնետոմսերի շրջանառության ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել բաժնետոմսերը իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

#### 1.2.2.6. Գնաճի կամ գնողունակության ռիսկ

ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական եկամտաբերությունից ցածր (գնաճի չափով): Ընդ որում, ռիսկը վերաբերվում է և՛ բաժնետոմսերի գնի աճից գոյացած եկամտաբերությանը, և՛ շահութաբաժինների հնարավոր վճարման արդյունքում ստացված մուտքերից եկամտաբերությանը:

#### 1.2.2.7. Վարկային/դեֆոլտի ռիսկ

Ներդրողները ցանկացած թողարկողի բաժնետոմսերը ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

#### 1.2.2.8. Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ

Ռիսկի առաջացման պատճառ են հանդիսանում նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները, մասնավերապես՝ ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխությունները, ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխությունները և ՀՀ ԿԲ որոշումները, ինչպես նաև Միջազգային օրենսդրական ոլորտային փոփոխությունները, որոնք կարող են նաև հանգեցնել գործընկերային հարաբերությունների վերանայումների ու փոփոխությունների: Վերոգրյալ փոփոխությունները կարող են անդրադառնալ Թողարկողի բնականոն գործունեության և շուկայում տիրող իրավիճակի վրա:

## 1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերությունը 2022 թ.-ի ունեցել է ռեկորդային հասույթ, որը կազմել է 12.7 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ աճել էր 25%, նույն ժամանակահատվածում զուտ շահույթը աճել էր 47%: Այս կտրուկ աճը պայմանավորված էր 3.4.2.2. ենթակետում նշված բացառիկ գործոններով:

Ընկերությունը 2023 թ.-ի տվյալներով հասույթը կրճատվել է 23% - ով համեմատած 2022 թ -ի հետ, իսկ զուտ շահույթը 45% - ով: Սա հիմնականում պայմանավորված է 3.4.2.2. ենթակետում նշված բացառիկ գործոնների ազդեցության նվազմամբ:

Թողարկողի մարտավարությունը թվային պրոդուկտների զարգացմանն է միտված, դրանով իսկ նպաստելով համախառն մարժայի աճին և եկամտաբերության աճին:

Թողարկողը մասնակցել է Երևանի Քաղաքապետարանի կողմից անցկացված միասնական տոմսային օպերատորի բաց մրցույթի և հաղթող է ճանաչվել:

2022թ.-ի հուլիսին Թողարկողը ստորագրել է համաձայնագիր միջազգային VISA վճարահաշվարկային կազմակերպության հետ: Այդ համաձայնագիրը հնարավորություն կտա Թողարկողին ստեղծել անհատական VISA քարտեր իր հաճախորդների համար: Եկամուտ է ակնկալվում անմիջապես հիմնական վճարահաշվարկային գործունեությունից, ինչպես նաև Apple Pay պրոդուկտից:

Ընկերության արտոնագրերը և լիցենզիաները ներկայացված են Ազդագրի 3.9 կետում:

## 1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

### 1.4.1. Անկախ աուդիտորները

Թողարկողի 2021 և 2022թթ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է **«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**, կայք՝ http://www.kpmg.am:

Թողարկողի 2023թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնում է **«Գրանթ Թորոնթոն» փակ բաժնետիրական ընկերությունը,** կայք՝ https://www.grantthornton.am/

### 1.4.2. Խորհրդատուները

Թողարկման գլխավոր տեղաբաշխողն է՝ **«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն,** կայք՝ www.armbrok.am:

Ազդագրի կազմման գործընթացում, որպես խորհրդատու Ընկերությունն օգտվել է **«Էմ Բի Քնսալթինգ» ՓԲԸ** - ի ծառայություններից, կայք՝ www.mbconsulting.am:

## 1.5. Թողարկողի կառավարումը և բաժնետերերը

Ըստ կանոնադրության, Ընկերության կառավարման հիմնական մարմիններն են.

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Ընկերության տնօրենների խորհուրդը,
- Ընկերության գլխավոր տնօրենը:

### 1.5.1. Թողարկողի բաժնետերեր

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերության նշանակալի իրավաբանական անձ բաժնետերն է «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի»-ն, որի մասնակցությունը Թողարկողի կապիտալում կազմում է 56.28%: «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» ընկերության վերջնական վերահսկող անձն է Ռամի Տրեյստերը:

| Բաժնետերերը | Բաժնետոմսերի քանակը | Թողարկողի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի տոկոսը* |
|---|---|---|
| «Լենդասի Թրեյդինգ Էլ Թի Դի» | 17,334,240 հատ սովորական բաժնետոմս | 56.28% |
| Տիգրան Սարգսյան | 5,544,000 հատ սովորական բաժնետոմս | 18% |
| Արամայիս Բադալյան | 4,620,000 հատ սովորական բաժնետոմս | 15% |
| Տաթևիկ Ավետիսյան | 1,789,480 հատ սովորական բաժնետոմս | 5.81% |
| Արամ Սարգսյան | 1,512,280 հատ սովորական բաժնետոմս | 4.91% |

### 1.5.2. Թողարկողի տնօրենների խորհուրդ

Թողարկողի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը: Ընկերության խորհուրդը բաղկացած է երեք անդամներից՝ Խորհրդի նախագահից և երկու անդամներից:

| Անուն, ազգանուն | Պաշտոն | Փորձառությունը |
|---|---|---|
| Արտաշես Ավետիսյան | Տնօրենների խորհրդի նախագահ | Ավելի քան 8 տարի նշված պաշտոնում |
| Ռամի Տրեյստեր | Տնօրենների խորհրդի անդամ | Ավելի քան 8 տարի նշված պաշտոնում |
| Վաչե Գաբրիելյան | Տնօրենների խորհրդի անդամ | Պաշտոնում 2022 թ.-ի սեպտեմբերից |

### 1.5.3. Թողարկողի Գլխավոր գործադիր տնօրեն

Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

| Անուն, ազգանուն | Պաշտոն | Փորձառությունը |
|---|---|---|
| Արտյոմ Ղազարյան | Գլխավոր տնօրեն | Ավելի քան 21 տարի ոլորտում |

Ընկերության կառավարման մարմնի անդամները չեն տիրապետում Թողարկողի բաժնային արժեթղթերի նկատմամբ օպցիոնների:

### 1.5.4. Աշխատակիցներ

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում աշխատակիցների թվաքանակը հետևյալն է՝

- 31.12.2021թ. դրությամբ՝ 304 հոգի,
- 31.12.2022թ. դրությամբ՝ 352 հոգի,
- 31.12.2023թ. դրությամբ՝ 358 հոգի:

Թողարկողը չունի ժամանակավոր աշխատանքային պայմանագրով աշխատող աշխատակիցներ:

## 1.6. Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

Տեղաբաշխվող բաժնետոմսերը նոր թողարկված սովորական բաժնետոմսեր են, բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Ազդագրի ներքո նախատեսվող առաջարկի հիմնական վիաճակագրությունը.

| | |
|---|---|
| **Բաժնետոմսի տեսակը՝** | Սովորական բաժնետոմս |
| **Բաժնետոմսի ձևը՝** | Ոչ փաստաթղթային |
| **Բաժնետոմսերի քանակը** | 3,850,000 (երեք միլիոն ութ հարյուր հիսուն հազար) հատ |
| **Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝** | 35 (երեսունհինգ) ՀՀ դրամ |
| **Մեկ բաժնետոմսի առաջարկի արժեքը՝** | 400 (չորսհարյուր) ՀՀ դրամ |
| **Բաժնետոմսերի ընդհանուր ծավալ (անվանական արժեքով)՝** | 134,750,000 (հարյուր երեսունչորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ |
| **Բաժնետոմսերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը՝** | 1,540,000,000 (մեկ միլիարդ հինգհարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ |

Բաժնետոմսերը տեղաբաշխվում և շրջանառվում են ՀՀ դրամով:

Բաժնետոմսերի թողարկման նպատակն է մեծացնել ընկերության ու բաժնետիրական կապիտալը, և ներգրավված միջոցները նախատեսվում են օգտագործվել Ընկերության զարգացման ռազմավարությունը իրականացնելու համար:

Տեղաբախշման սկզբի և ավարտի ժամկետները կորոշվեն Ազդագրի ԿԲ -ի կողմից գրանցումից հետո Ընկերության իրավասու մարմնի կողմից:

## 1.7.Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Բաժնետոմսերը կտեղաբաշխվեն Բորսայից դուրս, ուղղակի վաճառքի միջոցով:

Բաժնետոմսերի ձեռքբերելու նպատակով ներդրողը ներկայացնում է բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական՝ Տեղաբաշխողի հաստատված տիպային օրինակով, որը հրապարակվում է Թողարկողի և Տեղաբաշխողի ինտերնետային կայքում, (այսուհետ՝ հայտ):

Ներդրողը կարող է ձեռքբերման հայտ ներկայացնել հետևյալ եղանակներով.

- **Բաժանորդագրության Ձեռքբերման հայտ-հանձնարարական ստեղծել Թելսելլի TWallet հավելվածի միջոցով:** Այդ ապարագայում բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարումը կարող է կատարվել նաև «Telcell Wallet» հավելվածի միջոցով, որը չի կարող գերազանցել 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամը մեկ օրվա դրությամբ: Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը «Telcell Wallet» հավելվածի միջոցով ձեռքբերման հայտ-հանձնարարականը ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է սյուն առաջարկի նպատակով Թողարկողի անվամբ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163001479761 հաշվեհամարին ապահովի բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը (վճարումը պետք է կատարվի ՀՀ դրամով:
- **Ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացում Տեղաբաշխողին:** Բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողները սահմանված կարգով պետք է լրացվածձեռքբերման հայտերը և պատշաճ կերպով ներկայացնեն Տեղաբաշխողին: Դրանով նրանք կհավաստեն բաժնետոմսերի առաջարկի պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, որով էլ այդ պայմանները պարտադիր կդառնան ներդրողների համար: Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը ձեռքբերման հայտ-հանձնարարականը պատշաճ լրացված կկերպով ներկայաց**վ**ելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է սյուն առաջարկի նպատակով ստորև ներկայացված Տեղաբաշխողի «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163005043316 հաշվեհամարին կատարի հայտ-հանձնարարականում նշված քանակի բաժնետոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում՝ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Առաջարկվող բաժնետոմսերի մասով հայցվելու է ցուցակման թույլտվություն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում: Ցուցակման հայցը կարող է նաև չբավարարվել:

Առաջարկի ամբողջական նկարագիրը ներկայացված է Ազդագրի 2.4. ենթագլխում:

## 1.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

| Ցուցանիշի անվանումը | 2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած) | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 4,997,105 | 9,846,861 | 12,711,421 | 10,137,844 | 6,682,403 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | (2,781,055) | (4,185,451) | (6,006,947) | (5,038,381) | (3,964,523) |
| Համախառն շահույթ (վնաս) | 2,216,050 | 5,661,410 | 6,704,474 | 5,099,463 | 2,717,881 |
| Իրացման ծախսեր | (772,953) | (452,375) | (916,111) | (596,481) | (501,449) |
| Վարչական ծախսեր | (1,055,570) | (3,496,871) | (1,820,937) | (1,041,436) | (665,817) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 387,527 | 1,712,164 | 3,967,426 | 3,461,545 | 1,550,615 |
| Գործառնական այլ եկամուտներ | 1,443,687 | 1,086,342 | 1,353,764 | 326,993 | 211,079 |
| Գործառնական այլ ծախսեր | (515,966) | (635,140) | (597,807) | (476,519) | (387,231) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 1,315,247 | 2,163,366 | 4,723,384 | 3,312,019 | 1,374,463 |
| Ֆինանսական ծախսեր | (88,035) | 180,038 | (223,178) | (325,162) | 45,519 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| Ցուցանիշի անվանումը | 2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած) | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|---|
| մարումներից շահույթ (վնաս) | | | | | |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 0 | 12,168 | | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 1,227,213 | 2,355,572 | 4,500,205 | 2,986,858 | 1,419,982 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 1,227,213 | 2,355,572 | 4,500,205 | 2,986,858 | 1,419,982 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | (235,000) | (504,831) | (984,556) | (600,941) | (290,647) |
| **Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո** | **992,213** | **1,850,741** | **3,515,650** | **2,385,917** | **1,129,335** |

Ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ

| Ցուցանիշի անվանումը | 2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած) | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 1,229,667 | 1,036,917 | 900,124 | 822,514 | 780,446 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ոչ նյութական ակտիվներ | 1,659,823 | 1,634,170 | 1,659,612 | 1,598,430 | 705,708 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 200,100 | 264,285 | 294,348 | 276,295 | 1,157,700 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 341,827 | 409,183 | 317,359 | 268,735 | 86,599 |

| Ցուցանիշի անվանումը | 2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած) | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **3,431,417** | **3,344,555** | **3,171,444** | **2,965,974** | **2,730,452** |
| Պաշարներ | 306,002 | 272,969 | 148,000 | 140,903 | 76,592 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 275,470 | 236,715 | 241,856 | 196,846 | 0 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 767,725 | 892,756 | 739,758 | 789,042 | 799,467 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 1,555 | 1,555 | 1,555 | 1,555 | 1,555 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 276,744 | 193,518 | 198,742 | 214,599 | 11,120 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 11,772,678 | 13,861,351 | 11,225,781 | 10,549,045 | 6,062,055 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **13,400,173** | **15,458,864** | **12,555,692** | **11,891,990** | **6,950,790** |
| **Ընդամենը ակտիվներ** | **16,831,590** | **18,803,419** | **15,727,136** | **14,857,963** | **9,681,242** |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 1,078,000 | 1,078,000 | 231,000 | 220,000 | 150,000 |
| Էմիսիոն եկամուտ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կուտակված շահույթ | 2,026,537 | 2,416,860 | 4,073,198 | 2,568,748 | 1,608,583 |
| Պահուստային կապիտալ | 161,700 | 161,700 | 46,200 | 35,000 | 35,000 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Չվերահսկվող բաժնեմաս | 11,889 | 11,889 | 11,889 | 11,889 | 11,889 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **3,278,126** | **3,668,449** | **4,362,287** | **2,835,637** | **1,805,472** |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 2,824,681 | 2,099,720 | 1,326,704 | 589,849 | 498,021 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 280,478 | 287,934 | 448,909 | 403,305 | 245,655 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **3,105,159** | **2,387,654** | **1,775,613** | **993,154** | **743,676** |

| Ցուցանիշի անվանումը | 2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած) | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|---|
| Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 9,625,738 | 12,384,382 | 8,839,844 | 10,567,969 | 6,830,599 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 579,775 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 242,792 | 362,934 | 749,392 | 461,203 | 301,495 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **10,448,305** | **12,747,316** | **9,589,236** | **11,029,172** | **7,132,095** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **13,553,464** | **15,134,970** | **11,364,849** | **12,022,326** | **7,875,770** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **16,831,590** | **18,803,419** | **15,727,136** | **14,857,963** | **9,681,242** |

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ տվյալներ

| Ցուցանիշի անվանումը | 2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած) | 2023թ. (աուդիտ անցած) | 2022թ. (աուդիտ անցած) | 2021թ. (աուդիտ անցած) | 2020թ. (աուդիտ անցած) |
|---|---|---|---|---|---|
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին** | **13,861,351** | **5,508,989** | **9,283,107** | **6,062,055** | **6,652,983** |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | **(1,141,949)** | 4,948,958 | (1,506,573) | 5,723,432 | 855,802 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | **(213,667)** | (535,148) | (561,419) | (620,770) | (650,773) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | **(751,055)** | (1,869,072) | (1,267,079) | (1,282,023) | (828,850) |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | **17,997** | (75,289) | (439,047) | (301,058) | 32,893 |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **11,772,678** | **7,902,100** | **5,508,989** | **9,581,636** | **6,062,055** |

Ամփոփ ֆինանսական գործակիցներ

| **Ցուցանիշի անվանումը** | **2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած)** | **2023թ. (աուդիտ անցած)** | **2022թ. (աուդիտ անցած)** | **2021թ. (աուդիտ անցած)** | **2020թ. (աուդիտ անցած)** |
|---|---|---|---|---|---|
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) | 39 | 8,412 | 15,980 | 15,311 | 7,529 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) | 29% | 51% | 98% | 103% | 82% |
| Ակտիվների շահութաբերություն (ROA) | 7% | 14% | 23% | 19% | 12% |
| Զուտ շահույթի մարժա (NPM) | 20% | 19% | 28% | 24% | 17% |
| Կապիտալի համարժեքության գործակից | 19% | 20% | 28% | 19% | 19% |
| Ֆինանսական կախվածության գործակից | 3.19 | 3.47 | 2.20 | 3.89 | 3.95 |
| Բացարձակ իրացվելության գործակից | 1.15 | 1.10 | 1.19 | 0.98 | 0.85 |
| Ընթացիկ իրացվելության գործակից | 1.25 | 1.19 | 1.29 | 1.07 | 0.96 |
| Ընդհանուր իրացվելության գործակից | 1.28 | 1.21 | 1.31 | 1.08 | 0.97 |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 6.25 | 12.20 | 16.63 | 12.76 | 9.98 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 28.82 | 29.92 | 21.95 | 28.60 | 36.57 |
| Պաշարների շրջանառելիության գործակից | 9.61 | 22.35 | 41.58 | 46.33 | 47.73 |
| Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով | 18.74 | 16.33 | 8.78 | 7.88 | 7.65 |
| Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 0.96 | 1.51 | 2.33 | 2.22 | 2.21 |
| Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 187.66 | 242.48 | 156.60 | 164.46 | 164.86 |

Բաժնետոմսերի քանակի վիճակագրություն

| **Ցուցանիշի անվանումը** | **2024թ. առաջին կիսամյակ (աուդիտ չանցած)** | **2023թ. (աուդիտ անցած)** | **2022թ. (աուդիտ անցած)** | **2021թ. (աուդիտ անցած)** | **2020թ. (աուդիտ անցած)** |
|---|---|---|---|---|---|
| Բաժնետոմսերի քանակ ժամանակաշրջանի վերջում | 30,800,000 | 220,000 | 220,000 | 220,000 | 150,000 |
| Բաժնետոմսերի ժամանակով միջին կշռված քանակ | 25,703,333** | 220,000 | 220,000 | 155,833* | 150,000 |

*Նոր բեժնետոմեսրը թողարկվել են 2021թ -ի նոյեմբերին:

**2024 թվականին փետրվարին բաժնետոմսերի քանակը ավելացել է:

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 3-ում:

# 2. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### 2.3.6.1. Շահութաբաժինների ստացման իրավունք

Յուրաքանչյուր բաժնետոմս իր սեփականատիրոջը իրավունք է տալիս իրեն պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն ստանալ շահութաբաժիններ: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Թողարկողի Շահութաբաժնային քաղաքականությամբ:

Ընդ որում, Թողարկողը Շահութաբաժնային քաղաքականությամբ սահմանում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio)՝ 50 տոկոս:

Շահութաբաժնային քաղաքականությունը սահմանում է Թողարկողի շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները, Ընկերության բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման պայմանները, շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը, այդ թվում՝ վճարման ժամկետներն ու ձևը:

Թողարկողը իրավունք ունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունն է, իսկ միջանկյալ շահութաբաժինների վճարման պարագայում Թողարկողի խորհրդի:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Ընկերության խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Թողարկողի կողմից հայտարարված շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով, անկանխիկ ձևով:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Թողարկողի բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են շահույթից՝ հարկերը վճարելուց հետո (զուտ շահույթ), որը հաշվարկվում է Թողարկողի՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ՝ բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելիս: Ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջը շահութաբաժնի վճարում է համարվում Թողարկողի հաշվից համապատասխան դրամական գումարի անկանխիկ ստացումը՝ բաժնետիրոջ կողմից ներկայացրած բանկային հաշվին կամ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ անկանխիկ եղանակներով:

Թողարկողն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե՝

ա) լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը,

բ) Թողարկողն օրենքով սահմանված կարգով հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը,

գ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Թողարկողի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,

դ) Թողարկողի զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Թողարկողի ոչ ռեզիդենտ բաժնետերերի կողմից շահութաբաժինների ստացման առանձնահատկություններ սահմանված չեն:

Շահութաբաժինների հաշվարկման և վճարման հետ կապված այլ հարցերը կարգավորվում են Թողարկողի Շահութաբաժնային քաղաքականությամբ, որը հասանելի է Թողարկողի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, ինչպես նաև Թողարկողի՝ invest.telcell.am ինտերնետային կայքում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 5: Ֆինանսական հաշվետվություններ

**«Թել-Սել» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ**
**2021թ. համար**

**Բովանդակություն**


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## «Թել-Սել» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թել-Սել» ՓԲԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք*) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համա.

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և [illegible] «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Խումբը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնությունները և իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի կազմի մեջ մտնող կազմակերպություններին կամ գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվության հետ կապված: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ղեկավարման, վերահսկողության և իրականացման համար: Մենք շարունակում ենք ամբողջական պատասխանատվություն կրել մեր աուդիտորական եզրակացության համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
12 մայիսի 2022թ.

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2021թ.

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 9 | 822,514 | 780,446 |
| Ոչ նյութական ակտիվներ | 10 | 440,730 | 516,352 |
| Գուդվիլ | 11 | 1,157,700 | 1,157,700 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 19 | 276,295 | 189,356 |
| Կանխավճարներ | | 14,000 | 39,784 |
| Տրամադրված փոխառություններ | 13 | 200,000 | - |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 8 | 54,735 | 46,815 |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | **2,965,974** | **2,730,453** |
| | | | |
| Պաշարներ | 12 | 140,903 | 76,592 |
| Տրամադրված փոխառություններ | 13 | 58,432 | 11,120 |
| Բանկային ավանդներ | | 156,167 | - |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 14 | 985,888 | 799,467 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | | 1,555 | 1,555 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15 | 10,549,045 | 6,062,055 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | **11,891,990** | **6,950,789** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **14,857,964** | **9,681,242** |
| | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 16 | 220,000 | 150,000 |
| Պահուստներ | 16 | 35,000 | 35,000 |
| Չբաշխված շահույթ | | 2,568,748 | 1,608,583 |
| **Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ** | | **2,823,748** | **1,793,583** |
| Չվերահսկող բաժնեմաս | | 11,889 | 11,889 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **2,835,637** | **1,805,472** |
| | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 18 | 589,849 | 498,021 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 19 | 249,506 | 148,280 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 20 | 153,799 | 97,375 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **993,154** | **743,676** |
| | | | |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 19 | 49,421 | 64,522 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 20 | 10,567,970 | 6,830,599 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 411,782 | 236,973 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | **11,029,173** | **7,132,094** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **12,022,327** | **7,875,770** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **14,857,964** | **9,681,242** |

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 48-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ միասին:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2021թ. համար

| հազ. դրամ | Ծնթգ. | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 10,137,844 | 6,682,403 |
| Գործակալներին վճարված միջնորդավճարներ | | (3,567,982) | (2,566,448) |
| Այլ եկամուտ | 6 (ա) | 326,993 | 211,079 |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (1,232,033) | (1,132,899) |
| Վարձակալության գծով ծախսեր | 19 (գ) | (486,119) | (448,438) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (346,155) | (211,511) |
| Թույլտվության վճարներ | | (226,360) | (211,190) |
| Դրամական միջոցների փոխադրման ծախսեր | | (171,766) | (125,132) |
| Աջակցման և սպասարկման ծախսեր | | (106,255) | (101,410) |
| Բանկային ծառայությունների վճարներ | | (267,923) | (97,653) |
| Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ | | (14,900) | (48,324) |
| Այլ ծախսեր | 6 (բ) | (733,324) | (576,014) |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | | **3,312,020** | **1,374,463** |
| Ֆինանսական եկամուտ | 7 | 45,135 | 94,986 |
| Ֆինանսական ծախսեր | 7 | (370,297) | (49,467) |
| **Զուտ ֆինանսական ծախսեր** | 7 | **(325,162)** | **45,519** |
| Շահույթ նախքան շահութահարկով հարկումը | | **2,986,858** | **1,419,982** |
| Շահութահարկի գծով ծախս | 8 | (600,941) | (290,647) |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | | **2,385,917** | **1,129,335** |
| | | | |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք վերագրելի`** | | | |
| Ընկերության սեփականատերերին | | 2,385,917 | 1,129,335 |
| Չվերահսող բաժնեմասին | | - | - |
| | | **2,385,917** | **1,129,335** |

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. մայիսի 12-ին և ստորագրվել են վերջինիս անունից

Արամ Ազատյան
Գլխավոր տնօրեն

Արթուր Թորոսյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 48-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2021թ. համար

| հազ. դրամ | Ընկերության սեփականատերերին վերագրելի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բաժնետիրական կապիտալ | Պահուստներ | Չբաշխված շահույթ | Ընդամենը | Չվերահսկող բաժնեմաս | Ընդամենը սեփական կապիտալ |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 150,000 | 35,000 | 750,343 | 935,343 | 11,889 | 947,232 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | 1,129,335 | 1,129,335 | - | 1,129,335 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | - | - | **1,129,335** | **1,129,335** | - | **1,129,335** |
| **Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | | | | | | |
| Շահաբաժիններ* | - | - | (250,000) | (250,000) | - | (250,000) |
| Այլ գործառնություններ | - | - | (21,095) | (21,095) | - | (21,095) |
| **Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | - | - | **(271,095)** | **(271,095)** | - | **(271,095)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **150,000** | **35,000** | **1,608,583** | **1,793,583** | **11,889** | **1,805,472** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 150,000 | 35,000 | 1,608,583 | 1,793,583 | 11,889 | 1,805,472 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | 2,385,917 | 2,385,917 | - | 2,385,917 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | - | - | **2,385,917** | **2,385,917** | - | **2,385,917** |
| **Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | | | | | | |
| Սովորական բաժնետոմսերի թողարկում | 70,000 | - | - | 70,000 | - | 70,000 |
| Շահաբաժիններ* | - | - | (1,415,000) | (1,415,000) | - | (1,415,000) |
| Այլ գործառնություններ | - | - | (10,752) | (10,752) | - | (10,752) |
| **Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ** | **70,000** | - | **(1,425,752)** | **(1,355,752)** | - | **(1,355,752)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **220,000** | **35,000** | **2,568,748** | **2,823,748** | **11,889** | **2,835,637** |

* 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 795,066 հազար դրամ ընդհանուր գումարով հայտարարված շահաբաժինները (2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 244,535 հազար դրամ) փոխարկվել են վարկերի և փոխառությունների (Ծանոթագրություն 18 (բ)):

# Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
## 2021թ. համար

| հազ. դրամ | Ծնթգ. | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|---|
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված միջնորդավճարներ | | 9,660,691 | 6,166,814 |
| Վճարված միջնորդավճարներ | | (3,490,786) | (2,508,610) |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 197,685 | 133,284 |
| Մուտքեր մատուցված այլ ծառայություններից | | 313,516 | 336,693 |
| Ստացված այլ եկամուտ | | 74,447 | 70,781 |
| Վճարումներ աշխատակիցներին | | (1,292,056) | (1,014,119) |
| Վճարված այլ ծախսեր | | (1,933,025) | (1,535,834) |
| Ստացված տոկոսներ | | 38,968 | 49,187 |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | | |
| Օպերատորներին վճարվելիք գումարներ | | 3,482,538 | (501,254) |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | | 3,775 | 6,674 |
| Ստացված կանխավճարներ | | 128,469 | (88,084) |
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը** | | **7,184,222** | **1,115,532** |
| Վճարված շահութահարկ | | (434,053) | (213,761) |
| Վճարված տոկոսներ | | (59,328) | (45,969) |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | | **6,690,841** | **855,802** |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից | | 17,916 | 10,759 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (241,374) | (677,752) |
| Ավանդի տեղաբաշխում | | (150,000) | - |
| Ավանդի ելքագրում | | - | 20,510 |
| Տրամադրված փոխառություններ | | (247,312) | (11,900) |
| Տրամադրված փոխառությունների մարում | | - | 7,610 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(620,770)** | **(650,773)** |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | | 25,000 | 375,000 |
| Վարկերի և փոխառությունների մարում | | (737,812) | (1,100,890) |
| Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ | | (50,209) | (45,836) |
| Վճարված շահաբաժիններ | | (589,002) | (36,029) |
| Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից | | 70,000 | - |
| Գործառնություններ սեփականատերերի հետ | | - | (21,095) |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | | **(1,282,023)** | **(828,850)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)** | | **4,788,048** | **(623,821)** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | | 6,062,055 | 6,652,983 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (301,058) | 32,893 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի** | 15 | **10,549,045** | **6,062,055** |

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 48-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# 2021թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


| Ծանոթագրություն | Էջ |
|---|---|
| 1. Հաշվետու կազմակերպություն | 11 |
| 2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ | 11 |
| 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ | 12 |
| 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում | 12 |
| 5. Հասույթ | 13 |
| 6. Եկամուտ և ծախսեր | 14 |
| 7. Շուտ ֆինանսական ծախսեր | 15 |
| 8. Շահութահարկ | 16 |
| 9. Հիմնական միջոցներ | 17 |
| 10. Ոչ նյութական ակտիվներ | 18 |
| 11. Գուդվիլ | 19 |
| 12. Պաշարներ | 20 |
| 13. Տրամադրված փոխառություններ | 20 |
| 14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 20 |
| 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 21 |
| 16. Կապիտալ և պահուստներ | 21 |
| 17. Կապիտալի կառավարում | 22 |
| 18. Վարկեր և փոխառություններ | 23 |
| 19. Վարձակալություն | 24 |
| 20. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 25 |
| 21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում | 25 |
| 22. Դուստր կազմակերպություններ | 31 |
| 23. Պայմանական դեպքեր | 31 |
| 24. Կապակցված կողմեր | 32 |
| 25. Չափման հիմունքներ | 33 |
| 26. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր | 33 |
| 27. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ | 47 |

# 1. Հաշվետու կազմակերպություն

**(ա) Հայաստանի գործարար միջավայրը**

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: COVID-19 համավարակն էլ ավելի է մեծացրել գործարար միջավայրում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

**(բ) Կազմակերպչական կառուցվածքը և գործունեությունը**

«Թել-Մել» ՓԲԸ-ն («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունները («Խումբ») փակ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ են՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն 2007թ-ին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: 2007թ. հուլիսի 24-ին Ընկերությունը ստացել է դրամական փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- վճարումների ընդունման ծառայությունների մատուցումը, օրինակ՝ վերջնական օգտագործողների կոմունալ ծառայությունների վճարների, մարկերի մարումների, պետական բյուջե վճարումների ընդունում ծառայություններ մատուցողների (Օպերատորների) անունից իր սեփական և գործակալների տերմինալների միջոցով,
- դրամական փոխանցումներ,
- կանխիկացման ծառայություններ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Հակոբ Հակոբյան փող. 3 (հիմնական մասնաշենքի 1-ին սեկցիա, 3-րդ հարկ):

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում 13 հաճախորդների սպասարկման մասնաճյուղերի և ավելի քան 3500 վճարային տերմինալների միջոցով: Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության բաժնետերերն են՝ Lendasy Trading Ltd (56.28%), Արամայիս Բաղայանը (13.00%), Արտակ Գաբրելյանը (10.00%), Տիգրան Նահապետյանը (10.00%), Արամ Սարգսյանը (4.91%) և Տաթևիկ Ավետիսյանը (5.81%): Խմբի վերջնական վերահսկող անձն է Վոլիա Կիրինիցկայան:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

# 2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

**Համապատասխանության հավաստում**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) պահանջների համաձայն:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթն է և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

## 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվութունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, և այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է Ծանոթագրություն 11-ում՝ գուդվիլի արժեզրկման ստուգման համար կիրառվող հիմնական ենթադրությունների և այն դրամաստեղծ միավորի որոշման հետ կապված, որին բաշխվում է գուդվիլը:

***Իրական արժեքի չափում***

Խմբի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափում:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ*. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ*. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- *3-րդ մակարդակ*. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, ապա իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումներն Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

# 5. Հասույթ

## (ա) Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը հիմնականում ստանում է ծառայություն մատուցողների («Օպերատորների») անունից վերջնական օգտագործողներից վճարումների ընդունման ծառայություններից և մատուցված այլ ծառայություններից:

| հազ. դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---:|---:|
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | | |
| Միջնորդավճարներ վճարումների ընդունման ծառայություններից | 9,145,633 | 6,153,108 |
| Հասույթ գովազդի և գործակալի տերմինալի սպասարկման ծառայություններից | 382,669 | 301,137 |
| Միջնորդավճարներ կանխիկացման ծառայություններից | 386,160 | 134,613 |
| Միջնորդավճարներ դրամական փոխանցումներից | 127,570 | 57,594 |
| Այլ հասույթ | 95,812 | 35,951 |
| **Ընդամենը հասույթ** | **10,137,844** | **6,682,403** |

## (բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շուկաների և հասույթի ճանաչման ժամկետների:

| հազ. դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---:|---:|
| **Շուկա** | | |
| Հայաստանի Հանրապետություն | 10,010,400 | 6,622,112 |
| ԱՊՀ այլ երկրներ | 127,444 | 60,291 |
| | **10,137,844** | **6,682,403** |
| **Հասույթի ճանաչման ժամկետներ** | | |
| Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ | 10,137,844 | 6,682,403 |
| **Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **10,137,844** | **6,682,403** |

## (գ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով առևտրական դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---:|---:|
| «Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված դեբիտորական պարտքեր | 14 | 696,410 | 650,449 |

Չի տրամադրվել տեղեկատվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացած կատարման պարտականությունների վերաբերյալ, որոնց սկզբնական ակնկալվող տևողությունը կազմում է մեկ տարի կամ պակաս, ինչպես դա թույլատրվում է ՖՀՄՍ 15-ով:

**(դ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն**

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

| Ծառայության տեսակը | Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները, ներառյալ վճարման նշանակալի պայմանները | Հասույթի ճանաչում ՖՀՄՍ 15 համաձայն |
|---|---|---|
| **Վճարումների ընդունման, կանխիկացման և դրամական փոխանցումների ծառայություններ** | Վճարումների ընդունման և կանխիկացման ծառայությունների գծով կատարման պարտականությունները կատարվում են, երբ Ընկերությունն ընդունում է վճարումներ Օպերատորների վերջնական հաճախորդներից: Վճարումների ընդունման, կանխիկացման կամ դրամական փոխանցումների ծառայությունների ակտերը ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Վճարումների ընդունման, կանխիկացման և դրամական փոխանցումների ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցման ժամանակ: Կատարման պարտականության կատարման առաջընթացի չափումը հիմնված է ընդունված վճարումների, կանխիկացման գործառնությունների և դրամական փոխանցումների ծավալի վրա: |
| **Սպասարկման և գովազդի ծառայություններ** | Սպասարկման և գովազդի ծառայությունների հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում: | Սպասարկման ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ֆիքսված ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցման ժամանակ՝ անցած ժամանակահատվածը կիրառելով որպես կատարման պարտականության կատարման առաջընթացի չափման միավոր: |

## 6. Եկամուտ և ծախսեր

**(ա) Այլ եկամուտ**

| հազ. դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Զուտ եկամուտ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | 181,369 | 133,284 |
| Տույժեր և տուգանքներ | 41,512 | - |
| Օգուտ հիմնական միջոցների օտարումից | 14,171 | 7,014 |
| Զուտ եկամուտ պաշարների վաճառքից | 979 | 11,901 |
| Այլ | 88,962 | 58,880 |
| | **326,993** | **211,079** |

**(բ) Այլ ծախսեր**

| **հազ. դրամ** | **2021թ.** | **2020թ.** |
|---|---|---|
| Գովազդային արշավներ և նվերներ | 148,765 | 90,764 |
| Գովազդ և մարքեթինգ | 72,062 | 28,967 |
| Պրոցեսինգային համակարգի սպասարկում | 48,900 | 48,660 |
| Տրանսպորտային ծախսեր | 44,024 | 25,915 |
| Միջնորդավճարներ | 41,809 | 30,734 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 40,589 | 21,711 |
| Կոմունալ և կապի ծառայություններ | 38,847 | 26,885 |
| Հաճախորդների սպասարկում | 37,074 | 59,639 |
| Արտաքին կազմակերպություններից ստացված ծառայություններ | 33,178 | 35,980 |
| Մասնագիտական ծառայություններ | 28,647 | 10,120 |
| Գրասենյակային պիտույքներ | 24,965 | 15,518 |
| Զուտ վնաս պտտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից | 23,769 | 46,172 |
| Պահանջներ | 21,825 | 15,481 |
| Նվիրատվություններ | 17,842 | 38,176 |
| Անվտանգության ծառայություն | 11,053 | 7,728 |
| Հարկեր և տուգանքներ | 10,933 | 9,369 |
| Այլ | 89,042 | 64,195 |
| | **733,324** | **576,014** |

## 7. Զուտ ֆինանսական ծախսեր

| **հազ. դրամ** | **2021թ.** | **2020թ.** |
|---|---|---|
| **Շահույթում կամ վնասում ճանաչված** | | |
| Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների գծով | 45,135 | 49,187 |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | - | 45,799 |
| **Ֆինանսական եկամուտ** | **45,135** | **94,986** |
| | | |
| Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից | (303,324) | - |
| Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով | (45,344) | (27,272) |
| Տոկոսային ծախս վարձակալության գծով | (21,629) | (22,195) |
| **Ֆինանսական ծախսեր** | **(370,297)** | **(49,467)** |
| **Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր** | **(325,162)** | **45,519** |

## 8. Շահութահարկ

### (ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խմբի համար կիրառելի հայկական ընկերությունների համար գործող շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2020թ-ին՝ 18%):

| հազ. դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| **Ընթացիկ հարկի գծով ծախս** | | |
| Ընթացիկ տարի | (587,255) | (306,228) |
| Պակաս ներկայացված նախորդ տարիներում | (21,606) | - |
| | **(608,861)** | **(306,228)** |
| **Հետաձգված հարկի գծով ծախս** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | 7,920 | 15,581 |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **(600,941)** | **(290,647)** |

**Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում**

| | 2021թ. | | 2020թ. | |
|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **%** | **հազ. դրամ** | **%** |
| Շահույթ նախքան շահութահարկով հարկումը | 2,986,858 | | 1,419,982 | |
| Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով | (537,634) | (18.0) | (255,597) | (18.0) |
| Պակաս ներկայացված նախորդ տարիներում | (21,607) | (0.7) | - | - |
| Չնվազեցվող ծախսեր | (41,700) | (1.3) | (35,050) | (2.5) |
| | **(600,941)** | **(20.0)** | **(290,647)** | **(20.5)** |

### (բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

| հազ. դրամ | Ակտիվներ | | Պարտավորություններ | | Զուտ | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2021թ.** | **2020թ.** | **2021թ.** | **2020թ.** | **2021թ.** | **2020թ.** |
| Հիմնական միջոցներ | 11,724 | 5,345 | - | - | 11,724 | 5,345 |
| Պաշարներ | 14,288 | 13,753 | - | - | 14,288 | 13,753 |
| Տրամադրված փոխառություններ | 4,074 | 4,220 | - | - | 4,074 | 4,220 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 21,780 | 20,627 | - | - | 21,780 | 20,627 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ | 2,869 | 2,870 | - | - | 2,869 | 2,870 |
| **Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)** | **54,735** | **46,815** | - | - | **54,735** | **46,815** |

### (գ) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

Հետաձգված հարկի մնացորդների բոլոր փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

## 9. Հիմնական միջոցներ

| հազ. դրամ | Վճարումների պրոցեսինգի սարքավորումն. | Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ | Տնտեսական միջոցներ | Փոխադրա-միջոցներ | Վարձակալված գույքի բարելավում | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 1,058,143 | 163,864 | 79,596 | 19,954 | 45,549 | 1,367,106 |
| Ավելացումներ | 81,272 | 26,530 | 33,774 | 1,162 | 82,521 | 225,259 |
| Օտարումներ | (13,702) | (30) | (1,240) | - | - | (14,972) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **1,125,713** | **190,364** | **112,130** | **21,116** | **128,070** | **1,577,393** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 1,125,713 | 190,364 | 112,130 | 21,116 | 128,070 | 1,577,393 |
| Ավելացումներ | 76,775 | 55,764 | 19,722 | 4,966 | 37,056 | 194,283 |
| Օտարումներ | (23,549) | - | - | - | - | (23,549) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **1,178,939** | **246,128** | **131,852** | **26,082** | **165,126** | **1,748,127** |
| ***Մաշվածություն*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 495,809 | 114,488 | 50,986 | 4,269 | 7,600 | 673,152 |
| Տարվա մաշվածություն | 86,986 | 30,365 | 12,201 | 2,726 | 2,744 | 135,022 |
| Օտարումներ | (10,022) | - | (1,205) | - | - | (11,227) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **572,773** | **144,853** | **61,982** | **6,995** | **10,344** | **796,947** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 572,773 | 144,853 | 61,982 | 6,995 | 10,344 | 796,947 |
| Տարվա մաշվածություն | 90,217 | 30,711 | 18,822 | 3,334 | 7,237 | 150,321 |
| Օտարումներ | (21,655) | - | - | - | - | (21,655) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **641,335** | **175,564** | **80,804** | **10,329** | **17,581** | **925,613** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | | |
| Առ 1 հունվարի 2020թ. | 562,334 | 49,376 | 28,610 | 15,685 | 37,949 | 693,954 |
| Առ 31 դեկտեմբերի 2020թ. | 552,940 | 45,511 | 50,148 | 14,121 | 117,726 | 780,446 |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **537,604** | **70,564** | **51,048** | **15,753** | **147,545** | **822,514** |

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 214,261 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի սարքավորումները (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 204,460 հազար դրամ) գրավադրված են գրավով ապահովված վարկի դիմաց (Ծանոթագրություն 18 (ա)):

## 10. Ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ | Տերմինալի տեղադրման թույլտվություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 156,758 | 16,089 | - | 172,847 |
| Ավելացումներ | 65,452 | 392 | 375,000 | 440,844 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **222,210** | **16,481** | **375,000** | **613,691** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 223,634 | 15,334 | 375,000 | 613,968 |
| Ավելացումներ | 70,825 | - | - | 70,825 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **294,459** | **15,334** | **375,000** | **684,793** |
| *Ամորտիզացիա* | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 74,267 | 9,664 | - | 83,931 |
| Տարվա ամորտիզացիա | 12,142 | 1,266 | - | 13,408 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.** | **86,409** | **10,930** | - | **97,339** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 86,891 | 10,460 | - | 97,351 |
| Տարվա ամորտիզացիա | 20,407 | 1,305 | 125,000 | 146,712 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **107,298** | **11,765** | **125,000** | **244,063** |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | |
| Առ 1 հունվարի 2020թ. | 82,491 | 6,425 | - | 88,916 |
| Առ 31 դեկտեմբերի 2020թ. | 135,801 | 5,551 | 375,000 | 516,352 |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **187,161** | **3,569** | **250,000** | **440,730** |

## 11. Գուդվիլ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|
| «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 1,077,950 | 1,077,950 |
| «Ջեյ-Մել Սերվիս» ՍՊԸ-ի ձեռքբերման գծով գուդվիլ | 79,750 | 79,750 |
| | **1,157,700** | **1,157,700** |

**(ա) Գուդվիլ պարունակող դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգում**

Արժեզրկման ստուգման նպատակով գուդվիլը բաշխվում է Խմբի ընդհանուր գործառնություններին, բացառությամբ առցանց դրամապանակի աշխատանքից և դրամական փոխանցումներից ստացվող դրամական հոսքերի: Խումբը չունի ավելի փոքր դրամաստեղծ միավոր, որի միջոցով հնարավոր կլիներ վերահսկել գուդվիլը ներքին կառավարչական նպատակների համար:

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը հիմնված է վերջինիս օգտագործման արժեքի վրա, որը որոշվել է զեղչելով Խմբի շարունակվող գործառնություններից առաջացող ապագա դրամական հոսքերը: Որոշվել է, որ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը գերազանցում է վերջինիս հաշվեկշռային արժեքից և արժեզրկումից կորուստ չի ճանաչվել:

**Չեղյալ դրամական հոսքերի կանխատեսումների համար կիրառված հիմնական ենթադրություններ**

Օգտագործման արժեքը որոշելու համար կիրառված հիմնական ենթադրություններն են զեղչման դրույքը և նախքան տոկոսների վճարումը, հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի մասհանումները շահույթի (EBITDA) մարժաները:

***(i) Զեղչման դրույք***

Դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշելու համար կիրառվել է 15.1% նախքան հարկումը զեղչման անվանական դրույք:

Զեղչման դրույքը որոշվել է հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների փորձը և ապյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը, որը հիմնված է պարտքի լծակավորման 25.4% հնարավոր տիրույթի վրա՝ 14.9% միջին շուկայական տոկոսադրույքով:

***(ii) Բյուջեով նախատեսված EBITDA-ի նվազում***

EBITDA-ի մարժայի կանխատեսվող մակարդակները կանխատեսման հորիզոնի համար համապատասխանում էին պատմական մեծություններին: Հաշվի առնելով գործունեության դինամիկան և ոլորտի առանձնահատկությունները՝ EBITDA մարժայի աճի տեմպն կանխատեսման առաջին ժամանակաշրջանում հիմնավորվում է անցյալ ժամանակաշրջանների մակարդակներով և Ընկերության 2022թ. բյուջեով՝ հետագա աճով, որը համապատասխանում է ԱՄՀ-ի ՀՀ գնաճի կանխատեսմանը վերլուծության ամսաթվի դրությամբ հետագա տարիների՝ 2023 -2026թթ. համար:

***(iii) Զգայունությունը ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ***

Օգտագործվող զեղչման դրույքի 5%-ով աճը կհանգեցներ փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի դրական տարբերության նվազմանը 29%-ով:

## 12. Պաշարներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|
| Պահեստամասեր | 64,279 | 50,038 |
| Այլ | 76,624 | 26,554 |
| | **140,903** | **76,592** |

## 13. Տրամադրված փոխառություններ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հայկական վարկային կազմակերպություններին տրված փոխառություններ | 175,000 | - |
| Կապակցված կողմերին տրված փոխառություններ | 25,000 | - |
| | **200,000** | - |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Կապակցված կողմերին տրված փոխառություններ | 58,432 | 11,120 |
| | **58,432** | 11,120 |
| | **258,432** | **11,120** |

Տրամադրված փոխառությունները ժամկետանց չեն և արժեզրկված չեն:

## 14. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|
| Ստացվելիք միջնորդավճարներ | 570,274 | 572,499 |
| Առևտրական դեբիտորական պարտքեր այլ ծառայությունների գծով | 126,136 | 77,950 |
| **Ընդամենը առևտրական դեբիտորական պարտքեր** | **696,410** | **650,449** |
| Տրված կանխավճարներ | 196,837 | 129,339 |
| Դեբիտորական պարտքեր դրամական փոխանցումների գծով | 87,259 | - |
| Այլ դեբիտորական պարտքեր | 5,382 | 19,679 |
| **Ընդամենը այլ դեբիտորական պարտքեր** | **289,478** | **149,018** |
| **Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր** | **985,888** | **799,467** |

Պարտքային և արժութային ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

## 15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|
| Բանկային հաշիվների մնացորդներ | 5,877,426 | 2,271,081 |
| Դրամական միջոցները տերմինալներում | 2,033,660 | 1,602,085 |
| Դրամական միջոցները դրամարկղում | 1,658,870 | 1,320,128 |
| Դրամական միջոցները ճանապարհին | 979,089 | 868,761 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություններում** | **10,549,045** | **6,062,055** |

Տոկոսադրույքի ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

## 16. Կապիտալ և պահուստներ

### (ա) Բաժնետիրական կապիտալ

| *Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ* | Սովորական բաժնետոմսեր | |
|---|---|---|
| | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
| Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված | 220,000 | 150,000 |
| Հայտարարված բաժնետոմսեր – անվանական արժեք | 1,000 դրամ | 1,000 դրամ |

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Խմբի մնացորդային ակտիվների նկատմամբ:

**Սովորական բաժնետոմսեր**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2021թ. սեպտեմբերի բաժնետերերի արտահերթ ժողովի ընթացքում հաստատվեց 70 հազար սովորական բաժնետոմսերի թողարկումը՝ 1,000 դրամ արժեքով մեկ բաժնետոմսի համար (2020թ-ին բաժնետոմսեր չեն թողարկվել):

### (բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության և վերջինիս դուստր կազմակերպությունների բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով, բացառությամբ չբաշխված շահույթի համար գործող ստորև ներկայացված սահմանափակումների:

Օրենսդրության պահանջների համաձայն՝Ընկերությունը պետք է ձևավորի բաշխման ոչ ենթակա պահուստ իր չբաշխված շահույթից՝ իր բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով ապագա վնասները ծածկելու համար:

2021թ-ին Ընկերությունը հայտարարել է 1,415,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2020թ-ին՝ 250,000 հազար դրամ) և վճարել է 589,002 հազար դրամ (2020թ-ին՝ 36,029 հազար դրամ), Շահաբաժինների մնացած մասը փոխարկվել է վարկերի և փոխառությունների: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը կազմում է 6,432 դրամ (2020թ-ին՝ 1,667 դրամ):

## 17. Կապիտալի կառավարում

Խորհրդի քաղաքականությամբ պահանջվում է ապահովել կապիտալի կայուն բազա ներդրողների և վարկատուների և գործունեության հետագա կայուն զարգացումն ապահովելու համար: Տնօրենների խորհուրդը վերահսկում է կապիտալի եկամտաբերությունը, որը Խմբի կողմից որոշվում է որպես գործառնական գործունեության արդյունքի և ընդհանուր սեփական կապիտալի (առանց չվերահսկող բաժնեմասի) հարաբերակցություն: Տնօրենների խորհուրդը վերահսկում է նաև սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վճարվող շահաբաժինների մակարդակը:

Խումբը վերահսկում է կապիտալը՝ օգտագործելով ճշգրտված զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը: Այդ նպատակով ճշգրտված զուտ պարտքը սահմանվում է որպես պարտավորությունների ընդհանուր գումար, որը ներառում է տոկոսակիր վարկերը և փոխառությունները՝ հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ստորև ներկայացված է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ճշգրտված զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը:

| հազ. դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Ընդամենը պարտավորություններ | 12,022,327 | 7,875,770 |
| Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները | (10,549,045) | (6,062,055) |
| **Զուտ պարտք** | **1,473,282** | **1,813,715** |
| | | |
| Ընդամենը սեփական կապիտալ | 2,835,637 | 1,805,472 |
| **Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **0.52** | **1.00** |

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման Խմբի մոտեցումը չի փոխվել:

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վճարային կազմակերպությունների կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վճարային կազմակերպությունների նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 100,000 հազար դրամ (2020թ-ին՝ 100,000 հազար դրամ): 2021թ և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափը:

## 18. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խմբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|
| ***Ընթացիկ պարտավորություններ*** | | |
| Գրավով չապահովված փոխառություններ կապակցված կողմերից | 589,849 | 123,021 |
| Գրավով ապահովված բանկային վարկեր | - | 375,000 |
| | **589,849** | **498,021** |

### (ա) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների համար գործող պայմանները:

| հազ. դրամ | Արժույթ | Անվանակ. տոկոսադր. | Մարման տարի | 31 դեկտեմբերի 2021թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2021թ. Հաշվեկշռ. արժեք | 31 դեկտեմբերի 2020թ. Անվանակ. արժեք | 31 դեկտեմբերի 2020թ. Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գրավով չապահովված փոխառություն այլ կապակցված կողմերից | ՀՀ դրամ | 11% | 2024 | 589,849 | 589,849 | 123,021 | 123,021 |
| Գրավով ապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | 13% | 2023 | - | - | 375,000 | 375,000 |
| **Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ** | | | | **589,849** | **589,849** | **498,021** | **498,021** |

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավով ապահովված վարկի դիմաց գրավադրված են 214,261 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարումների պրոցեսինգի սարքավորումները (31 դեկտեմբերի 2020թ.՝ 204,460 հազար դրամ) (Ծանոթագրություն 9):

### (բ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

| հազ. դրամ | Վարկեր և փոխառություններ | |
|---|---|---|
| | 2021թ. | 2020թ. |
| **Մնացորդը առ 1 հունվարի** | **498,021** | **975,878** |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | 25,000 | 375,000 |
| Վարկերի և փոխառությունների մարում | (737,812) | (1,100,890) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | **(712,812)** | **(725,890)** |
| **Հայատարարված շահաբաժիններից առացված փոխառություններ** | **795,066** | **244,535** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 45,344 | 27,272 |
| Վճարված տոկոսներ | (35,770) | (23,774) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **589,849** | **498,021** |

## 19. Վարձակալություն

Ստորև ներկայացված է տեղեկատվություն այն վարձակալությունների վերաբերյալ, որոնց շրջանակում Խումբը հանդես է գալիս որպես վարձակալ:

### (ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

| **հազ. դրամ** | **2021թ.** | **2020թ.** |
|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի | 189,356 | 252,437 |
| Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով | 136,334 | - |
| Ժամանակաշրջանի մաշվածության գումար | (49,395) | (63,081) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **276,295** | **189,356** |

### (բ) Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում – վարձակալության գծով պարտավորություններ

| **հազ. դրամ** | **2021թ.** | **2020թ.** |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի** | **212,802** | **258,638** |
| **Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | | |
| Ավելացումներ | 136,334 | - |
| Հիմնական գումարի մարում | (50,209) | (45,836) |
| **Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված** | **86,125** | **(45,836)** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 21,629 | 22,195 |
| Վճարված տոկոսներ | (21,629) | (22,195) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **298,927** | **212,802** |

### (գ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

| **հազ. դրամ** | **2021թ.** | **2020թ.** |
|---|---|---|
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն | 49,395 | 63,081 |
| Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ | 21,629 | 22,195 |
| Տերմինալների տարածքների վարձակալության ծախս և այլ կարճաժամկետ վարձակալություններ | 486,119 | 448,438 |

## 20. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2021թ. | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|
| Օպերատորներին վճարվելիք գումարներ | 9,067,135 | 5,645,802 |
| Գործակալներին վճարվելիք գումարներ | 374,396 | 297,200 |
| Այլ առևտրական կրեդիտորական պարտքեր | 390,572 | 208,201 |
| Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ | 314,045 | 322,270 |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 17,521 | 10,389 |
| **Ընդամենը առևտրական կրեդիտորական պարտքեր** | **10,163,669** | **6,483,862** |
| Ստացված կանխավճարներ | 374,831 | 245,706 |
| Հաշվեգրված ծախսեր | 48,469 | 197,806 |
| Պետական բյուջե վճարվելիք գումարներ | 134,800 | 600 |
| **Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր** | **558,100** | **444,112** |
| **Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր** | **10,721,769** | **6,927,974** |
| Ընթացիկ | 10,567,970 | 6,830,599 |
| Ոչ ընթացիկ | 153,799 | 97,375 |

Օպերատորներին վճարվելիք գումարներն իրենցից ներկայացնում են օպերատորների անունից ընդունված վճարները, որոնք չեն փոխանցվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

## 21. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

### (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և իրական արժեք

Ղեկավարության գնահատմամբ բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին՝ պայմանավորված ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթով կամ երկարաժամկետ ակտիվների և պարտավորությունների համար գործող շուկայական տոկոսադրույքների հետ մոտարկումով:

### (բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ (տես Ծանոթագրություն 21 (բ) (ii)),
- իրացվելիության ռիսկ (տես Ծանոթագրություն 21 (բ) (iii)),
- շուկայական ռիսկ (տես Ծանոթագրություն 21 (բ) (iv)):

#### *(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ*

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Խմբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը

կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխությունները արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

### *(ii) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները, և առաջանում է հիմնականում Խմբի հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

**Ենթարկվածությունը պարտքային ռիսկին**

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Ստորև ներկայացված է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին հաշվետու ամսաթվի դրությամբ:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | **2021թ.** | **2020թ.** |
| Տրամադրված փոխառություններ | 258,432 | 11,120 |
| Բանկային ավանդներ | 156,167 | - |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի | 783,669 | 650,449 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6,856,515 | 3,139,842 |
| | **8,054,783** | **3,801,411** |

**Տրամադրված փոխառություններ**

Խմբի քաղաքականության համաձայն՝ փոխառությունները տրամադրվում են հիմնականում կապակցված կողմերին՝ առանց գրավ պահանջելու:

**Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի բնութագրերից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Խմբի հաճախորդների բազայի վրա, այդ թվում՝ այն ոլորտին և երկրին բնորոշ պարտապանցման ռիսկը, որտեղ իրենց գործունեությունն են իրականացնում հաճախորդները:

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի մոտ 73%-ն իրենից ներկայացնում է վճարային ծառայություններից ստացվելիք գումարները, որոնք պարտքային ռիսկի չեն ենթարկվում, քանի որ Խումբն անընդհատ վճարումներ է ընդունում օպերատորների անունից և պահում է կրեդիտորական պարտքերի մնացորդն ընդունված վճարումներից (տես Ծանոթագրություն 20): 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 531,505 հազար դրամ գումարով կրեդիտորական պարտքեր առևտրական դեբիտորական պարտքերի դիմաց: Խումբը ճանաչել է 71,064 հազար դրամ գումարով ակնկալվող պարտքային կորուստ առևտրական դեբիտորական պարտքերի մնացած մնացորդի գծով:

Խումբն օգտագործում է պահուստավորման մատրից ֆիզիկական անձանցից ստացվելիք առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որոնք ներառում են մեծ թվով փոքր գումարով մնացորդներ: Կորստի մակարդակը հաշվարկվում է «roll rate» մեթոդով, որը հիմված է այն հավանականության վրա, որ դեբիտորական պարտքը կանցնի ժամկետանցությունից մինչև դուրս գրումը հաջորդական փուլերով:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ստորև ներկայացված է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

| **հազ. դրամ** | **Հաշվեկշռային արժեք** | |
|---|---|---|
| | **2021թ.** | **2020թ.** |
| Հայաստանի Հանրապետություն | 694,668 | 649,286 |
| ԱՊՀ այլ երկրներ | 89,001 | 1,163 |
| | **783,669** | **650,449** |

Ստորև ներկայացված է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

| **հազ. դրամ** | **Հաշվեկշռային արժեք** | |
|---|---|---|
| | **2021թ.** | **2020թ.** |
| Առցանց խաղեր | 307,577 | 223,541 |
| Հեռահաղորդակցության ընկերություններ | 215,461 | 302,794 |
| Բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ | 97,629 | 46,139 |
| Կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ | 33,822 | 31,994 |
| Առևտուր | 5,336 | 5,094 |
| Այլ | 123,844 | 40,887 |
| | **783,669** | **650,449** |

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով դրամական միջոցներ**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 6,856,515 հազար դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով դրամական միջոցներ (2020թ-ին՝ 3,139,842 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված: Ստորև ներկայացված է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշների վրա հիմնված դրամական միջոցների և դրանց համարժեքների և օգտագործման սահմանափակումով դրամական միջոցների պարտքային որակը:

| **հազ. դրամ** | **Հաշվեկշռային արժեք** | |
|---|---|---|
| | **2021թ.** | **2020թ.** |
| – Ba1-ից Ba3 վարկանիշով | 4,230,496 | 181,676 |
| – B1-ից B3 վարկանիշով | 390,331 | 1,302,330 |
| – առանց վարկանիշի | 2,235,688 | 1,655,836 |
| | **6,856,515** | **3,139,842** |

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 696,112 հազար դրամ գումարով դրամական միջոցներ ճանապարհին (2020թ-ին՝ 868,761 հազար դրամ), որոնք ներառված են «առանց վարկանիշի» դասում՝ վերը ներկայացված աղյուսակում: Ճանապարհին գտնվող դրամական միջոցների համար ապահովություն են ծառայում ստացված կանխավճարները, երաշխավորությունները և գրավադրված վճարումների պրոցեսինգի սարքավորումները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով արժեզրկումը չափվել է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիմունքով և արտացոլում է ռիսկին ենթարկվող գործիքների կարճ ժամկետները: Հիմք ընդունելով պայմանագրային կողմերի արտաքին վարկանիշները՝ Խումբն իր դրամական միջոցների և դրանց համարժեքների պարտքային ռիսկը գնահատում է որպես ցածր:

Ընթացիկ հաշիվների և ճանապարհին գտնվող դրամական միջոցների գծով արժեզրկման գծով պահուստ չի ճանաչվել ՖՀՄՍ 9-ի համաձայն:

### *(iii) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի հեղինակությունը վտանգելու:

**Ենթարկվածություն իրացվելիության ռիսկին**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրով մնացած մարման ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները:

| 31 դեկտեմբերի 2021թ. | | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Ընդամենը | Ցպահանջ | Մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 589,849 | 744,268 | 32,594 | 10,216 | 51,082 | 61,298 | 589,077 | - |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 298,927 | 372,867 | - | 12,296 | 64,525 | 93,289 | 199,941 | 2,816 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 10,163,669 | 10,163,669 | 57,246 | 9,795,598 | 157,026 | 29,843 | 123,956 | - |
| | **11,052,445** | **11,280,804** | **89,840** | **9,818,110** | **272,633** | **184,430** | **912,974** | **2,816** |

| 31 դեկտեմբերի 2020թ. | | Պայմանագրային դրամական հոսքեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հազ. դրամ | Հաշվեկշռ. արժեք | Ընդամենը | Ցպահանջ | Մինչև 2 ամիս | 2-12 ամիս | 1-2 տարի | 2-5 տարի | Ավելի քան 5 տարի |
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 498,021 | 654,679 | - | 7,479 | 40,469 | 182,981 | 423,750 | - |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 212,082 | 269,207 | - | 12,339 | 58,555 | 92,391 | 94,178 | 11,744 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 6,483,862 | 6,483,862 | - | 6,162,992 | 223,495 | 40,986 | 56,389 | - |
| | **7,193,965** | **7,407,748** | **-** | **6,182,810** | **322,519** | **316,358** | **574,317** | **11,744** |

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

*(iv) Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

**Արժութային ռիսկ**

Արժութային ռիսկին Խմբի ենթարկվածությունը կապված է Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխատվությունների արժույթի հետ: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով, եվրոյով և ռուսական ռուբլով:

**Ենթարկվածությունն արժութային ռիսկին**

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արդժութային ռիսկին:

| հազ. դրամ | ԱՄՆ դոլարով արտահայտված 2021թ. | Եվրոյով արտահայտված 2021թ. | Ռուբլով արտահայտված 2021թ. | ԱՄՆ դոլարով արտահայտված 2020թ. | Եվրոյով արտահայտված 2020թ. | Ռուբլով արտահայտված 2020թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Առևտրական դեբիտորական պարտքեր | - | - | 81,734 | - | - | 2,278 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 261,734 | 128,036 | 4,028,550 | 271,358 | 135,995 | 610,589 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | - | - | (137,021) | (76,661) | - | (148,792) |
| **Զուտ ենթարկվածություն** | **261,734** | **128,036** | **3,973,263** | **194,697** | **135,995** | **604,508** |

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

| ՀՀ դրամով | Միջին փոխարժեք | | Տվյալ փոխարժեքը հաշվեառու ամսաթվի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | 2021թ. | 2020թ. | 2021թ. | 2020թ. |
| 1 ԱՄՆ դոլար | 503.81 | 489.31 | 480.14 | 522.59 |
| 1 եվրո | 596.65 | 559.30 | 542.61 | 641.11 |
| 1 ռուսական ռուբլի | 6.84 | 6.79 | 6.42 | 7.02 |

***Զգայնության վերլուծություն***

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Արտարժույթի փոխարժեքի տատանումներից առաջացող օգուտը (կորուստը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնում կանխատեսվող վաճառքի և գնումների ազդեցությունը:

| հազ. դրամ | Աճ | Նվազում |
|---|---|---|
| | Շահույթ կամ վնաս | Շահույթ կամ վնաս |
| **31 դեկտեմբերի 2021թ.** | | |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ | (26,173) | 26,173 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ | (12,804) | 12,804 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ռուբլու նկատմամբ | (397,326) | 397,326 |
| **31 դեկտեմբերի 2020թ.** | | |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ԱՄՆ դոլարի նկատմամբ | (19,470) | 19,470 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն եվրոյի նկատմամբ | (13,600) | 13,600 |
| ՀՀ դրամի փոխարժեքի 10% փոփոխություն ռուբլու նկատմամբ | (60,451) | 60,451 |

**Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե որ տոկոսադրույքը՝ ֆիքսված թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Խմբի համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

***Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին***

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

| հազ. դրամ | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| | 2021թ. | 2020թ. |
| **Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական ակտիվներ | 356,167 | 11,120 |
| Ֆինանսական պարտավորություններ | (589,849) | (498,021) |
| | **(233,682)** | **(486,901)** |

***Իրական արժեքի զգայնության վերլուծություն ֆիքսված տոկոսադրույքով գործիքների համար***

Խումբը չի հաշվառում ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

## 22. Դուստր կազմակերպություններ

Ստորև ներկայացված են Խմբի դուստր կազմակերպությունները:

| Անվանումը | Գրանցման երկիրը | Հիմնական գործունեությունը | Սեփականության % 2021թ. | Սեփականության % 2020թ. |
|---|---|---|---|---|
| «Թել-Սել Սերվիս» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | Ընկերության հիմնական գործունեությունը գովազդի համար տարածքի տրամադրումն է վճարային տերմինալների վրա և տերմինալների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցումն է: | 100% | 100% |
| «Մեգա Պանտերա» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | Ընկերության գործունեությունը դադարեցվել է 2016թ-ից: | 50% | 50% |

## 23. Պայմանական դեպքեր

### (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խմբի տերմինալներն ապահովագրված են: Այնուամենայնիվ, Խումբն ամբողջովին չի ապահովագրել իր հիմնական միջոցները և սարքավորումները, այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Խումբը չունի համապատասխան ապահովագրական ծածկույթ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### (բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

### (գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2021թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2021թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համահունչ են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար, սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվում են շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում 200 միլիոն դրամը հարկային տարում.

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերտային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 24. Կապակցված կողմեր

### (ա) Մայր կազմակերպություն և վերջնական վերահսկող կողմ

Ընկերության մայր կազմակերպությունն է Կիպրոսում գրանցված Lendasy Trading Ltd, որի վերջնական վերահսկող անձն է Վոլոդա Կիրնիցկայան:

Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

### (բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի անդամների և ղեկավարության հետ

#### *(i) Տնօրենների խորհրդի և ղեկավարության վարձատրությունը*

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է անձնակազմի գծով ծախսերում:

| **հազ. դրամ** | **2021թ.** | **2020թ.** |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևավճարներ | **75,954** | **66,377** |

#### *(ii) Գործարքներ Տնօրենների խորհրդի և ղեկավարության հետ*

| **հազ. դրամ** | **Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար** | | **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | |
|---|---|---|---|---|
| | **2021թ.** | **2020թ.** | **2021թ.** | **2020թ.** |
| Տրամադրված փոխառություններ | 61,000 | - | 66,900 | 6,000 |

*(iii) Գործարքներ սեփականատերերի հետ*

| հազ. դրամ | Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար | | Մնացորդը առ 31 դեկտեմբերի | |
|---|---|---|---|---|
| | 2021թ. | 2020թ. | 2021թ. | 2020թ. |
| **Ստացված վարկեր և փոխառություններ** | | | | |
| Բաժնետերեր | 820,066 | 416,835 | 589,849 | 123,021 |

Ստացված վարկերի և փոխառությունները ենթակա են մարման 2024թ-ին՝ 11% առկոսադրույքով:

## 25. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

## 26. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների կողմից:

**(ա) Համախմբման հիմունքներ**

*(i) Բիզնես միավորումներ*

Բիզնես միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որն այն ամսաթիվն է, երբ վերահսկողությունը փոխանցվում է Խմբին (Ծանոթագրություն 26(ա)(iii)):

Խումբը գուդվիլի չափումն իրականացնում է ձեռքբերման ամսաթվին որպես՝

- փոխանցված հատուցման իրական արժեք, գումարած
- ձեռք բերվող կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերի ճանաչված գումարը, գումարած
- ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում՝ ձեռքբերվող կազմակերպությունում նախկինում գոյություն ունեցող բաժնեմասը, հանած
- ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների զուտ ճանաչված գումարը (որպես կանոն՝ իրական արժեքը):

Երբ տարբերությունը բացասական է, զեղչով ձեռքբերումից օգուտը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխանցված հատուցումը չի ներառում նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը վերաբերող գումարները: Նման գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկման հետ կապված ծախսերի, որոնք Խումբը կրում է բիզնես միավորման հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

*(ii) Չվերահսկող բաժնեմաս*

Չվերահսկող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Դուստր կազմակերպությունում Խմբի բաժնեմասի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում հսկողության կորստի, հաշվառվում են որպես բաժնային գործառնություններ:

*(iii) Դուստր կազմակերպություններ*

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Խումբը վերահսկողություն ունի կազմակերպության նկատմամբ, երբ այդ կազմակերպությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և կազմակերպության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Անհրաժեշտության դեպքում դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերին բաժին ընկնող վնասը վերագրվում է չվերահսկող բաժնեմասերին, նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

*(iv) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ*

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

**(բ) Հատույթ**

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

**(գ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր**

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը դադարում է պարտքային առումով արժեզրկված լինելուց, հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հիմունքով:

**(դ) Արտարժույթ**

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Խմբի կազմի մեջ մտնող ընկերությունների ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ կորուստը իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխում, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**(զ) Շահութահարկ**

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է բիզնես միավորումներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

***(i) Ընթացիկ հարկ***

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով հարկի վճարվելիք կամ ստացվելիք գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Վճարվելիք ընթացիկ հարկը ներառում է նաև շահաբաժինների գծով առաջացող հարկային պարտավորությունը:

***(ii) Հետաձգված հարկ***

Հետաձգված հարկը ճանաչվում է Ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում՝

- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում բիզնես միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում կատարած ներդրումներին, այնքանով որքանով Խումբն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում,
- այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչման հետ կապված:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Խումբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթի գումարը որոշվում է հակադարձման ենթակա համապատասխան հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարի հիման վրա: Եթե հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումների մասով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Խմբի առանձին դուստր կազմակերպությունների գործարար ծրագրերի հիման վրա:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ ակտիվները:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբը ունի պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

**(է) Պաշարներ**

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

**(ը) Հիմնական միջոցներ**

***(i) Ճանաչում և չափում***

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «Այլ եկամուտներ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

***(ii) Հետագա ծախսումներ***

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

***(iii) Մաշվածություն***

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման համար պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման համար պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների խոշոր բաղկացուցիչների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

| | |
|---|---|
| – վճարումների պրոցեսինգի սարքավորումներ | 8 տարի |
| – համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ | 1-5 տարի |
| – տնտեսական միջոցներ | 5 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5-10 տարի |
| – վարձակալված գույքի բարելավում | 5-20 տարի |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(թ) Ոչ նյութական ակտիվներ**

***(i) Գուդվիլ***

Գուդվիլը, որն առաջանում է դուստր կազմակերպությունների ձեռքբերման արդյունքում, չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

***(ii) Այլ ոչ նյութական ակտիվներ***

Խմբի կողմից ձեռքբերված այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

***(iii) Հետագա ծախսումներ***

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

### *(iv) Ամորտիզացիա*

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի (բացառությամբ գուդվիլի) օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- համակարգչային ծրագրեր 10 տարի
- լիցենզիաներ 10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

### **(ժ) Ֆինանսական գործիքներ**

### *(i) Ճանաչում և սկզբնական չափում*

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

### *(ii) Դասակարգում և հետագա չափում*

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային գործիքներում ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային գործիքներում ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այստեղ ներառված են բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում**

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Խմբի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել այդ ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

**Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները:

Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի նկատմամբ զեղչով կամ հավելագնով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարով, որն ըստ էության իրենից ներկայացնում է պայմանագրային անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսը (որը կարող է ներառել լրացուցիչ ողջամիտ փոխհատուցումը պայմանագրի վաղաժամ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման հատկանիշի իրական արժեքն աննշան է սկզբնական ճանաչման պահին:

**Ֆինանսական ակտիվներ. Հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

**Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախորոշված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ օգուտը և կորուստները, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

***(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում***

**Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հաղիվհասնալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ կորուստ՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ փոփոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտում շահույթում կամ վնասում՝ փոփոխության (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության սառորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացորդային ժամանակահատվածում:

### *(iv)* *Ապաճանաչում*

**Ֆինանսական ակտիվներ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Խումբը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ցանկացած ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

### *(v)* *Հաշվանցում*

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն այն և միայն այն դեպքում, երբ Խումբը ներկա պահին ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

## (ի) Բաժնետիրական կապիտալ

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

*Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Խմբի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

**(յ) Արժեզրկում**

***(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ***

*Ֆինանսական գործիքներ*

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Խումբը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով.

- պարտքային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտառազանցում տեղի ունենալու ռիսկը) նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրի գծով ակտիվների գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:
Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտառազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտառազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո հաջորդող 12 ամսում հնարավոր պարտառազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետը պակաս է 12 ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին:

*Ակնկալվող պարտքային կորուստների չափում*

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասորդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան Խմբին հասանելիք դրամական հոսքերի և Խմբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերություն):

Ակնկալվող պարտքային կորուստները զեղչվում ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

*Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերը պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ հաճախորդը կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

**Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

*Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Խումբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Խումբը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

### (ii) *Ոչ ֆինանսական ակտիվներ*

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Գուդվիլի և օգտակար ծառայության անսահմանափակ ժամկետ ունեցող կամ շահագործման համար դեռ ոչ պիտանի ոչ նյութական ակտիվների համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Խմբի կորպորատիվ ակտիվները չեն առաջացնում առանձին դրամական միջոցների հոսքեր և օգտագործվում են մեկից ավելի դրամաստեղծ միավորի կողմից: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են դրամաստեղծ միավորների ողջամիտ և հետեւողական հիմունքով և ստուգվում են արժեզրկման տեսանկյունից այն դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգման շրջանակներում, որի բաշխվում է կորպորատիվ ակտիվը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև վերջիններիս ներկա արժեքը՝ օգտագործելով նախքան հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը բաշխվում է այնպես, որ նախ նվազեցվի դրամաստեղծ միավորին (կամ դրամաստեղծ միավորների խմբին) բաշխված գուդվիլի հաշվեկշռային արժեքը և, այնուհետև, այդ դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ համամասնորեն:

Գուդվիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների հետ կապված նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, պարզելու համար, թե արդյոք գոյություն ունի որևէ հայտանիշ ըստ որի արժեզրկումից կորուստը նվազել է կամ այլևս գոյություն չունի: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այնքանով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

**(իա) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքաչափով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

**(ծ) Վարձակալություն**

Պայմանագրի սկզբում Խումբը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

***(i) Խումբը՝ որպես վարձակալ***

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գները:

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապամեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Խմբին չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Խումբը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Խումբը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Խմբի գնահատականի փոփոխություն, եթե Խումբը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Խումբը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Խումբը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

***(ii) Խումբը՝ որպես վարձատու***

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի մեկնարկին կամ փոփոխության դեպքում Խումբը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչին՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Երբ Խումբը հանդես է գալիս որպես վարձատու, վարձակալության սկզբում այն որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական կամ գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելիս Խումբը գնահատում է, թե արդյոք վարձակալության շրջանակում փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Եթե ռիսկերն ու հատույցները փոխանցվում են, վարձակալությունը դասակարգվում որպես ֆինանսական վարձակալություն, այլապես՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս, Խումբը դիտարկում է որոշակի ցուցանիշներ, մասնավորապես, արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

## 27. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2021թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

**(ա) Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)**

Փոփոխությունները հստակեցնում են, թե որ ծախսումներն է Խումբը ներառում պայմանագրի անբարենպաստ լինելը գնահատելու համար պայմանագրի կատարման ծախսումները որոշելիս: Փոփոխությունները գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ փոփոխություններն առաջին անգամ կիրառելու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար: Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ փոփոխությունների կիրառման կուտակային հետևանքը ճանաչվում է որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների սկզբնական մնացորդի ճշգրտում՝ ըստ կիրառելիության: Համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում: Խումբը որոշել է, որ բոլոր պայմանագրերը կավարտվեն մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

**(բ) Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)**

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջացնում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և շահագործումից հանելու պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վարձակալությանը և շահագործումից հանելու պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների նշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Բոլոր մյուս գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

Փոփոխությունների կիրառումն ազդեցություն չի ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**(գ) Այլ ստանդարտներ**

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- COVID-19 հետ կապված զիջումներ վարձակալության գծով 2021թ. հունիսի 30-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ տարեկան կատարելագործումներ, 2018-2020թթ.
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* և ՖՀՄՍ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»* փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)